

ՀԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

18



ԵՐԵՎԱՆ 2017



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱՍԵՐԻ ԺՈՂՎԱՍՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

18

ՄԵՍՐՈԲ ԱՐՁ. ԱՇԻՅԱՆ
ՄԱՏԵՆԱԿԱՐ

167



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

167

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2017

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ

Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ), Ա.Ա. Խառատյան, Հ.Ս. Հարությունյան, Ա.Ի. Շահնազարյան, Հ.Ղ. Սուրադյան, Հ.Կ. Սուրիասյան (պատ. քարտուղար)

Редакционная коллегия

Ա.Ա. Մելկոնյան (председатель), Կ.Գ. Խաչատրյան (заместитель председателя), Ա.Ա. Խարատյան, Գ.Մ. Արությունյան, Ա.Ի. Շահնազարյան, Ա.Գ. Մուրադյան, Ա.Կ. Սուկիասյան (отв. секретарь)

Editorial board

A.A. Melkonyan (Chairman of the Board), K.H. Khachatryan (Deputy Chairman of the Board), A.A. Kharatyan, H.M. Harutyunyan, A.I. Shahnazaryan, H.Gh. Muradyan, H.K. Sukiasyan (Executive Secretary)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքի հերթական 18-րդ համարում հրատարակվող հոդվածները սկզբնաղյուղների, մամուլի հրատարակումների, հայրենի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են տվում Հայոց պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Տարեգրքում հրատարակվում են նաև ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ Պատմության ինստիտուտի կազմակերպած «Հայաստանի նորագույն պատմության ուսումնասիրության վիճակը և խնդիրները» գիտաժողովի (4-7 մարտի 2016 թ., Երևան-Աղվերան) զեկուցումները:

**ՎԼԱԴԻՄԻՐ
ՂԱԶԱԽԵՑՅԱՆ**

90

117

ՀԱՄԼԵՏ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱՍ պապմության ինստիտուտ, պ. գ. դ., պրոֆեսոր

ՆՇԱՆԱՎՈՐ ՊԱՏՄԱԲԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ
ՂԱԶԱՆԵՑՅԱՆԻ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Խորհրդային Հայաստան, պատմություն, պատմաբան, գիրք, հոդված:

Ընդունված է ասել՝ սարի մեծությունը երևում է հեռվից, իսկ մարդունը՝ տարիների հեռավորությունից, երբ հանրագումարի ես բերում նրա անցած ճանապարհն ու գործունեության արդյունքները: Սովորույթի ուժով, ժողովուրդներն այս հիմքով են գնահատում ու մեծարում իրենց լավագույն զավակներին: Այդպիսի մոտեցմամբ վաստակաշատ պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանն արժանիորեն դասվում է հայ մեծանուն պատմաբանների շարքին:

Երախտագիտության և արժանի գնահատանքի ճանապարհ է անցել նշանավոր պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանը, ում ծննդյան 90-ամյակը լրացավ 2016 թ. փետրվարի 11-ին: Ղարաքիլիսայի (Վանաձոր) միջնակարգ դպրոցի ոսկե մեդալակիր շրջանավարտը, 1949 թ. գերազանցությամբ ավարտելով Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, 1949-1952 թթ. սովորել է հանրապետության գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում՝ աշակերտելով ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանին: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1976 թ.՝ դոկտորական ատենախոսություն: Պրոֆեսորի կոչում ստացել է 1982 թ.:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որտեղ 1953-1959 թթ. աշխատել է որպես կուսակցության պատմության դասախոս: Անվանի պատմաբանի գիտական հետաքրքրություններն ու հետագա գործունեությունը սերտորեն կապվեցին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ, որտեղ 1959 թվականից աշխատեց և ստեղծագործեց մինչև իր երկրային կյանքի վերջին օրը (2015 թ. մարտի 3), նույն եռանդով ու նվիրվածությամբ, ինչպես երիտասարդ տարիներին, սկզբում որպես ավագ գիտաշխատող, այնուհետև, 30 տարի շարունակ՝ 1980-2010 թթ., որպես Նորագույն պատմության բաժնի վարիչ, ապա նույն բաժնում գլխավոր գիտական աշխատող:

Դաստիարակվելով հայրենական պատմական գիտության լավագույն ավանդույթներով՝ Վլադիմիր Ղազախեցյանն ուներ բացառիկ լայն գիտելիքներ, հազվագյուտ հիշողություն, անսահման աշխատասիրություն և մեծ նվիրում իր մասնագիտությանը:

Պատմության ինստիտուտում ավելի քան կեսդարյա գործունեության ընթացքում վաստակաշատ պատմաբանը ծանրակշիռ ավանդ է ներդրել Հայաստանի նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմության և մշակույթի բազում կնճոռոտ և վիճահարույց հարցերի հետազոտության բնագավառում՝ ստեղծելով բարձրարժեք և հիմնարար բազմաթիվ գործեր:

Նշանավոր պատմաբանի գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն ու ընդգրկուն է եղել, նրա հետազոտությունները շահեկանորեն տարբերվել են իրենց ինքնատիպությամբ ու բազմակողմանիությամբ, որոնց հիմքում դրված է ազգային շահի խոր գիտակցումն ու գիտական բարձր պատասխանատվությունը: Դրանց շարքում այժի ընկնող տեղ են գրավել նախախորհրդային և խորհրդային ժամանակաշրջաններում ազդարային-

գյուղացիական, առաջին և երկրորդ հանրապետությունների պատմության մշակման, Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության, դպրոցական դասագրքերի պատրաստման աշխատանքները: Կարևոր նշանակություն ունեցավ նրա մասնակցությունը Հայոց պատմության նոր քառահատորյակի ստեղծմանը:

Անվանի պատմաբանի գիտական գործունեությանը բնորոշ էր խստապահանջությունը և բարեխիղճ մոտեցումը պատմական ճշմարտությանը: Դա վերաբերում է նաև խորհրդային ժամանակաշրջանի գիտական մշակումներին, երբ պատմաբանները հասկանալի պատճառներով հարկադրված էին պատմությունը շարադրել իշխող քաղաքական ուժի դիրքերից և հաճախ էլ կեղծել ու աղավաղել պատմական շատ փաստեր ու իրողություններ:

Վլադիմիր Ղազախեցյանն իր գիտական գործունեությունը սկսել է իբրև խորհրդային պատմաբան, իբրև գիտնական՝ նա ձևավորվել է խորհրդային իրականության մեջ, խորհրդային գաղափարաքաղաքական կարգախոսների ազդեցությամբ, սակայն դա ամենևին չխանգարեց, որպեսզի նրա գործերում ավելի կամ պակաս հաջողությամբ բացահայտվեն այդ հասարակարգի թերությունները, ներքին դժվարությունները, հակասությունները և անարդարությունները: Այդ տեսակետից եզակի էր խորհրդային իշխանության պայմաններում (1920-30-ական թվականներին) Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության կազմակերպությունների դրությունը և նրանց դեմ կոմունիստական կուսակցության պայքարն արտացոլող փաստաթղթերի ժողովածուի հրապարակումը Ղազախեցյանի կողմից: Այլ կերպ ասած՝ պրոֆ. Ղազախեցյանը պատմական ճշմարտությունը վեր է հանել յուրահատուկ կերպով: Եվ դա նաև շնորհիվ այն բանի, որ հեղինակը ջանացել է առաջադրված հարցերի բազմակող-

մանի և խորքային քննությունն ապահովել արխիվային նյութի ու պատմական այլ աղբյուրների քննադատաբար օգտագործմամբ: Պետք է խոստովանել և չափազանցություն չի լինի նշել, որ մեծ ճանաչման հասած պատմաբանը լավատեղյակ էր Հայաստանի արխիվային ֆոնդերին, արխիվագիտության ասպարեզում ուներ բացառիկ գիտելիքներ, որի շնորհիվ նրա գիտական գործերն աչքի են ընկնում արխիվային փաստաթղթերի ու նյութերի հարստությամբ, դրանից բխող ընդհանրացումներով ու եզրակացություններով: Իբրև ստեղծագործական խառնվածք ունեցող գիտնական՝ նա մշտապես հետամուտ էր նոր փաստերի և դիտարկումների: Իր երկարատև գիտական գործունեության ընթացքում անվանի գիտնականը մեզանում առաջիններից մեկը նվիրվեց Հայաստանի նախախորհրդային և խորհրդային ազրարային-գյուղացիական բարդ ու դժվարին հիմնահարցերի լուսաբանմանը:

Այդ թեմային նվիրված ուսումնասիրության արդյունք հանդիսացան հեղինակի հրատարակած երեք արժեքավոր գրքերը և մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածները, որոնցում համադրվել և վերլուծության են ենթարկվել բազմաբնույթ վիճակագրական տվյալներ ու այլ կարգի նյութեր՝ հեղինակին բերելով հիմնավոր եզրակացության՝ Հայաստանի գյուղը գտնվել է սոցիալ - տնտեսական առավել հետամնաց վիճակում, և որ նման պայմաններում գյուղացիության համար փրկարար նշանակություն է ունեցել ՆԷՊ-ը:

Երկարատև ու տքնաջան աշխատանքի յուրահատուկ արտահայտություն կարելի է համարել Վլադիմիր Դազախեցյանի մեծարժեք ու հիմնարար ուսումնասիրություններից մեկը՝ «Հայաստանը 1920-1940 թթ.» ծավալուն մենագրությունը: Այս աշխատությունը մեզանում Հայաստանի համընդհանուր պատմության

մշակման առաջին փորձն է: Գրքի անժխտելի առավելություններից է նորահայտ վավերագիր նյութերի, մասնավորապես Արտակարգ հանձնաժողով - Պետական քաղաքական վարչության փաստաթղթերի վրա հենվելը, որոնք այդ ժամանակաշրջանը ներկայացնում են մեծ հավաստիությամբ: Մենագրության մեջ կարծես բյուրեղացած են շնորհաշատ գիտնականի ողջ ստեղծագործական հնարավորությունները և ժամանակակից պատմագիտության լավագույն նվաճումները: Նորովի լուսաբանվել են կուսակցական աստիճանակարգության (նումենկլատուրա), կոմունիստական կուսակցության կողմից խորհուրդների իշխանության յուրացման, բռնի կոլեկտիվացման դեմ գյուղացիության դիմադրության, ստալինյան բռնաճնշումների, բուլշևիկյան Ռուսաստան - քեմալական Թուրքիա հարաբերությունների ոլորտում Հայաստանի տարածքային կորուստների և այլ հարցեր: Նշված սկզբունքային և կարևոր հարցերի անկողմնակալ լուսաբանումը հնարավորություն ընձեռեց լույս սփռելու Հայաստանում 1921 թ. իրադարձությունների, 1920-30-ական թվականների բռնաճնշումների կնճռոտ ու վիճահարույց հարցերի վրա, նորովի իմաստավորելու այդ երևույթները: Հեղինակի կոահումները վերաճել են կոտ ու ամուր, հիմնավորված տեսության, ուր վեր են հանվում ու բացահայտվում այդ իրադարձությունների բոլոր առանձնահատկությունները և պատճառահետևանքային կապերը: Այդ նշանակալի նվաճումն իր լիարժեք արտացոլումն է գտել «Հայոց պատմություն» ակադեմիական հրատարակության 4-րդ հատորի առաջին գրքում, որի պատասխանատու խմբագիրը և տեքստի զգալի մասի հեղինակը Վլադիմիր Ղազախեցյանն է:

Արդիական արժեք ունեն պատմաբանի ուսումնասիրությունները Հայրենական մեծ պատերազմի պատմության բնագավառում: Հատկապես պետք է արժևորել նրա՝ պարտի-

զանական պայքարին և ընդհատակայինների գործունեությանը նվիրված գործերը:

Պրոֆեսոր Ղազախեցյանի գիտական գործունեության մեջ մեծ տեղ ունի աղբյուրագիտական գրքերի ու հոդվածների տպագրությունը: Դրանց շարքում արժեքավոր աշխատանք է «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն)» փաստաթղթերի ժողովածուն, որի պատրաստող խմբի ղեկավարը եղել է Վ. Ղազախեցյանը, և որը կարևոր աղբյուր է այդ պետականության պատմությունն ուսումնասիրողների համար: Այն տվյալ հիմնահարցին նվիրված պատմական աղբյուրների առաջին տպագրություններից է Հայաստանում: Պրոֆեսոր Ղազախեցյանը զբաղվել է Գարեգին Նժդեհի գործունեության ուսումնասիրությամբ ինչպես փաստաթղթերի հրատարակումով, այնպես էլ գիտահետազոտական աշխատանքով:

Զգալի է անվանի գիտնականի ներդրումը դպրոցական դասագրքերի պատրաստման գործում: Նա է առաջինը հանրապետությունում դպրոցական դասագրքերի համար մշակել Հայաստանի առաջին Հանրապետության և Խորհրդային Հայաստանի առաջին տասնամյակների պատմությունը:

Մեծ հետաքրքրությամբ են ընթերցվում պրոֆեսոր Ղազախեցյանի գրականագիտական 10-ից ավելի հոդվածները՝ նվիրված Չարենցի, Բակունցի և Իսահակյանի կյանքի ու գործունեության լուսաբանմանը: Չարենցի մասին հեղինակի նյութը հանճարեղ քանաստեղծի 1926-27 թթ. Երևանի «ուղղիչ տանը» գտնվելու մասին է: Ավելի ընդարձակ է Ակսել Բակունցին ներկայացնող հոդվածաշարը:

Վաստակաշատ պատմաբանի գործերը սեր են ներշնչում հայրենիքի հանդեպ, մի հանգամանք, որը մեր օրերում կարևոր

նշանակություն է ստանում: Հայրենասիրությունը նրա համար ոչ թե կարգախոս էր, այլ համոզմունք ու գործելակերպ:

Նրա գիտական գործունեության վերջին արտահայտություններից մեկը դարձավ «ՀՅ Դաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և պետական քաղաքական վարչության գաղտնիքերը մեզ (1920-ական թվականներ)» փաստաթղթերի ժողովածուն:

Բազմաթիվ նորություններ են պարունակում հեղինակի հոդվածները, սակայն դրանց անդրադառնալն այստեղ նպատակահարմար չենք համարում: Բավարարվենք նշելով, որ նշանավոր պատմաբանի, ազնվագույն մտավորականի գիտական գործունեության արդյունքները ամփոփված են շուրջ 30 գրքում և 100-ից ավելի գիտական հոդվածներում՝ չհաշված շուրջ մեկ տասնյակ անտիպ տարբեր գործերը:

Նշանակալի են եղել պրոֆեսոր Ղազախեցյանի գիտակազմակերպչական ծառայությունները՝ իբրև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի վարիչ, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի երկարամյա անդամ: Նա մեծապես նպաստել է քաղում մասնագետներ պատրաստելուն ու նրանց աճին: Նրա անմիջական ղեկավարությամբ մի քանի տասնյակ ասպիրանտներ ու հայցորդներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Շնորհաշատ, վերլուծական բացառիկ կարողությամբ օժտված պատմաբանը բարեկիրթ ու համեստ, մարդկային ու քաղաքացիական հարուստ նկարագրով անձնավորություն էր, գիտության անձնուրաց նվիրյալ, իսկ պատմաբանների նոր սերնդի համար՝ բարի ուսուցիչ և խորհրդատու: Այլ խոսքով ասած՝ նշանավոր գիտնականը դասվում է այն պատմաբանների շարքին, որոնք հանճարեղ Նարեկացու խոսքերով ասած

«հարստանում են մեծապես տալով, քան թե առնելով»: Մեծերին բնորոշ՝ սիրով ու բարյացակամորեն էր ընդունում իր գործընկերների ու սաների ուղղումներն ու լրացումները: Այդպես էին նրան ճանաչում ու ընդունում գործընկերներն ու սաները:

Այն, որ Վլադիմիր Ղազախեցյանի պատմագիտական հարուստ ժառանգությունը դեռ երկար ժամանակ օգտակար կլինի երիտասարդ գիտաշխատողներին և գիտության բնագավառում առաջին քայլերը կատարող ասպիրանտներին, այլ կարծիք լինել չի կարող: Մնում է հուսալ, որ նրանք մաքուր խղճով և ազնիվ մղումով կօգտվեն այդ ժառանգությունից, ինչպես վարվել է ինքը՝ Վլադիմիր Նահապետի Ղազախեցյանը, այն է՝ աղբյուրից օգտվել՝ ակունքը չաղտորելով:

Гамлет М. Арутюнян, *Институт истории НАН РА, д.и.н., проф.*, Научно-организационная деятельность известного историка Владимира Казахецяна - В статье обобщена деятельность известного армянского историка, профессора Владимира Наапетовича Казахецяна. С 1959 года до последних дней своей жизни ученый работал в Институте истории Академии наук. В 1980-2010 гг. В. Казахецян заведовал отделом Новейшей истории. Заслуженный историк внес существенный вклад в изучение многих основополагающих вопросов истории и культуры Армении нового и новейшего периодов, оставив ценные и фундаментальные труды.

Hamlet M. Harutyunyan, *NAS RA Institute of History, Doctor of Historical Sciences*, Scientific and Organizational Activity of Prominent Historian Vladimir Ghazakhetyan - The article summarizes the activities of famous historian Professor Vladimir Nahapet Ghazakhetyan. From 1959 until the last days of his life the outstanding scientist worked at the Institute of History of the Academy of Sciences. In 1980-2010, Vladimir Ghazakhetyan was the Chair of the Department of Modern History. The honored historian made a significant contribution to the study of many essential issues of the history and culture of Armenia of the new and modern era, creating many valuable and fundamental works.

ՎԱՀԱՆ Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԳԱԱ պարամոթյան ինստիտուտ, պ.գ.դ., դոցենտ

ԷՐՋՐՈՒՄԻ (ԿԱՐԻՆԻ) 1918 Թ. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

*Բանալի բառեր*¹ Արևմտյան Հայաստան, Էրզրում, Անդրանիկ, ՀՅԴ, պաշտպանություն, ռազմաճակատ:

Հայոց ազատագրական շարժման և գոյամարտի կարևորագույն դրվագներից է Էրզրումի պաշտպանությունը:

Հետազոտելով 1918 թ. Էրզրումի պաշտպանության հիմնահարցը հայ պատմաբանները այս կամ այն չափով անդրադառնալով այդ իրադարձություններին, հիմնականում իրար կրկնելով, բերդաքաղաքի անկման պատասխանատվությունը սովորաբար դրել են հայկական զորամասերի հրամանատարների և առավելապես զորավար Անդրանիկի գործունեության վրա¹:

¹ Տե՛ս Թոթովենց Վահան, Ջորավար Անդրանիկը և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, Ամիրխանեան Արամ, Ռուս եւ թուրք զինադադարը, 1917-1918, Ֆրեզնո, 1921, Միհրանեան Ա., Ինչպե՛ս պէտք է գրաւել Թրքահայաստանը (Ջոր. Անդրանիկի կարծիքը), Կ. Պոլիս, 1921, Ջորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, 1914-1917, Պոստոն, 1924, Մելիքեան Յովակիմ, Արեան ճանապարհով, «Հայրենիք», Պոսթոն, 1925, Սեպուհ, Էջեր իմ յուշերէն, Պոսթըն, 1925, Ղորղանեան Գաբրիէլ, Հայերու մասնակցութիւնը Համաշխարհային պատերազմի Կովկասեան ռազմաճակատի վրայ, «Հայրենիք», Պոսթոն, 1927, Մինայտրեան Վ., Արեւմտեան Հայաստանի պարսլումը, «Հայրենիք», Պոսթոն, 1935, Թերզիպաշեան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942, Ժամկոչեան Արսէն, Ջորավար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, Փափագեան Վ., Իմ յուշերը, հատոր երկրորդ, Պեյրուս, 1952, Ահարոնեան Վարդգէս, Կովկասեան ռազմաճակատը եւ հայերը, «Հայրենիք», Պոսթոն, 1955, Ազգային հերոս Ջոր. Անդրանիկ, Պեյրուս, 1959, Սասունի Կ., Թուրքահայաստանը Ա Աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պեյրուս 1966, Եւփոնճեան Ավետիս, Հայաստանի Հանրապետութեան քաղաքական, զինվորական, տնտեսական, ընկե-

Հատկանշական է հատկապես այն մոտեցումը, որ սովորաբար փորձ է արվում պաշտպանել և արդարացնել հենց Անդրանիկին, կարծես թե էրզրումի ու այսպիսով Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության գործը միմիայն ու ամբողջությամբ կապվում էր նշանավոր ազգային գործչի անվան հետ:

Հիմնահարցը համակողմանի լուսարանելու նպատակով կարծում ենք, որ նպատակահարմար է այն տարանջատել մի քանի խումբ հարցերի, այն է՝

1. Անդրկովկասում և Կովկասյան ռազմաճակատում բուշնիկյան հեղաշրջման արդյունքում ստեղծված քաղաքական ու ռազմական իրադրության լուսարանում,

2. Նախկին ռուսական կայսրության ու երկրամասի տարածքում հայկական զինական ուժի ձևավորման համապատկերի վերհանում,

3. էրզրումի պաշտպանությանը նախորդող ռազմաքաղաքական զարգացումների փուլի (դեկտեմբեր 1917 – հունվար 1918) հետազոտում,

4. Բերդամրոցի պաշտպանության նախաքայլերը՝ պայքար Երզնկայի համար,

5. Երզնկայի պաշտպանությունը,

6. էրզրումի գոյամարտը,

7. էրզրումի անկման արձագանքների և հետևանքների լուսարանում:

րային կացութիւնը, Գահիրէ, 1972, Տասնապետեան Հրաչ, Նյութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ա հատոր, Բեյրութ, 1976, Աղայան Մ.Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976. Арутюнян А.О., Турецкая интервенция в Закавказье в 1918 г. и оборонительные бои, Ереван, 1984, Չելեպյան Անդրանիկ, Ջորավար Անդրանիկը և հայ հեղափոխական շարժումը, Երևան, 1990, Սիմոնյան Հրաչիկ, Անդրանիկի ժամանակը, Գիրք Ա, Բ, Երևան, 1996:

1. 1917 թ. բուլշևիկյան հեղաշրջմամբ Անդրկովկասում գործնականորեն դրվեց խորհրդային Ռուսաստանից անջատման և անկախ ազգային պետականությունների ձևավորման գործընթացի մեկնարկը: Այդ ճանապարհին Երզնկայի գինադադարը դարձավ առաջին ջրբաժանը, երբ Անդրկովկասյան կոմիսարիատն իր որդեգրած անջատողական և այդպիսով նաև Թուրքիայի հետ մերձենալու քաղաքականության նախաշեմին սկսեց ավելի անթաքույց ու համարձակ գործել: Պաշտոնական փաստաթղթերի մեջ մուտք գործեց «Կովկասի անկախ կառավարություն» ձևակերպումը: Այն շեշտում էր Ռուսաստանից վերջնականապես հեռանալու հարցադրումը և Անդրկովկասը Կովկաս կոչելով հեռապնդվում էր պանթուրքիզմի դեռևս ցիրականացված ծրագիրը՝ հակառուսական դաշինքի մեջ ներառելով նաև Հյուսիսային Կովկասի մահմեդականներին ու հակախորհրդային կառավարություններին: Գործընթացի առաջամարտիկը վրացական մենշևիզմն էր, որի հեռահար ծրագրերը լիովին համահունչ էին Թուրքիայի քաղաքականությանը:

Այդ համատեքստում էր, որ Ա. Չխենկելին բարձրացնում էր վրացական ազգային շրջանակների գլխավոր մտահոգությունը՝ իշխանության համար հակաբուլշևիկյան պայքարում երկրամասում Կովկասյան բանակի բուլշևիկացող զորամասերի ոչ ցանկալի ներկայության խնդիրը: Բացի Անդրկովկասը խորհրդայնացնելու վտանգից՝ վրացական մենշևիզմին ու նաև թաթարմահմեդականներին և Մուսավաթին խորապես անհանգստացնում էր այն, որ ռուսական զորամասերի ներկայությունը նաև համառուսաստանյան միասնական պետության ամբողջականության պահպանման գրավականն էր:

2. 1917 թ. բուլշևիկյան հեղաշրջման արդյունքում ավելի խորացավ և վերջնականապես պարզ դարձավ փետրվարյան հե-

դափոխությունը սկսված քաղաքական միտումը, ըստ որի կազմավորվող Կովկասյան ռազմաճակատի և որպես այդ գործընթացի հետևանք՝ սպասվող թուրքական արշավանքի պայմաններում, հայկական զինական ուժն էր, որ մի շարք հակախորհրդային, պետականամետ ռուս և այլազգի զինվորական գործիչների հետ մեկտեղ պետք է փորձեր պաշտպանել ճակատը և այդպիսով՝ Արևմտյան Հայաստանը:

3. Արևմտահայության ինքնակազմակերպման հիմնահարցի համատեքստում աշխատանքներն ընթացան երկու հիմնական ուղղությամբ.

ա) արևմտահայությանը համախմբելու և վերջինիս առջև ծառայած հրատապ խնդիրների լուծման նպատակով հրավիրել արևմտահայության 2-րդ համագումար,

բ) կազմակերպել արևմտահայերի առանձին գորաբաժին և իրականացնել գորահավաք:

1918 թ. մարտի 4-ին Էրզրումում նախատեսված արևմտահայերի 2-րդ համագումարը թուրքական արշավանքի հետևանքով հետաձգվեց:

Այն հրավիրվեց միայն 1918 թ. ապրիլի վերջին տասնօրյակում, այն էլ՝ Թիֆլիսում և Արևմտյան Հայաստանի բոլոր շրջանների քնակչության ներկայացուցչությունը չապահովելու պատճառով, աշխատեց որպես խորհրդածողով: Վերջինիս կայացումը ապահովվեց դեռ 1917 թ. դեկտեմբերից Երևանում, Թիֆլիսում, Վանում տեղի ունեցած արևմտահայկական ազգային կազմակերպությունների ժողովների և խորհրդակցությունների ընդունած որոշումների արդյունքում:

Արևմտահայերի նախաձեռնությամբ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը իր գործունեությունը համաձայնեցնելով Արևմտահայ ազգային խորհրդի Ապահովության խորհրդի, Հայ

Իրավիճակի անդառնալիությունը նրանում էր, որ ճակատի հայ սպաների ու զինվորների համար որոշակի էր դառնում Սեյմի, ՀԱԽ-ի, հայկական ազգային կուսակցությունների վարած հակասական, զինվորի համար անհասկանալի պարտվողական քաղաքականությունը:

6. Կարևոր է այն հանգամանքը, որ թեև 1917 թ. նոյեմբերի վերջերից Կովկասյան ռազմաճակատի ու քանակի հրամանատարության հետևողական ահազանգերին, ՀԶՄ նոյեմբերյան համագումարի ընդունած որոշումներին, մինևույն է՝ հայ իրականության մեջ ազգային գորամասերի ձևավորման գործընթացը ուշանում էր, իսկ Էրզրումի պաշտպանության համատեքստում կարելի է անգամ ձայնողված համարել:

Միայն 1917 թ. դեկտեմբերի 26-ին է հրապարակվում Երևանի նահանգային ազգային խորհրդի Հատուկ կոմիտեի հրամանը՝ Երևանի նահանգում մոբիլիզացիայի և զորակոչի վերաբերյալ:

7. Էրզրումի պաշտպանության հիմնահարցի համատեքստում այդ «անհասկանալի» հապաղման մասին է վկայում նաև Հայկական առանձին քանակային կորպուսի հաշվետվությունը: Թեև իր վերտառության մեջ այն ընդգրկում է 1917 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1918 թ. օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածը, սակայն դեպքերի նկարագրությունը սկսվում է 1918 թ. մարտի 2-ից:

Ստացվում է, որ ՀԶՄ 1917 թ. նոյեմբերյան համագումարի որոշման համաձայն՝ դեկտեմբերի 2-ից, փաստորեն, վերջնականապես կայացած Հայկական կորպուսը մինչև 1918 թ. մարտ ամիսը Երզնկա-Էրզրում ճակատային գլխավոր հանգույցում չի իրականացրել հայկական շահերից բխող ոչ մի մարտավարական, պաշտպանական գործողություն: Նա իր անմիջական գործունեությունը սկսում է մարտ-ապրիլից, Էրզրումի անկումից հե-

տո: Մինչդեռ, կորպուսն անմիջապես պետք է զբաղեցնել
էրզրում, Ղարաքիլիսա, Վան, Մանսազկերտ շրջանները:

8. Չնայած, մի կողմից՝ ՀԱԽ-ի և ՀԶՄ ձեռնարկած գործնա-
կան միջոցառումներին, դրությունը ռազմաճակատում և, հատ-
կապես, Երզնկա-էրզրում կարևորագույն ռազմավարական
հատվածում մնում է տագնապալի և չհուսադրող: Տիրում էր ընդ-
հանուր անկազմակերպվածություն և խուճապ: Հասկանալի է,
որ այդ ամենի խորքային պատճառը բուլշևիկյան հեղաշրջումն
էր, բանակի բուլշևիկացման գործընթացը և այստեղից էլ՝
Անդրկովկասյան կոմիսարիատի հակախորհրդային և հակառու-
սական քաղաքականությունը: Վերջինիս հետևողական առա-
ջամարտիկի դերում հանդես էր գալիս երկրամասային իշխա-
նության ղեկավար դիրքերը զբաղեցրած վրաց-թաթարական
քաղաքական դաշինքը:

9. Դանդաղում էր և հայկական կողմը: Եթե նաև Կոմիսա-
րիատի քաղաքականությամբ, փաստորեն արագանում և անար-
խիկ կերպարանք էր ձեռք բերում ռազմաճակատի քայքայման
գործընթացը, ինչը հանգեցրեց Թուրքիայի հետ անջատ զինա-
դադարի ստորագրմանը, ապա առավել անբացատրելի է հայ-
կական կազմակերպությունների հապաղման վարքագիծը:

Իհարկե, հնարավորինս տարվում էր նկատելի աշխատանք,
փորձ էր արվում Անդրկովկաս ու այդպիսով Կովկասյան ռազ-
մաճակատ տեղափոխել անգամ Հյուսիսային Կովկասում ու
Մերձսևծովյան շրջաններում կուտակված հայազգի զինայնե-
րին, սակայն միևնույն է չէր լուծվում ժամանակի, մեր կարծիքով
բախտորոշ հիմնահարցը՝ Հայաստանի ու Կովկասի բանալի
էրզրումի պաշտպանության խնդիրը:

10. Երզնկայի զինադադարի տրամաբանությունն, իհարկե,
բանակցությունների, ապա և անջատ թուրք-անդրկովկասյան

պայմանագրի ստորագրման քաղաքական գիծն էր: Այն դրսևորվեց նախ Տրապիզոնի, ապա և Բաթումի բանակցությունների միջոցով:

Խորհրդային Ռուսաստանից անջատվելու, վերջինիս դեմ ձևավորված անդրկովկասյան իշխանությունների թուրքամետ և հակառուսական (պետականամետ ուժերի դեմ) քաղաքականության զագաթնակետը, իհարկե, 1918 թ. ապրիլին Կարսի հանձնումն էր, ինչը և բացատրում էր ճանապարհի ընտրության հետևողականությունը:

Պարզ էր, որ վրաց-թաթարական դաշինքը չէր դիմադրելու թուրքական արշավանքին, չէր պայքարելու ռազմաճակատի պաշտպանության, այն է՝ Արևմտյան Հայաստանի համար: Բայց միևնույն է, այս ամենի հետ, չի արդարացվում հայկական կողմի գործունեության չափն ու նպատակը: Այդ գործունեության պասիվությունը, ոչ հետևողական քայլերը, անմնացորդ նվիրումի բացակայությունը հաստատում է այն թեզը, որ Սեյմի ՀՅԴ խմբակցությունը համակերպվել էր քաղաքական մեծամասնության տարածքային պահանջի, այն է՝ 1914 թ. պետական սահմանի հետ:

11. Էրզրումի պաշտպանության հիմնահարցի 2-րդ փուլը կարելի է սկսել 1918 թ. փետրվարի առաջին տասնօրյակից, ինչը համընկնում է թուրքական արշավանքի և Երզնկայի պաշտպանության հետ:

Երզնկայի անկումից հետո Դաշնակցության մի հատվածի և ՀԱԽ-ի կողմից նոր միայն արձանագրվեց Սեյմի վրաց-թաթարական բացահայտ հակահայկական դիրքորոշումը: Հօսո ցնդեց Կովկասյան ռազմաճակատը միացյալ անդրկովկասյան ուժերով պաշտպանելու ի սկզբանե սնանկ և անհետանկար դիրքորոշու-

մը: Ակնհայտ դարձավ, որ բացակայում է ՀԱԽ-ի, ՀԶՄ և Թ.Նազարբեկյանի միջև համագործակցության գործոնը:

Հիմնվելով փաստերի համադրման վրա՝ թուրքական արշավանքի սկիզբ պետք է համարել ոչ թե փետրվարի 10-ը, այլ փետրվարի 7-ը:

12. Երզնկայի պաշտպանության կազմակերպման և իրակասացման փուլը ընդգրկում է 1917 թ. դեկտեմբերի 2-ից՝ դիմադրելու վերաբերյալ վճռի կայացումից մինչև 1918 թ. փետրվարի 14-ը, երբ Երզնկայի ջոկատը հեռացավ քաղաքից և փետրվարի 24-ին հասավ Էրզրում:

Երզնկայի պաշտպանական ուժերը՝ գնդապետ Ն. Մորելի, Սերաստացի Մուրադի և այլոց գլխավորությամբ, հաղթահարելով անասելի նյութական և բարոյական դժվարություններ ու խոչընդոտներ, միաժամանակ չվարելով վճռական մարտեր, 5000 հայ գաղթականների հասցրին Էրզրում:

Այս իմաստով նրանց նահանջն արդարացվում է, որովհետև նախ՝ ջոկատն էր մեկուսացված, իսպառ բացակայում էր օգնության հույսը, ուստի և չնահանջելու դեպքում ջոկատի ջախջախումն անխուսափելի էր: Նահանջի գլխավոր ռազմավարական բաղադրիչն անդրկովկասյան իշխանության քաղաքական որոշումն էր: Էական է նաև ռազմաճակատի քայքայման և դրա հետևանքով հայկական պաշտպանական ուժերի բարոյալքման ու պարտվողականության գործոնը:

13. Էրզրումի պաշտպանությունն ընդգրկում է փետրվարի 12-ից, երբ թուրքական առաջապահ ուժերը մոտեցան քաղաքին, մինչև փետրվարի 27-ի նահանջը:

Բերդամրոցի հանձնումը հակառակորդին, բացի արտաքին համաանդրկովկասյան քաղաքական պատճառներից, ունի նաև լրջագույն ներքին պատճառներ:

ա) Դա նախ և առաջ թուրքական արշավանքի պայմաններում ահագնացող մահմեդական՝ թուրք-քրդական հակահայկական խռովության գործոնն է և հայ ազգաբնակչության շուրջ ծավալվող ահաբեկչական մթնոլորտի ակտիվացումը:

բ) Ստեղծված պայմաններում քաղաքում և պաշտպանական շրջանում գործող հայկական կազմակերպությունները և գործիչները, փոխանակ պահանջվող և անվիճարկելի համախմբվածության ուղղությամբ աշխատանքները կազմակերպելու, հակառակը՝ յուրաքանչյուրն իր հերթին, մասնավորապես, գնդապետ Թորգոմը, իշխանության դեր կատարելու հավակնություններ էին ցուցաբերում: Առանձին գործիչների անձնական բացահայտ բարոյագրկող վարքագիծը իր հետքն էր թողնում ամբողջ բնակչության բարոյահոգեբանական տրամադրության վրա:

Անգամ Անդրանիկի ժամանումից հետո էլ մինչև վերջ կարգի չբերվեցին բերդի ամրությունները, 700 թնդանոթները, պարենային պահեստները, չէին կատարվում համապատասխան հրամանատարների կարգադրությունները:

14. Անդրանիկի, որպես Էրզրումում ու նրա շուրջ ծավալվող իրադարձությունների գլխավոր դերակատարի գործունեությունը կարելի է բաժանել երկու՝ 1. Թիֆլիսից մինչև Էրզրում նրա ծավալած կազմակերպական, նախապատրաստական և 2. բուն Էրզրումում իրականացրած միջոցառումների ու դիմադրության փուլերի:

Առաջին փուլը հիմնականում բնորոշում է նրա անձի և քաղաքական կերպարի շուրջ ձևավորվող մթնոլորտը, որը հիմնականում 1917 թ. մայիսից Արևմտահայերի առաջին համագումարից հետո սկզբնավորված ու արմատավորված արևելահայարևմտահայ հակամարտությամբ էր արտահայտվում:

Անգիջում պայքարի արդյունքում, Անդրանիկն, ի վերջո, հաստատվեց արևմտահայ դիվլիզիայի հրամանատար: Մերժողների հիմնավորումը, թե վերջինս իր ֆիդայական կերպարով չէր կարող ղեկավարել կանոնավոր զորաջոկատ և լուրջ ռազմական գործողություններ, մեր կարծիքով, միայն պատրվակի դեր էր խաղում: Նա և իր համախոհները դեմ էին տվյալ փուլում Թուրքիայի հետ բանակցային գործընթացին և վստահ էին, որ Էրզրումի տակ է որոշվում ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև ողջ Կովկասի ճակատագիրը: Այս մտտեցումն էր, որ հետագանում էր Անդրանիկին բազմաթիվ այլ ազգային գործիչներից և, ի վերջո, կողմնորոշեց նրա հետագա գործելակերպը նաև Մայիսյան հերոսամարտերի ընթացքում:

Դաշնակցության որդեգրած գերմանո-թուրքական քաղաքական կողմնորոշումն, առայժմ Երզնկայի զինադադարի համատեքստում հանգեցրեց ժամանակի գլխավոր քաղաքական ձախողմանը՝ Տրապիզոնի անպտուղ և կործանարար բանակցություններին:

Երկրորդ փուլում՝ նրա գործունեությունը համընկնում է զորարաժնի հրամանատարի պաշտոնը ստանձնելու հետ. Անդրանիկը անմիջապես, փաստորեն 1917 թ. դեկտեմբերի վերջից դարձավ զորահավաքի գլխավոր ռեժիսոր, կազմակերպիչ ու համակարգող, ազատագրական շարժման գործիչներին ու բանակի հայ սպաներին դեպի Էրզրում ուղորդող:

Փետրվարի 16-ին ժամանելով Էրզրում՝ նա նշանակվեց ջոկատի պետ և ամրոցի պարետ: Իր ներկայությամբ Անդրանիկը նկատելիորեն նպաստեց անկումային մթնոլորտի վերացմանը, բնակչությանը ներշնչեց անվտանգության երաշխիքներ, մի քանի օրվա ընթացքում կարգավորեց պարենային և ճակատների

պաշտպանական խնդիրները, կանխեց հակահայկական մահմեդական խռովությունը:

Անդրանիկի մեծագույն ողբերգությունը կայանում էր նրանում, որ, վստահ լինելով Էրզրումի ճակատագրի, այն է՝ հակառակորդին հանձնելու և 1878 թ. ռուս-թուրքական սահմանը պաշտպանելու Մեյմի ու ՀԱԽ-ի որդեգրած քաղաքականության մեջ, նա անգամ օգնություն չակնկալելով, միևնույն է, հույս ուներ, որ տեղի, իր կարծիքով հայրենասեր ուժերի միջոցով կարող է իրականացնել վճռական ու բախտորոշ դիմադրությունը:

15. Էրզրումի շուրջ բուն ռազմական գործողություններն ընթացան փետրվարի 23-27-ը: Այքի ընկան Ն. Մորելը, Սերաստացի Մուրադը, Սեպուհը, Թորգոմը, Անդրանիկը և այլոք:

Փետրվարի 27-ի առավոտյան 4 անց կեսին սկսվեց Էրզրումի էվակուացիան: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Էրզրումի համար պայքարում ուժերի հարաբերակցությունը գրեթե հավասար էր՝ հայկական 3.000 զինյալների դեմ դրանից մի փոքր ավելի թուրք-քրդական ջոկատներ էին կռվում: Այդպես էլ չհաղթահարվեց անարխիան և հուսալքությունը:

16. Անդրանիկի քաղաքական գծի ճշմարտացիությունը հաստատվեց Տրապիզոնի բանակցությունների ընթացքում, երբ հայտնի դարձավ Ա. Չխենկելիի հայտարարությունը Կարսի ճակատագրի վերաբերյալ: Նույնիսկ Թ. Նազարբեկյանը հստակ գիտակցեց, որ հայությունը չխենկելիների մեծ քաղաքականության գոհն է: Տրապիզոն մեկնած անդրկովկասյան միացյալ պատվիրակության կազմում Ալ. Խատիայանի և մյուսների «գործունեության» մեջ առկա էր ժամանակի գլխավոր հակասությունը, այն է՝ բոլշևիզմի և Անդրկովկասի խորհրդայնացման դեմ պայքարում ստանալ Թուրքիայի աջակցությունը, ավելին՝ ձեռք բերել թուրքերի կողմից խոստացված Անդրկովկասի անկա-

խութունը, բայց ինչի՞ հաշվին: Իրականում ստացվում էր, որ Անդրկովկասի իշխանությունները, այդ թվում և Սեյմի դաշնակցական խմբակցությունը, «ստիպված» զիջելով Արևմտյան Հայաստանը և պնդելով 1914 թ., երբեմն էլ 1878 թ. ռուս-թուրքական սահմանի վրա, մասնակցում և հաշտվում էր վրաց-թաթարական գործարքի հետ:

Բրեստ-Լիտովսկի բոլշևիկյան՝ ռուսական ազգային շահերի դեմ ուղղված հակապետական պայմանագիրն Անդրկովկասի կողմից ընդունելու հանգամանքը թեև հետևողական էր, բայց գործնականում իշխանությունների մեղեղածին քաղաքականություն էր, քանի որ դարձյալ հայկական բոլոր, այդ թվում Կարս-Արդահան տարածքների զիջմամբ էր հիմնավորվում «դեմոկրատիայի» հաղթանակը և որ ավելի կարևոր է, պարզ էր, որ այդ տարածքների համար թուրքերի դեմ չէին կովելու վրացական, առավել ևս՝ թաթարական զորքերը:

Եթե մեզ համար պարզ է դառնում Դաշնակցության մի հատվածի քաղաքականության «ճարահատյալ» անհեռառեսությունը, ապա անորոշ էր մնում նաև «հնարամիտ» վրացական մենշևիզմի քաղաքականության հեռանկարը: Հայության ու հայկական տարածքների հաշվին սեփական շահերի հետապնդումը ևս ժամանակին կանգնեց փակուղու առջև. չէ՞ որ Բաթումի և Թիֆլիսի գրավման խնդիրն օրակարգի հարց դարձավ 1918 թ. մայիսին:

Այնպես որ, համոզված ենք, այս ամբողջ կծիկը կարող էր լուծում ստանալ էրզրումի պաշտպանությամբ:

Վերջին հաշվով տարածաշրջանային մեծ հարցերը լուծվում էին անդրկովկասյան քաղաքական իշխանության մարմինների՝ Կոմիսարիատի և Սեյմի շրջանակներում, արդեն պարտադրված որոշումները հրամցվում էին ազգային մարմիններին, որոնք էլ՝

տվյալ դեպքում հայկական կազմակերպությունները, հայտնվում էին անօգնական վիճակում, փաստի առջև:

17. Էրզրումի անկման կործանարար հետևանքն այն է, որ վերջինս կանխորոշեց ողջ Արևմտյան Հայաստանի կորուստը: Թեև 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի արդյունքում պահպանվեց Արևելյան Հայաստանի մի հատվածը և ստեղծվեց Հայաստանի Հանրապետություն, միևնույն է բաց թողնվեց Արևմտյան Հայաստանի գոյության և հայացման իրատեսական ծրագիրը:

Փաստորեն հայ ազատագրական շարժման մի որոշակի փուլ պարտություն կրեց: Էրզրումի անկման անմիջական հետևանք - կորուստը Կարսի հանձնումն էր և Սեյմի քաղաքականության համառոտըստում նաև Բաթումի ստորացուցիչ պայմանագիրը:

Ваган Г. Меликян, *Институт истории НАН РА, д.и.н., доцент*, Оборона и причины падения Эрзрума (Карин) в 1918 году - После Октябрьского большевистского переворота 1917 г. важнейшие региональные военно-политические задачи решались в рамках Закавказского Комиссариата и Сейма.

В контексте принятия Сеймом протурецкой ориентации и в качестве первостепенной задачи переговорного процесса с Турцией была решена проблема защиты Кавказского фронта, в частности крепости Эрзрум (Карин). Принятые грузино-татарским политическим большинством решения навязывались армянским национальным организациям и фракции АРФД, которые оказались в противоречивой ситуации. Вследствие сложившейся обстановки Эрзрум был сдан противнику.

Vahan H. Melikyan, *NAS RA Institute of History, Doctor of Historical Sciences, Assistant Professor*, The Defense and Causes of the Fall of Erzurum (Karin) in 1918 - After the October Bolshevik coup in 1917, the most important regional military and political tasks were resolved within the framework of the Transcaucasian Commissariat and the Seim.

In the context of the adoption of the pro-Turkish orientation by the Seim and the primary task of the negotiation process with Turkey, the problem of protection of the Caucasian front, in particular the fortress of Erzurum (Karin), was solved. The decisions adopted by the Georgian-Tatar political majority were imposed on the Armenian national organizations and the fractions of the ARFD, who found themselves in a contradictory situation. Thus, as a result of the prevailing circumstances, Erzurum was surrendered to the enemy.

ԿԱՐԵՆ Պ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱՍ պատմության ինստիտուտ, պ. գ. թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Բանալի բառեր*¹ Հայաստանի Հանրապետություն, բնակչություն, գաղթականներ, պատմագրություն, մարդահամար, արևմտահայեր:

Ուսումնասիրողների ուշադրությունից չի վրիպել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությանը (1918-1920 թթ.) վերաբերող պատմագիտական աշխատություններում տեղ են գտել Առաջին հանրապետության սահմաններում և դրանից դուրս գտնվող հայ գաղթականների բազում և տարատեսակ թվային տվյալներ²: Հատկանշական է, որ նման իրավիճակ գոյություն ունի նաև ժողովրդագրական բնույթի ուսումնասիրություններում³: Ըստ էության, պատմագիտական ուսումնասիրու-

² Տե՛ս Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Երևան, 1975, էջ 58, Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Երևան, 2005, էջ 50-51, 135, 146, 150, Զատիկյան Հ., Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը 1918-1920 թթ. (պետական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի հիմնահարցերը), պ.գ.թ. գիտական աստիճան հայցելու ատենախոսություն, Երևան, 1996, էջ 146, Դանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում (1914-1922 թթ.) (շարժը, կացությունը, թվակազմը), պ.գ.թ. գիտական աստիճան հայցելու ատենախոսություն, Երևան, 1996, էջ 36, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, 2005, էջ 146-147:

³ Տե՛ս Կորկոտյան Զ., Ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն, Երևան, 1929, N 2 աղյուսակ, «Գյուղացիական ազգաբնակչություն», Արեւյան Պ., Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում (1 հունվարի 1914 թ. – 1 հունվարի 1930 թ.), Երևան, 1930, էջ 62, Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ բնակչությունը (տնտեսա-աշխարհագրական ուսումնա-

թյուններում ամկա է փախստականների թվակազմերի որոշակի բազմազանություն: Բերված գաղթականական թվային տվյալներն, առանձին դեպքերում, իրարից էապես տարբերվում են: Հայաստանի առաջին հանրապետությանը վերաբերող պատմագիտական աշխատություններում գաղթականների թվաքանակի հետ կապված նման վիճակը վերաբերել է ինչպես գաղթականության ընդհանուր, այնպես էլ առանձին վերցրած արևմտահայ փախստականների թվային տվյալներին: Ուսումնասիրության նպատակն է մանրամասն ներկայացնել պատմագրության մեջ գաղթականների թվաքանակի շուրջ ստեղծված վիճակը՝ վերհանելով վերջինիս առաջացման հիմնական պատճառները և հաղթահարման ուղիները:

Այսպես, «Հայկական հարցը 1918 թվականին» աշխատությունում Հ. Ավետիսյանը նշել է, որ «Արևելյան Հայաստանի փոքր հողակտորի վրա 1918թ. մայիսի 15-ի վիճակով կար 475 հազար գաղթական: Նրանցից 260 հազարը տաճկահայ էին, 135 հազարը՝ Կարսի մարզից: Սկսվել էր Ախալքալաքի, Շիրակի, Սուրմալուի շրջանների բնակչության գաղթը: Գաղթականների թիվը գնալով ստվարանում էր, բնակեցման տեղը նվազում»⁴: 1918 թ. մայիսի վերջերին, «Անդրկովկասի սահմանների մեջ, բացի Բաքուի և Գանձակի նահանգների հայերից, տեղահանված հայ ժողովրդի քանակը այդ կարճ շրջանում հաշտում էր 700.000, – գլխի է Ա-Դո-ն (Հ. Տեր-Մարտիրոսյանը) «Հայութեան երկունքը» աշխատությունում, – որից տաճկահայեր՝ 250.000, Կարսի նահանգից, Բաթումի, Արդինի, Ախալքալաքի և Ախալցխայի շրջաններից՝ անլի քան 200.000, Սուրմալուի, Սարդարաբադի,

սիրություն), Երևան, 1975, էջ 33, Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը, Երևան, 2001, էջ 136:

⁴ Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 202:

Ալեքսանդրապոլի, Փամբակի և Լուսայ շրջաններից դարձեալ աւելի քան 200. 000 հոգի»⁵:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունն անվանելով «գաղթականական կայան»՝ Ս. Վրացյանը իր «Հայաստանի Հանրապետություն» աշխատությունում գրել է, որ «ամբողջ երկրում շուրջ 450.000 գաղթական էր թափված, որից 40.000-ը Երևանում»⁶: Նշված աշխատությունում արևմտահայ փախստականների թվաքանակին Ս. Վրացյանն անդրադարձել է նաև 1919 թ. փետրվարին կայացած Արևմտահայ 2-րդ համագումարի պատգամավորների կազմը ներկայացնելու ժամանակ: Այստեղ նա բերել է համագումարի մանդատային հանձնաժողովի կողմից վավերացված արևմտահայ փախստականների թվային տվյալները⁷, որի հանրագումարը կազմել է 219.793 մարդ⁸: Նշելով, որ Բաթումի պայմանագրից հետո «Հայաստանը կը ներկայացնէր իրական մի քանտ, մի գաղթակայան»⁹, Մ. Տեր-Մինասյանը (Ռուբեն) իր հուշագրությունում ներկայացրել է «մոտ 200.000» տաճկահայ գաղթականության, իսկ ընդհանուր վերցրած՝ «200.000ից աւելի գաղթականների» թվաքանակը¹⁰: Ա. Խատիսյանի «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» աշխատությունում 1919 թ. մայիսի համար նշել է, որ «300.000 թրքահայ գաղթականներ անհամբեր կը սպասէին

⁵ Տե՛ս Ա.-՚իո (Տեր-Մարտիրոսյան Հովհաննես), Հայութեան երկունքը, Երևան, 2014, էջ 392:

⁶ Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 199:

⁷ Տե՛ս Նույն տեղում, էջ 270-271:

⁸ Տե՛ս Հայրապետյան Կ., 1919 թ. հունվար-փետրվարին փախստականների թվային տվյալների աճի մասին, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), հ. Ա, Երևան, 2013, էջ 54:

⁹ Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է. հատոր, ԹԷԽրան, 1982, էջ 144:

¹⁰ Տե՛ս Նույն տեղում, էջ 149, 155, 242:

սահմաններու բացման, որպէսզի կարողանան վերադառնալ իրենց տեղերը»¹¹:

Ա - Դո-ն գաղթականության թվաքանակը ներկայացնելիս հիմնվել է 1918 թ. հոկտեմբերի 1-ի միօրյա մարդահամարի տվյալների վրա: Այս մարդահամարը համապետական վիճակագրական ձեռնարկումներից առաջինն է եղել, որի շրջանակներում իրականացվել է նաև գաղթականության հաշվեգրում¹²: Նշելով, որ այդ մարդահամարը կատարվել է «Նոր-Բայագեղի ամբողջ գառառում, Երևանի և Էջմիածնի գառառների կէս մասերում, Դարալագեագում, Նախիջևանի գառառի մէկ փոքրիկ մասում և Ղազախի հայկական գառառամասում», նա ներկայացրել է այդ տարածքում 545.000 ազգաբնակչության ընդհանուր թվաքանակը, որից 301.000-ը տեղաբնակներ և 244.000-ը փախստականներ¹³: Վերջիններից 148.000-ը արևելահայեր էին, 80.000-ը՝ արևմտահայ (16000-ը եզդի փախստականներ էին)¹⁴: Երևանում 70.000 բնակչությունից տեղաբնակները կազմել են 18.000 մարդ, արևելահայ փախստականները՝ 35.000, արևմտահայ փախստականները՝ 17.000¹⁵: Ա - Դո-ն հայ պատմագրության մեջ միակ հեղինակն է, ով իր աշխատությունում ներկայացրել է 1918 թ. միօրյա մարդահամարի թվային տվյալները:

1918 թ. միօրյա մարդահամարը մեր պատմագիտության կողմից չի արժանացել որևիցէ ուշադրության, փաստորեն, անտես-

¹¹ Տե՛ս Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 169:

¹² Տե՛ս «Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի 1918 թ., նույնը՝ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, էջ 60:

¹³ Տե՛ս Ա - Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), նշվ. աշխ., էջ 492-493:

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 492:

վել է¹⁶։ Դրան անդրադարձել է միայն Ա-Դո-ն (Հ. Տեր-Մարտիրոսյանը)։ Սակայն նրա «Հայութեան երկունքը» աշխատությունը՝ պատրաստ լինելով տպագրության դեռևս 1920 թ., գրքի տեսքով հանրությանն է ներկայացվել միայն 2014 թ.։ Հատկանշական է, որ 1918 թ. մարդահամարի ժամանակակիցներ հանդիսացող և միաժամանակ հանրապետության իշխանական վերնախավի մաս կազմող, նորանկախ հանրապետության ճանաչված պետական, քաղաքական ղեկավար գործիչներ Ս. Վրացյանը և Ա. Խատիսյանը իրենց գործերում ոչ միայն չեն անդրադարձել հանրապետության ներքաղաքական կյանքում այդ կարևոր հասարակական-քաղաքական իրադարձությանը, այլև տվյալ ժամանակաշրջանի համար ներկայացրել են գաղթականների այնպիսի թվային տվյալներ, որոնք նշված մարդահամարի տվյալների հետ համեմատած բավականին ուռճացված են¹⁷։

Զորավար Անդրանիկը նշել է Կովկասում ապաստանած 380 հազար արևմտահայ փախստականների թվաքանակը¹⁸։ Վ. Տերյանի տվյալներով՝ Թուրքիայից Ռուսաստան փախած արևմտահայ փախստականների թվաքանակը փոքր-ինչ անցել է 300 հազարից¹⁹։ Իսկ այդ ժամանակշրջանի Կովկասում հայտնի բոլշևիկյան ղեկավարներից Գ. Օրջոնիկիձեն 1918 թ. հոկտեմբերի 12-ին Վլադիկավկազից Վ. Լենինին ուղարկած հեռագրում գրել է, որ «Երևանի նահանգի երկու գավառների մի փոքր հողակտորի վրա կուտակվել են ավելի քան 600.000 գաղթականներ»²⁰։

¹⁶ Տե՛ս Հայրապետյան Վ., 1918 թ. հոկտեմբերի 1-ի միօրյա մարդահամարը Հայաստանի Հանրապետությունում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), հ. Գ, Երևան, 2013, էջ 76-77։

¹⁷ Տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ. 199, 270-271, Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 169։

¹⁸ Տե՛ս «Вестник архивов Армении» Ереван, 1991, 1(89)-2(90), стр. 385.

¹⁹ Տե՛ս Տերյան Վ., Երկերի ժողովածու, Երևան, 1979, հ. 4, էջ 357։

²⁰ Տե՛ս Օրджоникидзе Г., Избранные статьи и речи, Москва, 1956, т. 1, с. 45.

«Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը» աշխատությունում Ծ. Աղայանը ներկայացրել է գաղթականների 350 հազար թվաքանակը²¹: Ս. Ալիխանյանը իր «Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.)» աշխատությունում հիշատակում է Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս գաղթած 650 հազար արևմտահայերի՝ որից «Հայաստանում կուտակվեցին 400 հազար հոգի, Վրաստանում՝ 150 հազար»²²: Այնուհետև Ս. Ալիխանյանը նշել է, որ «Հայաստանում 1919 թվականին կար 310 835 գաղթական, իսկ տեղական աղքատներ՝ 271 041 մարդ»²³: «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակչության 7-րդ հատորում ներկայացնելով 1919 թ. փետրվարին Հայաստանի Հանրապետության սահմաններում ըստ շրջանների գաղթականների թվաքանակը և նշելով, որ «մեծ թվով գաղթականներ կային նաև Հայաստանի մյուս շրջաններում», ներկայացվել է գաղթականության 263 393 մարդ ընդհանուր թվաքանակ²⁴:

«Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը (1915-1940 թթ.)» աշխատությունում Հ. Մելիքսեթյանը նշել է, որ «այդ ժամանակ Հայաստանում կային ավելի քան 400 հազար արևմտահայ գաղթականներ ու որրեր»²⁵, իսկ իր «Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.)» հաջորդ ուսումնասիրությունում ներկայաց-

²¹ Տե՛ս Աղայան Ծ., Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957, էջ 195:

²² Տե՛ս Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917 - 1921 թթ.), Երևան, 1966, էջ 88:

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 89:

²⁴ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1967, էջ 60-61:

²⁵ Տե՛ս Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915 - 1940 թթ.), Երևան, 1975, էջ 57:

րել է նույն թվաքանակը արդեն ամբողջ Անդրկովկասի համար²⁶: Գ. Գալոյանը բերել է ամերիկյան կոնգրեսին ներկայացված Հարթորդի զեկուցման տվյալները, որի համաձայն Անդրկովկասում գտնվել է 300.000 արևմտահայ փախստական²⁷: Իսկ «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.» աշխատությունում ներկայացրել է 1919 թ. հունվարին Հայաստանի խորհրդում պարենավորման նախարարի կողմից բերված «350 հազ[ար] տաճկահայ և 100 հազ[ար] Կարսից փախած գաղթականների» թվային տվյալները²⁸: 1919 թ. ապրիլի 25-ին խնամատարության նախարարության կողմից ՀՀ կառավարությանը ներկայացված զեկուցագրի վրա հիմնվելով Ս. Ավետիսյանն իր «Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ.» ուսումնասիրությունում նշում է, որ «Արևմտյան Հայաստանից գաղթականների թիվը հասնում էր 463.000-ի, որոնցից Հայաստանի Առաջին հանրապետության սահմաններում ապաստանել էին 263.000, իսկ 200.000-ը ցրվել էին Հայաստանի սահմաններից դուրս և հանգրվանել Վրաստանում, Ատրպատականում, Հյուսիսային Կովկասում, Ռուսաստանի այլ բնակավայրերում»²⁹:

«Հայաստանի Հանրապետություն» աշխատության առաջին հատորի հանրապետության գոյության առաջին ամիսներին վերաբերող մասում ամերիկահայ պատմաբան Ռ. Հովհաննիսյանը

²⁶ Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք – Սփյուռք անչլությունները և հայրենադարձությունը (1920 – 1980 թթ.), Երևան, 1985, էջ 42:

²⁷ Տե՛ս Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье (1900-1922), Ереван, 1969, стр. 290.

²⁸ Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 61:

²⁹ Տե՛ս Ավետիսյան Ս., Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Երևան, 2009, էջ 16:

գրել է, որ «շուրջ 300.000 գաղթականներ կուտակվել էին Հանրապետության հեղձուկ սահմաններում»³⁰: Դրա տողատակում նա նշել է Հայաստանի Հանրապետության պատվիրակության դիվանի գործերից մի քանիսում ներկայացված «ավելի քան 500.000» գաղթականների թվաքանակը և Ս. Ալիխանյանի «Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921)» աշխատությունում բերված նախկին Ռուսական կայսրության տարածքներում 650.000 հայ գաղթականների մասին թվաքանակը, որից 400 հազարը գտնվում էին Հայաստանի սահմաններում և 150 հազարը՝ Վրաստանում³¹: 1918-1919 թթ. ձմռան համար Ռ. Հովհաննիսյանը կանգ է առել «մոտավորապես 500.000» գաղթականների թվականի վրա, «որոնցից շուրջ 350.000 հավաքված էին Երևանի նահանգում» և ներկայացրել 1918 թ. դեկտեմբերի 6-ի խնամատարության նախարարության տեղեկագրում տեղ գտած նրանց տեղաբաշխվածության պատկերը: Այստեղ տողատակում նա հղում է կատարել Ծ. Աղայանի «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը» աշխատության վրա: Այնուհետև Ռ. Հովհաննիսյանը մատնանշել է Ս. Ալիխանյանի «Մովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921)» աշխատությունում բերված 310.835 գաղթականների և 271.041 տեղացի չքավորների, Հայաստանի Հանրապետության պատվիրակության դիվանի 393 700 գաղթականների թվաքանակները: Շարունակելով՝ նա գրել է, որ Կովկասում հաստատված ամերիկյան և բրիտանական պաշտոնական և մարդասիրական օգնությունը կազմակերպող մի շարք աղքատներ ներկայացրել են նվազագույնը կես միլիոն հայ գաղթականներ, որից ավելի քան 300 հազարը՝

³⁰ Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, էջ 50:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 50-51:

Հայաստանում³²: Ռ. Հովհաննիսյանն իր աշխատությունում այնուհետև մի քանի անգամ նշել է Կովկասում 500 հազար գաղթականների թվաքանակը³³:

Ա. Հակոբյանի «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները» աշխատությունում նույնպես ներկայացվել են 1918 թ. դեկտեմբերի 6-ի խնամատարության նախարարության տեղեկագրում բերված Հայաստանի Հանրապետությունում գաղթականության վերը նշված թվային տվյալները՝ տասը գաղթականական շրջաններում նրանց բաշխվածությամբ³⁴: Միաժամանակ հեղինակը բերել է «Հոսանք» թերթի 1918 թ. նոյեմբերին հրատարակած տվյալները, ըստ որի «առկա ողջ գաղթականներից 180 հազարը արևելահայ էին, իսկ 170 հազարը՝ արևմտահայ»³⁵: Աշխատության «Ներգաղթի խնդիրը խորհրդարանում» խորագիրը կրող մասում Ա. Հակոբյանը բերել է «ներգաղթի խնդիրներով զբաղվող, արևմտահայ գործիչ, պատգամավոր Ա. Մաքսապետյանի» թվային տվյալները՝ ըստ որի «1919 թ. գարնանը Կովկասում կային 222 հազար գաղթական, Բաղդադ-Բակուրեյում՝ 15 հազ., Հալեպում՝ 80 հազ., Եգիպտոսում՝ 10 հազ., և այլն»:

Ա. Հակոբյանը հեղինակել է նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմության» ակադեմիական հրատարակության 4-րդ հատորի առաջին գրքի Հայաստանի առաջին հանրապետության ներքին դրությանը վերաբերող երկրորդ գլխի «Գաղթականության խնդիրը» խորագիրը կրող բաժինը: Այստեղ հեղինակը հղում կատարելով Հ. Ավետիս-

³² Տե՛ս նույն տեղում, էջ 135-136:

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 146, 150:

³⁴ Տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 147:

³⁵ Տե՛ս նույն տեղում:

յանի «Հայոց ազգային միասնության հաղթանակը» աշխատության վրա³⁶, բերել է 1918 թ. մայիսի կեսերին Արևելյան Հայաստանում կուտակված 475 հազար գաղթականի թվաքանակը, որից 260 հազարը արևմտահայ էին, 135 հազարը՝ Կարսից մարզից և այլ վայրերից³⁷: 1918 թ. ամռան համար ներկայացվել է Ս. Վրացյանի կողմից բերված Հայաստանի Հանրապետության փոքրածավալ տարածքի վրա կուտակված շուրջ 450 հազար գաղթականների թվաքանակը³⁸: Այստեղ բերվել են նաև 1918 թ. հոկտեմբերի սկզբին «պաշտոնապես արձանագրված» 330 հազար գաղթականների ընդհանուր թվաքանակը, ապա 1918 թ. դեկտեմբերի 6-ի խնամատարության նախարարության տեղեկագրում տեղ գտած մոտ 350 հազար գաղթականների թվաքանակը³⁹: Փորձելով որոշ պարզություն մտցնել գաղթականների թվային տվյալների նման ակնհայտ քազմազանության մեջ՝ Ա. Հակոբյանը՝ նշված վերջին 350 հազար արևելահայ և արևմտահայ գաղթականների ընդհանուր թվաքանակը համեմատելով 1919 թ. փետրվարին Հայաստանի առաջին հանրապետության սահմաններում տեղակայված արևմտահայ գաղթականների 263 393 թվաքանակի հետ, գալիս է այն եզրահանգման, որ «տվյալների պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ երկու-երեք ամսվա ընթացքում նրանց թվաքանակը նվազել էր շուրջ 90 հազարով»⁴⁰: Այնուհետև այստեղ նույնպես ներկայացված է «ներգաղթի խնդիրներով զբաղվող արևմտահայ գործիչ» Ա. Մաքսա-

³⁶ Տե՛ս Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը: 1918 թվականի մայիս, Երևան, 1998, էջ 76, նաև՝ նույնի, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 202:

³⁷ Տե՛ս Հայոց պատմություն, հ. 4, գիրք I. Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան, 2010, էջ 61:

³⁸ Տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 199:

³⁹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. 4, գ. 1, էջ 62, 63:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 63:

պետյանի 222 հազար արևմտահայ գաղթականի թվային տվյալը՝ արդեն իսկ Անդրկովկասի համար⁴¹:

Հայաստանի առաջին հանրապետությունում գտնվող գաղթականների թվային տվյալների նման խառնակ վիճակ գոյություն ունի նաև հայ հեղինակների ժողովրդագրական բնույթի աշխատություններում: Այսպես, Զ. Կորկոտյանն իր «Ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն» ուսումնասիրությունում ներկայացրել է ժողովրդագիր Բ. Իշխանյանի ղեկավարությամբ 1919 թ. իրականացված գյուղատնտեսական հաշվեգրման արդյունքում ստացված 140.017 արևմտահայ, 22.027 արևելահայ գաղթական, որի հանրագումարը կազմել է ընդամենը 162.044⁴²: Պ. Արեղյանի ժողովրդագրական աշխատությունում Խորհրդային Հայաստանի տարածքի համար նշվել է 115.989 արևմտահայ փախստականների թվաքանակը⁴³: Հենվելով Պ. Արեղյանի ուսումնասիրության վրա՝ Գ. Ավագյանը կանգ է առել Խորհրդային Հայաստանի տարածքում 301.523 հայ գաղթականների ընդհանուր թվաքանակի վրա⁴⁴: Այստեղ տողատակում հեղինակը նշել է, որ «այս թիվը ճշտվում է նաև «Հառաջ» թերթի 1920 թ. ապրիլի 6-ի (N 72) վկայությամբ, ըստ որի «օրական կես ֆունտ այրուր ստացող գաղթականների թիվը այդ ժամանակ հասնում էր 310835 հոգու»⁴⁵: Վ. Խոջաբեկյանը նշել է, որ «առանձին տվյալներով միայն Արևմտյան Հայաստանից Արևելյան ներգաղթողների ընդհանուր թիվն ընդունվում է 500 հազարից մինչև 600 հազար մարդ»⁴⁶:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 65:

⁴² Տե՛ս Կորկոտյան Զ., նշվ. աշխ., N 2 աղյուսակ, «Գյուղացիական ազգաբնակչություն»:

⁴³ Տե՛ս Արեղյան Պ., նշվ. աշխ., էջ 62:

⁴⁴ Տե՛ս Ավագյան Գ., նշվ. աշխ., էջ 33:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

⁴⁶ Տե՛ս Խոջաբեկյան Վ., նշվ. աշխ., էջ 136:

Новый губернатор полковник Э. Л. Дели назначал центральный совет, исходя из этнического состава двух округов, а все расходы по управлению покрывались местными налогами. В след за этим он определял день выборов во всей подотчетной ему демилитаризованной зоне, хотя и после выборов американец мог смещать любое должностное лицо. Железная дорога и телеграф входили в систему связи и транспорта РА, однако население не обезоруживали.

Б. Гаскель не ограничивался признанием армянской юрисдикции в Зангезуре или одной лишь помощью для Нахичевана. Он, как и другие благотворители, сотрудники Госдепартамента, члены американской делегации в Париже и законодатели в Конгрессе, всегда признавал второй район частью Республики Армения⁴⁷ и не скрывал факт сотрудничества в этом регионе

⁴³ НАА, ф. 200, оп. 1, д. 353, ч. 1, л. 67-68 и русский текст: л. 66. См. также: US NA, RG 59, 860J.48/1, T1192/Reel 7/f. 93/км 36; НАА, ф. 200, оп. 1, д. 366, л. 7.

⁴⁴ Там же, ф. к. 1021, оп. 2, д. 964, л. 127.

⁴⁵ Там же, ф. 200, оп. 1, д. 357, л. 520.

⁴⁶ Там же, д. 212, л. 186-188. О согласии бакинских властей: US NA, RG 256, 184.021/309-310/f. 1, M820/Reel 232/км 4 и Армения в документах, с. 260, 262. В: Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 134-135, документ датирован 25 октября. То, что первая дата точнее, подтверждает НАА, ф. 200, оп. 1, д. 395, л. 5, а также Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 139:

⁴⁷ См. например телеграмму начальника американской военной миссии в Армению генерала-майора Дж. Харборда от 6 октября 1919 г. главе дипломатической

между азербайджанскими и турецкими войсками. Донесения в Париж и Вашингтон часто упоминали имя начальника штаба нахичеванских мусульманских отрядов - полковника османской армии Халила-бея. И если местные отряды и власти в Баку проявляли уступчивость к представителю Союзников, то Халил-бей арестовывал и применял силу к прибывавшим американцам, переименовав навозначенного губернатора - полковника Э. Дели, в офицера по вопросам помощи.

Именно при посредничестве и под нажимом Верховного комиссариата, и конечно после победы Арсена Шахмазяна в Зангезурском сражении 4-12 ноября 1919 г., правительство Азербайджана заключило в Тифлисе договор от 23 ноября с РА о взаимном ненападении. Как известно, в считанные дни после причиненного А. Шахмазяном разгрома, 16 ноября в Баку был командирован американский майор П. Келлоч. Последний тут же получил согласие азербайджанской стороны прекратить ее нападение. После его телеграммы, и. о. Верховного комиссара незамедлительно пригласил обоих премьер-министров приехать 20 ноября в Тифлис на мирные переговоры.⁴⁸

По армяно-азербайджанскому договору от 23 ноября 1919 г. обе стороны обязались открыть дороги в Зангезур, решать все конфликты мирными переговорами или прибегнуть к арбитражу. Документ входил в силу со дня его подписания, но подлежал ратификации. В качестве основного и нейтрального арбитра признавался и. о. Верховного комиссара полковник Дж. Риа, в

миссии США в Париже Ф. Полку: US NA, RG 59, 184.02/307/f. 2, M820/Reel 232/км 4. Опубликовано в: Армения в документах, с. 257-260.

⁴⁸ См. отчет и. о. Верховного комиссара Дж. Риа от 1 декабря 1919 г. Верховному комиссару его страны в Турции контр-адмиралу М. Бристоллю и госсекретарю Р. Лансингу: US NA, RG 59, 860J.01/180/Encl. 1/f. 5-6, T1192/Reel 2/км 38.

присутствии которого, вместе с грузинским министром иностранных дел Е. Гегечкори, и заключили данное соглашение.⁴⁹ В последствии оно конечно нарушалось, но все же играло свою сдерживающую роль.

Вскоре по возвращению из его двухмесячной поездки в Константинополь и Париж, В. Гаскель проявил совсем другое отношение к региональным конфликтам. Он сделал попытку торговли с дипломатическим представителем РА в Тифлисе Л. Евангуляном вокруг Зангезура и Нахичевана. В ответ на соответствующий доклад, министр-председатель А. Хатисян резко ответил, что управление первого из них местным Национальным советом и американское генерал-губернаторство во втором являются "последней уступкой Армении". Любое надуманное нововведение в данном вопросе "вызовет народные волнения, противоречит распоряжениям англичан, Дж. Риа и самого В. Гаскеля"⁵⁰.

Через десять дней Верховный комиссар снова посетил Армению с 18 по 21 декабря, объехав Карс, Александрополь, Караклис. В первый же день он встретился в Ереване с А. Хатисяном, министром финансов и продовольствия С. Араратяном, министром призрения и труда А. Бабаляном. Комиссара сопровождали его представитель в РА полковник Ч. Телфорд, начальник политического отделения майор П. Келлоч и начальник по снабжению Юлиа.⁵¹ В ходе совместного обсуждения, дливше-

⁴⁹ НАА, ф. 200, оп. 1, д. 282, л. 35-36; US NA, RG 59, 860J.01/180/Encl. 7, T1192/Reel 2/км 38; Нагорный Карабах в 1918-1923 гг., Сб. док. и мат., под ред. В. А. Микаеляна, Ереван, 1992, с. 352-353; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 140-141:

⁵⁰ Обе цитаты: НАА, ф. 275, оп. 5, д. 101, л. 94.

⁵¹ Отчет об этом совещании см.: там же, ф. 200, оп. 1, д. 638, ч. 1, л. 1-2.

гося с 5 до 11 часов вечера, власти республики были недовольны тем, что они не участвовали в распределении продовольствия.

По их мнению, только правительство могло продавать сгущенное молоко, сахар, лоби и одежду. Правда, 44% поставок на тот момент составляли безвозмездные пожертвования, но все остальное покрывали долгосрочные кредиты, включая уже выданные расписки на 11,5 млн. долл.⁵², а значит власти не могли оставаться в стороне от столь важного дела. Разделяя их точку зрения, Комиссар отдал распоряжение всем районным командирам ПБВ отделить на складах купленное РА продовольствие от имущества благо-творителей. Службы помощи передали также правительству все свои запасы детского питания и мыла.⁵³

Обе стороны знали, что в конце 1919 г. ААП завершала свою деятельность в республике, поэтому они подробно говорили о проблемах сева и самообеспечения. Власти Северного Кавказа не желали продавать зерно на грузинский рынок, и В. Гаскель взялся обеспечить его транзит в Армению под американским флагом. Он брался также перевести с Северного Кавказа в РА армянские части, готовые влиться в местную армию. Не возражал и против найма в нее британских инструкторов. В свою очередь, правительство известило Верховного комиссара о своем намерении занять Кохб, где можно было добывать соль, а также соглашалось поставить хлопок на экспорт.

В целом, В. Гаскель старался продвигать и утверждать интересы своей страны, однако он не мог этого сделать из-за отсутствия военной силы. Полковник и члены ПБВ официально

⁵² ЦАА, ф. 200, оп. 1, д. 362, л. 99.

⁵³ Там же, д. 638, ч. 1, л. 6.

писали в вышестоящие инстанции, что хотя бы один пехотный полк или бригада могли значительно оздоровить обстановку.

В качестве вывода можно утверждать: помощь США армянам в Западной Армении и беженцам в РА была не просто благотворительностью, а гуманитарной интервенцией, ставшей прообразом для многих последующих действий. Она являлась составным компонентом американской политики невоенного, экономического проникновения в регион и диктовалась не отсутствием интересов, а конкретной обстановкой. В то же время, масштабность охвата и руко-водящая роль государства в деле помощи создавали у правительства РА ложные надежды и завышенные ожидания. Хотя уже с 19 ноября 1919 г., когда Сенат США в первый раз открыто и официально отверг политику президента В. Вильсона в вопросе Версальского договора, а с ним и идею мандата, власти Республики Армении обязаны были сделать выводы и внести изменения в их международные отношения.

Գայանե Գ. Մախմուրյան, ԳԱԱ պատմության ինստիտուտ,
պ.գ.դ., Դաշնակիցների գերագույն հանձնակատար Վ. Հասկելի կազմակերպչական, մարդասիրական ու քաղաքական գործունեությունը Հայաստանում 1919 թ. - Համաշխարհային պատերազմի և Մեծ եղեռնի աղետալի հետևանքների հաղթահարումը Հայաստանում տեղի է ունեցել ԱՄՆ-ի լայնածավալ օժանդակությամբ: Նախագահ Վ. Վիլսոնի անմիջական մասնակցությամբ գործող Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեն (կամ Ամերկոմը, հաստատվել է 1918 թ., ղեկավարներ՝ Զ. Օ. Էռոլը, Զ. Էլդերը, Է. Ցարոուն), պետական Ամերիկյան պարենավորման վարչությունն (1917-1919 թթ.) ու Ամե-

րիկյան նպաստամատույց վարչությունը (Երևանում գործում էր 1919 թ. հուլիսի 11-ից մինչև 1920 թ. օգոստոսի 1-ը, պետ՝ մայոր Չ. Ս. Ֆորբս) աշխատում էին Փարիզի հաշտության կոնֆերանսում հաստատված նպաստի հարցերով գլխավոր տնօրեն Հ. Հուվերի և Հայաստանում Դաշնակիցների Գերագույն հանձնակատար գեղապետ Վ. Հասկելի հսկողության ներքո: Վերջինը նշանակվել է 1919 թ. հուլիսի 5-ին, Երևան է ժամանել օգոստոսի 21-ին:

Այս միասնական համակարգը գործում էր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հետ 1919 թ. ապրիլի 8-ին ու 12-ին, օգոստոսի 7-ին կնքված երկկողմ համաձայնագրերի հիման վրա: 1919 թ. առաջին կեսին Հայաստան է հասցվել մոտ 20 հազ. տոննա սննդամթերք: 1919 թ. մայիսի 22-ից սկսած, Անդրկովկասով ու Հյուսիսային Կովկասով մեկ ծավալված փրկարար աշխատանքն ընդգրկել է մինչև 800 հազ. մարդ, այդ թվում՝ ՀՀ սահմաններում առկա 500 հազ. գաղթական ու ներքին տարագիր անձ, որոնցից 350 հազարն արևմտահայեր էին: Հանրապետության ներսում օգնություն է ստացել է 350 հազ. մարդ, այս թվում՝ 220-250 հազ. արևմտահայ: Ամերիկյան բոլոր մատակարարումների 45 %-ը կազմում էր ուղիղ և անհատույց քարեգործությունը:

Gayane G. Makhmourian, *NAS RA Institute of History, Doctor of Historical Sciences, Administrative, Humanitarian and Political Activities of the Allied High Commission W. Haskell in Armenia in 1919 - Armenia had been ravaged and plunged into humanitarian disaster by the Genocide and hostilities of the First World War. It overcame this calamity with the large-scale aid, delivered by the USA. The benevolent American Committee for*

Relief in the Near East, which enjoyed the direct participation of the President W. Wilson from the very beginning in 1918 (commanders J. O. Arroll, J. Elder, E. A. Yarrow), together with the state-owned American Food Administration (acted in 1917-1919) and the American Relief Administration (operated in Yerevan from July 11, 1919, till August 1, 1920, by the Major C. S. Forbes) worked under the guidance of the Director General of Relief H. Hoover and the Allied High Commissioner in Armenia W. Haskell (assigned on July 5, 1919, had arrived in Yerevan on August 21). They were both appointed by the Paris Peace Conference.

This unified structure took as a basis the bilateral agreements with the Government of the Republic of Armenia, signed as of April 8 and 12, then on August 7, 1919. In the first half of the current year it delivered almost 20,000 tons of foodstuff. The rescue mission began on May 22, 1919, and embraced up to 800,000 souls all around the Transcaucasia and North Caucasus, including 500,000 refugees and displaced persons in the Republic of Armenia (350,000 of them being Western Armenians). 350,000 men had been saved within the borders of the Republic (220-250,000 of them – Western Armenians). 45 per cent of all American supplies were the direct and gratis aid.

ՀԱՄՈ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԳԱՍ պապմտության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

ՀՐԱՏԱՐԱՎԶԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ
ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920-1921 ԹԹ.)¹

*Բանալի բառեր*² Խորհրդային Հայաստան, տպարան, հրատա-
րակչություն, մամուլ, պետական մենաշնորհ, պետականացում,
դեկրետ:

Արտաքին միջամտությամբ և կառավարության հրաժար-
ման արդյունքում 1920 թ. դեկտեմբերին Հայաստանում հաս-
տատվեց խորհրդային վարչակարգ: Հայաստանի խորհրդայնա-
ցումն ամրագրող երկու փաստաթղթերում՝ Հայաստանի հեղկո-
մի 1920 թ. նոյեմբերի 29-ի հռչակագրում և 1920 թ. դեկտեմբերի
2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրում, որևէ դրույթ
չկար նորաստեղծ պետության մեջ խոսքի, մամուլի, միջոցառում-
ների և այլ քաղաքացիական ազատությունների մասին³:

1920 թ. դեկտեմբերի 21-ին Հայաստանի հեղկոմի ընդունած
դեկրետի համաձայն՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդա-
յին Հանրապետության (ՀՄԽՀ). տարածքում դադարեցին գործել
Ռուսական կայսրության օրենքները՝ Համառուսաստանյան Ժա-
մանակավոր կառավարության, Անդրկովկասյան սեյմի, ՀՀ
խորհրդարանի ու կառավարության կատարած փոփոխություն-

^{*} Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի տրամադրած ֆինանսա-
վորմամբ՝ 16YR-6A057 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ ՀՄԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I (1920 թ. նոյեմբերի
29 - 1921 թ. փետրվարի 18), Էջմիածին, 1921, էջ 1-5, Հայաստանի Հանրապե-
տությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյու-
թերի ժողովածու, խմբագրությամբ՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազախեցյանի,
Երևան, 2000, էջ 383-384:

ներով հանդերձ: Փոխարենը՝ գործող օրենքներ հայտարարվեցին Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության (ՌՍԴԽՏՀ) օրենքները՝ Հայեղկոմի և այլ իրավասու իշխանությունների կողմից իրականացվող փոփոխություններով ու լրացումներով²: Այս հանգամանքով էր պայմանավորված նաև, որ Հայաստանի հեղկոմը, հետո նաև՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը (Ժողկոմխորհ) մասնավորապես մամուլի մասին հատուկ դեկրետ չընդունեցին. հանրապետությունում կիրառվում էին ՌՍԴԽՏՀ իրավական ակտերը:

Նշենք, որ խորհրդային իշխանության առաջին իրավական ակտերից մեկը 1917 թ. հոկտեմբերի 27-ին ՌՍԴԽՏՀ Ժողկոմխորհի ընդունած «Մամուլի մասին» դեկրետն էր, որում արտացոլվեց մամուլի ազատության մասին բոլշևիկների «ուրույն» պատկերացումները: Հայտարարվում էր, որ մինչև «քանվորագրուցիական իշխանության» ամրապնդումը գաղափարական հզոր զենք հանդիսացող մամուլը վտանգավոր է թողնել «բուրժուազիայի» ձեռքում: Իսկ արդեն նոր կարգերի ամրապնդումից հետո մամուլի նկատմամբ վարչական հսկողությունը կդադարեցվի և այն «լիակատար ազատություն կստանա»: Մինչ այդ փակվելու էին մամուլի այն միջոցները, որոնք. «1) բանվորական ու գյուղացիական կառավարությանը բացահայտորեն դիմադրելու կամ չինազանդվելու կոչ են անում, 2) խռովություն են սերմանում՝ փաստերը բացահայտ զբաբարտչորեն խեղաթյուրելու միջոցով, 3) բացահայտ հանցագործական, այսինքն՝ քրեականորեն պատժելի բնույթի արարքների կոչ են անում»: Մամուլի միջոցի հրատարակությունը ժամանակավոր կամ ընդմիջտ դադա-

² ՀՍԽՀ դեկրետների եփրամանների ժողովածու, պրակ I, 1921, էջ 25:

րացվում էր ՌՍԴԽՏ ժողկոմխորհի որոշմամբ³: Փաստորեն, նոր իշխանությունների նկատմամբ լոյալ տրամադրված պարբերականները կարող էին տպագրվել: Նշյալ դեկրետը խորհրդային գրաքննության սկիզբն ազդարարող առաջին վավերագիրն է: Այդուհանդերձ, պետք է փաստել, որ այն իր ժամանակի առավել հանդուրժողական օրենսդրական ակտերից էր⁴: Հաշվի առնելով այս իրողությունը՝ նույնիսկ վառ երևակայության դեպքում ժամանակակիցների համար դժվար էր պատկերացնել, որ ցարական գրաքննության մոլի քննադատ բոլշևիկներն իշխանության գալուց հետո գրաքննական առավել «կատարյալ» համակարգ կստեղծեին:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, ուր հրատարակվում էին՝ տարբեր քաղաքական ուղղվածության պարբերականներ, Խորհրդային Հայաստանում սկսեցին հրատարակվել միայն կոմունիստական ուղղվածության, կամ կոմկուսի շահերի սպասարկմանը ծառայող թերթեր և առևտրային: Դադարեցվեց ոչ միայն նախկին իշխող կուսակցության՝ Հ. Յ. Դաշնակցության, այլև մյուս քաղաքական ուժերի կողմից հրատարակվող պարբերականների տպագրությունը: Դժվար չէ նկատել, որ սա հանրապետությունում գործող օրենսդրության («Մամուլի մասին» ՌՍԴԽՏ դեկրետի) խախտում էր:

1920 թ. դեկտեմբերի 4-ին Երևան ժամանեց ՀՍԽՏ պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմնի գործառույթներով օժտված Հայաստանի հեղկոմը: Նոր իշխանություններն իրենց ձեռնարկումներում առաջնորդվում էին պետության բոլոր ոլորտներում միակուսակցական համակարգ

³ Պարտիական և սովետական մամուլի մասին, փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1955, էջ 235-236:

⁴ Հակոբյան Ա. Մ., Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Երևան, 2016, էջ 83:

հաստատելու բուշնիկյան գործելաճով՝ քացառելով հանրապետությունում այլ քաղաքական կուսակցությունների գոյությունը: 1920 թ. դեկտեմբերի 9-ին Երևանի կոմունիստների ժողովում կարդացած զեկուցման մեջ Հայիեղկումի նախագահ Սարգիս Կասյանն այս առթիվ շեշտել է. «բուրժուական կուսակցությունները չեն կարող գոյություն ունենալ, բայց առանձին անձնավորությունների ծառայությունները կնդունվեն ուրախությամբ»⁵:

Երևան ժամանելուց հետո Հայաստանի հեղկումն առաջնահերթ պետականացրեց մայրաքաղաքի տպարանները: Դրանցից Հ. Յ. Դաշնակցության «Ուրարտիա» տպարանում, ուր նախկինում հրատարակվում էր ՀՅԴ պաշտոնաթերթ «Հառաջ»-ը, դեկտեմբերի 5-ից սկսեց լույս տեսնել Հայաստանի կոմկուսի կենտկոմի պաշտոնաթերթ հայալեզու «Կոմունիստ»-ը⁶: Արդեն դեկտեմբերի 13-ին Տպագրության և ազիտացիայի կոմիսար Սարգիս Բաղդատյանը Երևանում գտնվող բոլոր տպարաններին ու լիտոգրաֆիաներին հրահանգեց ենթարկվել կոմիսարիատի Պոլիգրաֆիայի բաժանմունքին⁷:

Խորհրդային Հայաստանի հրատարակչական բնագավառում պետական մենաշնորհի հաստատմանն ուղղված հաջորդ քայլը Հայաստանի հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետն էր, որով հանրապետության բոլոր ազգությունների գործող հոգևոր հիմնարկությունների մշակութային և կրթական հաստատությունները (այդ թվում՝ տպարանները) պետականացվեցին և հանձնվեցին լուսավորության ժողովրդական կոմիսարիատին⁸: Դեկրետի կենսագործման նպատակով ՀՍԽՀ լուսժողկոմ

⁵ Կասյան Ս., Ընտիր երկեր, Երևան, 1967, էջ 185:

⁶ Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից. Բօլշեվիկեան դրախտը, «Հայրենիք», Բոստոն, 1923, դեկտեմբեր, N 2, էջ 68:

⁷ «Կոմունիստ», Երևան, 31 դեկտեմբերի 1920, N 22:

⁸ ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I, էջ 16:

Ա. Հովհաննիսյանը նույն դեկտեմբերի 17-ին երկու հրամանն հրապարակեց:

Հրամաններից մեկի համաձայն՝ պետականացված հաստատությունները փոխանցվեցին տեղական հեղկոմների լուսավորության բաժիններին: Որպես քաղաքություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճեմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանը և տպարանն անմիջապես ենթարկվելու էին լուսժողկոմատին՝ վերակազմվելով վերջինի կողմից նշանակվող կոմիսարի ղեկավարությամբ: Մյուս հրամանի համաձայն՝ կրթամշակութային բոլոր մասնավոր հաստատություններն (այդ թվում՝ հրատարակչական միությունները) ու ձեռնարկությունները (այդ թվում՝ տպարանները) պետք է 3 օրվա ընթացքում հաշվառման ենթարկվեին տեղական հեղկոմների լուսավորության բաժանմունքներում: Անմիջապես լուծարվելու էին «ազգայնական, կղերական և, առհասարակ, հակահեղափոխական նպատակներ» հետապնդող մասնավոր հաստատությունները, իսկ նրանց գույքն անցնելու էր տեղական հեղկոմների լուսավորության բաժիններին⁹: Լուսժողկոմի 1920 թ. դեկտեմբերի 20-ի հրամանով Էջմիածնի վանական կրթամշակութային բոլոր նախկին հաստատությունների կոմիսար նշանակվեց Լևոն Լիսիցյանը, որին իրավունք վերապահվեց նաև թոնագրավել համապետական նշանակություն ունեցող «բոլոր հնություններն ու գեղարվեստական գործերը»¹⁰:

Ի դեպ, Հայոց եկեղեցուն պատկանող կրթամշակութային հաստատությունները (այդ թվում՝ տպարանը) առանձնացնելն ամենևին պատահական չէր: Բացի եկեղեցու թուլացնելուն միտ-

⁹ Նույն տեղում, էջ 16-17:

¹⁰ Սուքիասյան Հ. Կ., Եկեղեցու սեփականության թոնագրավումը Խորհրդային Հայաստանում (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2014, N 1, էջ 96-97:

ված քայլ լինելուց (քնականաբար, Հայեղկոմի դեկրետը հենց այդ նպատակով էր ընդունվել), սա նաև պայմանավորված էր Մայր Աթոռի տպարանի ունեցած դերով: Այն ՀՀ շրջանում ամենից ակտիվ գործող տպարաններից էր. 1918-1920 թթ. Հանրապետությունում հրատարակված շուրջ վեց տասնյակ գրքից 23-ը տպագրվել է նշյալ տպարանում¹¹:

1921 թ. հունվարի 6-ին Հայեղկոմի նախագահ Ս. Կասյանի արձանկած հրամանի համաձայն՝ բոլոր հիմնարկություններին և մասնավոր անձանց հրահանգվեց եռօրյա ժամկետում Մամուլի և ազիտացիայի կոմիսարիատին հանձնել ունեցած թղթի, մեծ ծրարների պաշարը, նոր կամ գործածված լինելու մեջ: Հրամանը չկատարողներին սպառնում էր «հեղափոխական ժամանակների» խիստ օրենքները¹²: Իսկ Աշխատանքի ժողկոմ Հ. Կոստանյանի հունվարի 24-ի հրամանով տպագրական գործի արտադրողականությունը քարձրացնելու հիմնավորմամբ «գորական կացության մեջ» հայտարարվեցին գրաշար բանվորները: Հասկանալի է, որ հրամանը կատարելուց խուսափող տպագրիչներին ևս սպառնում էր դատական պատասխանատվության ենթարկվելու հեռանկարը¹³:

Այս պայմաններում, երբ ՀՍԽՀ իշխանությունների դեկրետներով ու հրամաններով պետականացվեցին բոլոր տպարանները, նույնիսկ ավելորդ է թվում հանրապետությունում ոչ կոմունիստական թերթերի տպագրության մասին խոսելը: Այդուհանդերձ, նման անհաջող փորձեր եղել են: Այսպես՝ Հայաստանի խորհրդայնացման օրերին Հ. Յ. Դաշնակցությունից անջատված

¹¹ Ղազարյան Գ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանի գործունեությունը 1918-1920 թթ., «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», N 17, Երևան, 2016, էջ 164:

¹² ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I, էջ 56-57:

¹³ Նույն տեղում, էջ 94:

Ինտերնացիոնալիստ ձախ դաշնակցականների խմբակը (Հայկ Ավալյան, Ավետիս Օհանջանյան, Հայկ Սարգսյան, Արշակ Գրիգորյան, Արտաշես Վանցյան և ուրիշներ) սեփական պաշտոնաթերթ հրատարակելու փորձ կատարեց, ինչը ՀՄԽՀ իշխանությունները չթույլատրեցին¹⁴: Գործունեության դաշտ չունենալով՝ Ինտերնացիոնալիստ ձախ դաշնակցականների խորհուրդը 1920 թ. դեկտեմբերի 14-ին հայտարարեց Ինտերնացիոնալիստ ձախ դաշնակցականների կուսակցության լուծարման մասին, իսկ որոշ ժամանակ անց հրապարակած դեկլարացիայում ձախ դաշնակցականները պատրաստակամություն հայտնեցին ձուլվելու Հայկոմկուսին¹⁵:

Խորհրդային Հայաստանի և Հայկոմկուսի ղեկավարները չեն նպաստել նաև Սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստների՝ Թիֆլիսում հրատարակվող «Նոր խոսք» շաբաթաթերթի տպագրությունը Երևանում շարունակելուն: Բանն այն է, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո թերթի խմբագրակազմը որոշեց պարբերականի հրատարակությունը շարունակել Խորհրդային Հայաստանում: Նման հաղորդագրություն է տպագրված թերթի վերջին համարում¹⁶: Այդուհանդերձ, այս որոշումը կյանքի չի կոչվել: ՀՄԽՀ և ՀԿ(Բ)Կ ղեկավարները չէին հավատում նույնիսկ այս բոլշևիկամետ թերթի խմբագրակազմի անկեղծությանը: Ասվածի վկայությունն է «Կոմունիստ» պաշտոնաթերթի 1920 թ. դեկտեմբերի 31-ի համարում Եղիա Չոփարի գրած խմբագրականը¹⁷:

¹⁴ Հ. Յ. Ղաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող և պատասխանատու խմբագիր՝ Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, 1999, էջ 68:

¹⁵ Նույն տեղում, էջ 56-57, 66-69:

¹⁶ «Նոր խոսք», Թիֆլիս, 13 դեկտեմբերի 1920, N 17:

¹⁷ «Կոմունիստ», Երևան, 31 դեկտեմբերի 1920, N 22:

Հանրապետության խորհրդայնացմանը հաջորդող շաբաթներին հայաստանյան քաղաքական ուժերի կողմից պարբերական հրատարակելու այլ փորձ մեզ հայտնի չէ: Սա պայմանավորված էր այն իրողությամբ, որ այդ ժամանակ Հ. Յ. Դաշնակցությունն ու մյուս կուսակցությունները փաստացի դադարեցրել էին իրենց գործունեությունը՝ առժամանակ ընդհատակ անցնելով: Ակնհայտ է, որ թերթ հրատարակելու խնդրով Հայաստանի հեղկոմին ուղղված ցանկացած դիմում ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովի (չեկա) ուշադրությունը սևեռելու էր նախաձեռնողների վրա, կամ այդ դիմումն առնվազն անուշադրության էր մատնվելու: Հասկանալի է, որ սռանց իշխանությունների հավանության, պարբերական հրատարակել հնարավոր չէր, քանզի հանրապետության բոլոր տպարանները բռնագրավված և պետականացված էին: Ի դեպ, 1921 թ. փետրվարյան հակախորհրդային ապստամբության պարտությանը հաջորդող շրջանում եղել են պարբերականներ հրատարակելու այլ անհաջող փորձեր:

Խորհրդային Հայաստանի հրատարակչական բնագավառում պետական մենաշնորհն ամրագրվեց Հայաստանի պետական հրատարակչության կազմակերպումով:

ՀՍԽՀ ժողկոմխորհի 1921 թ. մայիսի 27-ի նիստում քննարկվեց պետական հրատարակչություն հիմնելու հարցը և որոշվեց հանրապետության ամբողջ հրատարակչական գործը կենտրոնացնել այնտեղ¹⁸: Ժողկոմխորհի հունիսի 8-ով թվագրվող դեկրետի (իրականում ընդունվել է հունիսի 15-ին)¹⁹ համաձայն՝ հանրապետության սահմաններում մամուլին և հրատարակչությանն

¹⁸ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 28:

¹⁹ Սուրիապյան Հ., Հայպետերատի հիմնադրումը և գործունեության առաջին տարիները, «Հայկական տպագրությունը դարերի միջով (հողվածների ժողովածու)», Երևան, 2014, էջ 123:

առնչվող բոլոր գործերը միավորելու և «նրանց գործունեությունը ուժեղացնելու» (իրականում՝ արդյունավետ վերահսկելու) նպատակով լուսժողկոմատին կից կազմակերպվեց Պետական հրատարակչություն (պետհրատ): Վերջինի մեջ մտան բոլոր ժողկոմատներին և մասնավոր անձանց պատկանող հրատարակչական մարմինները: Պետական հրատարակչությունը լիազորված էր վերահսկել հանրապետության ժողկոմատների, պետական մարմինների՝ հասարակական-քաղաքական, մշակութային հարցերին առնչվող հրատարակչական գործառնությունները, գրական, գիտական և այլ կազմակերպությունների հրատարակչական ամբողջ գործունեությունը: Պետհրատը ղեկավարում էր խմբագրական կոլեգիան, որի նախագահին ու անդամներին լուսժողկոմի առաջարկով նշանակում էր ՀՄԽԸ Ժողկոմխորհը²⁰:

Հիմնվելով «Պետական հրատարակչության մասին» դեկրետի վրա՝ «բոլոր տպարանների վարիչներին» ուղղված գրությամբ Պետհրատը տեղեկացրեց, որ առանց իր թույլտվության որևէ գրություն տպագրելու պարագայում «հեղափոխական դատարանի ամենախիստ պատժի կենթարկվեն»²¹: Փաստորեն՝ սա հրատարակչական գործում քաղաքական վերահսկողության սկիզբն էր: Ինչ վերաբերվում է Հայպետհրատի գրաքննական գործառնություններին, ապա արխիվային վավերագրերի համալիր ուսումնասիրությունից երևում է, որ, ի տարբերություն ռուսական Պետհրատի, Հայգլավլիտի հիմնադրմանը նախորդած շրջանում Հայպետհրատը գրաքննական գործունեություն չի իրականացրել:

Հայպետհրատի կանոնադրությունը 1919 թ. մայիսի 21-ին հրապարակված ՌՄԽԸ Պետական հրատարակչության կանո-

²⁰ ՀՄԽԸ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2 (1921 թ. ապրիլի 2 – 1921 թ. օգոստոսի 1), Էջմիածին, 1921, էջ 58-60:

²¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 172, թ. 253:

նադրության տեղայնացված տարբերակն էր և, կարելի է ասել, որ չէր բխում Խորհրդային Հայաստանում գործադրվել սկսող Նոր տնտեսական քաղաքականության սկզբունքներից: Պատահական չէ, որ ՀՄԽՀ Ժողկոմխորհի 1922 թ. փետրվարի 8-ի նիստի օրակարգում ներառված Պետհրատին գրական արտադրանքի տպագրության թույլտվություն տալու համար բացառիկ իրավունք վերապահելու հարցը չքննարկվեց: Ավելին, այն հանվեց օրակարգից²²: Իսկ մարտի 4-ին Ժողկոմխորհը հաստատեց մասնավոր հրատարակչությունների մասին դեկրետի նախագիծը: Ըստ այդմ՝ մասնավոր անձանց, հաստատություններին, ընկերություններին թույլատրվում էր լուսժողկոմատի համաձայնությամբ տպարաններ բացել, որտեղ նրանք կարող էին կատարել ինչպես մասնավոր, այնպես էլ պետական ու հասարակական հիմնարկությունների պատվերները: Արձանագրվում էր, որ նշյալ որոշման հիման վրա բացված հաստատությունները թոնագրավման ենթակա չէին²³: Կարծում ենք՝ սա ՆԷՊ-ի ընձեռած մասնակի ազատության հետևանք էր (ոչ պետական հրատարակչություններ գոյություն ունեին նաև ՌՄԴԽՀ-ում): Այդուհանդերձ, 1920-ական թվականների առաջին կեսին հանրապետությունում մասնավոր հրատարակչությունների ստեղծման և գործունեության համար բարենպաստ նախադրյալներ չկային: Ուստի՝ նշյալ դեկրետն առժամանակ գործնական կիրառություն չունեցավ:

Հայաստանի կենտգործկոմի 1922 թ. հուլիսի 22-ի նիստում ընդունված ՀՄԽՀ Բրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝ «հակահեղափոխական բնույթ ունեցող ազիտացիոն գրա-

²² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 69, թ. 4 և շրջ.:

²³ Նույն տեղում, գ. 68, թ. 16, «ՀՄԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու». Երևան, 1922, N 5, էջ 37:

կանություն» պատրաստելն ու տարածելը պատժվում էր ազատազրկմամբ՝ մեկ տարուց ոչ պակաս ժամանակով²⁴։ Փաստորեն, անլեզալ աշխատանքի տարիների փորձ ունեցող բոլշևիկները ոչ մի պարագայում տրամադիր չէին թույլ տալ ընդհատակյա գրականության հրատարակությունն ու տարածումը։

Այսպիսով, 1920 թ. դեկտեմբերին Խորհրդային Հայաստանում սկսված հրատարակչական ընագավառում պետական մենաշնորհի հաստատման գործընթացն ավարտվեց 1921 թ. հունիսին՝ Պետական հրատարակչության կազմակերպումով։

Амо К. Сукиасян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент, Установление государственной монополии в издательской сфере Советской Армении (1920-1921 гг.)* - После советизации Республики Армения в стране стали издаваться имеющие коммунистическую направленность или обслуживающие интересы компартии газеты и журналы. Было прекращено печатание не только изданий правящей партии АРФ Дашнакцутюн, но и периодики других политических сил.

В декабре 1920 г. изданными Ревкомом Армении и подчиненными ему структурами правовыми актами были конфискованы и национализированы все находящиеся на территории республики типографии. Организация государственного издательства в июне 1921 г. стала заключительным этапом утверждения государственной монополии в издательской сфере. В Госиздате были объединены принадлежащие всем наркоматам и частным лицам издательские органы.

²⁴ «ՏՄԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու», Երևան, 1922, N 21, էջ 17-18։

Hamo K. Sukiasyan, *NAS RA Institute of History, PhD in History, Assistant Professor*, The Establishment of Monopoly in the Sphere of Publishing in Soviet Armenia (1920-1921) - After the sovietization of the Republic of Armenia only newspapers and magazines of Communist orientation or serving the interests of the Communist Party were published. The publication of the periodicals released by both the ruling party of ARF Dashnaksutyun and other political forces were ceased. In December 1920, by the legal acts issued by the Revolutionary Committee of Armenia and the structures subordinate to it, all the printing houses located in the Republic were confiscated and nationalized. In June 1921, the organizing of the State Publishing House became the final stage of the establishment of the state monopoly in the publishing sector. The publishing houses which belonged to all People's commissariats and private individuals were united under the State Publishing House.

Ա. Հովհաննիսյանը նույն դեկտեմբերի 17-ին երկու հրաման հրապարակեց:

Հրամաններից մեկի համաձայն՝ պետականացված հաստատությունները փոխանցվեցին տեղական հեղկոմների լուսավորության բաժիններին: Որպես՝ քաղաքություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճեմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանը և տպարանն անմիջապես ենթարկվելու էին լուսծողկոմատին՝ վերակազմվելով վերջինի կողմից նշանակվող կոմիսարի ղեկավարությամբ: Մյուս հրամանի համաձայն՝ կրթամշակութային բոլոր մասնավոր հաստատություններն (այդ թվում՝ հրատարակչական միությունները) ու ձեռնարկությունները (այդ թվում՝ տպարանները) պետք է 3 օրվա ընթացքում հաշվառման ենթարկվեին տեղական հեղկոմների լուսավորության բաժանմունքներում: Անմիջապես լուծարվելու էին «ազգայնական, կղերական և, առհասարակ, հակահեղափոխական նպատակներ» հետապնդող մասնավոր հաստատությունները, իսկ նրանց գույքն անցնելու էր տեղական հեղկոմների լուսավորության բաժիններին⁹: Լուսծողկոմի 1920 թ. դեկտեմբերի 20-ի հրամանով Էջմիածնի վանական կրթամշակութային բոլոր նախկին հաստատությունների կոմիսար նշանակվեց Լևոն Լիսիցյանը, որին իրավունք վերապահվեց նաև բռնագրավել համապետական նշանակություն ունեցող «բոլոր հնություններն ու գեղարվեստական գործերը»¹⁰:

Ի դեպ, Հայոց եկեղեցուն պատկանող կրթամշակութային հաստատությունները (այդ թվում՝ տպարանը) առանձնացնելն ամենևին պատահական չէր: Բացի եկեղեցու թուլացնելուն միտ-

⁹ Նույն տեղում, էջ 16-17:

¹⁰ Սուքիասյան Հ. Կ., Եկեղեցու սեփականության բռնագրավումը հոբերդային Հայաստանում (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2014, N 1, էջ 96-97:

ված քայլ լինելուց (քնականաբար, Հայեղկոմի ղեկրեսը հենց այդ նպատակով էր ընդունվել), սա նաև պայմանավորված էր Մայր Աթոռի տպարանի ունեցած դերով: Այն ՀՀ շրջանում ամենից ակտիվ գործող տպարաններից էր. 1918-1920 թթ. Հանրապետությունում հրատարակված շուրջ վեց տասնյակ գրքից 23-ը տպագրվել է նշյալ տպարանում¹¹:

1921 թ. հունվարի 6-ին Հայեղկոմի նախագահ Ս. Կասյանի արձակած հրամանի համաձայն՝ բոլոր հիմնարկություններին և մասնավոր անձանց հրահանգվեց եռօրյա ժամկետում Մամուլի և ագիտացիայի կոմիսարիատին հանձնել ունեցած թղթի, մեծ ծրարների պաշարը, նոր կամ գործածված լինուկումը: Հրամանը չկատարողներին սպառնում էր «հեղատիտյական ժամանակների» խիստ օրենքները¹²: Իսկ Աշխատանքի ժողկոմ Հ. Կոստանյանի հունվարի 24-ի հրամանով տպագրական գործի արտադրողականությունը քարձրացնելու հիմնավորմամբ «գորական կացության մեջ» հայտարարվեցին գրաշար բանվորները: Հասկանալի է, որ հրամանը կատարելուց խուսափող տպագրիչներին ևս սպառնում էր դատական պատասխանատվության ենթարկվելու հեռանկարը¹³:

Այս պայմաններում, երբ ՀՄԽՀ իշխանությունների ղեկրեսներով ու հրամաններով պետականացվեցին բոլոր տպարանները, նույնիսկ ավելորդ է թվում հանրապետությունում ոչ կոմունիստական թերթերի տպագրության մասին խոսելը: Այդուհանդերձ, նման անհաջող փորձեր եղել են: Այսպես՝ Հայաստանի խորհրդայնացման օրերին Հ. Յ. Դաշնակցությունից անջատված

¹¹ Դազարյան Գ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանի գործունեությունը 1918-1920 թթ., «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», N 17, Երևան, 2016, էջ 164:

¹² ՀՄԽՀ ղեկրեսների և հրամանների ժողովածու, պրակ I, էջ 56-57:

¹³ Նույն տեղում, էջ 94:

ԳՈՒՐԳԵՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԱԱ պապմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Բանալի քսեղեր՝ Խորհրդային Հայաստան, կրթական համակարգ, լուսավորության ժողկոմատ, դպրոց, տարրական կրթություն, ուսումնական ծրագիր:

Հայաստանի խորհրդայնացումից հետո ստանձնելով երկրի պետական ղեկավարումը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը մի շարք միջոցառումներ իրականացրեց ազգային կրթական համակարգի արմատական վերակառուցման և նոր՝ խորհրդահայ դպրոցի ստեղծման ուղղությամբ: Կրթական համակարգի կազմակերպման ու հետագա զարգացման համար չունենալով ինքնուրույն ծրագիր՝ 1920 թ. դեկտեմբերին Հայկեղկոմը, ընդօրինակելով Խորհրդային Ռուսաստանին, ընդունում է մի շարք օրենսդրական ակտեր:

Ժողկրթության քննազավառի աշխատանքները ղեկավարելու նպատակով 1920 թ. դեկտեմբերի 12-ին կազմավորվեց Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը, որի առաջին կոմիսար նշանակվեց պատմաբան, հմուտ մանկավարժ Աշ. Հովհաննիսյանը: Վերջինս 1919 թ. աշխատել էր ՌՍԴԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատում՝ որպես հայկական քաժնի վարիչ և միաժամանակ հայոց պատմություն էր դասավանդել Լազարյան ինստիտուտում: Բավականին ծանոթ լինելով Խորհրդային Ռուսաստանի կրթական համակարգին՝ նա առաջին քայլերն է ձեռնարկում նոր կրթական համակարգի

ստեղծման ուղղությամբ¹: Նորաստեղծ Լուսժողկոմատը կառուցվածքային առումով նման էր ռուսականին: Լուսժողկոմի հրամանով աշխատանքից ազատվել էին Հանրային կրթության նախարարության նախկին աշխատակիցները: Կատարվել էին մի շարք կառուցվածքային փոփոխություններ: Ստեղծվել էին դպրոցական, նախադպրոցական, արվեստի և արվեստագիտական-տեխնիկական բաժիններ, որոնց վարիչներ էին նշանակվել Վարվառե Քեչկեղյանը, Մարութե Դուրգարյանը, Եղիշե Զարենցը և Հովհաննես Ակունյանը: Հետագայում կազմակերպվեցին նաև արտադպրոցական և դպրոցական ռեֆորմների բաժինները: Լուսժողկոմատին կից գործում էր կոլեգիա²:

1920 թ. դեկտեմբեր - 1921 թ. փետրվար ամիսներին Հայհեղկոմի և Լուսժողկոմատի հրավարտակներով ու հրամանագրերով դպրոցը անջատվում էր եկեղեցուց, պետականացվում էին կուլտուր-կրթական հիմնարկները, արգելվում էր հոգևոր առարկաների դասավանդումը, ընդունվեց աշխարհիկ կրթության սկզբունքը³: Խորհրդային Ռուսաստանի օրինակով ժողովրդավարական բնույթի այս հրովարտակների ընդունումը Հայաստանի պայմաններում էական դեր չէր կարող խաղալ, քանի որ դեռևս Հայաստանի առաջին Հանրապետության օրոք դրվել էին դպրոցի զարգացման ժողովրդավարական սկզբունքները: Խորհրդային նորաստեղծ իշխանությունը պետականացրեց դպրոցները՝ դրանով իսկ հաստատելով պետական-կուսակցական վերահսկողություն ամբողջ կրթական համակարգի վրա: Լուսժողկոմի հրամանով վերացվում էին նախորդ վարչակարգից ժառանգությունն ստացած դպրոցական պաշտոնները, և դրանց փոխարեն

¹ Մարուխանյան Ն., Մտորումներ և հուշեր Աշոտ Հովանիսյանի մասին, Երևան, 2012, էջ 7:

² Խուրդոյան Ս., Սովետահայ դպրոցի պատմություն, Երևան, 1973, էջ 23-24:

³ «ՀՍԽՍՀ ղեկընտներ և հրամանների ժողովածու», պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 7:

կազմվում էին դպրոցական մշտական խորհուրդներ՝ դպրոցական աշխատողներից, աշակերտներից և լուսավորական բաժանմունքի ներկայացուցչից: Դպրոցական խորհուրդը գործադիր մարմին էր և ենթակա էր շրջանային ժողկրթբաժնին:

1921 թ. փետրվարին Հայիեղկոմը ընդունեց որոշում ՌՍԴԽՀ օրինակով, «միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրության» մասին: Ըստ այս կանոնադրության՝ վերացվում էր դպրոցների բաժանումը տարրականի և միջնակարգի, դրանց փոխարեն կազմվում էին «ա» և «բ» աստիճանի դպրոցներ: Կրթական համակարգի հիմքում ընկած էր նախադպրոցական կրթությունը, որն ընդգրկում էր 6-8 երեխաների: Դպրոցի «ա» աստիճանն ուներ հնգամյա դասընթաց և ընդգրկում էր 8-13 տարեկան երեխաների, իսկ «բ» աստիճանի դպրոցը՝ չորսամյա դասընթաց՝ 13-17 տարեկան պատանիների ընդգրկումով⁴: 1920-ական թթ. հանրակրթական դպրոցը մի քանի անգամ ենթարկվեց կառուցվածքային փոփոխությունների: 1926 թ. ընդունվեց չորսամյա, յոթամյա և միջնակարգ դպրոցական կառուցվածքային համակարգը: 1920-ական թթ. վերջին այն ևս ենթարկվեց փոփոխության, երբ միջնակարգի հիման վրա ստեղծվեցին միջին մասնագիտական հաստատությունները՝ տեխնիկումները:

Լուսժողկոմատի առաջնահերթ խնդիրն էր վերսկսել պատերազմական գործողությունների հետևանքով ընդհատված դպրոցական կյանքը: Այն իրականացնելը բավականին դժվար էր, քանի որ Հայաստանի հյուսիսային շրջանները ռազմակալված էին թուրքական զորքերի կողմից, որոնք դպրոցները վեր էին ածել զորանոցների, դպրոցական գույքն ավերվել կամ օգտագործվել էր որպես վառելափայտ: Նույնանման իրավիճակ էր

⁴ Խուդոյան Ա., նշվ. աշխ., 1973, էջ 37:

նաև այլ շրջաններում, որտեղ տեղակայվել էին ռուսական 11-րդ կարմիր բանակի գորամասերը: Իսկ Հայաստանի հարավում Գարեգին Նժդեհի գլխավորությամբ Սյունիքը շարունակում էր պայքարել Հայաստանի կազմում մնալու համար: Այդ պայմաններում կրթական հաստատությունները գտնվում էին քայքայման եզրին: Նույնիսկ Երևանի և Էջմիածնի գավառներում, որտեղ դրությունը մի փոքր բարվոք էր, դպրոցների մեծ մասը չէր գործում, իսկ այն դպրոցները, որոնք շարունակում էին իրենց աշխատանքը, գտնվում էին ծայրահեղ վատ վիճակում: Էջմիածնի գավառի կոմի լուսբաժնի վարիչը գավառի դպրոցական գործի մասին 1921 թ. հունվարին գրած զեկուցագրում հայտնել է. «վերին աստիճանի ծանր է ուսուցիչների նյութական վիճակը, չկա դպրոցական կահկարասինք, չկան դասագրքեր, տետրեր, գրիչ, մատիտ, կավիճ և այլն: Ծառ դպրոցներում երկար տախտակներ են դնում որպես նստարաններ և նույնպիսի տախտակներ՝ սեղանի տեղ են ծառայում»⁵:

Դպրոցական գործը կարգավորելու նպատակով, 1920 թ. դեկտեմբերի 16-ին ռազմժողկոմ Ավիսի հրամանով զինվորական ծառայությունից ազատվում էին ուսուցիչները, աշակերտները և ուսանողները, իսկ Լուսժողկոմի դեկտեմբերի 18-ի հրամանով առաջարկվում էր «դպրոցների վարչական մարմիններին միջոցներ ձեռք առնել անհապաղ դպրոցական կանոնավոր պարապմունքներ վերսկսելու համար»⁶: Բացի այդ՝ նոր իշխանությունը ձգտում էր ամեն գնով իր կողմը գրավել երկրի մտավորականության ամենաստվար հատվածին՝ ուսուցչությանը: Ծառ լավ հասկանալով, որ հայ մանկավարժությունն է մշտապես գտնվում ժողովրդի կողքին և արտահայտում նրա իդձերն ու

⁵ Նույն տեղում, էջ 43, ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 12, թ. 27-28:

⁶ «ՀՄԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ I, էջ 20, ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 31, թ. 40:

ցանկությունները՝ գիտակցում էին, որ այն կարող էր մեծ ազդեցություն ունենալ հասարակական կարծիքի վրա: Այդ նպատակով՝ 1920 թ. դեկտեմբերի 19-ին հրավիրվեց Երևանի ուսուցիչների ընդհանուր ժողով, իսկ 1921 թ. հունվարին Երևանի և Էջմիածնի գավառների դպրոցական աշխատողների համագումար, որտեղ քննարկվող մանկավարժական խնդիրների, հետ միասին ընդունվեցին մի քանի քաղաքական բանաձևեր՝ նոր կառավարությանը հավատարմորեն ծառայելու մասին: Լուսժողկոմ Ա. Հովաննիսյանի զեկուցման վերաբերյալ ընդունված բանաձևում ասվում էր, որ համագումարն ամբողջությամբ վստահում է բանվորագյուղացիական կառավարության հեղափոխական քաղաքականությանն ու պատրաստակամություն է հայտնում կոմունիստական աշխարհայացքի սկզբունքների հիման վրա վերակառուցելու մասսաների կրթական գործը: Չնայած այն հանգամանքին, որ հայ մանկավարժության գերակշիռ մեծամասնությունը ծանոթ չէր նոր իշխանության կրթական քաղաքականությանը, այնուամենայնիվ պատրաստ էր համագործակցել դպրոցական գործը վերականգնելու համար, սակայն 1921 թ. հունվարին վերսկսված դպրոցական պարապմունքները կարճատև էին:

Հայկոմկուսի ղեկավարությունը գտնում էր, որ նոր կարգերը երկրում պետք է հաստատվեն նույն օրինաչափություններով, որով անցել է Խորհրդային Ռուսաստանը: Հայեղկոմի կուլմից «ոազմական կոմունիզմի» քաղաքականության կենսագործումը սոցիալ-տնտեսական ծանր վիճակում գտնվող հանրապետությունում էլ ավելի խորացրեց ճգնաժամը: Ժողովրդի հիասթափությունը նոր իշխանություններից գնալով խորացավ: Հատկապես անհիմն բռնությունները զինվորականության և նախորդ վարչակարգի պաշտոնյաների նկատմամբ բորբոքում էին ժո-

⁷ «Բանբեր Հայաստանի արխիվն'արի», Երևան, 1974, N. 2, էջ 59:

դովրդի արդարացի ցասումը, որի հետևանքով տարերայնորեն բռնկվեց Փետրվարյան ժողովրդական ապստամբությունը: Հիասթափված խորհրդային իշխանության վարած քաղաքականությունից՝ դրան սատարեց նաև բարձր դասարանների աշակերտության և ուսուցչության մի մասը: Ապստամբության պարտությունից հետո, սակայն, վախենալով խորհրդային իշխանության վրեժխնդրությունից, իրենց քնակավայրերը լքեց նաև աշակերտության և ուսուցչության մի մասը: 1921 թ. ապրիլի 26-ին Հայհեղկոմին ուղղված Լուսժողկոմի զեկուցագրում նշվում էր, որ Երևան քաղաքից հեռացել են աշակերտության և ուսուցչության 95 %-ը, Նոր Բայազետից 25 %-ը. նույնանման իրավիճակ էր նաև Էջմիածնում: Դպրոցների մեծ մասը վերածվել էր գորանոցների, իսկ դպրոցական գույքը հափշտակվել էր կամ էլ օգտագործվում էր որպես վառելիափայտ⁸:

Անհրաժեշտ էր կտրուկ միջոցառումներ ձեռնարկել դպրոցական գործը կարգավորելու համար: 1921 թ. գարնանը Հայաստան ժամանեց ականավոր քաղաքական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը, որը մեծ ներդրում ունեցավ երկրում ստեղծված քաղաքական մթնոլորտը փոխելու և պետական շինարարության գործում: Վերակառուցման ենթարկվեց կուսակցական-պետական ապարատը: Հայհեղկոմին փոխարինեց Ժողովրդական կոմիսարների խորհուրդը՝ Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ: Հանրապետություն տեղափոխվեցին մի խումբ կուսակցական գործիչներ՝ Սարգիս Լուկաշինը (Մրապիտոյան), Ա. Կարինյանը, Պ. Մակինցյանը, Ա. Երզնկյանը և ուրիշները, որոնք մեծ աշխատանք կատարեցին երկրում ստեղծված ներքաղաքական ծանր դրությունը կարգավորելու նպատակով⁹:

⁸ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 31, թ. 40:

⁹ Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, էջ 206:

1921 թ. հոկտեմբերին ՀՍԽՀ Ժողկոմստորիք ընդունեց հատուկ հրովարտակ, որով քաղաքացիական և զինվորական կազմակերպություններից պահանջում էր 15 օրյա ժամկետում ազատել զբաղեցրած դպրոցական շենքերը՝ դրանք հանձնելով Լուսժողկոմատի տնօրինությանը: Բացի այդ՝ հանրապետությունում ֆինանսական և նյութական միջոցների սղությունը, որոնց մեծ մասը նպատակատուղված էր սովի և համաճարակային հիվանդությունների դեմ պայքարելուն, հարկադրում է 1922 թ. ապրիլին ընդունելու որոշում՝ մշակութային-կրթական հիմնարկների ֆինանսավորումը կենտրոնական բյուջեից հանելու և տեղական բյուջեների մատակարարմանը հանձնելու մասին: Որոշման համաձայն՝ քաղաքային դպրոցներում ծնողներից պետք է գանձվեր ուսման վարձ, գյուղական բնակավայրերում գյուղացիությունն էր պարտավոր ինքնահարկմամբ պահել դպրոցները և այլ մշակութային օջախները, ուսման վարձից և հարկերից ազատվում էին բանվոր դասակարգը, ջրավոր գյուղացիությունը, իսկ մտավորականության խավերից՝ բժիշկները և ուսուցիչները:

1920-ական թթ. հանրապետական բյուջեում կրթական հատկացումները, ըստ ուս. տարիների, կազմել են՝ 1922 թ.՝ 20 %, 1923/24 թթ.՝ 47,3 %, 1924/25 թթ.՝ 29,4 %, 1925/26 թթ.՝ 21 %, 1926/27 թթ.՝ 23 %¹⁰, որից գավառային բյուջեի մասնաբաժինը կազմում էր 1923/24 թթ.՝ 13,2 %, 1924/25 թթ.՝ 12 %, 1925/26 թթ.՝ 15,4 %¹¹: Ինչպես տեսնում ենք, կրթական հաստատություններին հատկացվող ֆինանսական միջոցների մի մասը տրամադրվում էր գավառային բյուջեից, սակայն դա չէր կարող բավարարել դպրոցների պահանջները:

¹⁰ ЦГАОРС Грузии, ф. 607, с. 1, л. 1319, л. 39.

¹¹ «Հայաստանը 1921 – 1925 թթ.», Երևան, 1926, էջ 211:

1923 թ. Լուսժողկոմատը կնքում է պայմանագիր Հողժողկոմատի հետ, որի համաձայն գյուղական դպրոցներին հատկացվում է 5 հեկտար հող: Դպրոցապատկան հողերը պետք է օգտագործվեն աշխատանքի ուսուցման նպատակով: Գյուղական դպրոցների եկամուտը ստեղծվում էր նաև դպրոցապատկան հողերից ստացվող եկամուտներից՝ գյուղացիներին վարձավճար հանձնելու հաշվին: 1926 թ. Դարալագյազի գավառում դպրոցական հողերից ստացվել էր 8 745 ռ. 62 կոպ. հասույթ, որը ծառայել էր գույք ձեռք բերելու նպատակին¹²: Սակայն շատ հաճախ այդ գումարները այլ նպատակով էին օգտագործվում: 1926 թ. Հայաստանի Կենտգործկոմի երրորդ նստաշրջանում Ա. Մռավյանը հանդես է գալիս «Լուսավորության գործի մասին» զեկուցումով, ուր մասնավորապես նշում է. «Դպրոցական շենքերի կառուցման և կահավորման գործում օժանդակ դեր կարող է կատարել գյուղդպրոցների հողաբաժիններից ստացվող դրամը, եթե այն ամբողջապես գործադրվի դպրոցների կարիքների համար: Դժբախտաբար տեղերում վարչական մարմիններն երբեմն դպրոցների հողամասերից գանձվող միջոցները գործադրել են այլ նպատակների համար: Այս խնդրի կանոնավորումը հասունացած և շատ կարևոր է»¹³:

Չնայած տնտեսական ծանր կացությանը՝ Հայաստանի ազգաբնակչությունը միջոցներ էր հատկացնում դպրոցական գործին: Հիմնական ծանրությունն իր վրա կրում էր գյուղացիությունը, որը կազմում էր բնակչության մոտ 73 %-ը: Դրա հետևանքով էր, որ եթե միութենական այլ հանրապետություններում ՆԷՊ-ի առաջին շրջանում կտրուկ կերպով նվազում էր դպրոցական ցանցը, ապա Հայաստանում նկատվում էր դպրոցական ցանցի աճ:

¹² «Մտրիբրդային Հայաստան», 4 հունիսի 1926, N 130:

¹³ Մռավյան Ա., Հողվաճներ և ճառեր, Երևան, 1961, էջ 237:

1920-ական թթ. առաջին կեսին որոշ աշխատանք կատարվեց դպրոցաշինարարության բնագավառում: Եթև գյուղացիությունը կարողանում էր որոշ նյութական միջոցներ հատկացնել դպրոցաշինարարությանը, ապա քաղաքներում՝ հատկապես Երևանում և Լենինականում (Գյումրի), ուր երեխաների ընդգրկումը դպրոցներում մեծ էր, դպրոցաշինարարությունը ֆինանսական և նյութական միջոցների անբավարարվածության պատճառով ընթանում էր քավականին դանդաղ: Պարապմունքները քաղաքային դպրոցներում տեղի էին ունենում նոսահերթ: Լուսժողկոմատին պետական բյուջեից չնչին գումարներ էր հատկացվում նոր դպրոցների կառուցման համար: «Այդ քացերից հիշենք դպրոցական շենքերը: Երևանում 3 հերթի պարապմունքներ են լինում դպրոցներում...Նոր - Բայազետի դպրոցների մի խոշոր մասը գոմերի է նման: Գյուղական դպրոցների կեսն առնվազն պիտի ապահովել նոր շենքերով: Կահավորման կողմից մասնավորապես մեր քաղաքի ու գյուղի դպրոցներն ամենաձանր վիճակն ունեն»¹⁴:

1925 թ. հանրապետության 75 գյուղերում կառուցվում էին դպրոցներ, իսկ 31 գյուղերում նախատեսվում էր շինարարական աշխատանքներն սկսել հաջորդ տարի: Միայն դպրոցաշինարարության համար պահանջվում էր 24 մլն ռուբլի, իսկ կառավարությունը հատկացրել էր ընդամենը 250 հազար ռուբլի: Հաջորդ տարի՝ 1926թ., կառավարությունը 50 հազար ռուբլի վարկ է տրամադրում գյուղերին դպրոցաշինարարության համար¹⁵: Փաստորեն կառավարության օգնությունը միայն բարոյական նշանակություն ուներ և պետք է խթաներ գյուղացիության նախաձեռնությանը:

¹⁴ Նույն տեղում, էջ 236:

¹⁵ Նույն տեղում, էջ 237:

«Մեր մասսայական դպրոցը,- հայտարարում է լուսժողկոմ Ա. Մոավյանը՝ Հայաստանի խորհուրդների 6-րդ համագումարում,- գյուղացիության սիրտ առարկան է: Գյուղացիությունը, դուր գիտեք, հսկայական միջոցներ է սովել մեր դպրոցների շինարարության համար»¹⁶:

Չնայած այս բնագավառում կատարված աշխատանքին՝ 1927/28 ուս. տարում հանրապետության 751 գյուղական դպրոցներից 261-ը տեղավորված էր վարձու տներում, 163-ը՝ կիսահարմարեցված շենքերում և միայն 327-ը՝ դպրոցական հատուկ շենքերում:

Առավել բարդ էր դպրոցների նյութատեխնիկական բազայի ապահովումը: Դա կարևորվում էր նաև այն հանգամանքով, որ թուրքական երկրորդ արշավանքից հետո և քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում գրեթե ամբողջությամբ հափշտակվել կամ ոչնչացվել էր, առանց այն էլ չնչին դպրոցական գույքը: Դպրոցների նյութատեխնիկական բազան գտնվում էր անմխիթար վիճակում, չկային անհրաժեշտ գրենական պիտույքներ: 1923 թ. Սանախինի դպրոցի վարիչ Ս. Դավթյանը իր զեկուցագրում նշում է. «Դպրոցը խորթ զավակի պես մի կողմ է քաշված: Զուրկ կրթական պիտույքներից, երեխաները արճիճով են գրում, հին գրածը թղթի վրայից ռետինով մաքրելուց հետո»:

Ամբողջ Հայաստանում 1922-1923 ուս. տարում կար ընդամենը 10 317 ստտարան և 687 գրատախտակ: Դպրոցներում եզակի էին ֆիզիկայի և աշխարհագրության կարինետները: Չնայած, Խորհրդային Ռուսաստանը օգնություն ցուցաբերեց Հայաստանին, հատկացնելով որոշ քանակությամբ թուղթ և գրենական պիտույքներ, սակայն դա անբավարար էր աճող պահանջմունքները բավարարելու համար: 1920-ական թվականներին նյութա-

¹⁶ ՀԱԱ, ֆ. 65, ց. 6, գ. 868, թ. 106:

տելինիկական բազայի հարստացման հարցը կառավարության կողմից այդպես էլ չլուծվեց:

1921-1922 ուսումնական տարում Հայաստանի 545 դպրոցներում ուսանում էր 67 403 աշակերտուհի, իսկ արդեն 1927/1928 ուս. տարում դպրոցների թվաքանակը աճեց մոտ 823-ի, 89 411 աշակերտուհի¹⁷: Բացի այդ՝ հանրապետությունում գործում էին յոթամյա և գյուղերիտ դպրոցներ: 1923/24 ուս տարում գործում էր 20 յոթամյա դպրոց, իսկ արդեն երկու տարի անց՝ 1926/27 ուս. տարում, 41 յոթամյա՝ 12 074 աշակերտուհիներով, 17 գյուղերիտ դպրոցներ՝ 987 սովորողով¹⁸: Հատկապես կարևոր ուշադրություն էր հատկացվում գյուղերիտ դպրոցների զարգացմանը:

Լուսժողկոմ Ա. Մոավյանը նշում է. «Խորհրդային լուսավորության գործի ամենամեծ նվաճումներից մեկը պիտի համարել գյուղական երիտասարդության դպրոցը, որի նպատակն է գյուղի հասարակական աշխատանքների համար պատրաստել ինտելիգենտներ, գյուղում ապրող և աշխատող ուժեր»¹⁹: 1920-ական թթ. վերջին գյուղերիտ դպրոցներ ավարտածները հանդիսանում էին գյուղի հիմնական մտավորական ուժը:

1920-ական թթ. երկրորդ կեսից ԽՍՀՄ-ում լուրջ քննարկման հարց է դառնում ընդհանուր պարտադիր տարրական կրթության անցնելու խնդիրը: Կոմկուսը ձգտում էր արագորեն ավարտել խորհրդային նոր դպրոցի կառուցումը: Հսկայածավալ խնդիրները՝ արդյունաբերության և գյուղատնտեսության վերակառուցումը, որոնք դրվել էին իշխանության կողմից, պահանջում էին ֆինանսական մեծ ներդրումներ և որակյալ կադրեր: Խորհրդային Միությունում քնակչության անգրագիտության մա-

¹⁷ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 74, թ. 10:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 75, թ. 32:

¹⁹ Մոավյան Ա., Հողվածներ և ճառեր, Երևան, 1961, էջ 238:

կարդակը հասնում էր 38%-ի: Պարտուսի կենսագործումը բավականին դժվար էր, քանի որ նյութական միջոցների զգալի մասը ուղղվում էր արդյունաբերության զարգացմանը:

Հանրապետությունում երեխաների ամենամեծ ընդգրկումը դպրոցներում տվել էր Երևանը՝ 107 % և Մեղրիի գավառը՝ 124 %: Այս որոշվում է Երևանում և Մեղրիում հայտարարել ընդհանուր պարտադիր կրթություն²⁰: Սակայն Մեղրիի շրջգործկումը, քննարկելով լուսժողկոմատի առաջարկը, մերժում է այն՝ նկատի ունենալով նյութատեխնիկական բազայի բացակայությունը և մանկավարժական կադրերի պակասը: Պետք է նկատի ունենալ, որ լուսժողկոմատի այս որոշումը ընդունվել էր հապշտապ՝ առանց հաշվի առնելու գոյություն ունեցող նյութական և ֆինանսական միջոցների առկայությունը, դպրոցաշինարարության զարգացման տեմպերը, մանկավարժական կադրերի քանակը:

1928 թ. Ժողկոմխորհի հանձնարարությամբ լուսժողկոմատը մշակեց հեռանկարային պլան Հայաստանում ընդհանուր պարտադիր ուսուցման անցնելու վերաբերյալ: Այդ պլանի համաձայն՝ նախատեսվում էր պարտուսը կենսագործել աստիճանաբար՝ սկսելով 1930/31 ուս. տարվանից: Ծրագրի իրականացման համար հատկացումները կազմելու էին 5 մլն 825 հազ. ռուբլի: Նախատեսվում էր կառուցել շուրջ 750 նոր դպրոցներ: Պարտուսի կենսագործման ճանապարհին, գրեթե երեք տարվա՝ 1929-1930 թթ. ընթացքում, հանրապետությունում կյանքի կոչվեցին 383 նոր դպրոցներ, որոնցից 379-ը՝ գյուղերում: Այս շրջանում գյուղերում հիմնականում ոչ թե կառուցվեցին նոր դպրոցներ, այլ որպես դպրոցներ հարմարեցվեցին կոլեկտիվացման ժամանակաշրջանում կուլակաթափ արված գյուղացիների արտաքսումից հետո մնացած տներն ու եկեղեցիները:

²⁰ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 79, թ. 14:

Կոմկուսը հատկապես լուսժողովոմատից պահանջում էր հատուկ ուշադրություն դարձնել նոր ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպմանը: 1920-ական թթ. դպրոցը կարելի է համարել էքսպերիմենտալ (փորձարարական): Կոմկուսը, նախաձեռնելով խորհրդային նոր դպրոցի ստեղծումը, իր գաղափարաքաղաքական ազդեցությունն ապահովելու համար նոր կազմավորվող խորհրդային մանկավարժությունից պահանջում էր նոր ուսումնական մեթոդներ կիրառել: 1923 թ. հաստատվեցին նոր ուսումնական ծրագրերը տարրական և յոթամյա դպրոցների համար: Ուսուցման հիմքում դրվեցին ամերիկյան և եվրոպական. մանկավարժական նոր՝ փորձարարական մեթոդներ: Դրանք հարմարեցվում էին խորհրդային դպրոցին: Սկզբնապես ուսուցման հիմքում դրվեց «կոմպլեքսային մեթոդը», որը առանձնապես վատ անդրադարձավ հասարակագիտական առարկաների դասավանդման վրա: Այս մեթոդի ներդրումը, ինչպես նաև «Դալտոն – պլանի», «քրիզադա-լարտրատոր» մեթոդի և այլ նորարարությունների կիրառումը, հատուկ են 1920-ական թվականներին: Իրականում այս մեթոդները նախատեսված էին կայացած դպրոցական համակարգերի համար, երբ առկա էր նյութատեխնիկական հարուստ քաղա: ԽՍՀՄ-ում դեռևս ընթանում էր դպրոցաշինարարություն և քացակայում էին այդ պայմանները: Դա վկայում է այն մասին, որ կոմունիստական կուսակցությունը չուներ նոր դպրոցի կառուցման սեփական ծրագիր և գտնվում էր որոնումների մեջ:

Ուսումնական ծրագրերում կատարվող այս փոփոխությունները ոչ միայն չէին նպաստում ուսումնադաստիարակչական աշխատանքների քարելավմանը, այլև հաճախ կիրառության մեջ չէին դրվում: Մեթոդական այս նորարարությունների դեմ հատկապես հանդես էին գալիս հին մանկավարժական կադրերը, որոնք, լավ ծանոթ լինելով նախորդ ժամանակաշրջանի ուսում-

նական ծրագրերին, գտնում էին, որ նոր ծրագրերը ոչ միայն չեն նպաստում աշակերտության ունակությունների ու գիտելիքների բացահայտմանը և հարստացմանը, այլ ստեղծում են խառնաշփոթություն:

Խորհրդահայ դպրոցի ստեղծման ճանապարհին լուրջ պրոբլեմ էր հանդիսանում նոր դասագրքերի կազմումը: Խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին հանրապետության դպրոցներում կիրառության մեջ էին դեռևս նախկին դասագրքերը: Միայն 1923 թ. Ժողկոմխորհը Պետերատին հանձնարարեց հրատարակել նոր դպրոցական դասագրքեր ու ուսումնական ծրագրեր: Տպագրվեց 10 անուն դասագիրք՝ 102500 տպաքանակով, 3 անուն դպրոցական ձեռնարկներ և ծրագրեր: Տարրական դասարանների համար հրատարակվեցին «Կարմիր արև» ընթերցարանը, «Դասընկեր»՝ Ա տարի (այբբենարան), Ռոմանոս Մելիքյանի «Դպրոցական երգեր» Ա տարի և այլն²¹: Ավելի բարդ էր բարձր դասարանների դասագրքերի հարցը: Որոշ առարկաների դասագրքերը՝ հումանիտար, ֆիզիկայի, քիմիայի և այլն, թարգմանվել էին ռուսերենից հայերեն: Հետագա տարիներին դասագրքերի հրատարակումը բավականին աճեց, սակայն 1920-ական թթ. վերջերին դեռևս ոչ բոլոր դպրոցներն ունեին անհրաժեշտ քանակությամբ դասագրքեր:

Ուսումնական ձեռնարկներից հիշատակման է արժանի մանկավարժ գիտնական Գուրգեն Էդիպյանի «Աշխատանքի դպրոց» ձեռնարկը, որը նախատեսված էր մանկավարժների համար և մանրամասն պատկերացում էր տալիս աշխատանքային դպրոցի մասին:

Նորաստեղծ խորհրդային իշխանությունը հատուկ ուշադրություն էր հատկացնում հանրապետության տարածքում բնակ-

²¹ «Խորհրդային Հայաստան», 11 սեպտեմբերի, 1929 թ.:

վող ազգային փոքրամասնությունների համար դպրոցների բացման գործին: Հայաստանի կուսակցական, պետական ղեկավարությունը, հաշվի առնելով, որ ազգային փոքրամասնությունների համար դպրոցաշինարարությունը կհանդիպի լուրջ խոչընդոտների, նախաձեռնությունը վերցրեց իր վրա և ի տարբերություն հայկական դպրոցների՝ դրանց ֆինանսավորումը և նյութական միջոցներով ապահովումը կատարում էր կենտրոնացված՝ պետական բյուջեից: Ընտրելով ձեռնարկված միջոցառումների՝ արդեն 1923 թ. դպրոցաշինարարությունը ազգային փոքրամասնություններով քնակեցված վայրերում ընդունել էր կազմակերպված քնույթ: Գործում էին աղբբեջանական՝ 53 տարրական և 1 յոթամյա, ռուսական՝ 20 տարրական և 1 յոթամյա, հունական՝ 4, եզդիական՝ 7 և ասորական՝ 3 տարրական դպրոցներ: Դպրոցների ընդհանուր թվաքանակն էր 89-ը²²:

Մանկավարժական կադրեր պատրաստելու համար հանրապետության տարբեր շրջաններում կազմակերպվում են կարճաժամկետ՝ երեքշաբաթյա մանկավարժական դասընթացներ, որոնց մասնակցել են ազգային փոքրամասնությունների գրեթե բոլոր ներկայացուցիչները: Օրինակ՝ Վարանցովկայում ռուսերեն մանկավարժական դասընթացներին մասնակցել է 20 ուսուցիչ:

ՀԿ(Բ)Կ կենտկոմի 1925 թ. հունիսյան պլենումը հատուկ անդրադարձավ հանրապետության ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող աշխատանքների ընթացքին: Պլենումը որոշեց Երևանում բացել աղբբեջանական մանկավարժական տեխնիկում և գյուղերիտ դպրոցներ²³: 1927 թ. Հայաստանի ժողկոմխորհի հատուկ որոշմամբ կիրառության մեջ դրվեց աղբբեջաներեն նոր այբուբեն (լատինատառ):

²² ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 128, թ. 178:

²³ Ղազարխեցյան Վ.Ն., Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., Երևան, 1975, էջ 327-328:

Քրդական համայնքի կրթական մակարդակի բարձրացման գործում հատկապես զգալի աշխատանք կատարեց ազգային փոքրամասնությունների գծով կոմիսար Լազոն: 1921 թ. ամռանը Էջմիածնում նա կազմակերպեց առաջին քրդերեն մանկավարժական դասընթացները: Քրդագետ Լազոն դեռևս Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակաշրջանում կազմել էր աշխարհում առաջին քրդերեն դասագիրքը (այբբենարանը), այն հրատարակվեց խորհրդային իշխանության օրոք՝ 1921 թ. փետրվարին:

Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնություններից՝ եզդիները, ցանկություն հայտնեցին լազերենի փոխարեն դպրոցներում ուսուցումը տանել հայերեն կամ ռուսերեն:

Շնորհիվ ձեռնարկված միջոցառումների՝ խորհրդային իշխանության առաջին տասնամյակում ազգային փոքրամասնությունների համար կատարվեց զգալի աշխատանք՝ դպրոցների կազմակերպման և դրանց նյութատեխնիկական բազայի հարստացման գործում: 1927/28 ուս. տարում գործում էր 117 աղբյուրջանական, 31 ռուսական, 19 քրդական և 4 ասորական դպրոց:

1920-ական թթ. խորհրդային իշխանության առջև ծառայած գլխավոր հիմնախնդիրներից էր հանդիսանում ժողկրթության բնագավառի հիմնարկները մանկավարժական որակյալ կադրերով ապահովելու հարցը: Հայ մանկավարժությունը, որ ողջունել էր խորհրդային իշխանության հաստատումն ու պատրաստակամություն էր հայտնել համագործակցելու նոր վարչակարգի հետ, բախվեց մի շարք արգելքների: 1921 թ. հունվարին Երևանում տեղի է ունենում Երևանի և Էջմիածնի դպրոցական աշխատողների համագումարը, որը հավանություն է տալիս նոր՝ խորհրդային իշխանության նախաձեռնություններին մշակութային շինարարության ասպարեզում: Սակայն սովի և համաճարա-

կային հիվանդությունների տարածման շրջանում հատկապես ծանր դրության մեջ էր գտնվում մանկավարժությունը: Հանրապետության Լուսժողկոմի գեկուցագրում նշվում է. «Լուսավորական գործը կանգնած է այնուամենայնիվ մոայլ հեռանկարների առաջ: Քաղցած ստամոքսը չի կարող մտավոր աշխատանքի տրամադրել, կարելի է համարձակ ասել, որ լուսավորական գործի աշխատավորների նյութական վիճակը թե՛ գավառներում և թե՛ մանավանդ մայրաքաղաքում կատաստրոֆիկ է: Դրանց մեծ մասը քարշ է գալիս իր գոյությունը վերջին բաճկոնն ու վարտիքը շուկա հանելով: Երևանի ժողովրդական համալսարանի դոցենտներից ոմանք կանգնած են սովամահ լինելու վտանգի առջև, նույն վիճակն է սպասվում հարյուրավոր ուրիշ մտավոր աշխատավորների, որոնք ոչ ծախու ապրանք ունեն և ոչ էլ ազատ շուկայի ձևերով բանվորական ուժ վաճառելու հնարավորություն»²⁴: Ուսուցչության դրությունը քարելավելու կառավարության ջանքերը փաստորեն անցնում էին ապարդյուն: 1923/24 ուս. տարում ուսուցիչների աշխատավարձը կազմում էր 19 ռ. 20 կոպ., «Մինչև 1924 թ. ապրիլի 15-ը՝ այսինքն չերվոն ռուբլու հաշվին անցնելը, երբ ռոճիկները վճարվում էին հայկական և այնուհետև Անդրկովկասյան ֆեդերացիայի դրամանիշերով, ուսուցչությունը ստանում էր շատ անբավարար վարձատրություն: Ֆեդերացիայի դրամանիշների կուրսի ամենօրյա անկման օրերին, պետական գանձարանից դուրս գրված ռոճիկը, դեռ ուսուցչի ձեռքը չհասած, կորցնում էր իր արժեքի մինչև 50 %», - կարդում ենք «Խորհրդային Հայաստանը 1920-1925 թթ.» ժողովածուում²⁵: 1925/26 թթ. այն կրկնապատկվեց՝ հասնելով 40 ռ., սակայն դա չէր կարող քավարարել ուսուցիչների նյութական դրությունը:

²⁴ «Խորհրդային Հայաստան», 10 մարտի 1923 թ.:

²⁵ Խորհրդային Հայաստանը 1920 - 1925 թթ., Երևան, 1926, էջ 293:

Հատկապես վատ էր մանկավարժների վիճակը գյուղերում: Չնայած գյուղացիությունը և տեղական իշխանությունները որոշ չափով օգնում էին ուսուցչությանը պարենամթերքով, սակայն գյուղի ուսուցչությունը ստիպված էր գոյություն պահպանելու համար տեղափոխվել գյուղից գյուղ: Բացի այդ՝ ուսուցիչների մեծ հոսք կար գյուղից դեպի քաղաք:

1920-ական թթ. դասավանդման հիմնական ծանրությունը իրենց ուսերին էին կրում մանկավարժական կադրերը: Լուսժողկոմատը դաբոցները մանկավարժական կադրերով ապահովելու նպատակով 1921 թ. ամռանը կազմակերպում է մանկավարժական կարճատև դասընթացներ: Հետագա տարիներին այդպիսի դասընթացներ կազմակերպվեցին տարբեր առարկաներից: Դասընթացների ժամանակ դասավանդումն իրականացնում էին հայ ականավոր գիտնական մանկավարժներ՝ Մ. Արեղյանը, Գ. Էդիպյանը, Տ. Ռաշմաճյանը, Ա. Շմավոնյանը և ուրիշներ: Կարճատև դասընթացները ավարտողների գիտելիքների մակարդակը բավականին ցածր էր:

1924 թ. ուսուցչության միայն 10,5 %-ն ուներ բարձրագույն կրթություն, 51,6 %-ը՝ միջնակարգ և 37,9 %-ը՝ միջնակարգից ցածր: Բացի այդ՝ տեղին է նշել, որ ուսուցչության 5 %-ն ուներ անհրաժեշտ մանկավարժական կրթություն, իսկ 35 %-ը՝ թերի մանկավարժական կրթություն, 70 %-ը մանկավարժական կրթություն չունեին²⁶: Պետք է նկատի ունենալ, որ ուսուցիչների մեծ մասն աշխատում էր բավականին ծանրաբեռնված: Եթե 1923/24 ուս. տարում ամեն մի ուսուցչի միջին հաշվով ընկնում էր 34 աշակերտ, ապա հետագա տարիներին այն գրեթե չնվազեց: Գյուղերում պատկերը ավելի անմխիթար էր: Գյուղական ուսուցիչները շատ հաճախ պարսպում էին եռահերթ, իսկ աշակեր-

²⁶ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 128, թ. 179:

տության քանակը հասնում էր մեկ ուսուցչի հաշվով՝ 100-150-ի: Մանկավարժական դասընթացները ավարտած ուսուցիչները շատ հաճախ չէին ցանկանում դասավանդել գյուղերում:

1929 թ. սեպտեմբերի 23-ին ՀՄԽՀ Ժողովմիտրին ընդունեց որոշում «գյուղական դպրոցների ուսուցիչներին և լուսավորության հիմնարկների աշխատավորներին արտոնություններ տալու մասին», որը քյուջետային միջոցների անբավարարության հետևանքով կյանքի չկոչվեց: Անցել է «խորհրդավոր միանձնուհիների» շրջանը:

Մանկավարժության կրթական մակարդակի բարձրացմանը զգալիորեն խոչընդոտում էր ուսուցիչների ներգրավումը տարբեր հասարակական և խորհրդային կազմակերպությունների աշխատանքներում: 1925 թ. համահայաստանյան ուսուցիչների առաջին համագումարում Աշ. Հովհաննիսյանն իր զեկուցման մեջ նշում է, որ համագումարի 217 ուսուցիչ-պատգամավորներից «գյուղական և քաղաքային խորհրդի անդամ են 32,7 %-ը, փոխօգկոմների՝ 13,5 %-ը, կոպերատիվների՝ 20,6 %-ը, մամուլի աշխատակից է համագումարի 45 %-ը, խրճիթ ընթերցարաններում աշխատում է 31,3 %-ը»: Կոմկուսը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսուցչությունը մտավորականության առաջատար ուժն է, ձգտում էր նրա կարողությունները օգտագործել իր գաղափարախոսությունը ժողովրդի լայն զանգվածների շրջանում տարածելու համար: Դրանից ելնելով էլ՝ մանկավարժները «և՛ մասնագիտական, և՛ մանկավարժական կրթությունը պետք է թարմացնեն մարքսիստական, լենինյան իդեոլոգիայով, սա մի ընդհանուր աշխատանք է, որ պիտի կատարենք: Եվ եթե այս ճիշտ է ու պարտադիր՝ մեր ուսուցչության հին կադրերի, դա կրկնակի ճիշտ է և պահանջվում է մեր ուսուցչության մեջ մտնող կոմսոմոլիստի և կոմունիստի համար, որոնք ավելի շուտ կարող

են կիրառել այդ մեթոդները»²⁷: Հայ մանկավարժությունը, հատկապես հին մանկավարժական կադրերը, որոնք մի քանի սերունդ շարունակ կրթել էին աշակերտությանը ազգային ոգով, դժվարությամբ էին համակերպվում նոր գաղափարախոսությանը: Նույնիսկ կոմունիստական ամենատիրության հաստատման պայմաններում նրանք զգալի աշխատանք կատարեցին պահպանելու աշակերտության շրջանում ազգային ոգին և հայ դպրոցի ավանդույթները հաղորդելու սերնդներին: 1928 թ. Ա. Մոավյանը խոստովանում էր. «Հաճախ Րաֆֆին, Ահարոնյանը և լավագույն դեպքում Ժյուլ Վեռնն են իշխում պատանեկության վրա, փոխանակ մեր դարաշրջանի պրոբլեմները լուսաբանող գեղարվեստական գրականությունը: Սա խոշոր բաց է, մեր մասնով սերնդին հեղափոխական պրոլետարիատի էստուգիազմով, միջազգայնականությամբ ներշնչելու աշխատանքը դեռ շատ քիչ է կատարված»²⁸:

Արդեն 1920-ական թթ. վերջերից Խորհրդային Հայաստանում, ինչպես նաև միութենական այլ հանրապետություններում, աստիճանաբար անցում է կատարվում դեպի վարչաօրհանայական կառավարումը, որն իր զգալի ազդեցությունն է թողնում նաև կրթական համակարգի վրա: Կոմկուսը հաստատում է իր մենիշխանությունը: 1930-ական թվականներից գործում է մեկ միասնական կրթական համակարգ, որն էլ որոշ աննշան փոփոխություններով պահպանվեց հետագա տասնամյակների ընթացքում:

²⁷ «Խորհրդային Հայաստան», 27 դեկտեմբերի 1924 թ.:

²⁸ Մոավյան Ա., Հողվածներ և ճառեր, Երևան, 1961, էջ 298:

Гурген В. Варданыан, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, Формирование общеобразовательной системы в Советской Армении (1920-ые годы) - В декабре 1920 г. после установления советской власти в Армении Коммунистическая партия Армении начала осуществлять новую политику в сфере образования. По примеру Советской России были приняты законодательные акты и решения по созданию общеобразовательной системы коммунистического строя. При активном участии населения Армении в 20-ых годах постепенно была восстановлена и начала развиваться образовательная система, развернулось строительство школ, которое способствовало росту учащихся. Государственно-партийное руководство уделяло большое внимание подготовке педагогических кадров. В конце 20-ых годов в республике были созданы предпосылки для перехода к обязательному начальному образованию.

Gurgen V. Vardanyan, *NAS RA Institute of History, PhD in History, Assistant Professor*, The Formation of Educational System in Armenian SSR (1920's) - After the establishment of Soviet rule in Armenia in 1920, Armenian Communist Party adopted a new educational policy. Imitating to Soviet Russia, some legislative acts and decisions were adopted, most of which aimed at creating new educational system in accordance with the Communist regime. In the 1920's, thanks to the active participation of Armenian population, the secondary system gradually restored and developed. A large-scale school building was conducted, which provided the increase of the number of schools and students. State-party leaders gave serious attention to the training of new pedagogical personnel. Preconditions were created for the transition to compulsory elementary education.

ՍՈՒՐԵՆ Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԱՄ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

*Բանալի բառեր*¹ Խորհրդային Հայաստան, Կարմիր խաչ, քնակ-
չություն, անողջապահություն, սոցիալական օգնություն:

Հայաստանի առաջին Հանրապետությունը, որ սոցիալ-
տնտեսական չափազանց ծանր իրավիճակում ստանձնել էր մե-
ծաքանակ գաղթականների, անօթևանների ու որբերի կեցույթ-
յան պատասխանատվությունը, միաժամանակ ստիպված էր դի-
մագրավել ահազնացող տարափոխիկ հիվանդությունների ու
համաճարակների տարածմանը: Այս պայմաններում նյութական
օժանդակությանը զուգահեռ՝ հրամայական էր նաև ազգաբնակ-
չությանը կազմակերպված բուժօգնության տրամադրումը, ինչից
եղևելով՝ 1920 թ. սկզբին մի խումբ հասարակական գործիչների
նախաձեռնությամբ ստեղծվեց Հայաստանի Կարմիր խաչի ըն-
կերությունը (այսուհետև՝ ՀԿԽԸ)¹:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1920 թ.
փետրվարի 17-ի նիստում հավանության արժանացավ ՀԿԽԸ
կանոնադրությունը, որը 1920 թ. մարտի 20-ին ներկայացվեց
Պառլամենտի հաստատմանը²: ՀԿԽԸ-ի բարձրագույն մարմինը

¹ Տեղեկագիր Հայաստանի Կարմիր խաչի (այսուհետև՝ Տեղեկագիր ՀԿԽ),
Փարիզ, 1926, էջ 1:

² Հայաստանի Կարմիր խաչի ընկերություն (այսուհետև՝ ՀԿԽԸ), Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածին, 1920, էջ 10:

Գլխավոր վարչությունն էր, որի նախագահ էր ընտրվել³ Գրիգոր Չալխուշյանը⁴, ով պաշտոնավարեց մինչև նոյեմբերի սկիզբը⁵:

Սոցիալական ծանր մարտահրավերներին դիմագրավելու, առաջադրված խնդիրները լուծելու նպատակով և միջոցների սղության պայմաններում ՀԿԽԸ-ն ստիպված էր օժանդակության խնդրանքով դիմել շահագրգիռ անձանց, կազմակերպությունների ու մարմինների՝ նյութական ու ֆինանսական լրացուցիչ միջոցների ներգրավման ակնկալիքով:

ՀԿԽԸ-ն նախ դիմում է ՀՀ կառավարությանը՝ 5 միլոն ռուբլի վարկ ստանալու խնդրանքով, սակայն 1920 թ. մայիսի 9-ի որոշմամբ տրամադրվում է ընդամենը մեկ միլիոն ռուբլի⁶:

Ընկերության արդյունավետ աշխատանքի շնորհիվ նյութական օգնություն էր հավաքվում նաև հայկական գաղթօջախներից⁷. այս գործում իր մեծ ներդրումն ունեւր Կ.Պոլսի Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը⁸:

Օգնության ուշագրավ ձև է սահմանվում ՀՀ կառավարության 1920 թ. հունիսի 2-ի որոշումով, համաձայն որի՝ երկաթուղու 1-ին և 2-րդ կարգի տոմսերի արժեքը թանկացվում է 10 ռուբլով, իսկ 3-րդ կարգի տոմսերի արժեքը՝ 5 ռուբլով՝ նպատակ ունենա-

³ Նույն տեղում, էջ 48:

⁴ Գրիգոր Չալխուշյան (1861-1931), հասարակական գործիչ, պատմաբան, իրավաբան: 1919 թ. ՀՀ կառավարությունը Չալխուշյանին նշանակել է Դռնուս ՀՀ ներկայացուցիչ: 1920 թ. հունվարին եկել է Հայաստան, ընտրվել Կարմիր խաչի կենտրոնական վարչության նախագահ: 1920 թ. նոյեմբերի 10-ին մեկնել է Կ. Պոլիս, այնտեղ մնացել Հայաստանի խորհրդայնացումից հետո:

⁵ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 154, ց. 1, գ. 2, թ. 2:

⁶ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրությունները. 1918-1920 թթ. Երևան, 2014, էջ 449:

⁷ Տեղեկագիր ՀԿԽ, էջ 1:

⁸ Ավագյան Վ., Հայկական ՍՍԻ Կարմիր Խաչի ընկերության պատմությունը, Երևան, 1949, էջ 18:

յով գոյացած հավելյալ գումարներն ուղղել ՀԿԽԸ համապատասխան ծրագրերի իրականացմանը⁹:

Նշենք նաև, որ արդեն 1920 թ. օգոստոսի 6-ի որոշմամբ կառավարությունը ՀԿԽԸ-ին է տրամադրում ևս 4 միլիոն ռուբլի վարկ¹⁰:

Նշված օժանդակությունների հաշվին Ընկերությունը հնարավորություն ունեցավ կյանքի կոչել մի շարք նախաձեռնություններ, մասնավորապես՝ Քեշիշքենդում (Դարավազյազի գավառ, այժմ՝ Եղեգնաձոր) հիմնվեց հիվանդանոց՝ 20-25 մահճակալով, իսկ Նորաշենում՝ բուժկայան և սննդակայան¹¹: Նախատեսվում էր նաև Քեշիշքենդի հիվանդանոցի մահճակալների թիվը հասցնել 50-ի, իսկ Երևանում բացել նոր հիվանդանոց՝ 50 մահճակալով¹²:

Հատկանշական է այն փաստը, որ ՀԿԽԸ-ն գործուն հարբերությունների մեջ էր նաև արտասահմանյան մարդասիրական կազմակերպությունների հետ: ՀԿԽԸ նախաձեռնությունները մշտապես օժանդակություն էին ստանում Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (այսուհետև՝ Ամերկոմ) կողմից¹³, մասնավորապես՝ սննդակայաններին մթերքով ապահովման և հիվանդանոցներին մահճակալների տրամադրման տեսքով:

ՀԿԽԸ մարդասիրական աշխատանքները շարունակվում են նաև 1920 թ. աշնանը սկսված թուրք-հայկական պատերազմի շրջանում: Պատերազմական գործողությունների ընթացքում

⁹ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., էջ 477:

¹⁰ Նույն տեղում, էջ 530:

¹¹ Տեղեկագիր ՀԿԽ, էջ 1:

¹² ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 2, թ. 2:

¹³ Նույն տեղում, թ. 2 շրջ.:

ՀԿԽԸ-ն վիրավոր և հիվանդ զինվորներին բժշկական օգնություն ցույց տալու նպատակով իր միջոցներով կազմում է բժշկական խմբեր՝ նրանց ապահովելով անհրաժեշտ դեղորայքով և սարքավորումներով¹⁴: Այսպիսով, սպառվում են մինչ այդ Ընկերության տրամադրության տակ եղած ֆինանսական և այլ միջոցները¹⁵:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո Ընկերության գործունեությունը ժամանակավորապես դադարում է:

Խորհրդային իշխանության հաստատվելուց որոշ ժամանակ անց ՀԿԽԸ մի շարք անդամներ ցանկություն են հայտնում վերսկսել Ընկերության գործունեությունը¹⁶:

1921 թ. հոկտեմբերի 15-ին Հայաստանի Ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում է, որ ՀԿԽԸ-ն մեծ դեր ունի երկրի սոցիալական վիճակի բարելամամ գործում և պետք է վերսկսի իր գործունեությունը՝ 1864 թ. ընդունված Ժնևի կոնվենցիայի դրույթների համաձայն¹⁷: Համաձայն Ժողովխորհի որոշման՝ պետք է լրամշակվեր ՀԿԽԸ կանոնադրությունը, ընտրվեր նոր վարչություն:

1921 թ. նոյեմբերի 20-ին Ընկերության՝ Երևանում գտնվող նախորդ վարչության անդամները հրավիրեցին ընդհանուր ժողով¹⁸, որտեղ ընտրվեցին Գլխավոր վարչության նոր անդամները: Վերջիններս Գլխավոր վարչության նախագահ ընտրեցին բժիշկ Սպանդարատ Կամսարականին¹⁹:

¹⁴ Ավագյան Վ. Նշվ. աշխ., էջ 18:

¹⁵ Տեղեկագիր ՀԿԽ, էջ 2:

¹⁶ Նույն տեղում, էջ 2:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 2, թ. 21:

¹⁸ Նույն տեղում, թ. 7:

¹⁹ Նույն տեղում, թ. 7 շրջ.:

Նորընտիր Գլխավոր վարչությունն իրականացրեց լայնածավալ աշխատանքներ՝ կապեր հաստատելով արտասահմանի հայաշատ կենտրոնների, տեղերում հիմնված Հայ Կարմիր խաչի կազմակերպությունների հետ, դրանցից մի քանիսը վերակազմավորելով որպես ՀԿԽԸ մասնաճյուղեր, ինչպես՝ Ամերիկայի, Փարիզի, Մարսելի, Թավրիզի և Աթենքի մասնաճյուղերը²⁰։ Գլխավոր վարչության կարևոր ձեռնարկներից էր Ղամարլուի (այժմ՝ Արտաշատ) շրջանում գաղթականների համար բժշկական կայանի բացումը, որի հիմնադրման և գործարկման աշխատանքներին օժանդակելու պատրաստակամություն էր հայտնել նաև Անգլիական նպաստամատույց կոմիտեն։ Իսկ Կոտայքի շրջանի գաղթականների համար Շահաբ (այժմ՝ Մայակովսկի) գյուղում նախնական 6 մահճակալանոց հիվանդանոց է բացվում գավառային առողջապահության բաժնի և Ամերիկյան նպաստամատույցի օժանդակությամբ²¹։

1922 թ. հունիսի 21-ին ՀՄԽՀ Ժողկոմխորհն ընդունում է Ընկերության համար չափազանց կարևոր որոշում, որով հստակ սահմանվում են ՀԿԽԸ ֆինանսական և այլ նյութական միջոցների երաշխիքների իրավական հիմքերը, ինչը ևս մեկ անգամ փաստում է այս կազմակերպության ռազմավարական կարևորությունը երկրի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի կարգավորման գործում։ Համաձայն նշված որոշման՝ Կարմիր խաչի ընկերությանն էր փոխանցվելու ընդհանուր հարկերի 5 տոկոսը, արտասահմանյան անձնագրերի ձևակերպումից ստացված գումարների 15 տոկոսը, ժամանցի հաստատությունների եկամտի 2 տոկոսը և արտասահմանից ստացված նյութական միջոցներ²²։

²⁰ Տեղեկագիր ՀԿԽ, էջ 3։

²¹ ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 2, թ. 9 շրջ.։

²² Ավագյան Վ., նշվ. աշխ., էջ 21։

Անհրաժեշտ միջոցների առկայության դեպքում ՀԿԽԸ-ն հնարավորություն էր ստանում ընդլայնվել և իր մասնաճյուղերը բացել հանրապետության մի շարք բնակավայրերում՝ Ալեքսանդրապոլում, Զանգեզուրում, Լոռի-Փամբակում, Դիլիջանում, Էջմիածնում, Մեղրիում, Դարալագյազում և Նոր-Բայազետում²³:

Ալեքսանդրապոլում հիմնվում է մանկատուն՝ 40 որբերի համար, Լոռու շրջանում՝ բուժկայան, Զալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան)՝ մսուր-մանկապարտեզ, Դիլիջանում, Զանգեզուրում, Կոտայքի Բանաքեռ գյուղում՝ բուժկայաններ²⁴:

Գլխավոր վարչության կարևորագույն խնդիրներից էր նաև Միջագետքից ներգաղթած 6000 հայ գաղթականների առողջական վիճակի բարելավումը: Այդ նպատակով 1922 թ. հունիսի 25-ից Վեդի Բասարի շրջանի Բոյոբ Վեդի գյուղում, որտեղ տեղավորված էին գաղթականները, ևս բացվում է բժշկական կայան՝ մեկ բժիշկով և բուժակով²⁵: Տասնմեկ ամիսների ընթացքում բուժկայանը համապատասխան բուժօգնություն է տրամադրել 5054 հիվանդի, որոնց 95 տղկոսը կազմում էին երկրում մոլեզնոդ մազարիայով տառապողները²⁶:

1922 թ. սեպտեմբերից Լոռվա մասնաճյուղը Գյուլագարակ գյուղում բացեց բժշկակայան, որը մինչև 1923 թ. մայիսը օգնություն է տրամադրել 4125 հիվանդի²⁷ և նախատեսում էր բացել նաև մսուր երեխաների համար, իսկ Ալեքսանդրապոլի մասնաճյուղը իր հովանու ներքո պահում էր մեկ մանկատուն և մսուր՝ մոտ 100 երեխաի համար²⁸:

²³ Նույն տեղում, էջ 21:

²⁴ ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 30, թ. 8-9:

²⁵ Նույն տեղում, գ. 38, թ. 6 շրջ.:

²⁶ Տեղեկագիր ՀԿԽ, Փարիզ, 1926, էջ 5:

²⁷ Ավագյան Վ., նշվ. աշխ., էջ 23:

²⁸ ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 38, թ. 8 շրջ.:

1922 թ. հոկտեմբերից Զանգեզուրի Ղարաքիլիսա (այժմ՝ Սիսիան) և Ղափանի Տեղ գյուղերում բացվում է մեկական բուժկայան, իսկ 1923 թ. հունվարից բուժկայան է գործում նաև Հալիձորում²⁹: Նշված բուժկայանները 1923 թ. ընթացքում բուժօգնություն են ցուցաբերել 10 762 հիվանդի, որոնց 40 տոկոսը՝ մալարիայով տառապողներ, 20 տոկոսը՝ քսոսով, հաջորդ՝ 1924 թ. ընդունել են 14 624 հիվանդի, 1925 թ.՝ 9132 հիվանդի³⁰:

1923-1924 թթ. մալարիայի դեմ պայքարելու նպատակով ՀԿԽԸ-ն կազմակերպեց Էջմիածնի տրոպիկական կայանը, որն ուներ նաև իր ստացիոնար՝ 4, մեկ տարի անց՝ արդեն 6 հակամալարիական բժշկական խմբերը, որոնք եռանդուն աշխատանքներ էին ծավալում մոտակա Զեյվա (այժմ՝ Տարոնիկ), Խաթունարխ (այժմ՝ Գայ), Փարաքար և այլ գյուղերում: 1924 թ. հունիսի 1-ից մինչև 1925 թ. հունվարի 1-ը կայանն իր շարժական խմբերի հետ միասին սպասարկել է 43 335 հիվանդի, այդ թվում՝ 31 609 մալարիայով տառապողների³¹:

1925 թ. բժշկական կետեր են բացվում Հոկտեմբերյանի (այժմ՝ Արմավիր) կայանում, որը մինչև օգոստոս օգնություն է տրամադրել 4960 հիվանդի, Ղափանի տարածաշրջանի Տեղ և Իջևանի Սևքար գյուղերում³²: Մինչև սեպտեմբեր Սևքարի բուժկայանն ունեցել է 8052 հիվանդ, որոնցից մալարիայով վարակված՝ 2746-ը³³:

ՀԿԽԸ գործունեությունը չէր սահմանափակվում միայն առողջապահական ձեռնարկումներով, այլ զուգընթաց օգնութ-

²⁹ Նույն տեղում, գ. 38, թ. 7-8:

³⁰ Ավագյան Վ., նշվ. աշխ., էջ 22-23:

³¹ Նույն տեղում, էջ 28:

³² Դավաթյան Մ., Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը հիսուն տարում, Երևան, 1971, Ավագյան Վ., նշվ. աշխ., էջ 20-21:

³³ Տեղեկագիր ՀԿԽ, էջ 29:

յուն էր ցուցաբերվում նաև որք և անապատտան երեխաներին ու այլ կարիքավորների: Այսպես՝ Երևանում ՀԿԽԸ-ի միջոցներով բացվել էր մեկ մանկատուն, հնարավորության սահմաններում նյութական օժանդակություն էր տրամադրվում հաշմանդամներին, չքավոր բնակչությանը և գաղթականներին: Նաև կազմակերպվում է բժշկակրթական գործ՝ գթության քույրերի դասընթացների ձևով³⁴:

Կարմիր Խաչի կողմից 1922-1923 թթ. «Անապատտան երեխաների օգնության ընկերությանը» նյութական աջակցություն էր տրամադրվում, իսկ 1923 թ. Երևանում հիմնվում է Կարմիր Խաչի որբանոցը՝ 8-14-տարեկան 100 երեխայի համար³⁵: 1925 թ. սեպտեմբերի 3-ի դրությամբ մանկատան սաների թիվը կազմում էր 91, տարիքը՝ 5-18³⁶: ՀՍԽՀ Երևանի Քաղգավգործկոմի գլխավոր ճարտարապետի՝ 1925 թ. նոյեմբերի 2-ի գրության մեջ նշվում է, որ մասնավոր մի անձի պատկանող հողամասը, որ ՀԿԽԸ-ին կից էր, հատկացվում է Կարմիր Խաչին՝ մանկատան կարիքները հոգալու համար³⁷:

1926 թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցած Լենինականի երկրաշարժի ավերիչ հետևանքների հաղթահարման գործում, համագործակցելով Ամերկոմի և ՀՕԿ-ի հետ, ՀԿԽԸ-ն զգալի օգնություն է ցուցաբերել և մարդասիրական մեծ ներդրում ունեցել: Ամերկոմի կողմից ՀԿԽԸ-ին է տրամադրվում 20 000 դոլար՝ թեյարաններ և կաթի մատակարարման կետեր բացելու, բնակչությանը կերակրելու համար³⁸:

³⁴ ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 78, գ. 78, թ. 7:

³⁵ Ավագյան Վ., նշվ. աշխ., էջ 30:

³⁶ ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 92, թ. 117 և շրջ.:

³⁷ Նույն տեղում, գ. 92, թթ. 142-143:

³⁸ Տե՛ս Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատուց կոմիտեի գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Երևան, 2009, էջ 180:

Առաջին իսկ օրերից ՀԿԽԸ-ն աղետի վայր է ուղարկում բժշկական օգնություն և արդեն հոկտեմբերի 25-ին Թուրքի Ղարաքիլիսա (այժմ՝ Ախտրիկ) գյուղում բացում է բժշկակայան, որը սպասարկում է նաև շրջակա Արալըխ (այժմ՝ Երագզավորս), Ալեքսանդրովկա (այժմ՝ Ղարիբջանյան), Բայանդուր և Դահար-լու (այժմ՝ Գեւոր) գյուղերին³⁹: 1926 թ. հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 25-ը Ընկերությունը բժշկական օգնություն է տրամադրել հիվանդ և վիրավոր 3873 մարդու⁴⁰:

Երկրաշարժից տուժած անօթևան քնակչության համար ՀԿԽԸ-ն կազմակերպում և բացում է երկու սննդակայան՝ Թուրքի Ղարաքիլիսա և Դավչան Ղըջլաղ (այժմ՝ Շիրակավան) գյուղերում, որոնք շրջակա ութ գյուղերի տուժածներին ապահովում են անհրաժեշտ սննդով: Մննդակայանները գործում են 1926 թ. հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 26-ը՝ այդ ընթացքում բաց թողնելով 148 450 բաժին սնունդ⁴¹:

ՀԿԽԸ-ն սննդակայան է հիմնում նաև Լենինականում, որտեղ օրական 3000 մարդու տրամադրվում է սնունդ, իսկ կաթի խոհանոցը մատակարարում է օրական 600 երեխայի: 1926 թ. դեկտեմբերից մինչև 1927 թ. մայիսը Լենինականում բաշխվում է 245 303 բաժին սնունդ և 66 922 բաժին կաթ: Լենինականում Ընկերության միջոցներով բացվում է նաև անվճար երկու թեյարան, որոնք գործում են 1927 թ. փետրվար-մարտ ամիսներին՝ տրամադրելով 85 235 բաժին թեյ⁴²:

Ընդհանուր առմամբ, մինչև 1927 թ. մայիսն ընկած ժամանակահատվածում ՀԿԽԸ-ի կողմից քնական աղետի հետևանքով

³⁹ ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 6, թ. 114:

⁴⁰ Նույն տեղում, թ. 115:

⁴¹ Ավագյան Վ., նշվ. աշխ., էջ 32:

⁴² ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 6, թ. 117-118:

տուժած քաղաքի և գյուղերի բնակչությանն է տրամադրվել 443 664 բաժին սնունդ⁴³:

Այսպիսով, ՀԿԽԸ-ն իր գոյության անաջին իսկ տարիներից սկսած, երկրի սոցիալական ծանր վիճակի բարելավման գործում կատարել է հսկայածավալ աշխատանք՝ բազմաբնույթ օգնություն տրամադրելով Խորհրդային Հայաստանի ազգաբնակչությանը՝ հիվանդությունների կանխարգելման և բուժման, անապաստաններին, որբերին և գաղթականներին օժանդակելու գործում՝ ակտիվորեն համագործակցելով ինչպես կառավարության, այնպես էլ արտասահմանյան մարդասիրական կազմակերպությունների հետ:

Сурен Р. Аветисян, Институт истории НАН РА, к.и.н., доцент, Деятельность Организации Армянского Красного Креста в социальной сфере в 1920-ые годы - Статья посвящена деятельности Организации Армянского Красного Креста в социальной сфере. В 1920-ые годы Организация осуществила множество социальных программ направленных на сохранение здоровья тысяч бездомных сирот беженцев спасшихся от Геноцида и на устранение последствий землетрясения 1926 года.

Деятельность Организации Армянского Красного Креста оказала огромное влияние на улучшение социально-экономического состояния страны.

⁴³ Նույն տեղում, թ. 117:

Suren R. Avetisyan, *NAS RA Institute of History, PhD in History, Assistant Professor*, **The Activity of Armenina Red Cross Society in Social Sphere in 1920's** - The article is dedicated to the humanitarian activities of the Armenian Red Cross Society in social sphere. In 1920's the Society carried out many social programs both in the First Republic of Armenia and in Soviet Armenia to preserve the health of thousands of refugees and homeless orphans survived from the Genocide as well as to eliminate the consequences of the 1926 earthquake.

The activities of the Armenian Red Cross Society had a great influence on improving the social-economic condition of the country.

ԳԱԳԻԿ Ա. ԺԱՄՀԱՐՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(1920-ԱԿԱՆ ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

Բանալի բառեր՝ Խորհրդային Հայաստան, գաղթականներ, ցեղասպանություն, ներգաղթ, քնակչություն, արևմտահայեր:

Ցեղասպանությունից փրկված և Խորհրդային Հայաստանում ապաստան գտած հայ գաղթականությունը 1920-ական թթ. սկզբին հասարակության ամենախոցելի, ջքավոր, ծայրահեղ ծանր վիճակում գտնվող սոցիալական շերտն էր: Խորհրդային իշխանությունները դա քաջ գիտակցում էին և գաղթականության հիմնախնդրին փորձում էին ցուցաբերել առանձնահատուկ մոտեցում: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման դժվարությունների մասին խոսելիս նշանավոր կուսակցական գործիչ Գ. Օրջոնիկիձեն նշում էր. «...է՛լ ավելի դժվար է, միլիոն անգամ ավելի դժվար է այդ իշխանությունը կառուցել այնտեղ՝ տանջված, ծվատված Հայաստանում, որը քիչ է մնացել վերածվի գաղթականների հանրապետության»¹:

1920-ականների սկզբի Խորհրդային Հայաստանի ամենարևոտ ու սոցիալ-տնտեսական իրողություններից էր քնակչության ջքավորությունը և սովը: Հատկանշական է, որ թեպետև սովը տարածված էր նաև Խորհրդային Ռուսաստանի տարբեր շրջաններում, ինչը պայմանավորված էր տնտեսական ու քաղաքական շատ գործոններով, այդուհանդերձ, Հայաստանում սովի

¹ Տե՛ս Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի քնակազաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Երևան, 1975, էջ 78:

տարածումը իշխանություններն առաջին հերթին կապում էին երկրում բազմահազար գաղթականների և որբերի առկայության հետ²: Տեղական պաշտոնյաներից կուսակցական և պետական կենտրոնական մարմիններին հաճախ էին ուղարկվում զեկուցագրեր գաղթականների ծայրահեղ չքավոր վիճակի մասին: Նշվում էր, որ պարենի պակասության պատճառով գաղթականները հաճախ սնվում են իրենց բաժին սերմացույով, զբաղվում մուրացկանությամբ և այլն³:

Վանաձորից բազմավաստակ մանկավարժ Ալեքսանդր Մելիքյանն իր հուշագրության մեջ կարողացել է վերարտադրել մանկական և պատանեկան տարիների հուշերի վառ ու կենդանի պատկերներ, որոնք պարունակում են նաև խնդրո առարկա հարցին վերաբերող հետաքրքիր դրվագներ: Այսպես՝ հեղինակի հուշերից մեկը, որը վերաբերում է 1921 թվականին, այն մասին է, թե ինչպես է նա գնացել իր տատի քրոջ տուն՝ այսուր բերելու: Երկու բոտ այսուրը պետք է լուծվեր ջրում, եփվեր և ստացված զանգվածը խմելու էին կշտանալու, հեղինակի խոսքերով՝ «փորը լցնելու» համար: Հետդարձի ճանապարհին պատանին տեսնում է, թե ինչպես են քաղցած գաղթականները հավաքվել իրենց հարևանի այգում, ում սատկած ձիու միսը իրար մեջ բաժանելու համար կացին են խնդրում վերջինից: «...Նա տվեց և տուն մտավ, չկարողացավ նայել սատկած ձիու միսը իրարից խլելու տեսարանը», - պատմում է հեղինակը⁴: Ա. Մելիքյանը հիշում է նաև, թե ինչպես էր պատանեկության տարիներին իր գաղթական ընկերոջ՝ Հայկի հետ շալակով փայտ բերում Լոռվա անտառներից: «Շալակը երկու ձևի էր... Երկրորդ ձևը, որ կոչվում էր *գաղթականակի* (ընդգծումը մերն է - Գ. Ժ.), շալակը առնվում

² ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 5, թ. 2:

³ ՀԱԱ, ֆ. 123, ց. 42, գ. 63, թ. 1, նույնի՝ թ. 13:

⁴ Մելիքյան Ա., Անդարձ անցած օրեր ու գործեր, Վանաձոր, 2003, էջ 29:

էր մեջքին ուղղաձիգ դիրքով:.. Հայկը մենակ էր, նրան օգնել չէինք կարող: Նա այնքան մեծ շալակ էր պատրաստում, որ մինչև տուն հասնելը քիչ էր մնում աչքերը բներից դուրս գային, իսկ վիզը կրկնակի երկարում էր»⁵: Հետաքրքրական է նաև ամերիկյան օգնության բաշխման տեսարանը, որին նույնպես հանդիպում ենք նշված հուշագրության մեջ. «...Տուկը բարձրացնում էին շնքերից մեկի տանիքը, բացում և մեկ-մեկ ցած շարտում նրանցից հանված հագուստը, կոշիկները: Ներքևում հավաքված բազմությունը, *մանավանդ մերկ ու սուլած գաղթականները* (ընդգծումը մերն է - Գ. Ժ.), բռնում էին ցած նետածները: Այնպես էր պատահում, որ մի քանի մարդ այն որսում էին միասին: Ինչ էր տեղի ունենում, քաշքշոց, լաց, աղաչանք, արյունվա դեմքեր...»⁶: Նշված օրինակներից պարզ է դառնում, որ թեպետ հեղինակը հատուկ նպատակ չի ունեցել առանձնացնել գաղթականներին, սակայն ինքնակենսագրական այս տեղեկությունների մեջ նրանք ներկայանում են տեղական բնակչությունից տարբերվող, ավելի չքավոր: Ներկայացվող դրվագներում նրանց կյանքի պայմանների ակնհայտ տարբերությունը գաղթականական այսպես ասած «ուրույն» կեցության առկայության խոստուն ապացույցն է:

1920-ականներին հայ գաղթականների վիճակը կրում էր նաև պետության տնտեսական քաղաքականության ազդեցությունները: Խոսքը ռազմական կոմունիզմի քաղաքականությամբ կիրառված զանգվածային բռնագրավումների մասին է, որոնց ենթարկվում էին նաև գաղթականները: Նրանց դիմումներում հաճախ ենք հանդիպում խնդրանքներ՝ իրենցից խլված հացահատիկը և պարենամթերքը վերադարձնելու վերաբերյալ, որը նրանք իրենց հետ մեծ դժվարությամբ կարողացել էին բերել

⁵ Նույն տեղում, էջ 33:

⁶ Նույն տեղում, էջ 31:

Խորհրդային Հայաստան՝ մինչև այստեղ հիմնավորվելը գոնե գոյատևման միջոցներ ունենալու նպատակով: Օրինակ՝ Սուրմալուի գավառից գաղթած քաղաքացին բողոքում էր, որ 1921 թ. իրեն հաջողվել էր մեծ դժվարությամբ չորս պարկ ցորեն տեղափոխել Երևան, որը նա պահել էր իր հարևանի նկատում: Բռնագրավումներից մեկի ժամանակ հարևանի ցորենի հետ միասին տարել էին նաև իր ցորենը՝ բազմանդամ ընտանիքին թողնելով սովի ճիրաններում⁷: Իսկ Կարսից գաղթած մի քաղաքացի խնդրում էր կա՛մ իրեն վերադարձնել բռնագրավված 16 փութ գարին, կա՛մ դրա փոխարեն իրեն տրամադրել 3 փութ ալյուր, որպեսզի իր յոթ հոգուց բաղկացած ընտանիքը սովի չմատնվի⁸:

Հայ գաղթականությունը դժվարություններ կրեց նաև 1923 թ. ներգաղթի ժամանակ: Հիշատակելի է հատկապես Բաթումի մաքսատան գործունեությունը, որի չարաշահումների վերաբերյալ անհազանգում էին նաև ներգաղթի կազմակերպմամբ զբաղվող մարմինները: 1925 թ. Հայաստանի ժողկոմխորհին կից գաղթականական հանձնաժողովին ուղարկված զեկուցագրերից մեկում նշվում էր, որ Բաթումի մաքսատունը ներգաղթող հայերից բռնագրավել էր զանազան անհրաժեշտ իրեր՝ հագուստներ, կտորեղեն և այլն: Բռնագրաված ապրանքը նրանք գնել էին՝ ի հաշիվ արտասահմանում վաճառքի հանած տնային կահկարասուց ստացված հասույթի: «...Նման պայմաններում Հայաստան ժամանող գաղթականությունը, վաճառքի հանելով ու քայքայելով իրենց տնտեսությունը արտասահմանում, բնականորեն զրկվում է հնարավորությունից ստեղծելու նոր տնտեսություն Հայաստանում և մատնվում է աղքատության», - նշված էր զեկու-

⁷ ՀԱԱ, ֆ. 119, ց. 4, գ. 8, թ. 36:

⁸ Նույն տեղում, թ. 124:

ցագրում⁹: Ավելացնենք նաև, որ Բաթումի մաքսատունը ներգաղթող հայերի նկատմամբ իր վերաբերմունքը չվերանայեց նույնիսկ այն բանից հետո, երբ 1925 թ. մարտի 31-ին Խորհրդային Հայաստանի կենտրոնական օրոշմամբ ներգաղթյալներին մաքսային արտոնություններ տրվեցին¹⁰:

1920 թ. արևմտահայ գործադիր մարմնի կողմից Հայեղկոմին հղված հայտարարության մեջ հանդիպում են այսպիսի տողեր. «...Ջրկված հայրենի հողից, նրանք մնացին մինչև վերջն էլ հողագուրկ և թափառաշրջիկ: Իրենց ուրույն կյանքով ու կենցաղով չկարողացան մի տեղ գտնել, կամ միանալ տեղական ժողովրդի հետ: Եվ այդ պատճառներով նրանց աշխատանքի, պարենավորման, տնտեսական և ընկերային պայմանները մնացին անբնականոն ու դարձրին այդպես նաև շրջապատի պայմանները»¹¹: Այս տողերը վերաբերում են հայ գաղթականության դրությամբ մինչև խորհրդային իշխանության հաստատումը: Դատելով վերընշված փաստաթղթերից՝ կարող ենք եզրակացնել, որ այս տողերը արդիական են մնացել նաև 1920-ականների սկզբին: Հայ գաղթականությունը, հաշվի առնելով ներգաղթի ժամանակ նրա կրած դժվարությունները, ունեզրկումն ու թալանը տարբեր ավազակախմբերի կողմից մինչև հայրենիք հասնելը, հայրենիքում նույնիսկ ընդհանուր սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի ֆոնի վրա հանդիսանում էր առավել խոցելի խավ: Եվ թվում է, թե իշխանությունը սա հաշվի առնելով՝ պետք է որոշակի արտոնություններ տրամադրեր նրանց, օրինակ, չռնագրավեր նրանց սպորուստի վերջին միջոց հանդիսացող հացահատիկը: Սակայն խնդիրն այն է, որ ռազմական կոմունիզմի կիրառման ժամանակ պետությունը գաղթականներին չառանձնացրեց՝ ինչը

⁹ ՀԱԱ, ֆ. 123, ց. 42, գ. 63, թ. 93:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 4, գ. 12462, թ. 11:

¹¹ Տե՛ս Մելիքսեթյան Ը., նշվ. աշխ., էջ 81:

լուրջ դժվարություններ առաջացրեց նրանց չքավորության հաղթահարման գործում:

Պետք է նշենք, որ եթե տեղական բնակչության համար գաղթականների ներհոսքը սոցիալական ծանր բեռ էր, ապա խորհրդային իշխանության համար գաղթականությունը հանդիսանում էր նաև քաղաքական մտահոգության առարկա: Խորհրդային կարգերի հանդեպ հասարակական տրամադրությունների վերահսկման ժամանակ իշխանությունների կողմից հատկապես լուրջ ուշադրություն էր դարձվում գաղթականներին: Պատճառն այն էր, որ իշխանությունը հատկապես նրանց մեջ էր տեսնում ազգային կամ հոգևոր կազմակերպությունների հետ անցանկալի համագործակցության և հակախորհրդային գործունեության հնարավորություն: Օրինակ՝ ՄՊԲՎ 1923 թ. ամփոփագրերից մեկում կարդում ենք. «...Բացի այդ ամենից, Հայաստանում գործում է հոգևոր միությունների և աղանդավորական կազմակերպությունների մի ամբողջ ցանց՝ կապված ամերիկյան առաքելության հետ, որոնց մարմինները համակարգված հակախորհրդային աշխատանք են տանում: Այդ աշխատանքը տարվում է ոչ միայն աղանդավորական կազմակերպությունների, այլ նաև անհատական քարոզչության ձևով՝ որբատների և իրենց ծառայողների միջոցով»¹²: Մեկ այլ ամփոփագրում նշվում էր, որ Հայաստանում բավականին մեծ ակտիվություն է ցուցաբերում բողոքական շարժումը, որի մեջ մեծ է թուրքիայից ներգաղթած հայ երիտասարդության թիվը¹³:

Նույն ոգով էր կազմված նաև ՀՄԽՀ Արտակարգ հանձնաժողովի աշխատակիցներից մեկի՝ 1921 թ. հանձնաժողովի քարտուղարին ուղարկված զեկուցագիրը: Ջեկուցագրի հեղինակն

¹² Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.), Երևան, 2008, էջ 44:

¹³ Նույն տեղում, էջ 46:

իր դժգոհությունն էր հայտնում այն մասին, որ Յարսկայա փողոցում ամերիկյան մանկատան կողքով անցնելիս պարբերաբար լսել էր, թե ինչպես են մանկատան որբերը երգում իր բնորոշ մամբ՝ «խմբապետական», «դաշնակցական» երգեր՝ «Մեր հայրենիք», «Զեյթունցիներ» և այլն: «...Ամերիկյան մանկատներում օթևան են ստացել դաշնակցականների երկրպագուները, որոնց նպատակն է այլասերել մատաղ սերնդին», - ասվում էր զեկուցագրում⁴:

Նշված նյութերը ցույց են տալիս, որ խորհրդային իշխանությունը հայ գաղթականների մեջ քաղաքական բարենուսույթյան առումով որոշակի վտանգ էր տեսնում: Ուստի՝ պատճառով նրանք չէին կարող ընկալվել տեղական բնակչության հետ նույն չափանիշներով: Որպես սրա հետևանք՝ հայ գաղթականությունը, փաստորեն, քաղաքական առումով նույնպես հանդիսանում էր հայ հասարակության «տարբերակված», առանձնահատուկ մաս:

Ամփոփելով՝ նշենք, որ 1920-ական թվականներին խորհրդային Հայաստանում արևմտահայ գաղթականները լուրջ սոցիալական և քաղաքական հիմնախնդիրներ էին առաջ բերել, ինչը դրսևորվում էր ժամանակի սոցիալ-քաղաքական իրողություններում: Հայ գաղթականության առօրեականության ներկայացված դրվագները վկայում են, որ նրանք հանդիսանում էին սոցիալական ինքնուրույն խումբ, որը էական դժվարությունների էր հանդիպում խորհրդահայ հասարակությանն ինտեգրվելու ճանապարհին:

⁴ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 61, թ. 143:

Гагик А. Жамгарян, *Институт истории НАН РА, к.и.н.*,
Проблема армянских беженцев в Советской Армении (первая половина 1920-ых годов) - В статье освещаются некоторые вопросы относящиеся положению армянских беженцев в Советской Армении в 1920-х годах. Акцент ставиться на трудностях их интеграции в советское общество. На основе фактических и мемориальных материалов представлены некоторые интересные фрагменты повседневности беженцев. Так же представлены общие подходы властей к проблеме беженцев.

Gagik A. Zhamharyan, *NAS RA Institute of History, PhD in History*, The Main Issue of Armenian Refugees in Soviet Armenia (First Half of 1920's) - Certain issues related to the state of the Armenian refugees in Soviet Armenia in 1920's are elucidated in the article. The hardships of their integrity into Soviet Armenia's society is emphasized. Some interesting episodes linked to the everyday life of the Armenian refugees in 1920's are presented based on documentary materials and memories. The general approaches of local population and Soviet authorities to the issues of refugees are presented, too.

ԿԱՐՈ Ա. ԺԱՄԽԱՐՅԱՆ

սյ.գ.թ.

**«ՀՈԳԵՎՈՐ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ» ՇԱՐԺՈՒՄԸ
ՄԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.**

Բանալի բառեր՝ Միրիա, Լիբանան, հայկական համայնքներ, կրոնական համայնքներ, եկեղեցի, դավանաբանություն, հայ ավետարանականներ, դպրոցներ:

19-րդ դարի կեսերից Հայ ավետարանական եկեղեցու շրջափակից ծնունդ առան նոր կրոնական համայնքներ: Վերջիններս մեծամասամբ կարճ կյանք ունեցան, սակայն այդ խմբավորումները որոշակի բացասական ազդեցություն գործեցին նոր սկզբնավորված հայ ավետարանական համայնքի միասնականության վրա:

Ուսումնասիրող Վ. Թութիկյանը նշում է նոր խմբավորումների առաջացման երեք պատճառ. «Կրօնական հարցերու մեջ անձնական դատողութեան իրաւունքը, այլախոհներու հանդէպ հանդուրժողութեան հոգին, եւ Հայ Աւետարանականութեան կրօնական մթնոլորտը նպաստած են որ ծագում առնեն, եւ կարգ մը պարագաներու նոյնիսկ աճին կրօնական խմբաւորումներ եւ աստուածաբանական տեսակաւոր մտածողութիւններ»¹: Այդ խմբավորումներից առավել հայտնի էին 1860-ական թթ. Օսմանյան կայսրությունում առաջ եկած Եպիսկոպոսականների, 1879 թ.¹ Բրիստոսի աշակերտների, 1881 թ.¹ Մկրտչականների, 1883 թ.¹ անգլիացի Բույքերների համայնքները: 20-րդ դարասկզբին

¹ Թութիկեան Վ., Հայ ավետարանական եկեղեցին 1846-1996, Դետրոյթ, 1996, էջ 154:

Ալեքսանդրիայում սկիզբ առավ Աստծո եկեղեցին՝ Կ. Ուզունյանի առաջնորդությամբ, իսկ 1930-ական թթ. Հալեպում, ապա Բեյրութում, ինչպես նաև Պաղեստինում Փլիմըթ եղբայրները հիմնեցին հայկական եկեղեցիներ: 1946 թ. Դամասկոսում Նազովրեցի եկեղեցու կողմից հիմնված ավետարանական եկեղեցին ղեկավարում էր Ն. Սարյանը: Հիշյալ համայնքներից առավել աչքի ընկավ և երկարատև գործունեություն ծավալեց «Հոգևոր եղբայրությունը», որին անդամակցեցին ինչպես հայ ավետարանական, այնպես էլ հայ առաքելական հանրությոը ներկայացնող հայեր:

«Հոգևոր եղբայրություն» կամ «Հոգևոր եղբայրակցություն» շարժման ակունքները հասնում են մինչև 19-րդ դարի կեսերը: Կիլիկիայի հայաշատ բնակավայրերում Մարաշում, Հասան Բեյում, Այնթապում և Ադանայում, գործող հայ ավետարանական եկեղեցիներում «հոգևոր արթնության» արդյունքում երևան եկան հոգևոր եղբայրություններ²: Կեսարիայում տեղի ունեցած «հոգևոր արթնության» մասին նշված է ծնունդով կեսարացի, Ամերիկայի Միացյալ եղբայրության եկեղեցու անդամ Հ. Ավագյանի կենսագրությունում³:

20-րդ դարասկզբին նոր շարժումն ավելի լայն տարածում գտավ: 1901 թ. Մարաշի Հայ ավետարանական եկեղեցիներում կազմակերպվում են հոգևոր ժողովներ, որոնք սկզբնական շրջանում անջատողական բնույթ չէին կրում միտված լինելով հոգևոր փորձառության և քրիստոնեական կենցաղավարության ամրապնդմանը: Եղբայրությունների ներկայացուցիչները, ժամանակի ընթացքում հանդիմանության արժանանալով մասնավորապես հին սերնդի կողմից, օժանդակություն ստանալով գերմանացի միսիոներներից, մեկուսանում են հայ ավետարանա-

² <http://www.aebcb.org/index.php/about-us/sub-menu-item> (13.12.2015):

³ «Փրկութիւն», Ֆրեզնո, 1955, հոկտեմբեր, թիվ 401, էջ 288:

կան համայնքից և անջատարար հավաքներ կազմակերպում տներում, այգիներում, դաշտերում, ագարակներում: Շարժման անդամները գնալով ավելի համախմբված են հանդես գալիս և շատ չանցած հավածանքների ենթարկվում թուրքական իշխանությունների կողմից: Եղբայրականներից շատերը կալանավորում են, սակայն 1908 թ. վերջիններն ազատ են արձակվում երիտթուրքերի կողմից հայտարարված համաներման արդյունքում⁴: 1910-ական թթ. հայատառ թուրքերենով լույս են տեսնում մի քանի հոգևոր տետրակներ, գրքեր, պարբերաթերթեր և երգարան: 1911 թ. Այնթապում տեղի է ունենում եղբայրությունների համագումարը՝ որպես առաջին կազմակերպչական միջոցառում: Արդյունքում հիմնվում է Հոգևոր եղբայրությունների միությունը. «Միութեան արդիւնքը օգտակար եղաւ: Լուսատուրչական եղբայրներն ալ իրենց եկեղեցիներուն մէջ իբր լոյս՝ մնալով գործելը յարմար տեսնուեցաւ եւ ամէն մէկը նոր կրակ առնելով իրենց քաղաքը եւ գիւղերը վերադարձան»⁵: Համագումարի նախագահող Ա. Եղոյանը, համագործակցելով գերմանացի միսիոներների հետ, հիմնում է Աստվածաշնչի Թաղեայան դպրոցը՝ նպատակ հետապնդելով պատրաստել հոգևոր գործիչներ: Առաջին աշխարհամարտի սկսվելու հետևանքով դպրոցը երկարատև գործունեություն չի ծավալում⁶:

«Հոգևոր եղբայրություն» շարժման դավանաբանությունը հիմնվում է Ս. Գրքի տառացի սերտողության, ապաշխարության և վերստին ծննդյան, Քրիստոսի երկրորդ գալստյանը սպասելու և նախապատրաստվելու, վկայության, ավետարանչության, հոգևոր ժողովների և մասնակցելու, երկրային հաճույքներից

⁴ Ատանալեան Կ., Յուզարձան հայ առտարանականաց եւ առտարանական եկեղեցւոյ (Քննական Ծանօթութիւններով), Ֆրեզնո, 1952, էջ 332-334:

⁵ «Մարանաթա», Հալեպ, 1975, հունիս-հուլիս-օգոստոս, թիվ 6-7-8, էջ 145:

⁶ Նույն տեղում, 1965, նոյեմբեր, թիվ 11, էջ 293-294:

ձեռնպահ մնալու գաղափարների վրա: Կարևոր էր համարվում աստվածաշնչյան հարցումներին պատասխանելը, որը փաստում էր տվյալ եղբոր կամ քրոջ հոգևոր հասունության մակարդակը: 1932-1948 թթ. ընթացքում 109 հավատացյալ պատասխանել է 1500 հարցման և 21 հավատացյալ՝ 1001 հարցման⁷: Այդ հարցումները շրջանառվում էին նաև «Հոգևոր եղբայրության» կրթօջախներում և երիտասարդական միություններում:

Ցնդասպանությունից հետո աշխարհի տարբեր երկրներում սփռված հայության շրջանակներում դարձյալ սկիզբ են առնում «Հոգևոր եղբայրության» ժողովները՝ աստիճանաբար ընդլայնելով իրենց աշխարհագրությունը: Ինչպես Կիլիկիայում, այնպես էլ Սփյուռքում սկզբնական շրջանում եղբայրությունները գործում էին Հայ ավետարանական եկեղեցիների կազմում՝ պահպանելով ընդդիմադիր կեցվածք և հանդես գալով պահպանողական ավետարանականության դիրքերից: Ժամանակի ընթացքում, սակայն, եղբայրականները, ընդլայնելով իրենց շարքերը, ավելի հարձակողական դիրք ընդունեցին՝ թռուցիկներով, հողվածներով, քարոզներով կազմակերպված պայքար սկսելով «արդիականության» դեմ և ունենալով այն դիրքորոշումը, որ իրենք են ավետարանական եկեղեցու իսկական հետևորդները⁸:

1924թ. ընդունված է համարել Սփյուռքում «Հոգևոր եղբայրություն» շարժման վերսկսման տարի: Ըստ Ռ. Ջերեջյանի, միջնադարը հիշեցնող խավարամիտ այդ շարժումը խոր արմատներ էր արձակել հատկապես հալեպահայ ավետարանական համայնքի ներսում. «Ան հերձում առաջացուց. ծնունդ առաւ «Պիրատերիլիք» - Եղբայրութիւն - կոչուած այլանդակ աղանդը»⁹:

⁷ «Մասնաւայ» տարեգրքոյկ, Հալեպ, 1948, էջ 222:

⁸ Ահարոնեան Յովհ., Հայ ավետարանական եկեղեցին ճանապարհներու խաչաձևումին, Բեյրութ, 1988, էջ 37-38:

⁹ Ճեպեճեան Ռ., Ինքնակենսագրութիւն. Յուշեր և Գործունէութիւններ, Հալեպ, 1999, էջ 113-114, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Ե, Հալեպ, 1996, էջ 49:

1920-ական թթ., ելնելով ժամանակի դժվարություններից, Հայելի Հայ ավետարանական Էմմանուել եկեղեցում մնայուն հովիվ չէր պաշտոնավարում: Մրցակցություն է ծավալվում երկու թեկնածուների՝ Կ. Հարությունյանի և Ե. Հատիտյանի միջև: Առաջինի՝ Հայելից բացակա լինելու պայմաններում Ե. Հատիտյանի կողմնակից 75 հավատացյալ քվեարկություն են կազմակերպում: 25 ընտրող քվեարկում է հօգուտ Կ. Հարությունյանի, 4-ը ձեռնապահ են մնում, մնացածը քվեարկում են Ե. Հատիտյանի օգտին: Այս խոռվությունը շարունակվում է երկար ժամանակ¹⁰: Ի վերջո, Էմմանուել եկեղեցու հովվի պաշտոնը զբաղեցնում է Կ. Հարությունյանը: Այդ խառնակ և անորոշ ժամանակաշրջանում աչքի է ընկնում երիտասարդ Ա. Սեֆերյանը¹¹, ով, հակադրվելով Հայ ավետարանական եկեղեցու կանոններին և ծիսակարգին, ինքնակամ գործունեություն է ծավալում, իր շուրջը համախմբում մեծ թվով -հավատացյալների: Նրա մտերիմ գործակիցներն էին Մ. Պոզոզյանը և Մ. Գասարճյանը: Ա. Սեֆերյանը որոշում է Հաղորդություն մատուցել հավատացյալներին, որը լուրջ անախորժությունների տեղիք է տալիս: Էմմանուել եկեղեցու հոգաբարձությունն ընդդիմանում է, որ ոչ ձեռնադրյալ հովիվը սման արտոնություններ է վերապահել իրեն: Գրավոր և

¹⁰ «Յուսարեր», Կահիրե, 1926, հոկտեմբերի 25, թիվ 175:

¹¹ Ծնվել է 1886 թ. մարտի 24-ին Կիլիկիայի Երեւազան գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, այնուհետև ուսումը շարունակել Հաճնում, իսկ 1902-1906 թթ. հաճախել Տարսուսի Ա. Պողոս քոլեջ: Կիսատ թողնելով բարձրագույն ուսումը՝ 1906-1915 թթ. ավետարանական շրջագայություններ է կատարել Կիլիկիայի տարբեր շրջաններ: Տարագրության տարիներին գործել է Մոսկուում և Քիբրոսում՝ զինվորագրվելով թուրքական զինված ուժեր: 1919 թ. գործել է գլխավորապես հայկապահայ ավետարանական համայնքում: 1924 թ. հիմնելով «Հոգևոր եղբայրության» եկեղեցին, իրականացրել է կազմակերպչական, կրթական, հրատարակչական գործունեություն: Մահացել է 1973 թ. մարտի 15-ին Բեյրութում («Ջահերթթ», Բեյրութ, 1973, թիվ 30-31, էջ 64-66, «Մանասայ» տարեգրքոյկ, Հայել, 1947, էջ 36-39, «Մարանաթա», 1959, փետրվար, թիվ 2, էջ 41-43, 1973, թիվ 5, մայիս, էջ 122-124):

քանավոր նախագգուշացումները որևէ արգելք չեն հանդիսանում սեֆերյանականների հետագա գործունեության համար: Եկեղեցու հոգաբարձությունը Ա. Սեֆերյանին հորդորում է հավատարիմ մնալ հոգևոր կարգապահության և ավետարանական սովորությունների ոգուն, սակայն սեֆերյանական «փրկուածները» ոչ միայն շարունակում են ինքնուրույն գործել, այլև ամբաստանել եկեղեցու ղեկավարությանը: 1924 թ. հունիսի 30-ի գիշերը Էմմանուել եկեղեցու հոգաբարձությունից և խնամակալությունից կազմված Խառը ժողովը երկարատև խորհրդակցությունից հետո Ա. Սեֆերյանին գրություն է ուղարկում, որը կազմված էր մի քանի հարցումներից: Խառը ժողովը ցանկանում էր ճշտել՝ Ա. Սեֆերյանը շարունակելու է անջատաբա՛ր, թե՛ եկեղեցու հետ միասնաբար կատարել Հաղորդության և Մկրտության արարողությունները, ցանկություն ունի՝ համագործակցել եկեղեցու հովվի, խնամակալության և հոգաբարձության հետ: Այս երկու հարցման պատասխանների բացասական լինելու դեպքում եկեղեցուն ենթակա շինություններում անթույլատրելի կլինեն իրագործել հետագա հավաքներն ու ժողովները: Օգոստոսի 6-ին Ա. Սեֆերյանը պատասխանում է այս գրությանը՝ նշելով, որ նման պայմաններում այլևս չի կարող մնալ եկեղեցու կազմում: Խառը ժողովը պատասխան նամակով տեղեկացնում է, որ Ա. Սեֆերյանն այլևս եկեղեցու անդամ չէ, և թղթակցությունն այս թեմայով ավարտված է: Եղբայրականներն այս նամակից հետո ամենուրեք տարածեցին, որ իրենց վռնդել են եկեղեցուց: Մոռացության մատնվեց այն, որ Էմմանուել եկեղեցու հոգաբարձությունը, խնամակալությունն ու քարոզիչները մի քանի տարի շարունակ հանդուրժել են եղբայրականներին և մինչև վերջ փափագել, որ նրանք չանջատվեն եկեղեցուց, չծավալեն ինքնակոչ գործու-

ներթյուն: Սակայն եղբայրականներն անդրդվելի էին, անշատ-վեցին Հայ Ավետարանական եկեղեցուց¹²:

1920-ական թթ. սկզբին Բեյրութում հայ ավետարանականները գործում էին տեղի «Հոգևոր եղբայրության» հետ միասնաբար, սակայն որոշ ժամանակ անց եղբայրականները սկսեցին անկախաբար իրականացնել իրենց պաշտամունքները: Դամասկոսից ժամանած միսիոներների կողմից կառուցված առանձին շինությունում սկիզբ առավ «Հոգևոր եղբայրության» եկեղեցին¹³:

1927 թ. հունվարի 2-10-ին Հալեպում տեղի ունեցավ «Հոգևոր եղբայրության» միության ժողովը: Պատվիրակներ էին ժամանել Բեյրութից, Դամասկոսից, Թարապլուսից, Բեյլանից, Ալեքսանդրեոսից: Ժողովին ներկա էր 22 տղամարդ, 3 կին: Ժողովի ընթացքում ընդունվեցին մի շարք կարևոր որոշումներ: Նախ մատնանշվեց նոր հավատացյալների վրա հին հավատացյալների ազդեցության կարևորությունը, ապա՝ Քրիստոսի երկրորդ գալստյան նախապատրաստության, աշխարհի մեղավոր հոսանքներից հավատացյալներին զերծ պահելու, հոգևոր միաբանության կանոնագիր կազմելու անհրաժեշտությունը և այլն¹⁴: Ժողովը դատապարտեց այն հավատացյալներին, ովքեր կղզիացել են «հայրերի եկեղեցուց»՝ ընկնելով արդիապաշտական հոսանքների մեջ. «Այսօր եկեղեցիին մէջ կան հովիւներու, քարոզիչներու և պաշտօնեաներու մեծկակ թիւ մը որոնք մոլորած են Աստուծոյ Խօսքէն, մեր կրօնքին հիմնական վարդապետութիւններէն և նախկին եկեղեցոյ առաքելական հաւատքէն: Անոնք վարակուած են բարձրագոյն քննադատութեան, արդիականութեան և բարեշրջութեան (էվոլիւշըն) կործանարար ախտով»¹⁵:

¹² Խրլորեան Տ., Ոսկեմատեան, հ. Ա, Բեյրութ, 1950, էջ 280-286:

¹³ Ատանալեան Կ., նշվ. աշխ., էջ 362:

¹⁴ «Մարանաթա», 1927, օգոստոս, թիվ 8, էջ 169-175:

¹⁵ Նույն տեղում, էջ 173:

Այդպիսով, իր շարունակությունը գտավ դեռ նախորդ դարում սկիզբ առած «հիմնապաշտության» (պահպանողականության) և «արդիապաշտության» (ազատականության) պայքարը, որն էլ դարձավ «Հոգևոր եղբայրության»՝ Հայ ավետարանական եկեղեցուց անջատվելու հիմնական պատճառը:

Ինչպես Էմմանուել եկեղեցու, այնպես էլ Մերձավոր Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության ներկայացուցիչները լուրջ քննադատության են ենթարկում հայ ավետարանականության կաճառներից Կրոնների դպրոցը, որի տեսուչ Լ. Լևոնյանին մեղադրում էին ուսանողներին ազատական ուսում տալու և ավետարանական ուղղափառությունը վտանգելու համար: Պատակտողական ընթացքը բացասաբար անդրադարձավ նաև Եզիպտոսի հայ ավետարանական համայնքի վրա, և մեծապես տուժեց Լ. Լևոնյանի մտերիմ, երիտասարդ Հ. Համբարձումյանը, ում նույնպես ազատական գաղափարների համար վտարեցին Մերձավոր Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միությունից, և նրա հետևորդները կազմեցին Հայ ավետարանական ժողովական եկեղեցի: Պատակտումը տևեց մինչև 1961 թ.¹⁶: Սակայն այս մեղադրանքները լիովին անհիմն էին, քանզի վաստակաշատ գործիչ Լ. Լևոնյանը դեռ 19-րդ դարի կեսերին սկիզբ առած քրիստոնեական եկեղեցու անբաժանելիության և ընդհանրականության գաղափարի հետևորդն էր: Մերձավոր Արևելքի ավետարանական եկեղեցիներում լայնորեն տարածված այս գաղափարական շարժումը հատուկ ընդգծում էր եկեղեցիների նմանությունները և կարևորում եկեղեցու ընդհանրականության գաղափարը¹⁷: Լ. Լևոնյանը հայ ավետարանական

¹⁶ Թութիկեան Վ., նշվ. աշխ., էջ 157:

¹⁷ Խրյոբեան Տ., Քսանհինգամեայ հունձքը. Լեոնեան յորելիական հատոր, Հալեպ, 1948, էջ 39:

եկեղեցին արդիականացնելու, առավել ևս ուղղափառ վարդապետությունը կասկածի տակ առնելու միտում չունենք:

Ուսումնասիրող Վ. Քեշիշյանը նշում է «Հոգևոր եղբայրության» սկզբնավորման երկու պատճառ՝ Յեղիսայանություն ապրած, հուսալքված, բարոյալքված ժողովրդի ծանր հոգևրանական վիճակը և նշված շրջանում եկեղեցական կյանքում առկա դժվարություններն ու առաջնորդող ուժերի բացակայությունը¹⁸: Նշյալ պատճառներին պետք է հավելել նաև այն, որ «Հոգևոր եղբայրությունը» ուներ ավանդույթներ, անցած ճանապարհ, և լիովին օրինաչափ է շարժման վերսկսումը նոր ձևավորվող Սփյուռքում:

Առանձնանալով էմմանուել եկեղեցուց՝ «Հոգևոր եղբայրության» հավատացյալներն իրագործում են կրթական, հրատարակչական, ավելի ուշ նաև հասարակական գործունեություն: Եղբայրականները տարբեր անվանումներով եկեղեցիներ են հիմնում, պարբերաթերթեր տպագրում ոչ միայն Մերձավոր Արևելքի, այլև ԱՄՆ-ի, Եվրոպայի բազմաթիվ երկրներում: Ա. Սեֆերյանը մի քանի անգամ այցելում է տարբեր երկրների «Հոգևոր եղբայրությունը» ներկայացնող եկեղեցիներ, հանդիպում տեղի եղբայրականների հետ, փորձում լուծել գոյություն ունեցող անհամաձայնություններն ու կնճիռները:

Կրթական ոլորտում եղբայրականների գործունեությունը սկզբնավորվում է Հալեպում: 1925 թ. հիմնվում է Աստվածաշնչի դպրոցը: Սկզբնական շրջանում այս դպրոցը մեկամսյա էր, այնուհետև դարձավ եռամսյա: Դասերի ժամանակ մեծ ուշադրություն էր դարձվում անգլերեն լեզվի ուսուցմանը: Աշակերտները անգլերենից թարգմանում էին հայտնի մարդկանց կենսագրությու-

¹⁸ Քեշիշյան Վ., Յուշամատեան Հայ Անտարանական էմմանուել Մայր Եկեղեցույ, Հալեպ, 2015, էջ 62-63:

յուններ: Կարևոր էր նաև Ս. Գրքի սերտողությունը: Յուրաքանչյուր տարում դպրոցն ունեցել է մինչև տասն աշակերտ¹⁹: Դասերը տևում էին մինչև կեսօր: Այնուհետև աշակերտները հիմնականում զբաղվում էին արհեստագործությամբ: Աստվածաշնչի դպրոցի շրջանավարտ Խ. Գասպարյանի վկայությամբ, Ա. Սեֆերյանը, Մ. Պողոզյանը և Մ. Գասարճյանը ուսումնառության ընթացքում տեղեկություններ էին տրամադրում տարբեր աղանդավորական շարժումների մասին: Մ. Պողոզյանը թարգմանություններ էր կատարում անգլերենից և աշակերտներին ծանոթացնում հայտնի հոգևոր գործիչների, միսիոներների կենսագրությանը²⁰:

Հաջորդ կարևոր քայլը Կենաց վարժարանների հիմնումն էր: 1937 թ. սկիզբ է առնում Բեյրութի, իսկ 1944 թ.՝ Հալեպի Կենաց վարժարանը:

Բեյրութի Կենաց վարժարանը հիմնադրումից հետո գործունեություն է ծավալում «Ս. Մ. Ս.» միսիոներական կազմակերպության հետ համատեղ: Սակայն մեկ տարի անց միսիոներները հեռանում են, և դպրոցի հետ կապված ողջ ծանրաբեռնվածությունը մնում է Ա. Սեֆերյանի ուսերին: Վարժարանը սկզբնական շրջանում ունեցել է չորս կարգ²¹: Կրթօջախը նպատակ էր հետապնդում, բացի այլ դպրոցներում դասավանդվող առարկաներից, մանուկներին հոգևոր ուղղությամբ առաջնորդել, ուղղափառ վարդապետություն և արհեստներ սովորեցնել²²:

Մինչև սեփական շինություն ունենալը Հալեպի Կենաց վարժարանի դասավանդություններն անց են կացվում տարբեր վայ-

¹⁹ «Մարանաթա», 1927, օգոստոս, թիվ 8, էջ 171:

²⁰ Մինաս Յ. Պօզօզեան (1882-1952), Բեյրութ, 1953, էջ 65-67:

²¹ Կենաց վարժարաններ Ալեո. Հոգևոր Եղբայրութեան: Պեյրութ-Հալեպ 1946-1947, Հալեպ, ա. թ., էջ 52, 55:

²² «Մարանաթա», 1942, դեկտեմբեր, թիվ 12, էջ 163:

րերում: Վարժարանի ուսուցիչներն ավետարանական ուղղափառ վարդապետության հետևորդներ էին: Դպրոցը բաղկացած էր մանկապարտեզից, նախակրթարանից և բարձրագույն նախակրթարանի բաժիններից: Դասավանդվում էին հայերեն, արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներ, թվաբանություն, քնագիտություն, բարոյագիտություն, աշխարհագրություն, Հայոց պատմություն, գծագրություն, արհեստներ և այլ առարկաներ: Հատուկ դասաժամեր էին հատկացված Աստվածաշնչի ուսուցմանը: Վարժարանի ցածր կարգերում դասավանդվող լեզուն հայերենն էր, բայց բարձրագույն նախակրթարանում անգլերենով էին դասավանդվում պատմություն, աշխարհագրություն և մի քանի այլ առարկաներ²³:

1925 թ. Դամասկոսում Լ. Չոխաղարյանի և Հ. Ժամկոչյանի նախաձեռնությամբ սկիզբ է առնում Կենաց վարժարանը, որն այնուհետև տեղափոխվում է «Հոգևոր եղբայրության» ժողովասրահ²⁴:

Հատկապես հոգևոր կրթության տեսանկյունից կարևոր էր «Հոգևոր եղբայրության» կիրակնօրյա դպրոցների գործունեությունը: 1924 թ. հիմնվում է Հալեպի «Հոգևոր եղբայրության» կիրակնօրյա դպրոցը: Յուրաքանչյուր տարի դպրոցն ունեցել է միջինը 220-225 աշակերտ, 20-25 ուսուցիչ, նախագահ, տնօրեն և քարտուղարուհի: Մանկապարտեզը բաղկացած էր չորս կարգերից՝ ծիլ, բողբոջ, կոկոն և ծաղիկ, իսկ ավելի բարձր կարգը բաղկացած էր յոթ դասարաններից: Ուսումնառության ընթացքում աշակերտներն ուսումնասիրում էին Աստվածաշունչը: Յուրաքանչյուր տարեվերջին տեղի էին ունենում հանդեսներ, որոնց

²³ Կենաց վարժարաններ Աևետ. Հոգևոր եղբայրութեան: Պեյրութ-Հալեպ 1946-1947, էջ 1-32:

²⁴ «Մանանայ» տարեգրքոյկ, Հալեպ, 1946, էջ 117:

ժամանակ նվերներ էին հանձնվում ճշտապահ, կիրակնօրյա դպրոց գումար ու գրքեր բերող աշակերտներին²⁵:

1925 թ. հիմնվում է Բեյրութի «Հոգևոր եղբայրության» կիրակնօրյա դպրոցը: Տարեկան դպրոցն ունեցել է միջինը 200 աշակերտ, 14 ուսուցիչ և զանձապահ: Տարեկան շրջանավարտների թիվը կազմել է մոտ 20: Դպրոցն ունեցել է իր հատուկ ծրագիրը, ուսուցիչների «Կիրակնօրյա դպրոցների ուղեցույց» հատուկ գրքույկը, կազմակերպվել են ուսուցչական ժողովներ, հանդեսներ, շրջագայություններ և այլ հավաքույթներ: Յուրաքանչյուր կիրակի դպրոցի կարիքները հոգալու նպատակով աշակերտները որոշակի գումար են նվիրաբերել: Դպրոցի նպատակն էր. «...մանուկները կրթել Աստուծոյ մաքուր խօսքերով, Բրիստոսի առաջնորդել և զանոնք Տէրոջ ծառայութեան պատրաստել»²⁶:

«Հոգևոր եղբայրության» կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների մասնագիտացման գործում առաջնակարգ էր Մ. Պոզոզյանի դերը: Նա շարաթը մեկ անգամ կիրակնօրյա դպրոցի ուսուցիչներին հրավիրում էր միասին աղոթելու և համապատասխան ցուցումներ տալիս²⁷:

Հալեպում և Զահլեում գործում էին «Հոգևոր եղբայրության» ամատային դպրոցներ²⁸:

1925 թ. Ա. Սեֆերյանի և Մ. Պոզոզյանի խմբագրությամբ լույս էր տեսնում «Մարանաթա» պարբերաթերթը, որը ինչպես հոգևոր ոլորտին վերաբերող տեղեկություններ էր պարունակում, այնպես էլ իրազեկում էր տարբեր երկրներում գործող «Հոգևոր եղբայրությունների», Կենսաց վարժարանների, կիրակ-

²⁵ «Մանանայ» տարեգրքույկ, 1947, էջ 254-260:

²⁶ Նույն տեղում, 1946, էջ 127-131:

²⁷ Մինաս Յ. Պոզոզյան (1882-1952), էջ 74:

²⁸ «Մարանաթա», 1965, նոյեմբեր, թիվ 12, էջ 323:

նօրյա դպրոցների գործունեության վերաբերյալ: Հանդեսի առանձին համարներ լույս էին տեսնում հայատառ թուրքերենով: Նույն թվականից Հալեպում գործող հրատարակչությունում տպագրվում էին «Հոգևոր եղբայրության» քարոզչաթերթիկներ, աստվածաշնչյան պատմություններ, հոգևոր հարցումներ և առանձին հեղինակների աշխատանքներ՝ եղբայրականների հրատարակչական գործունեության մաս կազմելով:

1920-ական թվականներից Հալեպում և Բեյրութում սկսեցին գործել «Հոգևոր եղբայրության» երիտասարդական, պատանեկան միություններ, որոնք աչքի էին ընկնում տարբեր վայրեր այցելություններով, շաբաթական երկու անգամ կանոնավոր, ինչպես նաև ավետարանական, խորհրդակցական և ընկերական ժողովներով: Հետագայում այս միությունների միջոցով իրականացվեցին հասարակական ձեռնարկներ՝ հատկապես այցելություններ Ազունիեի բուժարան և փոխայցելություններ տարբեր երկրներում գործող «Հոգևոր եղբայրությունների» միջև:

1920-ական թթ. Ա. Սեֆերյանի նախաձեռնությամբ պատրաստվել են շրջիկ հոգևորականներ՝ այլ երկրներում գտնվող «Հոգևոր եղբայրությունների» հետ կապը պահպանելու և ավետարանչական գործունեություն իրականացնելու նպատակով: Այդ գործառույթները որոշակիորեն իրականացրել են նաև «Մարանաթա» պարբերաթերթն ու երիտասարդաց միությունները:

Այնուամենայնիվ, «Հոգևոր եղբայրության» ներկայացուցիչների միջև պարբերաբար ի հայտ էին գալիս անհամաձայնություններ: Բազմաթիվ են վկայություններն այն մասին, որ եղբայրականները վիճում էին միմյանց հետ նույնիսկ երկրորդական հարցերի շուրջ՝ իրար մեղադրելով ոչ լիարժեք ընկալված մի

շարք սկզբունքներ որդեգրելու համար²⁹: 1930-ական թթ. դավանաբանական վեճ է տեղի ունենում Ա. Սեֆերյանի և Մ. Պոզոզյանի միջև, որի արդյունքում վերջինս առանձնանում է՝ հիմնելով անջատ եկեղեցի: Այդ եկեղեցին իր գոյությունը պահպանում է մինչև Մ. Պոզոզյանի մահը: Ամենայն հավանականությամբ պատակտումը տեղի է ունեցել 1936 թ., քանզի Մ. Պոզոզյանի կինը՝ Զ. Պոզոզյանը, իր հիշողություններում ներկայացնում է, որ 1925-1936 թթ. ամուսինը գործել է Հալեպում Ա. Սեֆերյանի հետ միասին, իսկ 1936-1947 թթ.՝ Նոր Գյուղ, ինչպես նաև Գերմանիկ, Դավուդիե, Շեյխ Մագսուտ և այլ թաղամասերում «Բրիստոսասիրաց» ընկերության և ֆրանսիական միսիոներական կազմակերպության հետ համատեղ³⁰:

Չնայած ժամանակի դժվարություններին և առկա խոչընդոտներին՝ «Հոգևոր եղբայրություն» շարժումն արձանագրում է լուրջ հաջողություններ ոչ միայն սիրիահայ-լիբանանահայ համայնքներում, այլև Սփյուռքի այլ կենտրոններում, իսկ ներգաղթից հետո նաև Խորհրդային Հայաստանում: Դա պայմանավորված էր մի քանի գործոններով.

- Առաջնակարգ դերակատարություն ուներ Ա. Սեֆերյանի անձը: Նա ժամանակի ընթացքում իր շուրջը կարողացավ համախմբել հարյուրավոր հավատացյալների: Նա մի քանի տարում իր համախոհների գիտակցության մեջ ամրագրեց անջատողական մտայնությունը և օգտվելով նպաստավոր իրավիճակից՝ Հայ ավետարանական եկեղեցու դեմ դուրս եկավ:

- Ինչպես Կիլիկիայում, այնպես էլ Սփյուռքում եղբայրականներն իրենց գործունեության սկզբնական շրջանում որոշակի

²⁹ Թութիկեան Վ., նշվ. աշխ., էջ 156, «Մարանաթա», 1965, նոյեմբեր, թիվ 12, էջ 324:

³⁰ Մինաս Թ. Պոզոզյան (1882-1952), էջ 23:

աջակցություն ստացան միսիոներական կազմակերպություններին: Չնայած այդ աջակցությունը կարճ ընթացք ունեցավ, այնուամենայնիվ, կարևոր խթան հանդիսացավ շարժման սկզբնավորման և տարածման գործում:

- Շարժման կարևոր առանձնահատկությունն այն էր, որ եղբայրության եկեղեցիներին անդամագրվեցին նաև Հայ առաքելական եկեղեցու հետևորդ հայեր: Այս երևույթը եղբայրականներին հնարավորություն ընձեռեց ընդլայնել շարքերը և ունենալ իրենց ճշմարտացիությունը վկայող հերթական փաստարկը:

- Ժամանակի ընթացքում շարժման շարքերում հատկապես երիտասարդների և պատանիների միություններում, հայտնվեցին մարդիկ, ովքեր ուղղափառ վարդապետության հետևորդ էին, բայց «Հոգևոր եղբայրության» եկեղեցու անդամ չէին: Այս հարցում ցուցաբերած հանդուրժողականությունը և հավատացյալների գիտելիքների համղեպ դրսևորած ոչ ակադեմիական մոտեցումը ավելի մեծ ճկունություն և գրավչություն հարորդեց եղբայրականների գործունությանը:

Փաստորեն, քննարկվող շարժումը կարևոր հետք թողեց Հայ ավետարանական եկեղեցու պատմության մեջ: Չնայած այն հանգամանքին, որ թե՛ Հայ առաքելական, թե՛ Հայ ավետարանական եկեղեցիների կողմից «Հոգևոր եղբայրության» շարժումը դիտարկվում է որպես աղանդավորական շարժում³¹, այնուամենայնիվ, ճիշտ չէ գանց առնել այն հսկայածավալ ժառանգությունը, որ տասնամյակների ընթացքում կուտակվել է այս շարժման հետևորդների կողմից: Մեծապես գնահատելի է հատկապես Բեյրութի Կենաց վարժարանի դերակատարությունը, որը համարվել է Սփյուռքի առաջնակարգ կրթօջախներից մեկը՝ տալով բազմաթիվ նշանավոր հայորդի շրջանավարտներ: Չնայած

³¹ <http://ter-hambardzum.net/archives/3017> (13.12.2015):

հայեպահայ ավետարանական համայնքի երկփեղկմանը՝ եղբայրականները լուրջ գործունեություն ծավալեցին ավետարանական ուղղափառության պահպանման ուղղությամբ, ինչը վկայում են հայ ավետարանական պատմաբանները՝ գոջալով միմիայն Հայ ավետարանական եկեղեցու կողմից դիվանագիտական մոտեցում չցուցաբերելու, ինչպես նաև այն անջատողական դիրքորոշման համար, որը եղբայրականները որդեգրեցին Ա. Սեֆերյանի գլխավորությամբ:

«Հոգևոր եղբայրություն» շարժման կենսունակությունը չի մարել նաև մեր օրերում: Համապատասխան եկեղեցիներ են գործում ինչպես սփյուռքահայ համայնքներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում:

Каро А. Жамхарян, *к.и.н.*, Движение "Духовное братство" в армянских общинах Сирии и Ливана в 1920-1930 гг. - Движение "Духовное братство", которое со стороны Армянской Апостольской и Армянской Евангелистской церковей принимается как сектантское движение, берет свое начало с половины IX века. Вероисповедание движения "Духовное братство" основывается на буквальном заучивании Святой Книги, на идеях покаяния и возрождения, ожидания и приготовления ко второму приходу Христа, свидетельства и протестанства, участия в духовных совещаниях и воздержания от земных наслаждений. Особенно старое поколение не принимало и упрекало представителей братства, в результате чего некоторые из них были арестованы, а некоторые обособились от армянской евангелистской общины и раздельно организовывали сборы в домах, садах, полях, фермах. Несмотря на сло-

жившиеся трудности, в течении времени им удалось сплотиться и в 1910 г. издать несколько духовных тетрадей, книг, периодических изданий и песенник на турецком языке, написанном армянскими буквами. А в 1925г. в Бейруте основать воскресную школу "Духовное братство", в Аллепо – Библейскую школу, в Захле - летние школы "Духовного братства". В итоге, движение "Духовное братство" достигло серьезных успехов во всей Армянской дисапоре, а не только в ее сирийско-ливийской части, а после репатриации - и в Советской Армении.

Жизнестойкость движения "Духовное братство" не погасла и в наши дни. Соответствующие церкви действуют как в общинах армянской диаспоры, так и в самой Армянской республике.

Karo A. Jamkharyan, *PhD in History*, The "Spiritual Brotherhood" Movement in the Armenian Communities of Syria and Lebanon in 1920-1930's - The "Spiritual Brotherhood" movement considered as a sectarian movement by the Armenian Apostolic and Evangelical Churches originated in the middle of 19th century. The theology of the "Spiritual Brotherhood" movement was based on the following ideas: literally and continuous study of the Bible, Repentance and Re-birth, Waiting and Preparation of the Second Coming of Christ, Testimony, Protestantism, Attendance at Spiritual Meetings, Abstaining from Earthly Pleasures. In due course some Spiritual Brothers were condemned in particular by the old generation. As a result some of them were detained; the others isolated themselves from the Armenian Evangelical Community and began separate meetings at home, gardens, fields and farms. However, in course of time, in contrast to the existing challenges, they managed to unite and in 1910's some spiritual booklets, books,

periodicals and songbooks were published in Armenian lettered Turkish. Further on the "Spiritual Brotherhood's" Sunday school was founded in Beirut in 1925, the Bible School - in Aleppo and the Summer Schools of the "Spiritual Brotherhood" act in Zahlé. Thus, the "Spiritual Brotherhood" movement succeeds not only in Armenian communities of Syria and Lebanon but also in the Diaspora and - after the migration - in Soviet Armenia. The "Spiritual Brotherhood" movement is still vital in our days. Nowadays, the Brotherhood churches are established and act both in Diaspora communities and in the Republic of Armenia.

ՎՈՒՂՈՒՅԱ Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

*Խ. Արուսյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարան, մ.գ.թ.*

**ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ
ՀԱՅ ՊԱՐՏԻՋԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՊՐՈՖԵՍՈՐ ՎԼԱԴԻՄԻՐ
ՂԱԶԱԽԵՑՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

*Բանալի բառեր*¹ Խորհրդային Միություն, Խորհրդային Հայաստան, Գերմանիա, Հայրենական պատերազմ, պարտիզաններ, ռազմագերիներ, ջոկատ:

Հայ պատմաբաններն իրենց ուսումնասիրություններում զգալի տեղ են հատկացրել Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում հայ պարտիզանների ներդրած ավանդի հիմնահարցի լուսաբանմանը: Դա պատահական չէ, քանի որ հայ պարտիզանները, իրոք, արժանի ավանդ ունեն խորհրդային պարտիզանական շարժման գործընթացում: Միայն Ուկրաինայում և Բելոռուսիայում 1941-1944 թթ. մարտնչել են ավելի քան 2000 հայեր, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում և Կալինինի մարզերում՝ 200 և այլն¹:

Հայ պատմաբաններից առաջինների թվում հիմնահարցը լուսաբանել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Նահապետի Ղազախեցյանը: Նա այդ հարցին առաջին անգամ անդրադարձել է 1962 թ. Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների

¹ Հարությունյան Կ.Ա., Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.), Երևան, 2016, էջ 192:

«Տեղեկագիր» հանդեսի առաջին համարում, որտեղ ռուսերեն տպագրել է «Հայկական պարտիզանական ջոկատի կազմակերպումը Ժիտոմիրի մարզում 1943 թվականին» հոդվածը: Խոսքը վերաբերում է Ուկրաինայում 1941-1944 թթ. գերմանացիների դեմ մարտնչած գններալ-լեյտենանտ Մ.Ի Նաումովի պարտիզանական միավորման կազմում 1943 թ. կազմավորված Անաստաս Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատին: Վ. Ղազախեցյանի հոդվածի համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել Մ.Ի. Նաումովի՝ ԽՄԿԿ կենտկոմի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ուկրաինական մասնաճյուղի արխիվի նյութերը, հայկական ջոկատի հրամանատար Արամայիս Հովսեփյանի և մարտիկների սղագրական հաշվետվությունները²:

Հեղինակը լուսաբանել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ուկրաինայի տարածքում մարտնչած ազգային ամենախոշոր պարտիզանական ստորաբաժանման պատմությունը: Այդ հոդվածը Վ. Ղազախեցյանի համար հիմք է հանդիսացել 1965 թ. հրատարակելու «Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը» գրքույկը՝ քաղկացած 110 էջից³: 1982 թ. Ղազախեցյանը «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 1972 թ. երկրորդ համարում տպագրում է «Արխիվային նյութեր հայ պարտիզանների մասին» հրապարակումը (էջ 141-154): Այստեղ հեղինակը հիմնականում անդրադառնում է 1943-1944 թթ. Լենինգրադի և Կալինինի մարզերում մարտնչած Գերմանի անվան 3-րդ պարտիզանական քրիզադի 4-րդ գնդի կազմում գոր-

² Казакевич В.Н., Организация партизанского отряда в Житомирской области в 1943 году, „Известия“ общественных наук АН Арм. ССР, 1962, N 1, с. 3.

³ Ղազախեցյան Վ.Ն., Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը, Երևան, 1965:

ծած 41-րդ ջոկատի գործունեությանը, որը գրեթե ամբողջովին համալրված էր գերմանական գերությունից փախած հայ ռազմագերիներով: Ջոկատի հրամանատարն էր կապիտան Արտեմ Գևորգի Սաղումյանը:

Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի 40-ամյակի առթիվ Վ. Ղազախեցյանը հողված տպագրեց Հայկական ԽՍՀ ԳԱ «Լրարեր հասարակական գիտությունների» հանդեսի 1985 թ. երկրորդ համարում (էջ 3-16), որտեղ ընդհանրացված կերպով ներկայացրեց ինչպես Խորհրդային Միության զավթած տարածքներում, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրներում մարտնչած հայ պարտիզանների գործունեությունը: Այսպես, օրինակ, հողվածում զգալի տեղ է հատկացվել 1943 թ. փետրվարին Ուկրաինայի Լվով մարզի Սելեց-Ջավոնյեյի համակենտրոնացման ճամբարից փախած մի խումբ հայ ռազմագերիներից կազմված «Հաղթանակ» անվանակոչված պարտիզանական ջոկատի գործունեությանը: Այդ ջոկատի հրամանատարն էր Կարմիր բանակի կապիտան Սերգեյ Հարությունյանցը, իսկ կոմիսարը՝ քաղղեկ Հովհաննես Պետյանը:

«Իր գոյության առաջին մեկ տարվա ընթացքում,- գրում է Ղազախեցյանը,- ջոկատը գործել է միայնակ, Արևմտյան Ուկրաինայի քաղաքական բարդ իրադրության մեջ՝ բուրժուական ազգայնականների բանդաների միջավայրում: 1944 թ. սկզբին Վոլինի մարզում ջոկատը հանդիպեց ռազմերթ կատարող Կովպակի անվան պարտիզանական դիվիզիային (հրամանատար՝ Պ. Վերշիգորա): Ջոկատը, պահպանելով իր կազմակերպական ինքնուրույնությունը, դարձավ դիվիզիայի 3-րդ գնդի վաշտերից մեկը: Հայ պարտիզանների թիվը, հետագայում աճելով, հասավ մինչև 100-ի: Դիվիզիայի կազմում հայ պարտիզանները

արշավ կատարեցին դեպի Կարպատյան լեռներ և Բելոռուսիա: Նրանք այցի ընկան կովպակյանների վարած բազմաթիվ մարտերում՝ Պրիպյատ գետում թշնամու նավատորմի ջախջախման, Ույանով քաղաքի ազատագրման և այլ մարտական գործողությունների ընթացքում: Դիվիզիայի 1-ին գնդի հրամանատար Դ. Բաքրաձեն վկայում է, որ Ույանովի վրա պարտիզանների հարձակման ժամանակ Սերգո Հարությունյանցի ղեկավարած վաշտը, նետվելով առաջ, ճնշել է թշնամու պաշտպանությունը և քաղաք մտել առաջինը: Պարտիզանական դիվիզիայի, նրա կազմում հայ ժողովրդի զավակների մարտական ուղին ավարտվեց Արևմտյան Բելոռուսիայում՝ 1944 թ. հուլիսին, երբ մոտենում էր Սովետական Բելոռուսիայի ազատագրման ավարտը»⁴:

Վերոհիշյալ հոդվածում Վ. Ղազախեցյանը ավելի հանգամանորեն անդրադառնում է 1943 թ. օգոստոսին Լենինգրադի մարզում 3-րդ պարտիզանական բրիգադի կազմում կազմավորված հայկական թիվ 41 պարտիզանական ջոկատի գործունեությանը: «1943 թ. օգոստոսի 5-ին Լենինգրադի մարզի 3-րդ պարտիզանական բրիգադի հրամանատար մայոր Ա.Վ. Գերմանի հրամանով ձևավորվեց թիվ 41-ը, որում սկզբում հիմնականում ընդգրկված էին հայ ռազմիկներ: «Կամավոր,- ասված է այդ հրամանում,- պարտիզանների կողմն անցած նախկին ռազմագերի մարտիկներից ու հրամանատարներից և Կալինինի մարզի պարտիզաններից կազմակերպել թիվ 41 պարտիզանական ջոկատը»: Նրա հրամանատար նշանակվեց կապիտան Արտեմ Սադումյանը («Կերշենսկի»), որին որոշ ժամանակ փո-

⁴ Ղազախեցյան Վ.Ն., Հայ ժողովրդի մասնակցությունը սովետական վրիժառուների պայքարին Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, N 2, էջ 8-9:

խարինել է Ջավեն Համբարձումյանը (գոհվել է): Կոմիսարի պարտականությունը կատարել են Ա. Միգրովը, ապա մայոր Կ. Մատյուշենկոն («Մայկուպսկի»): Ջոկատի անձնակազմը հասավ մինչև 300 մարդու, իսկ հայերի թիվը աճեց մինչև 60-ի: Ջոկատն ակտիվ մասնակցություն է ունեցել բրիգադի վարած «Ռեկտային պատերազմին» Օստրով-Ռեզենկնե, Պսկով-Պորխով, Չիխաչևո-Դեդովիչի գծերում: Իր գոյության 7 ամսվա ընթացքում ջոկատը մարտական հաշվում գրանցել է թշնամու ոչնչացված 2000 զինվոր ու սպա, 88 ավտոմեքենա, խորտակել է 25 զինվորական զնացք, պայթեցրել 8 կամուրջ, հարյուրավոր ռկյսեր, ջախջախել Գորուշկայի կայազորը... Պարտիզանական բրիգադի գործունեությունը դադարեց 1944 թ. փետրվարի 26-ին, երբ այն միացավ Լենինգրադի մարզն ազատագրող Կարմիր բանակի գորամասերին և 2 օր անց նրանց հետ մասնակցեց Սլավկովիչի քաղաքի ազատագրմանը»⁵:

Հողվածում Վ. Ղազախեցյանը համառոտակի լուսաբանում է Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատի (Ուկրաինա), Դրիմի, Կրասնոդարի, Բրյանսկի, Օրյոլի, Բելոռուսիայի, Լիտվայի, Մոլդովայի, ինչպես նաև Ֆրանսիայի, Հոլանդիայի, Հունաստանի, Իտալիայի, Չեխոսլովակիայի և Գերմանիայի տարածքներում մարտնչած հայ պարտիզանների սխրանքները:

2004 թ. Վ. Ղազախեցյանը հրատարակեց «Հայ պարտիզանները» աշխատությունը⁶, որտեղ նախորդ ուսումնասիրությունների հիման վրա առաջին անգամ հայ պատմագիտության մեջ փորձեց մեկ աշխատության մեջ ներկայացնել հայ պարտի-

⁵ Նույն տեղում, էջ 9:

⁶ Ղազախեցյան Վ.Ն., Հայ պարտիզանները, Երևան, 2004:

զաննների գործունեությունը Խորհրդային Միության և Եվրոպայի երկրների զավթված տարածքներում:

Հայ պատմաբաններից Վ. Ղազախեցյանը առաջիններից է, ով ցույց տվեց հայ պարտիզանների կազմավորման աղբյուրը՝ նրա հիմնական զանգվածը համարելով հայ ռազմագերիներին ու գերմանական բանակի կազմում ստեղծված հայկական լեզեռնից փախուստի դիմած հայ զինվորներին ու սպաներին: Հիշեցնենք, որ գերմանական բանակում գոյություն են ունեցել՝ ռուսական, ուկրաինական, բելոռուսական, վրացական, ադրբեջանական և այլ ազգային լեզեռններ: Հայկական լեզեռնը կազմավորվել է Լեհաստանի Պոլավի և Ուկրաինայի Պոլտավայի մարզի Լոխվիցա քաղաքների ռազմագերիների ճամբարներում: Ընդհանուր առմամբ, կազմավորվել է լեզեռնի 10 գումարտակ, որտեղ ընդգրկվել է 8-9 հազար հայ ռազմագերի⁷:

Հայկական լեզեռնի առաջին գումարտակը 1942 թ. հոկտեմբերին ուղարկվել է ռազմաճակատ՝ Հյուսիսային Կովկաս՝ մարտնչելու Կարմիր բանակի զորամասերի դեմ: Մակայն գումարտակի անձնակազմի մեծ մասը ռազմաճակատի գծին մոտենալուն պես՝ Մայկոպի մոտ, անցել է Կարմիր բանակի կողմը: Վ. Ղազախեցյանը նշում է, որ նույն ճակատագրին արժանացավ Ուկրաինա ուղարկված Հայկական լեզեռնի 2-րդ վաշտը՝ լեյտենանտ Արամայիս Մելիք-Հովսեփյանի հրամանատարությամբ:

1943 թ. սեպտեմբերի 16-ին վաշտը, որի կազմում հաշվվում էր լրիվ սպառազինված և հանդերձավորված 248 հայ, անցավ գեներալ Մ. Ի. Նաումովի պարտիզանական միավորման շարքերը և մարտնչեց մինչև 1944 թ. մարտի 29-ը՝ մինչև միավոր-

⁷ Նույն տեղում, էջ 9:

ծած 41-րդ ջոկատի գործունեությանը, որը գրեթե ամբողջովին համալրված էր գերմանական գերությունից փախած հայ ռազմագերիներով: Ջոկատի հրամանատարն էր կապիտան Արտեմ Գևորգի Սաղումյանը:

Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի 40-ամյակի առթիվ Վ. Ղազախեցյանը հողված տպագրեց Հայկական ԽՍՀ ԳԱ «Լրարեր հասարակական գիտությունների» հանդեսի 1985 թ. երկրորդ համարում (էջ 3-16), որտեղ ընդհանրացված կերպով ներկայացրեց ինչպես Խորհրդային Միության զավթած տարածքներում, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրներում մարտնչած հայ պարտիզանների գործունեությունը: Այսպես, օրինակ, հողվածում զգալի տեղ է հատկացվել 1943 թ. փետրվարին Ուկրաինայի Լվով մարզի Սելեց-Ջավոնյեյի համակենտրոնացման ճամբարից փախած մի խումբ հայ ռազմագերիներից կազմված «Հաղթանակ» անվանակոչված պարտիզանական ջոկատի գործունեությանը: Այդ ջոկատի հրամանատարն էր Կարմիր բանակի կապիտան Սերգեյ Հարությունյանցը, իսկ կոմիսարը՝ քաղղեկ Հովհաննես Պետյանը:

«Իր գոյության առաջին մեկ տարվա ընթացքում,- գրում է Ղազախեցյանը,- ջոկատը գործել է միայնակ, Արևմտյան Ուկրաինայի քաղաքական բարդ իրադրության մեջ՝ բուրժուական ազգայնականների բանդաների միջավայրում: 1944 թ. սկզբին Վոլինի մարզում ջոկատը հանդիպեց ռազմերթ կատարող Կովպակի անվան պարտիզանական դիվիզիային (հրամանատար՝ Պ. Վերշիգորա): Ջոկատը, պահպանելով իր կազմակերպական ինքնուրույնությունը, դարձավ դիվիզիայի 3-րդ գնդի վաշտերից մեկը: Հայ պարտիզանների թիվը, հետագայում աճելով, հասավ մինչև 100-ի: Դիվիզիայի կազմում հայ պարտիզանները

արշավ կատարեցին դեպի Կարպատյան լեռներ և Բելոռուսիա: Նրանք այցի ընկան կովպակյանների վարած բազմաթիվ մարտերում՝ Պրիպյատ գետում թշնամու նավատորմիդի ջախջախման, Ույանով քաղաքի ազատագրման և այլ մարտական գործողությունների ընթացքում: Դիվիզիայի 1-ին գնդի հրամանատար Դ. Բաքրաձենն վկայում է, որ Ույանովի վրա պարտիզանների հարձակման ժամանակ Սերգո Հարությունյանցի ղեկավարած վաշտը, նետվելով առաջ, ճնշել է թշնամու պաշտպանությունը և քաղաք մտել առաջինը: Պարտիզանական դիվիզիայի, նրա կազմում հայ ժողովրդի զավակների մարտական ուղին ավարտվեց Արևմտյան Բելոռուսիայում՝ 1944 թ. հուլիսին, երբ մոտենում էր Սովետական Բելոռուսիայի ազատագրման ավարտը»⁴:

Վերոհիշյալ հոդվածում Վ. Ղազախեցյանը ավելի հանգամանորեն անդրադառնում է 1943 թ. օգոստոսին Լենինգրադի մարզում 3-րդ պարտիզանական բրիգադի կազմում կազմավորված հայկական թիվ 41 պարտիզանական ջոկատի գործունեությանը: «1943 թ. օգոստոսի 5-ին Լենինգրադի մարզի 3-րդ պարտիզանական բրիգադի հրամանատար մայոր Ա.Վ. Գերմանի հրամանով ձևավորվեց թիվ 41-ը, որում սկզբում հիմնականում ընդգրկված էին հայ ռազմիկներ: «Կամավոր,- ասված է այդ հրամանում,- պարտիզանների կողմն անցած նախկին ռազմագերի մարտիկներից ու հրամանատարներից և Կալինինի մարզի պարտիզաններից կազմակերպել թիվ 41 պարտիզանական ջոկատը»: Նրա հրամանատար նշանակվեց կապիտան Արտև Սաղումյանը («Կերշենսկի»), որին որոշ ժամանակ փո-

⁴ Ղազախեցյան Վ.Ն., Հայ ժողովրդի մասնակցությունը սովետական վրիժառուների պայքարին Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, N 2, էջ 8-9:

խարինել է Զավեն Համբարձումյանը (գոհվել է): Կոմիսարի պարտականությունը կատարել են Ա. Միգրովը, ապա մայոր Կ. Մատյուշենկոն («Մայկուպսկի»): Ջոկատի անձնակազմը հասավ մինչև 300 մարդու, իսկ հայերի թիվը աճեց մինչև 60-ի: Ջոկատն ակտիվ մասնակցություն է ունեցել քրիզադի վարած «Ռեյսային պատերազմին» Օստրով-Ռեզենկե, Պսկով-Պոլխով, Չիխասլեո-Դեդովիչի գծերում: Իր գոյության 7 ամսվա ընթացքում ջոկատը մարտական հաշվում գրանցել է թշնամու ոչնչացված 2000 զինվոր ու սպա, 88 ավտոմեքենա, խորտակել է 25 զինվորական զնացք, պայթեցրել 8 կամուրջ, հարյուրավոր ռևյուսեր, ջախջախել Գորուշկայի կայագորը... Պարտիզանական քրիզադի գործունեությունը դադարեց 1944 թ. փետրվարի 26-ին, երբ այն միացավ Լենինգրադի մարզն ազատագրող Կարմիր բանակի զորամասերին և 2 օր անց նրանց հետ մասնակցեց Սլավկովիչի քաղաքի ազատագրմանը»⁵:

Հողվածում Վ. Ղազախեցյանը համառոտակի լուսաբանում է Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատի (Ուկրաինա), Ղրիմի, Կրասնոդարի, Բրյանսկի, Օրյոլի, Բելոռուսիայի, Լիտվայի, Մոլդովայի, ինչպես նաև Ֆրանսիայի, Հոլանդիայի, Հունաստանի, Իտալիայի, Չեխոսլովակիայի և Գերմանիայի տարածքներում մարտնչած հայ պարտիզանների սխրանքները:

2004 թ. Վ. Ղազախեցյանը հրատարակեց «Հայ պարտիզանները» աշխատությունը⁶, որտեղ նախորդ ուսումնասիրությունների հիման վրա առաջին անգամ հայ պատմագիտության մեջ փորձեց մեկ աշխատության մեջ ներկայացնել հայ պարտի-

⁵ Նույն տեղում, էջ 9:

⁶ Ղազախեցյան Վ.Ն., Հայ պարտիզանները, Երևան, 2004:

զաննների գործունեությունը Խորհրդային Միության և Եվրոպայի երկրների գավթված տարածքներում:

Հայ պատմաբաններից Վ. Ղազախեցյանը առաջիններից է, ով ցույց տվեց հայ պարտիզանների կազմավորման աղբյուրը՝ նրա հիմնական զանգվածը համարելով հայ ռազմագերիներին ու գերմանական բանակի կազմում ստեղծված հայկական լեգեոնից փախուստի դիմած հայ զինվորներին ու սպաներին: Հիշեցնենք, որ գերմանական բանակում գոյություն են ունեցել՝ ռուսական, ուկրաինական, բելոռուսական, վրացական, ադրբեջանական և այլ ազգային լեգեոններ: Հայկական լեգեոնը կազմավորվել է Լեհաստանի Պուլավի և Ուկրաինայի Պոլտավայի մարզի Լոխվիցա քաղաքների ռազմագերիների ճամբարներում: Ընդհանուր առմամբ, կազմավորվել է լեգեոնի 10 գումարտակ, որտեղ ընդգրկվել է 8-9 հազար հայ ռազմագերի⁷:

Հայկական լեգեոնի առաջին գումարտակը 1942 թ. հոկտեմբերին ուղարկվել է ռազմաճակատ՝ Հյուսիսային Կովկաս՝ մարտնչելու Կարմիր բանակի զորամասերի դեմ: Սակայն գումարտակի անձնակազմի մեծ մասը ռազմաճակատի զծին մոտենալուն պես՝ Մայկոպի մոտ, անցել է Կարմիր բանակի կողմը: Վ. Ղազախեցյանը նշում է, որ նույն ճակատագրին արժանացավ Ուկրաինա ուղարկված Հայկական լեգեոնի 2-րդ վաշտը՝ լեյտենանտ Արամայիս Մելիք-Հովսեփյանի հրամանատարությամբ:

1943 թ. սեպտեմբերի 16-ին վաշտը, որի կազմում հաշվվում էր լրիվ սպառազինված և հանդերձավորված 248 հայ, անցավ գեներալ Մ. Ի. Նաումովի պարտիզանական միավորման շարքերը և մարտնչեց մինչև 1944 թ. մարտի 29-ը՝ մինչև միավոր-

⁷ Նույն տեղում, էջ 9:

ծած 41-րդ ջոկատի գործունեությանը, որը գրեթե ամբողջովին համալրված էր գերմանական գերությունից փախած հայ ռազմագերիներով: Ջոկատի հրամանատարն էր կապիտան Արտեմ Գևորգի Սաղումյանը:

Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի 40-ամյակի առթիվ Վ. Ղազախեցյանը հողված տպագրեց Հայկական ԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի 1985 թ. երկրորդ համարում (էջ 3-16), որտեղ ընդհանրացված կերպով ներկայացրեց ինչպես Խորհրդային Միության զավթած տարածքներում, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրներում մարտնչած հայ պարտիզանների գործունեությունը: Այսպես, օրինակ, հողվածում զգալի տեղ է հատկացվել 1943 թ. փետրվարին Ուկրաինայի Լվով մարզի Սելեց-Ջավոնյեյի համակենտրոնացման ճամբարից փախած մի խումբ հայ ռազմագերիներից կազմված «Հաղթանակ» անվանակոչված պարտիզանական ջոկատի գործունեությանը: Այդ ջոկատի հրամանատարն էր Կարմիր բանակի կապիտան Սերգեյ Հարությունյանցը, իսկ կոմիսարը՝ քաղղենկ Հովհաննես Պետյանը:

«Իր գոյության առաջին մեկ տարվա ընթացքում,- գրում է Ղազախեցյանը,- ջոկատը գործել է միայնակ, Արևմտյան Ուկրաինայի քաղաքական բարդ իրադրության մեջ՝ բուրժուական ազգայնականների բանդաների միջավայրում: 1944 թ. սկզբին Վոլինի մարզում ջոկատը հանդիպեց ռազմերթ կատարող Կովպակի անվան պարտիզանական դիվիզիային (հրամանատար՝ Պ. Վերշիգորա): Ջոկատը, պահպանելով իր կազմակերպական ինքնուրույնությունը, դարձավ դիվիզիայի 3-րդ գնդի վաշտերից մեկը: Հայ պարտիզանների թիվը, հետագայում աճելով, հասավ մինչև 100-ի: Դիվիզիայի կազմում հայ պարտիզանները

արշավ կատարեցին դեպի Կարպատյան լեռներ և Բելոռուսիա: Նրանք այցի ընկան կովպակյանների վարած բազմաթիվ մարտերում՝ Պրիպյատ գետում թշնամու նավատորմի ջախջախման, Ույանով քաղաքի ազատագրման և այլ մարտական գործողությունների ընթացքում: Դիվիզիայի 1-ին գնդի հրամանատար Դ. Բաքրաձեն վկայում է, որ Ույանովի վրա պարտիզանների հարձակման ժամանակ Սերգո Հարությունյանցի ղեկավարած վաշտը, նետվելով առաջ, ճնշել է թշնամու պաշտպանությունը և քաղաք մտել առաջինը: Պարտիզանական դիվիզիայի, նրա կազմում հայ ժողովրդի զավակների մարտական ուղին ավարտվեց Արևմտյան Բելոռուսիայում 1944 թ. հուլիսին, երբ մոտենում էր Սովետական Բելոռուսիայի ազատագրման ավարտը»⁴:

Վերոհիշյալ հոդվածում Վ. Ղազախեցյանը ավելի հանգամանորեն անդրադառնում է 1943 թ. օգոստոսին Լենինգրադի մարզում 3-րդ պարտիզանական բրիգադի կազմում կազմավորված հայկական թիվ 41 պարտիզանական ջոկատի գործունեությանը: «1943 թ. օգոստոսի 5-ին Լենինգրադի մարզի 3-րդ պարտիզանական բրիգադի հրամանատար մայր Ա.Վ. Գերմանի հրամանով ձևավորվեց թիվ 41-ը, որում սկզբում հիմնականում ընդգրկված էին հայ ռազմիկներ: «Կամավոր,- ասված է այդ հրամանում,- պարտիզանների կողմն անցած նախկին ռազմագերի մարտիկներից ու հրամանատարներից և Կալինինի մարզի պարտիզաններից կազմակերպել թիվ 41 պարտիզանական ջոկատը»: Նրա հրամանատար նշանակվեց կապիտան Արտեմ Սաղումյանը («Կերշենսկի»), որին որոշ ժամանակ փո-

⁴ Ղազախեցյան Վ.Ն., Հայ ժողովրդի մասնակցությունը սովետական վրիժառուների պայքարին Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, N 2, էջ 8-9:

ման ցրումը⁸: Ղազախեցյանը ցույց է տալիս, որ հայկական պարտիզանական ջոկատն իր գոյության ավելի քան 6 ամիսների ընթացքում գեներալ Նաումովի պարտիզանական միավորման շարքերում մարտերով անցել է 1500 կիլոմետրից ավելի տարածություն, որի ընթացքում հայ պարտիզանները ոչնչացրել են ավելի քան հազար ֆաշիստական զինվոր ու սպա: Սեփական կորուստները կազմել է մոտ 70 սպանված⁹:

Պրոֆեսոր Ղազախեցյանն անդրադարձել է նաև գերմանաֆաշիստական զորքերի կողմից Ուկրաինայի, Բելոռուսիայի և Ռուսաստանի ժամանակավորապես գրավված տարածքներում հայ ընդհատակայինների գործունեությանը, վեր հանել նրանց կատարած հերոսական աշխատանքը: Մասնավորապես նա կանգ է առել Մինսկում ընդհատակյա շարժման կազմակերպիչներ, սահմանապահ զորքերի գնդապետ Վահագն Հայրապետովի, կրտսեր լեյտենանտ Միքայել Բաղդասարյանի գործունեության, Մոզիյովում իր հանդուգն սխրանքով հերոսացած Հենրիկ Զաքարյանի, բելառուսական Լիդա քաղաքի հոսպիտալում Գուրգեն Մարտիրոսովի կատարած սխրանքների վրա, որի հետևանքով մի խումբ վիրավոր ռազմագերիներ փախուստի դիմեցին և միացան պարտիզաններին և այլն:

Վ. Ղազախեցյանը հատուկ ուշադրություն է դարձրել Բելառուսի պարտիզանական շարժման ակտիվ գործիչներ Խաչիկ Մաթևոսյանի, Վահան Գրիգորյանի, Հովհաննես Խաչատրյանի, Վահան Աղաջանյանի և այլոց կատարած սխրանքների վերհանմանը, ցույց տվել, որ նրանցից 4-ը դարձել են պարտիզանական բրիգադների հրամանատարներ, իրենց զգալի

⁸ Ղազախեցյան Վ. Ն., Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը, էջ 107:

⁹ Նույն տեղում, էջ 106:

ավանդը ներդրել Բելառուսը ֆաշիստական զավթիչներից ազատագրելու գործին:

«Հայ պարտիզանները» գրքում Վ. Ղազախեցյանը լուսարանել է նաև Լենինգրադի մարզում գործող Գերմանի անվան պարտիզանական բրիգադի գործունեությունը, որի թիվ 41 ջոկատը համալրված էր հիմնականում հայ մարտիկներով: Ջոկատի հրամանատարն էր կապիտան Արտեմ Գևորգի Սաղումյանը, իսկ վաշտերինը՝ Սուրեն Մարգարյանը, Գաբեգին Ղարիբյանը, Մուրադ Մկրտումյանը, դասակներինը՝ Հաբեթնակ Դանիելյանը, Պարույր Մարտիրոսյանը, Սուրեն Մարգարյանը, Արծվիկ Դավթյանը և ուրիշներ¹⁰:

Միայն «Ռելսային պատերազմի» ընթացքում (Կուրսկի ճակատամարտի և Բելառուսի ազատագրման մարտերում) 41-րդ ջոկատը խորտակեց գերմանական 11 զինվորական գնացք, պայթեցրեց 5 կամուրջ և 1500 երկաթուղային ռելս, կտրեց 8600 մ կապի գիծ, ջախջախեց թշնամու մեկ խոշոր կայազոր, ոչնչացրեց 669 հիտլերական, ավար վերցրեց մեծ քանակությամբ գնեթ, զինամթերք և հանդերձանք¹¹:

Բացի Ուկրաինայի տարածքում մարտնչած Անաստաս Միկոյանի անվան պարտիզանական ջոկատի գործունեությունը լուսարանելուց, Վ. Ղազախեցյանն իր ուսումնասիրությունում կարևոր տեղ է հատկացրել նաև «Հաղթանակ» ջոկատին, որը կազմավորվել էր 1943 թ. փետրվարին Լվովի մարզի Սելեյ-Ջավոնյեի ռազմագերիների ճամբարից փախած հայերով: Ջոկատի հրամանատարն էր կապիտան Սերգեյ Արկադիի Հարությունյանը, կոմիսարը՝ քաղզեկ Հովհաննես Պետյանը, հետախուզության պետը՝ Անտոն Պողոսյանը, ջոկերի հրամանա-

¹⁰ Ղազախեցյան Վ.Ն., Հայ պարտիզանները, էջ 62:

¹¹ Նույն տեղում, էջ 64:

տարները Լորիս Ամիրյանը, Երվանդ Ղասաբյանը, Ալավերդի Ֆահիրյանը¹²:

Պրոֆեսոր Վ. Ղազախեցյանն իր գրքում լուսաբանել է նաև ֆաշիստական Գերմանիայի կողմից ժամանակավորապես նվաճված Եվրոպայի մի շարք երկրներում հակաֆաշիստական դիմադրական շարժմանը հայերի ունեցած ակտիվ մասնակցության հիմնահարցը: Նա հատկապես մեծ ուշադրություն է դարձրել Ֆրանսիայում հակաֆաշիստական դիմադրության շարժմանը հայերի մասնակցության լուսաբանման:

Մեծ տեղ է հատկացված նաև Ֆրանսիայում հայ ռազմագերիներից կազմավորված 1-ին խորհրդային պարտիզանական գնդի մարտական գործողություններին: Այդ գնդում կար ավելի քան 2000 մարդ, որից 1200-ը հայեր էին: Այնուհետև Վ. Ղազախեցյանը լուսաբանում է Հուլանդիայում 800 հայ ռազմագերիներից կազմավորված պարտիզանական ջոկատի գործողությունները, բացահայտում նոր փաստեր: Նորովի է լուսաբանվում նաև Հունաստանի ազգային-ազատագրական բանակի կազմում հայերից բաղկացած «Ազատություն» պարտիզանական ջոկատի պատմությունը: Հեղինակը ցույց է տվել, որ այդ ջոկատի կորիզը եղել է Հայկական լեգեոնի Ժխտումիբրի մարզում կազմված գումարտակը, որը 1943 թ. տեղափոխվել էր Հունաստան: Ջոկատը գերմանաֆաշիստական զավթիչների դեմ կռվել է ինչպես Հունաստանում, այնպես էլ Ալբանիայում:

Վ. Ղազախեցյանը անդրադարձել է նաև Լեհաստանի տարածքում՝ Լյուբլինի վոյեռությունում, մարտնչած պարտիզանական փոքրակազմ ջոկատի գործունեությանը, որի հրամանատարն էր Միշա Պետրոսյանը: Վարչավայի շրջանում գործել է Արարատ Նավոյանի պարտիզանական խումբը:

¹² Նույն տեղում, էջ 69:

Ղազախեցյանը նորովի է լուսաբանում նաև Իտալիայում մարտնչած հայ պարտիզանների գործողությունները: Հենվելով իտալացի հեղինակ Մաուրո Գալլենի «Խորհրդային պարտիզանների դիմադրությունը իտալական շարժման մեջ» գրքի տվյալների վրա, հետաքրքիր տվյալներ է բերում Իտալիայում մարտնչած հայ պարտիզանների վերաբերյալ: Լոմբարդիայի մարզի Բրեշիայի շրջանում տեղի ունեցած կռիվների ժամանակ հերոսաբար զոհվել է Միքայել Դաշտոյանը՝ հետմահու պարգևատրվելով «Մարտական խիզախության համար» բրոնզե մեդալով: Լիգուրիայի մարզի «Չիկերո» 3-րդ պարտիզանական բրիգադում 1944 թ. մայիսին կազմավորվել է ականանետային ջոկատ, որի հրամանատարն էր Գրիգոր Հակոբյանը: Մարտերից մեկի ժամանակ՝ 1944 թ. օգոստոսի 13-ին, Գրիգոր Հակոբյանը զոհվել է հերոսի մահով: 1944 թ. հունիսի 25-ին տեղի ունեցած մարտում զոհվել է Գևորգ Քոլոզյանը՝ հետմահու պարգևատրվելով «Զինվորական խիզախության համար» մեդալով: Չեխոսլովակիայում են մարտնչել հայ պարտիզաններ Արտեմ Պետրոսյանը, Արտեմ Բաբայանը, Վահան Վարդանյանը, Հակոբ Իլիկյանը, Վասիլ Հովսեփյանը, Աշոտ Հովհաննիսյանը և ուրիշները: Վ. Ղազախեցյանը նոր փաստեր է բերում այդ խիզախների վերաբերյալ, նշում Բուդարիայում, Հարավսլավիայում, Գերմանիայում գործած հայկական պարտիզանական ջոկատների և հայ պարտիզանների կատարած սխրանքները, հանգում այն նզրակացության, թե որ երկրներում էլ մարտնչեին, նրանք կռվում էին նաև Հայաստանի և հայ ժողովրդի շահերը պաշտպանելու համար¹³:

Այսպիսով, հանրագումարի բերելով Հայրենական մեծ պատերազմում հայ պարտիզանների գործունեության մասին Վ.

¹³ Նույն տեղում, էջ 131:

Ղազախեցյանի կատարած հետազոտությունները՝ տեսնում ենք, որ նա առաջիններից մեկն է, որը հայ պատմագիտության մեջ զբաղվել է կարևոր նշանակություն ունեցող այս հիմնահարցով և իր զգալի ավանդը ներդրել այդ բնագավառում: Նրա բոլոր աշխատությունները աչքի են ընկել ոչ միայն աղբյուրագիտական հարուստ հենքով, այլև շարադրման կոտ կառուցվածքով, մատչելի, գրագետ լեզվով և գիտական ապարատով:

Володя А. Гаспарян, АГПУ, к.п.н., *Отображение деятельности партизан-армян в годы великой отечественной войны в работах профессора Владимира Казахецяна – Достойный вклад в дело победы над фашистской Германией в годы Великой Отечественной войны внесли партизаны-армяне. Только на Украине и в Белоруссии воевали более 2000, в Крыму и на Северном Кавказе – 500, в Прибалтике и Калининградской области – 200 партизан. Поэтому не случайно, что этот вопрос не остался вне поля зрения армянских историков. Одним из первых осветил этот вопрос профессор Владимир Казахецян. В частности, он обратился к этой теме в своих книгах “Партизанский отряд имени Микояна”, “Армянские партизаны” и в ряде статей. Кроме освещения деятельности партизанского отряда имени Микояна, Казахецян на основании богатых архивных материалов поднял историю действующего на территории Ленинградской и Калининградской областей 41-го отряда, отряда “Победа”, воевавшего на территории Белоруссии. Командирами этих отрядов были армяне, а личный состав был укомплектован в основном армянскими бойцами. В своей книге “Армянские партизаны” профессор Казахецян осветил подвиги, совершенные армянскими партизанскими частями, отрядами и отдель-*

ными бойцами на территории временно оккупированных фашистской Германией стран Европы (Франция, Голландия, Италия, Польша, Греция, Чехословакия, Болгария, Югославия и Германия). Он пришел к выводу, что партизаны-армяне сознавали, что где бы они ни воевали, они защищают Армению и интересы армянского народа. Таким образом, подводя итоги трудов профессора В.Н. Казахецяна о деятельности партизан-армян в Великой Отечественной войне, приходим к заключению, что он был в числе первых историков, основательно занявшихся этим вопросом, и внес достойный вклад в армянскую историографию.

Volodya A. Gasparyan, *ASPU, PhD in Pedagogy* - The Reflection of Armenian Partisans Activities During the Great Patriotic War in the Works of Vladimir Chazakhetyan - Armenian partisans had a great contribution to the victory process of the Great Patriotic War against Nazi Germany.

More than 2000 Armenian partisans fought in Ukraine and Belarus, 500 partisans in Crimea and North Caucasus, 200 in Baltic States and Kalinin region etc. Therefore, it is not accidental that the issue is within the scope of Armenian historians. Among the first Armenian historians, Vladimir Ghazakhetyan was the first to cover the issue. Particularly, he addressed the problem in his books "Partisan Brigade after Mikoyan", "Armenian Partisans" and in a number of other articles. Besides covering the activities of "Partisan Brigade after Mikoyan", based on rich sources Professor Ghazakhetyan raised the history about the 41 heroisms in Leningrad and Kalinin regions, as well as the "Victory" brigades who fought in Belarus: the commanders of that brigades were Armenians, and their staff members were mainly Armenians.

In his book "Partisan Brigade after Mikoyan", Professor Ghazakhetzyan wrote about the heroisms of Armenian partisans who fought in a number of European countries', temporarily conquered by Nazi Germany, (France, Holland, Italy, Poland, Greece, Czechoslovakia, Bulgaria, Yugoslavia and Germany) partisan brigades and military units and came to the conclusion that Armenian partisans understood that no matter in what country they fought, it was for the sake of Armenia and Armenian people.

Summarizing the work created by Professor V. N. Ghazakhetzyan about the Armenian partisans' actions, we come to the conclusion that he was among one of the first Armenian historians who studied the above mentioned issues and greatly contributed to Armenian historiography.

ԱՐՏՅՈՄ Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀԽՍՀ ՆԳՆ-Ի ՊԱՅԲԱՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ
ԱՆԱՊԱՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՎՓԱՌԱՇԻԿՈՒԹՅԱՆ
ԴԵՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բանալի բառեր՝ Խորհրդային Հայաստան, ներքին գործերի նախարարություն, թափառաշրջիկներ, հանցավորություն, մանկատներ, երեխաներ:

1941–1945 թթ. Հայրենական պատերազմի սոսկալի հետևանքներից էին ոչ միայն մարդկային և նյութական ահռելի կորուստները, այլև որբացած և խնամագուրկ, անապաստան երեխաները, որոնք հոծ խմբերով թափառում էին ԽՍՀՄ ողջ տարածքում: Բացառություն չէր նաև Խորհրդային Հայաստանը, որտեղ դրանց թիվը հասնում էր հազարների: Երեխաների անապաստանության և խնամագրկության, զանգվածային թափառաշրջիկության առաջացման պատճառների թվում էին հետևյալ հիմնական հանգամանքները՝ երեխաների մեծ մասը Հայրենական պատերազմի տարիներին զրկվել էր ծնողներից, մի մասը՝ սոցիալական ծանր պայմանների, նյութական անապահովության կամ ընտանեկան երկպառակտությունների պատճառով ծնողների կողմից թողնվել էր բախտի քմահաճույքին:

Խնդիրը սրվեց և բացասական նոր երանգներ ստացավ հատկապես հետպատերազմյան առաջին տարիներին, երբ ի հայտ եկած ավազակային և գողական տարբեր խմբավորումները սկսեցին իրենց շարքերում ընդգրկել խնամագուրկ և թափառաշրջիկ երեխաներին, անգամ մանկահասակ: Նրանց օգտա-

Ղազախսեցյանի կատարած հետազոտությունները՝ տեսնում ենք, որ նա առաջիններից մեկն է, որը հայ պատմագիտության մեջ գրադվել է կարևոր նշանակություն ունեցող այս հիմնահարցով և իր զգալի ավանդը ներդրել այդ բնագավառում: Նրա բոլոր աշխատությունները աչքի են ընկել ոչ միայն աղբյուրագիտական հարուստ հենքով, այլև շարադրման կոմ կառուցվածքով, մատչելի, գրագետ լեզվով և գիտական ապարատով:

Володя А. Гаспарян, АГПУ, к.п.н., *Отражение деятельности партизан-армян в годы великой отечественной войны в работах профессора Владимира Казахецяна – Достойный вклад в дело победы над фашистской Германией в годы Великой Отечественной войны внесли партизаны-армяне. Только на Украине и в Белоруссии воевали более 2000, в Крыму и на Северном Кавказе – 500, в Прибалтике и Калининградской области – 200 партизан. Поэтому не случайно, что этот вопрос не остался вне поля зрения армянских историков. Одним из первых осветил этот вопрос профессор Владимир Казахецян. В частности, он обратился к этой теме в своих книгах “Партизанский отряд имени Микояна”, “Армянские партизаны” и в ряде статей. Кроме освещения деятельности партизанского отряда имени Микояна, Казахецян на основании богатых архивных материалов поднял историю действующего на территории Ленинградской и Калининградской областей 41-го отряда, отряда “Победа”, воевавшего на территории Белоруссии. Командирами этих отрядов были армяне, а личный состав был укомплектован в основном армянскими бойцами. В своей книге “Армянские партизаны” профессор Казахецян осветил подвиги, совершенные армянскими партизанскими частями, отрядами и отдель-*

ными бойцами на территории временно оккупированных фашистской Германией стран Европы (Франция, Голландия, Италия, Польша, Греция, Чехословакия, Болгария, Югославия и Германия). Он пришел к выводу, что партизаны-армяне сознавали, что где бы они ни воевали, они защищают Армению и интересы армянского народа. Таким образом, подводя итоги трудов профессора В.Н. Казахецяна о деятельности партизан-армян в Великой Отечественной войне, приходим к заключению, что он был в числе первых историков, основательно занявшихся этим вопросом, и внес достойный вклад в армянскую историографию.

Volodya A. Gasparyan, *ASPU, PhD in Pedagogy* - The Reflection of Armenian Partisans Activities During the Great Patriotic War in the Works of Vladimir Chazakhetzyan - Armenian partisans had a great contribution to the victory process of the Great Patriotic War against Nazi Germany.

More than 2000 Armenian partisans fought in Ukraine and Belarus, 500 partisans in Crimea and North Caucasus, 200 in Baltic States and Kalinin region etc. Therefore, it is not accidental that the issue is within the scope of Armenian historians. Among the first Armenian historians, Vladimir Ghazakhetzyan was the first to cover the issue. Particularly, he addressed the problem in his books "Partisan Brigade after Mikoyan", "Armenian Partisans" and in a number of other articles. Besides covering the activities of "Partisan Brigade after Mikoyan", based on rich sources Professor Ghazakhetzyan raised the history about the 41 heroisms in Leningrad and Kalinin regions, as well as the "Victory" brigades who fought in Belarus: the commanders of that brigades were Armenians, and their staff members were mainly Armenians.

գործում էին տարբեր հանցագործություններ (հիմնականում մանր գողություններ) կատարելու համար՝ գիտակցելով, որ բռնվելու դեպքում դեռահասներին մեղմ պատիժ է սպասվում: Հարկ է նշել նաև, որ հանցագործ խմբեր հաճախ կազմակերպում էին հենց իրենք՝ անչափահաս երեխաները՝ տարիքով մեծերի գլխավորությամբ: Մանկական հանցավորությունը հանրապետությունում այնպիսի չափերի էր հասել, որ Հայաստանի իրավապահ մարմինների՝ Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) և Պետական անվտանգության նախարարության (ՊԱՆ), գործունեության չափազանց կարևոր ուղղություններից էր դարձել անչափահասների շրջանում հանցավորության դեմ պայքարը և կանխարգելիչ աշխատանքների կազմակերպումը: Դրանցից առավել արդյունավետն էր խնամագուրկ, անապաստան և թափառաշրջիկ երեխաների ժամանակին հայտնաբերելը և խնամքի հանձնելը: Այս գործում հանրապետության իրավապահ մարմինները սերտ և արդյունավետ համագործակցություն ծավալեցին ՀԽՍՀ լուսավորության և առողջապահության նախարարությունների, մանկական հիմնարկների, հասարակական կազմակերպությունների հետ:

Իրականացված միջոցառումների արդյունքում արդեն 1946 թ. հանրապետության իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվեց և փողոցներից հավաքվեց 2800 անապաստան երեխա՝ 1945 թ. 1750-ի դիմաց: Նրանցից 20-ը հանձնվեց մանկամսուր, 1027-ը ուղարկվեց ՀԽՍՀ լուսավորության նախարարության մանկատներ, 276-ը՝ ՀԽՍՀ առողջապահության նախարարության հիվանդանոցներ, 462՝ պրոֆտեխուսումնարան, աշխատանքի տեղավորվեց՝ 275, իրենց քնակավայր վերադարձվեց 740 երեխա: ՆԳՆ մարմինների օպերատիվ աշխատանքների արդյունքում 1946 թ. հայտնաբերվել էր նաև 2470 խնամա-

գուրկ երեխա, որոնց մի մասը զբաղվում էր չարտոնված առևտրով (հիմնականում ծխախոտի վաճառքով), մոլեխաղերով և այլն: Նման երեխաների մեծ մասը վերադարձվել է ծնողների, իսկ վերջիններս տուգանվել են ընդհանուր 46 200 ոտլիի գումարով¹:

1947 թ. սկզբից ՀԽՍՀ ՆԳՆ-ի կազմում ստեղծված խնամագուրկ և անապաստան երեխաների դեմ պայքարի բաժինը հրատապ միջոցառումներ իրականացրեց խնամագուրկ և անապաստան երեխաներին հայտնաբերելու, նրանց հետ տարվող աշխատանքները բարելավելու ուղղությամբ: Այդ աշխատանքներն առավել արդյունավետ դարձան, երբ 1947 թ. ապրիլի 7-ին լույս տեսավ «Ծնողագուրկ երեխաների և դեռահասների հետ աշխատանքների բարելավման մասին» ԽՍՀՄ կառավարության հատուկ որոշումը: Դրանով, ի թիվս այլ միջոցառումների, նախատեսվում էր ընդլայնել մանկատների ցանցը, 13-15 տարեկան դեռահասների համար կազմակերպել հատուկ արհեստագործական և գյուղատնտեսական ուսումնարաններ, իսկ ԽՍՀՄ ՆԳՆ-ին հանձնարարվում է հանրապետություններում լրացուցիչ կազմակերպել մանկական գաղութներ՝ 10 000 տեղ ընդհանուր քանակով:

ՀԽՍՀ ՆԳՆ-ի խնամագուրկ և անապաստան երեխաների դեմ պայքարի բաժնի կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում 1947 թ. Հայաստանում հայտնաբերվեց նախորդ տարիներից անհամեմատ շատ՝ 10 314 երեխա, որից՝ խնամագուրկ՝ 2670 և անապաստան՝ 7644: Տարվա ընթացքում նրանք ուղարկվեցին Լուսավորության նախարարության մանկատներ, մեծահասակները՝ պրոֆտեխուսումնարաններ կամ տեղավորվեցին աշխատանքի: Սակայն երեխաների մի մասը, չցանկանալով սովո-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 27, գ. 56, թ. 13:

գործում էին տարբեր հանցագործություններ (հիմնականում մանր գողություններ) կատարելու համար՝ գիտակցելով, որ բռնվելու դեպքում դեռահասներին մեղմ պատիժ է սպասվում: Հարկ է նշել նաև, որ հանցագործ խմբեր հաճախ կազմակերպում էին հենց իրենք՝ անչափահաս երեխաները՝ տարիքով մեծերի գլխավորությամբ: Մանկական հանցավորությունը հանրապետությունում այնպիսի չափերի էր հասել, որ Հայաստանի իրավապահ մարմինների՝ Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) և Պետական անվտանգության նախարարության (ՊԱՆ), գործունեության չափազանց կարևոր ուղղություններից էր դարձել անչափահասների շրջանում հանցավորության դեմ պայքարը և կանխարգելիչ աշխատանքների կազմակերպումը: Դրանցից առավել արդյունավետն էր խնամագուրկ, անապաստան և թափառաշրջիկ երեխաների ժամանակին հայտնաբերելը և խնամքի հանձնելը: Այս գործում հանրապետության իրավապահ մարմինները սերտ և արդյունավետ համագործակցություն ծավալեցին ՀԽՍՀ լուսավորության և առողջապահության նախարարությունների, մանկական հիմնարկների, հասարակական կազմակերպությունների հետ:

Իրականացված միջոցառումների արդյունքում արդեն 1946 թ. հանրապետության իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվեց և փողոցներից հավաքվեց 2800 անապաստան երեխա՝ 1945 թ. 1750-ի դիմաց: Նրանցից 20-ը հանձնվեց մանկամտուր, 1027-ը ուղարկվեց ՀԽՍՀ լուսավորության նախարարության մանկատներ, 276-ը՝ ՀԽՍՀ առողջապահության նախարարության հիվանդանոցներ, 462՝ պրոֆտեխուսումնարան, աշխատանքի տեղավորվեց՝ 275, իրենց բնակավայր վերադարձվեց 740 երեխա: ՆԳՆ մարմինների օպերատիվ աշխատանքների արդյունքում 1946 թ. հայտնաբերվել էր նաև 2470 խնամա-

գուրկ երեխա, որոնց մի մասը գրադվում էր չարտոնված ամուտորով (հիմնականում ծխախոտի վաճառքով), մոլեխաղերով և այլն: Նման երեխաների մեծ մասը վերադարձվել է ծնողների, իսկ վերջիններս տուգանվել են ընդհանուր 46 200 ուրլի գումարով¹:

1947 թ. սկզբից ՀԽՍՀ ՆԳՆ-ի կազմում ստեղծված խնամագուրկ և անապաստան երեխաների դեմ պայքարի բաժինը հրատապ միջոցառումներ իրականացրեց խնամագուրկ և անապաստան երեխաներին հայտնաբերելու, նրանց հետ տարվող աշխատանքները բարելավելու ուղղությամբ: Այդ աշխատանքներն առավել արդյունավետ դարձան, երբ 1947 թ. ապրիլի 7-ին լույս տեսավ «Ծնողագուրկ երեխաների և դեռահասների հետ աշխատանքների բարելավման մասին» ԽՍՀՄ կառավարության հատուկ որոշումը: Դրանով, ի թիվս այլ միջոցառումների, նախատեսվում էր ընդլայնել մանկատների ցանցը, 13-15 տարեկան դեռահասների համար կազմակերպել հատուկ արհեստագործական և գյուղատնտեսական ուսումնարաններ, իսկ ԽՍՀՄ ՆԳՆ-ին հանձնարարվում է հանրապետություններում լրացուցիչ կազմակերպել մանկական գաղութներ՝ 10 000 տեղ ընդհանուր քանակով:

ՀԽՍՀ ՆԳՆ-ի խնամագուրկ և անապաստան երեխաների դեմ պայքարի բաժնի կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում 1947 թ. Հայաստանում հայտնաբերվեց նախորդ տարիներից անհամեմատ շատ՝ 10 314 երեխա, որից՝ խնամագուրկ՝ 2670 և անապաստան՝ 7644: Տարվա ընթացքում նրանք ուղարկվեցին Լուսավորության նախարարության մանկատներ, մեծահասակները՝ պրոֆտեխուսումնարաններ կամ տեղավորվեցին աշխատանքի: Սակայն երեխաների մի մասը, չցանկանալով սովո-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 27, գ. 56, թ. 13:

րել կամ զբաղվել ֆիզիկական աշխատանքով, թողնում էր ուսումնարանը կամ աշխատավայրը և դարձյալ վերադառնում փողոց:

Հանրապետությունում երեխաների անապաստանությունը և թափառաշրջիկությունը վերացնելու նպատակով ՆԳՆ-ի առաջարկությամբ 1947 թ. հունիսին Հայաստանի ԼԿԵՄ կենտրոնում հրավիրվեց կոմերիտմիության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, ընդունվեցին համապատասխան որոշումներ, տրվեցին հանձնարարականներ: Սակայն, ինչպես նշվում է ՀԽՍՀ ՆԳ նախարարի տեղակալ գնդապետ Կարակոզովի կողմից 1948 թ. հունվարի 31-ին ՀԿ(Ք)Կ կենտրոնում ուղարկած տեղեկանքում, նշված կազմակերպությունների կողմից իրավապահ մարմիններին շոշափելի աջակցություն այդպես էլ չի ցուցաբերվել, և աշխատանքների ողջ ծանրությունը մնացել է միլիցիայի աշխատակիցների ուսերին²:

Տեղեկանքից պարզվում է նաև, որ 1947 թ. վերջին ամիսներին նշանակալի ավելացել էր անապաստան երեխաների կուտակումը հատկապես Երևանում: Այսպես, եթե 1947 թ. երկրորդ եռամսյակում ՀԽՍՀ ՆԳՆ-ի կողմից մայրաքաղաքում հայտնաբերվել էր 2063 երեխա, ապա երրորդ եռամսյակում 3596: Կարակոզովը դա բացատրում է նրանով, որ շրջանային, տեղական կուսակցական, խորհրդային մարմինները լուրջ ուշադրություն չեն դարձնում և քիչ են զբաղվում որք և խնամագուրկ երեխաների խնդիրներով, նրանց ուսումնական հաստատություններում, տեղական արդյունաբերական ձեռնարկություններում և գյուղատնտեսության մեջ տեղավորելու հարցերով: Դրա հետևանքով Սպիտակի, Ախուրյանի, Արթիկի, Նոյեմբերյանի, Ապարանի, Միկոյանի, Մարտունիի, Բաաբազեչարի շրջաններից և Լե-

² Տե՛ս նույն տեղում, ց. 28, գ. 95, թ. 72-75:

սիմականից երեխաները խմբերով փախչում են Երևան, որտեղ գրադվում են ողորմությանը, չարտոնված առևտրով և մանր գողություններով:

Երևանում հայտնաբերված թափառաշրջիկ և անապաստան երեխաների մի մասը հանձնվել է ՆԳՆ-ի մանկական ընդունող-բաշխիչ բաժին: Ընդհանուր առմամբ, 1947 թ. հանձնվել է 2076 որբ երեխա, իսկ 1948 թ. հունվար ամսին՝ 125, այդ թվում՝ Էջմիածնից՝ 19, Ապարանից՝ 15, Մարտունիից՝ 14, Ախտայից՝ 7, Ալավերդիից՝ 4, Կիրովականից՝ 3, Աշտարակից՝ 4, Լենինականից՝ 5, Արթիկից՝ 11, մյուս շրջաններից՝ 28, հանրապետությունից դուրս բնակվող հայ ծնողներից ընդունվել էր 15 երեխա³:

Հարկ է նշել, որ ՆԳՆ-ի մանկական ընդունող-բաշխիչ կենտրոնում նման մեծաքանակ կուտակումները լուրջ խնդիրներ էին առաջացնում, քանի որ վերջիններիս տարածքներն իրենց ծավալով և տարողունակությամբ ի վիճակի չէին քիչ թե շատ նորմալ տեղավորելու անապաստան երեխաներին: 100 հոգու համար նախատեսված կենտրոնում հաճախ տեղավորել են մինչև 200 երեխա, և 2-3 երեխաներ գիշերել են մեկ մահճակալի վրա: Խնդրի լուծման համար առաջարկվում էր 1948 թ. կառուցել նոր մասնաշենք՝ 300 երեխայի համար և բոլոր հարմարություններով:

Առավել քարվոք էր մանկատներում անապաստան երեխաների տեղավորման խնդիրը: 1946 թ. ՀԽՍՀ լուսավորության նախարարության ենթակայության տակ գտնվող 33 մանկատանը կարող էին տեղավորվել շուրջ 5000 երեխա: Մակայն այստեղ էլ խնդիրներ գոյություն ունեին, մասնավորապես, հանրապետության մի շարք շրջանների՝ Միկոյանի, Ազիզբեկովի, Մարտունու, Բասարգեչարի, Սևանի, Արթիկի, Նոյեմբերյանի, Ախուրյանի և այլն, մանկատներում երեխաները տեղավորված էին կուտա-

³ Տե՛ս նույն տեղում:

կումներով և մեկ մահճակալի վրա գիշերում էր 2-3 երեխա⁴։ Որոշ մանկատներում կենցաղային, սանիտարական պայմաններն այնքան վատն էին ու կարգապահությունը՝ ցածր, որ երեխաները հաճախ դիմում էին փախուստի և դարձյալ հայտնվում փողոցում, համալրելով թափառաշրջիկների շարքերը։

Հանրապետության իրավապահ մարմինների օպերատիվ տեղեկությունների համաձայն մի շարք մանկատներում առկա էին բացասական և քրեորեն պատժելի այնպիսի երևույթներ, ինչպիսին էին ղեկավար անձնակազմի կողմից լիազորությունների չարաշահումը, երեխաներին նսեմացնելը, անզամ ծեծելը, նրանց հասանելիք առաջին անհրաժեշտության պարագաների, սննդի, հագուստի և սպիտակեղենի հափշտակումները։ Օրինակ՝ 1948 թ. մայիսի 28-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանին ուղղված հաղորդագրությունում ՊԱՆ Անդրկովկասյան երկաթգծի Երևանի պահպանության վարչության բաժնի պետ Արմաղանովը հայտնում է, որ որոշ տեղեկությունների համաձայն՝ Կոտայքի շրջանի Քանաքեռ ավանում գտնվող Լենինգրադյան թիվ 58 մանկատան «տնօրեն Սարկիսովան չարաշահում է իր ծառայողական դիրքը, որն արտահայտվում է որբ երեխաներին հատկացվող սննդամթերքի վատնումով...: Երեխաների դաստիարակությունը և կենցաղային պայմանները շատ վատ պայմաններում են։ Երեխաները ծեծի են ենթարկվում անձամբ Սարկիսովայի կողմից, հաճախակի երեխաներին, որպես պատիժ, քաղցած են պահում»։ Հաղորդագրությունում նշվում է, որ մանկատանը գտնվող 150 երեխաների սանիտարական հսկողությունը անչափ վատ վիճակում է, կան ոջլոտ և տիֆով հիվանդ երեխաներ։ Մանկատան և երեխաների կարիքները հոգալու համար թեև հատկացվել են մեծ

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 74-75:

գումարներ, սակայն երեխաները առաջվա նման մնում են պատահականորեն հագուստներով և կոշիկներով: Արմաղանովը նշում է, որ ամբողջությամբ չճշտված տվյալներով (քանի որ նշված օբյեկտը իրենց օպերատիվ ծառայության մեջ չի մտնում)՝ յուրացված միջոցների հաշվին «Սարկիստվան կազմակերպում է գինարքուրի երեկոներ իր աշխատասենյակում, հրավիրելով ՀԽՍՀ լուսավորության նախարարությունից անձանց և շրջանային կազմակերպությունների ղեկավարների»: Այդ առատ հյուրասիրությունից շոյված, վերջիններս էլ մանկատանը չեն անցկացնում օբյեկտիվ ստուգումներ և թաքցնում են Սարկիստվայի աղաղակող չարաշահումները⁵:

Հանրապետության ողջ տարածքում մանկական անապատանության և թափառաշրջիկության դեմ պայքարը բարելավելուն էին միտված ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կողմից 1949-1950 թթ. ընդունված մի քանի որոշումները: 1949 թ. նոյեմբերի 19-ի և 1950 թ. հունվարի 13-ի որոշումներով, մասնավորապես, առաջնահերթ է համարվել բարելավել աշխատանքները հատկապես հանրապետության այն շրջաններում (Սպիտակ, Կիրովական, Էջմիածին և այլն), որտեղ շրջանային գործադիր կոմիտեները նշված աշխատանքներին պատշաճ ուշադրություն չեն դարձրել:

Վերը նշված որոշումների կատարումը վերահսկելու նպատակով 1950 թ. առաջին եռամսյակում ՀԽՍՀ ՆԳՆ-ի կողմից հանրապետության 8 շրջաններում անցկացված ստուգումների արդյունքում պարզվել է, որ Ալավերդիի, Սպիտակի, Կոտայքի, Ախուրյանի շրջգործկոմների հանձնաժողովները պատշաճ մակարդակով չեն զբաղվել անապատան և թափառաշրջիկ երեխաներին հայտնաբերելու, նրանց ուսման կամ աշխատանքի

⁵ ՀԱԱ, ֆ. 1, ց. 28, գ. 87, թ. 10-11:

տեղավորման և խնամակալության խնդիրներով, իսկ երեխաների ծնողները չեն ենթարկվել պատասխանատվության⁶:

ՀԽՍՀ ՆԳ նախարարի տեղակալ գեներալ-մայոր Գրիգորյանի ստորագրությամբ 1950 թ. մայիսի 3-ի տեղեկանքից պարզվում է նաև, որ 1950 թ. առաջին եռամսյակում իրավապահ մարմինների կողմից հանրապետությունում հայտնաբերվել և հավաքվել է 1281 դեռահաս, որոնցից 497-ը՝ թափառաշրջիկ, 784-ը՝ անապաստան: Երեխաներից 685-ը կամ 55,4 %-ը, հանրապետության շրջաններից էին՝ Աշտարակի՝ 86, Ապարանի՝ 74, Ալավերդիի՝ 72, Միկոյանի՝ 68, Մարտունիի՝ 66, Բերիայի՝ 60, Արթիկի՝ 46, Կոտայքի՝ 46, Ախտայի՝ 37, Սպիտակի՝ 33, Ստեփանավանի՝ 33, Թալինի՝ 33 և Կիրովականի՝ 31: 101 թափառաշրջիկ և անապաստան երեխա հանրապետություն էին տեղափոխվել Թիֆլիսի և Բաքվի հավաքման կետերից⁷:

1949-1950 թթ. դարձյալ շարունակվում էր անապաստան և թափառաշրջիկ երեխաների հոսքը դեպի Երևան: 1950 թ. ապրիլի 19-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմի վարչական բաժնի վարիչ Յա. Զարոբյանին ուղղված տեղեկանքում ՀԽՍՀ ՊԱՆ-ի միլիցիայի վարչության պետ փոխգնդապետ Մարտիրոսյանը հայտնում է, որ 1950 թ. առաջին եռամսյակում Երևանի փողոցներից և շուկաներից հավաքվել է 246 թափառակաշրջիկ և 300 խնամազուրկ երեխա՝ 1949 թ. չորրորդ եռամսյակի 270 երեխաների համեմատ: 546 երեխաներից 449 հանրապետության շրջաններից էին. Բերիայի՝ 46, Ապարանի՝ 74, Մարտունիի՝ 43, Կոտայքի՝ 32, Սևանի՝ 8, Թալինի՝ 17, Աշտարակի՝ 48, Ստեփանավանի՝ 5, Բասարգեչարի՝ 8, Ախտայի 34, Ալավերդիի՝ 6, Միսիանի՝ 3, Իջևանի՝ 6, Բայազետի՝ 15, Միկոյանի՝ 11, Էջմիածնի՝ 25, Վեդիի՝ 13, Սպիտա-

⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 30, գ. 113, թ. 218-220:

⁷ Տե՛ս նույն տեղում:

կի՝ 7, Գորիսի՝ 3, Շամշադինի՝ 5, Արտաշատի՝ 7, Արթիկի՝ 9, Ազիզբեկովի՝ 7, Կրասնոսելսկի՝ 1, Ջանգիբասաբի՝ 1, Ղուկասյանի՝ 3, Կալինինոյի՝ 1, Կիրովականի՝ 2, Լենինականի՝ 3, Նոյեմբերյանի՝ 1, Աղիսի՝ 1 և Հոկտեմբերյանի՝ 4: Նրանցից 377-ը հանձնվել են ՊԱՆ-ի երեխաների ընդունման կետեր, աշխատանքի է տեղավորվել՝ 37, մանկական հիմնարկներ՝ 125 երեխա, ընդհանուր 4300 ռուրլի գումարով տուգանվել են թափառաշրջիկ երեխաների 74 ծնողներ:

Տեղեկանքում դարձյալ արձանագրվում է, որ շրջաններից դեպի Երևան երեխաների այսպիսի մեծ հոսքը բացատրվում է նրանով, որ շրջգործկոմների համապատասխան հանձնաժողովները թերացել և չեն ապահովել ՀԽՍՀ Նախարարների խորհրդի վերը նշված որոշումների կատարումը: Իր հերթին՝ Երևանի քաղխորհուրդը չի կատարել թափառակաշրջիկ երեխաներին հավաքելու համար Երբադրաժնի միլիցիայի բաժանմունքին մեկ քննաստար մեքենա և մանկական սենյակների համար լրացուցիչ տարածքներ հատկացնելու մասին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշումը: Այդ պատճառով չեն ստեղծվել տարրական պայմաններ դրսից բերված թափառաշրջիկ երեխաներին ժամանակավոր տեղավորելու համար, իսկ առկա մանկական սենյակները ոչ միայն չեն համապատասխանում իրենց նշանակությանը, այլև տեխնիկական և սանիտարական տեսակետից պիտանի չեն երեխաներին տեղավորելու համար: Անթույլատրելի համարելով նշվածը՝ փոխգնդապետ Մարտիրոսյանը Ջարոքյանին խնդրում է համապատասխան քայլեր ձեռնարկել դրությունը շտկելու ուղղությամբ⁶:

Իսնդիրը քննարկման առարկա էր դարձել ՀԿ(ր)Կ Երևանի քաղկոմի քարտուղար Գ. Ալեքյանի նախագահությամբ 1950 թ.

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 221-223:

ապրիլի 12-ին հրավիրված քաղկոմի բյուրոյի նիստում: Այստեղ ընդունվեցին մի շարք նպատակային որոշումներ Երևանում երեխաների անապաստանությունը և խնամազրկությունը վերացնելու համար: Պահանջվեց խստացնել շրջանային խորհուրդների և ժողկրթության մարմինների; քաղաքային և շրջանային կոմերիտական և այլ կազմակերպությունների, պետական մարմինների աշխատանքները երեխաների անապաստանության և խնամազրկության դեմ պայքարում:

Ինդիլրը կարգավորելու համար բյուրոյի նիստում առանձնակի ուշադրություն հատկացվեց քաղաքի իրավապահ մարմինների աշխատանքների կազմակերպման վրա: Մասնավորապես, ՆԳՆ միլիցիայի քաղրաժնի պետ Օզանեզովին, անապաստանության և խնամազրկության դեմ պայքարի բաժնի պետ Բարայանին հանձնարարվեց Երևանում սահմանել միլիցիայի աշխատակիցների մշտական շրջագայություն և հայտնաբերված անապաստան երեխաներին հանձնել համապատասխան ընդունման կետեր կամ Լուսավորության նախարարությանը՝ արհեստագործական ուսումնարաններում և մանկատներում նրանց տեղավորելու համար: Բյուրոն որոշում է նաև պարտավորեցնել Երևանի քաղխորհրդին միլիցիայի մարմիններին հատկացնելու անհրաժեշտ տրանսպորտային միջոցներ՝ շրջաններից եկած երեխաներին իրենց բնակավայրեր վերադարձնելու համար:

ՀԽՍՀ ներքին գործերի նախարարությանը հանձնարարվում է կարճ ժամկետներում ավարտել մանկական դաստիարակչական գաղութի շենքի շինարարությունը և 1950 թ. հունիսի 1-ից ապահովել երեխաների ընդունելությունը:

ՀԿ(Բ)Կ Երևանի քաղկոմի բյուրոյում հատուկ քննարկման առարկա է դառնում նաև խնամազուրկ երեխաների ծնողներին

պատժելու հարցը: Իրավապահ մարմիններին հանձնարարվում է նմանների նկատմամբ ձեռնարկել խիստ միջոցներ և ենթարկել պատասխանատվության, իսկ այն ծնողների գործերը, որոնք կյանուսափեն իրենց երեխաներին դատախարակելուց և խնամելուց, ուղարկել դատական մարմիններին՝ դատական պատասխանատվության ենթարկելու համար: Քաղաքի դատախազությանն ու դատական մարմիններին հանձնարարվում է խստացնել ծնողների վրա ազդեցության միջոցները և ժամանակին քննել ու ընթացք տալ միլիցիայի մարմինների կողմից ներկայացված գործերը:

Բյուրոն որոշում է նաև պարտավորեցնել միլիցիայի մարմիններին ապահովելու ողորմությամբ զբաղվող անձանց պարբերաբար հավաքումը, կանխել դեռահասների կողմից իրակա-նացվող ապօրինի առևտրի դեպքերը և այլն⁹: ՀԿ(Բ)Կ Երևանի քաղկոմի բյուրոյի նշված որոշումներն աստիճանաբար կյանքի կոչվեցին:

Այսպիսով, չնայած առանձին թերություններին և բացթողումներին՝ Խորհրդային Հայաստանի իրավապահ մարմինները հետպատերազմյան առաջին տարիներին զգալի աշխատանքներ իրականացրեցին և հիմնականում դրական արդյունքների հասան երեխաների անապաստանության և թափառաշրջիկության դեմ պայքարում: Արդեն 1950-ական թթ. սկզբին նման երևույթները բավականաչափ պակասել էին, իսկ մանկական հանցավորության մակարդակը զգալիորեն նվազել:

⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 157, ց. 29, գ. 6, թ. 170:

Артем М. Варданыан, *Институт истории НАН РА*, Борьба МВД Армянской ССР против детского бездомничества и бродяжничества в первые послевоенные годы – Отечественная война 1941-1945 гг. причинила Армянской ССР не только огромные человеческие потери и страдания, но и оставила бездомными и беспризорными тысячи детей. Значительная часть бездомных детей была вовлечена в разные круги криминальных группировок, занималась грабежами, незаконной торговлей и т.д. В послевоенные годы, несмотря на некоторые упущения, правоохранительные органы республики, и в первую очередь – МВД, провели большую работу по искоренению беспризорства и бродяжничества, сокращению детской преступности.

Artem M. Vardanyan, *NAS RA Institute of History*, Homelessness and Vagrancy of the ArmSSR Ministry of Internal Affairs During the First Post-War Years - The Patriotic War of 1941-1945 did not only cause severe human losses to Soviet Armenia, but thousands of children were left homeless and became vagabonds. A significant part of homeless children were involved in various criminal groups engaged in looting and illegal trade.

In the post-war years, notwithstanding some omissions, the law enforcement bodies of the Republic, in the first place-the Ministry of Interior Affairs, implemented enormous amount of work to eradicate the homelessness and vagrancy, to reduce juvenile delinquency in the Republic.

ԱՐՄԵՆԱԿ Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՀ, պ.գ.դ., պրոֆեսոր

ԱՅԼԱԽՈՒԹՅԱՆ ԴԻՍԵՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի բառեր և սրբահայրություններ՝ Խորհրդային Հայաստան, Մեծ Եղեռն, Ազգային միացյալ կուսակցություն, այլախոհություն, ազգային զարթոնք, գաղտնի խմբեր:

Ժամանակակից Հայաստանում առայժմ, որոշակի, ուսումնասիրության առարկա է դարձել խորհրդային ժամանակահատվածի 1920-1950-ական թվականների քաղաքական կյանքը¹, և նորովի ու խորությամբ չեն հետազոտվել հետագա տարիների քաղաքական գործընթացները, այդ թվում՝ այլախոհությունը: Բացառությամբ մեր աշխատության², այլ գիտական հետազոտություններ դեռևս չեն կատարվել: 2014 թ. լույս է տեսել Հայաստանի այլախոհական շարժման մասնակից Վ. Հարությունյանի «Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում» ծավալուն գիրքը³, սակայն գիտական տեսանկյունից այն իրենից գրեթե որևէ արժեք չի ներկայացնում, քանի որ աղբյուրներն այդ շարժման մասնակիցների հուշերն են, իսկ փաստացի այլ նյութերը հիմնականում վերցված են մեր վերոնշյալ աշխատությունից:

¹ Տե՛ս Մանուկյան Ա., Քաղաքական բռնաճշմունքը Հայաստանում 1920-1953 թթ., Երևան, 1999, Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև հյրուշյուկ, հասարակական-քաղաքական կյանքը (1945-1957 թթ.), Եր., 2001, Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Երևան, 2002, Ղազախեցյան Վ., 1937-ը Հայաստանում, Երևան, 2004, Հայոց պատմություն, հ. 4, գ. 1. Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան, 2010, էջ 510-524:

² Մանուկյան Ա., Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ., Երևան, 2005:

³ Հարությունյան Վ., Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Երևան, 2014:

Այլախոհությունը Հայաստանում ձևավորվել է 1960-ականներին, ունեցել է իր յուրահատկությունները, կրել է զուտ ազգային բնույթ, և նրա գործիչները ևս որոշակի դերակատարում են ունեցել վերոնշյալ ժամանակահատվածի քաղաքական իրադարձություններում, ինչպես նաև այդ շարժման առանձին ներկայացուցիչներ դարձել են ԽՍՀՄ-ի գոյության վերջին շրջանի և անկախ հանրապետությունների ձևավորման ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների ակտիվ մասնակիցները: Հայաստանում, այլախոհության ճանաչված գործիչ, Արցախյան շարժման ակտիվ մասնակից Աշոտ Նավասարդյանի հիմնադրած Հայաստանի Հանրապետական կուսակցությունը երկար տարիներ կարևոր դերակատարություն ունի հանրապետության քաղաքական կյանքում:

Դրանից կարելի է եզրակացնել, որ այլախոհական շարժման ուսումնասիրությունն ունի ոչ միայն պատմագիտական, տեսական քաղաքագիտական, այլև՝ արդիական ու գործնական նշանակություն:

Տվյալ խնդրի ուսումնասիրությունը զգալիորեն բարդանում է նրանով, որ, հասկանալի պատճառներով (խմբերն ու անհատները գործել են գաղտնի), հանրապետության արխիվներում՝ քացառությամբ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության արխիվի (ՀՀ ԱԱԾԱ) չեն պահպանվել այդ շարժմանը վերաբերող փաստաթղթեր: Ի նկատի ունենալով, որ ՀՀ ԱԱԾ արխիվի այդ խնդրին առնչվող նյութերը չեն կարող ամբողջությամբ ներկայացնել իրականությունը, հնարավորինս անաչառ լինելու համար հարկ է օգտագործել մամուլում տեղ գտած ոչ մեծաքանակ հոդվածները, մեծ վերապահումներով՝ այդ շարժման մասնակիցների հուշերը և այլ հրապարակումները, համեմատություններ կատարել ԽՍՀՄ-ում տեղի ունեցող նմանատիպ գործընթացների հետ: Այդ տարիներին Արևմտյան երկրներում հրապարակված

նյութերը ևս անաչառ չի կարելի համարել, քանի որ նրանք թշնամաբար էին տրամադրված ԽՍՀՄ-ի նկատմամբ, ինչպես նաև այն պատճառով, որ դրանք հիմնականում ԽՍՀՄ-ում գործող այլախոհների կողմից ուղարկված նյութերն էին, ովքեր, հասկանալի պատճառներով, աշխատում էին ավելին ցույց տալ, քան կար իրականում և ընդգծել հատկապես իրենց դերակատարությունը:

1950-ական թվականներից Խորհրդային Հայաստանում ևս սկիզբ էր առնում որոշ չափով վերևից թույլատրված, իսկ որոշ չափով էլ՝ ինքնաբերական ձևով հասունացող ազգային-քաղաքական գաղթոնքի ալիք: Ընդ որում, այն մտնում էր ժողովրդի գիտակցության մեջ, առաջին հերթին քարոզչության ավելի լայն հնարավորություններ ունեցող արվեստի ու, մասնավորապես, գրականության միջոցով⁴:

Ամբողջատիրական արգելքների և մարդկային քնական ձգտումների սանձահարման պայմաններում ԽՍՀՄ-ում (քնականաբար և Խորհրդային Հայաստանում) ձևավորվել էր սոցիալապես անտարբեր մարդկանց տեսակ, որը տոգորված էր հեզնանքով և վատատեսությամբ⁵: Այդ պայմաններում այլախոհությանն անդամագրվելն արդեն իսկ պահանջում էր որոշակի համարձակություն:

Այլախոհության պատմությունը խորհրդային տարիների ընդհանուր պատմության կարևոր մասն է կազմում: Նրա գիտական ուսումնասիրությունը նոր է սկսվել հետխորհրդային երկրներում, մասնավորապես Ռուսաստանում: Սակայն դրանցում դեռևս ամբողջական չի ներկայացվում հանրապետություն-

⁴ Մանրամասն տե՛ս Խոլոդինյան Գ., Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն, Երևան, 2003, էջ 19:

⁵ Политический процесс: Основные аспекты и способы анализа, под ред. Мелешкиной Е.Ю., Москва, 2001, с. 126.

ներում տեղի ունեցող իրադարձությունները, ինչը բացատրվում է նաև տեղերում այդ խնդրի թույլ կամ ընդհանրապես ուսումնասիրված չլինելու իրողությամբ: Այսպես, օրինակ, այլախոհության պատմության շրջանները ներկայացնող «Մեմորիալ» կայքում Հայաստանից ներկայացված է միայն 1977 թ. Ռ. Նազարյանի ստեղծած Հայաստանյան Հելսինկյան խումբը⁶: Հայաստանում հրապարակված հիմնականում հրապարակախոսական հուշերի քննություն կրող գրքույկներում ու հոդվածներում անդրադարձ է կատարվել հանրապետությունում այդ տարիներին գործող այս կամ այն խմբի գործունեությանը և անհատներին, որոնք, քնականաբար, ամբողջական և անաչառ պատկերացում չեն տալիս այդ երևույթի մասին⁷: Այդ խնդիրը նաև մեր կողմից արծարծվել է մամուլում:

Ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները Հայաստանում այլախոհության դրսևորումներն առաջին անգամ նկատվել են 1940-ական թվականներին⁸, երբ հակախորհրդային գործունեության համար ձերբակալվեցին երկու ընդհատակյա կազմակերպության անդամներ, որոնց մեծ մասը ուսանողներ էին: Այդ խմբերից մեկի ղեկավարներն էին՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Ռուանդ Լիսիցյանը և նույն ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող Շավարշ Սմբատյանը⁹:

⁶ [http://www.memo.ru\(history\)diss/hronvvcvcd.htm](http://www.memo.ru(history)diss/hronvvcvcd.htm).

⁷ Ամնահույության գիտք, Հ.Նավասարդյան, Երևան, 1998, Մերուժան, Վլադիմիրյան Բանտում, Երևան, 2003, «Առերեսում» թիվ 4, 1994, «Հայք», 15 նոյեմբերի 1997, 29 նոյեմբերի 1997, «Լրագիր», 4 դեկտեմբերի 1996, «Մուրթակ», 1 ապրիլի 1997, 2, 3 դեկտեմբերի 1997, 25 դեկտեմբերի 1997 և այլն:

⁸ Տե՛ս «02», 20 հոկտեմբերի, 4,11,18 դեկտեմբերի 1997, 10,17 հունվարի 1998:

⁹ Մանրամասն տե՛ս Մանուկյան Ա., Բաղաբական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., էջ 222-227:

ԽՍՀՄ-ում 1960-ականի կեսերին ձևավորվեց այլախոհական շարժումը, որը միատարր չէր, քանի որ նրանում տեղ էին գտնվ թե՛ միապետական, թե՛ անարխիստական և թե՛ տեխնոկրատական, ինչպես նաև ազգայնամոլական հայացքների տեր մարդիկ: Ըստ էության, այլախոհությունը միավորում էր միայն նրանց հասարակական կեցվածքը:

Որոշ հետազոտողներ, ընդունելով, որ այդ շարժման ճշգրիտ դասակարգումը կհանգեցնի խնդրի պարզունակւնացմանը, այնուամենայնիվ, ընդհանուր գծերով ԽՍՀՄ-ում առանձնացնում են 3 հիմնական ուղղություն՝ լենինյան-կոմունիստական (պայմանական առաջնորդ՝ Ռոյ Մեդվեդև), ազատական-ժողովրդավարական (Անդրեյ Սախարով) և կրոնաազգայնական (Ալեքսանդր Սոլժենիցին): Ինչպես նկատելի է, ժամանակի ընթացքում վերոհիշյալ ուղղությունների առաջնորդներ դարձած գործիչներն արմատական տարբերություններ ունեին իրենց հայացքներում, ուստի չի կարելի խոսել այդ շարժման միասնության մասին¹⁰: Առավել ևս դա ակնհայտ է, երբ համեմատում ենք Ռուսաստանում, մասնավորապես, նրա խոշոր քաղաքներում և ազգային հանրապետություններում գործող այլախոհության դրսևորումները:

Երբ այն համեմատում ենք Հայաստանում տեղի ունեցող գործընթացների հետ, ապա ակնհայտ է, որ Հայաստանում այլախոհությունը հիմնականում կրում էր ազգային բնույթ և որևէ գործնական կապ այլ հանրապետությունների նմանատիպ կամ այլ բնույթի այլախոհական շարժումների հետ գրեթե չուներ:

Քանի որ այլախոհությունը միատարր շարժում չէր ԽՍՀՄ-ում, ուստի դեռևս դժվար է հստակ հիշատակել, թե՛ ինչքան մարդ էր ներգրավված նրանում: Թերևս, մինչև օրս նման փորձ

¹⁰ Бюффа Джузеппе, От СССР к России, Москва, 1996, с. 88.

է արվել ԽՍՀՄ այլախոհական շարժման մասնակից Լ. Ալեքսեևայի կողմից, որն առաջինն է համարձակվել հետազոտություններ կատարել այդ խնդրի շուրջ: Ըստ նրա՝ այդ թիվը մոտ կես միլիոն մարդ է, որը, քանակի առումով, մեծ չէ 280 մլն բնակչություն ունեցող երկրի համար¹¹:

ԽՍՀՄ-ում հայտնի այլախոհական շարժումն իր ուրույն դրսևորումն ունեցավ Հայաստանում, որի առաջնահերթ խնդիրներն էին՝ հայոց կորուսյալ հողերի վերամիավորումը, ազգային կերպարի ու լեզվի անաղարտության պահպանումը և անկախ Հայաստանի ստեղծումը:

Հայաստանի այլախոհական շարժումը, մեր կարծիքով, կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ հիմնական փուլերի.

1. 1953-1962 թթ.՝ նախապատմության կամ նախապատրաստման շրջան,

2. 1962-1966 թթ.՝ կազմակերպչորեն ձևավորման կամ ծնունդի շրջան,

3. 1966-1980 թթ.՝ ակտիվ գործունեության շրջան,

4. 1980-1985 թթ.՝ անկման շրջան:

Դրանք, որոշակի վերապահումներով, համընկնում են ԽՍՀՄ-ի այլախոհական շարժման փուլերի հետ, որտեղ 1956-1967 թթ. բնութագրվում են որպես նախապատմության և ծնունդի, 1968-1972 թթ.՝ համախմբման և ընդարձակման, 1972-1974 թթ.՝ ճգնաժամի, 1975-1979 թթ.՝ «Հեղինկյան» և 1980-1984 թթ.՝ մայրամուտի շրջաններ:

Ինչպես նկատելի է, Հայաստանի այլախոհական շարժման սկիզբը չի սկսվում 1940-ականներից, քանի որ գտնում ենք, որ այդ տարիների մասնակի «ընդվզումները» չեն դարձել շարունակական և, որ ամենակարևորն է, «այլախոհություն» եզրը հասա-

¹¹ Նույն տեղը, էջ 87:

րակական և ապա նաև գիտական շրջանառության մեջ է մտել 1960-ականներից՝ արտասահմանից, ուստի մինչ այդ տեղ գտած դրսևորումները չի կարելի նույն կերպ բնորոշել:

Հայ ժողովուրդն իր գիտակցության մեջ կրում էր հայկական պատմական տարածքների կորստյան չմարող գաղափարը և հենց այդ հողի վրա դրսևորվեցին հանրապետությունում սկիզբ առած այլախոհական (հակախորհրդային) կազմակերպությունները, որոնք, բնականաբար, առաջ էին քաշում նաև անկախության և ազատության կարգախոսներ:

Հասարակության մեջ ազգային գաղափարների առկայության ցայտուն վկայությունն էր 1965 թ. ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցած զանգվածային ցույցերն ու հանրահավաքները՝ կապված Եղեռնի 50-ամյակի հետ¹²: Այդ, փաստորեն, ինքնաբույե ելույթների հիմնական պահանջը պատմական հողերի վերադարձն էր: Այստեղ աներաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել նաև այն իրողությանը, որ հանրապետության ղեկավարության ջանքերի շնորհիվ՝ ԽՍՀՄ ղեկավարությունն առաջին անգամ թույլ էր տվել այդ օրվա կապակցությամբ հասարակության ներկայացուցիչների ժողով կազմակերպել Երևանի օպերայի և քալեստի շենքում, կառուցել Եղեռնի գոհերին նվիրված հուշարձան, ինչպես նաև՝ հողված էր տպվել կենտրոնական մամուլում և այլն: Դա, փաստորեն, ԽՍՀՄ-ի տարածքում հետպատերազմյան տարիների առաջին զանգվածային ելույթն էր քաղաքական պահանջներով, որը նույն օրը ճնշվեց իրավապահ մարմինների կողմից: Ինչպես հայտնի է, այդ ելույթների հետևանքով իր պաշտոնից ազատվեց ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Յա. Զա-

¹² «Հայք», 15 նոյեմբերի 1997, Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, խմբ.՝ Ա. Հարությունյանի, Երևան, 2005:

րոքյանը, որը մեծ ավանդ ունի 1960-ականների ազգային զարթոնքի մեջ¹³:

Միաժամանակ ուշագրավ է այն, որ «հասարակական կարգը խախտելու» և «խուլիզանության» համար մի քանի օրով դատապարտվեցին ելույթների որոշ մասնակիցներ, սակայն քաղաքական դատապարտություններ և երկարաժամկետ դատապարտվածներ չեղան: Կարծում ենք, որ դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ հանրապետության այդ տարիների ղեկավարությունը և ելույթների մասնակիցները (ինչպես նաև չմասնակցածների զգալի մասը) ունեին ազգային որոշակիորեն միանման մոտեցումներ, հատկապես, անարդարացիորեն կորսված հայկական պատմական հողերի վերամիավորման հարցում:

Այլ կազմակերպությունների գործունեությանը զուգընթաց՝ 1960-ական թվականների կեսերին Հայաստանում ստեղծվում ու գործում է «Ազգային միացյալ կուսակցություն», ընդհատակյա կազմակերպությունը, որը զգալի ազդեցություն է թողել իրենից հետո հանրապետությունում գործող գրեթե բոլոր այլախոհների վրա, առավել ևս, որ այդ խումբը ոչ միայն փորձեց գաղտնի կուսակցություն ստեղծել, այլև կազմեց տվյալ կուսակցության ծրագիրը, կանոնադրությունն ու երդման տեքստը: Նրա կազմակերպիչներ և ղեկավարներ՝ Հայկազ Խաչատրյանը, Ստեփան Զատիկյանը և Շահեն Հարությունյանը 1969 թ. հունվարի 3-ին համապատասխանաբար դատապարտվեցին 5, 4 և 1 տարի ազատազրկման: Մինչ այդ՝ 1966 թվականի ապրիլի 24-ին, նրանք ժողդատարանի որոշմամբ՝ հակահասարակական արարքի համար կալանավորվել էին 15 օրով և ուղարկվել Երևանի թ. 1 քննչական մեկուսարան, որտեղ և ծանոթացել ու մտերմացել էին: 1967 թվականի սկզբներին նրանք «մասսաների մեջ հակա-

¹³ "Новое время", 27 сентября 2003, "Голос Армении", 27 сентября 2003.

սովետական ազիտացիա և պրոպագանդա անելու նպատակով, ստեղծել են անլեզալ կազմակերպություն և անցել կոնկրետ գործունեության»¹⁴: ԽՄԻ ատաջին քայլերից էր 1967 թվականի ապրիլի 24-ին «Փարոս» անունով 200 օրինակ թողուցիկ պատրաստելը և տարածելը Երևանում, որտեղ հողվածներ էին տպված «Ապրիլի 24», «Հայ ժողովրդին» վերնագրերով՝ հեղինակված Շ. Հարությունյանի և Հ. Խաչատրյանի կողմից: Նրանք «իրենց անլեզալ հակապետական կազմակերպական գործունեությունը ավելի կոնկրետ ու կազմակերպված դարձնելու նպատակով որոշել են Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում ստեղծել առանձին, գաղտնի «Ազգային միացյալ կուսակցություն»՝ իր ծրագրով ու կանոնադրությամբ, որը հիմնականում գրվել է Հայկազ Խաչատրյանի կողմից, սակայն ուղղվել է և վերջնական տեքստը մշակվել է Ստեփան Զատիկյանի և Շահնն Հարությունյանի անմիջական մասնակցությամբ: Անձամբ Հարությունյանը կազմել է նաև այդ կուսակցության անդամի հարցաթերթիկը, իսկ Ստեփան Զատիկյանը՝ երդումը»¹⁵: 1976 թ. գարնանը սփյուռքի մի շարք պարբերականներում ԱՄԿ գործունեության տասնամյա տարեդարձի կապակցությամբ հրապարակվեց մի հաղորդագրություն, որը, բնականաբար, ուղարկվել էր Հայաստանից¹⁶:

Այլախոհական շարժումը ԽՍՀՄ-ում և, մասնավորապես, Հայաստանում ունեցել է իր առաջացման օրյեկտիվ և սուրյեկտիվ պատճառները: Դրանց օրյեկտիվ կողմը կարելի է բնութագրել հասարակական-քաղաքական ամբողջատիրական համա-

¹⁴ ՀՀ ԱԱԾԱ ԿԳՖ (Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության կարճված գործերի ֆոնդ), գ. 10643, թ. 428:

¹⁵ Նույն տեղում, թ. 428-429:

¹⁶ «Ազդակ», 17 ապրիլի 1976, «Հայրենիք», 5 մայիսի 1976, «Արմենիա», 16 մայիսի 1976:

կարգի գործունեությունից բխած գործունեերով, որոնց մեջ առանձնակի նշանակություն ունենի չլուծված տնտեսական բնույթի բազմաթիվ հարցերը: Այսինքն՝ նման շարժումների առաջացման համար, նույնիսկ խրուշչովյան ձևալից հետո պարարտ հող էր մնացել, քանի որ ստալինյան մենատիրական համակարգ, ըստ էության, չիօխվեց, այլ մասնակիորեն վերաձևեց:

Այդ գաղափարախոսությունը, անկախ հասարակարգի բնույթից, առկա էր Խորհրդային Հայաստանում և արտահայտվում էր հասարակության բոլոր շերտերում՝ անգամ կոմկուսի և կառավարության բարձր խավերում: Գ. Հարությունյանը ԽՍՀՄ ղեկավարության առաջ բարձրացրեց Լեոնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու, Յա. Զարոբյանը՝ Հայոց մեծ եղեռնի օրը նշելու, զոհերի հիշատակին հուշարձան կառուցելու թույլտվության հարցերը և այլն: Այժմ մեզ հայտնի է նաև, որ նման հարցեր են բարձրացրել նաև նրանց հետնորդները՝ Ա. Քոչինյանը և Կ. Դեմիրճյանը¹⁷: Դրա ցայտուն դրսևորողներն էին դարձել արտասահմանում գործող հայ ավանդական կուսակցությունները: Առավել ևս դրա մասին են վկայում Հայաստանում գործող ազգայնական խմբերի ծրագրերում և գործունեության մեջ տեղ գտած դրույթները: Ինչպես ԽՍՀՄ-ում ամբողջապես, այնպես էլ Հայաստանում հասարակության լայն զանգվածների վրա «այլախոհության» գործնական, անմիջական ազդեցության մասին խորը ուսումնասիրություններ չկան՝ չնայած, ակնհայտ է, որ, ելնելով վերջիններիս փոքրաքանակությունից ու նրանց գաղափարների տարածման օբյեկտիվորեն գրեթե աննշան հնարավորություններից, կարելի է եզրակացնել այդ ազդեցության թուլության մասին:

¹⁷ Տե՛ս Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, էջ 162-167, 232-247:

Այդ առումով հետաքրքիր են պրոֆեսոր Գ. Անանյանի ուսումնասիրությունները և եզրակացությունները Հայաստանում «ինքնահրատի» մասին, որը նա իրավացիորեն սկսում է 1967 թ. լույս տեսած Ազգային միացյալ կուսակցության «Փարոս» թերթից մինչև 1988 թվականը: Հեղինակը մասնավորապես, նշում է, որ «Ինքնահրատ» պարբերականները որոշակի հետք, այնուամենայնիվ չթողեցին հասարակական կարծիքի վերափոխման ընթացքի վրա և ներկայացնում է դրանց պատճառները¹⁶:

Մյուս առանձնահատկությունը կարելի է համարել այն, որ Հայաստանի գաղտնի խմբերը, փաստորեն, չէին համագործակցում ԽՍՀՄ-ի մյուս այլախոհական շարժումների հետ: Բնական է, որ զուտ դատական գործերից հնարավոր չէ ամբողջական տեղեկատվություն ստանալ այդ մասին, սակայն հաշվի առնելով այդ հանգամանքը, այնուամենայնիվ, չենք սխալվի, եթե պնդենք այդ կապերի փաստացի բացակայության մասին:

Գաղտնի խմբերի գործունեության հիմնական ձևերն էին հավաքույթների կազմակերպումը, թերթերի, թոռուցիկների պատրաստումը և տարածումը, «ինքնահրատ», «հակախորհրդային» գրականության ձեռք բերումը և տարածումը, հնարավորության դեպքում, ցույցերի կազմակերպումը (հատկապես Հայոց մեծ եղեռնի տարեդարձերի օրերին), երբեմն, իրենց պատրաստած փաստաթղթերը արտասահման հասցնելը և հրապարակելը: Հայաստանում ևս նկատվում է «անթույլատրելի» երգերի տարածումը (այն ինչպես Ռուսաստանում, առանձին երգարվեստի ժանր չդարձավ, քանզի զուտ հայկական-ազգային երգեր էին տարածում): Երբեմն նրանց գործունեությունը դրսևորվում էր շենքերի պատերին «հակախորհրդային» գրություններով կամ կուսակցության առաջնորդների նկարները վա-

¹⁶ Անանյան Գ., Արդի Հայաստանի լույսն ու ստվերը, Երևան, 2001, էջ 12-18:

ներու միջոցով: Միաժամանակ կարելի է նշել, որ այդ շարժումը միասնական չէր:

ԽՍՀՄ-ում, այդ թվում և Խորհրդային Հայաստանում, քանակական առումով այնքան էլ մեծ չէր «քաղաքական համոզմունքների» կամ այլախոհության համար դատապարտվածների թիվը, բանի որ 1970-ականներից փոխվել էին այդ երևույթի դեմ իշխանությունների կողմից կիրառվող պայքարի ձևերը: Մասնավորապես, աշխատում էին հնարավորինս քիչ մարդկանց դատապարտել բանտարկության կամ արքորի և սահմանափակվում էին նախազգուշացմամբ:

Այլախոհությունը Խորհրդային երկրի հետպատերազմյան ժամանակաշրջանի, այդ թվում և Խորհրդային Հայաստանի քաղաքական կյանքի անբաժանելի և ուսանելի դրսևորումն էր, որի իմացությունն ավելի ամբողջական է դարձնում նշված տարիների պատմության վերաբերյալ մեր պատկերացումը:

Арменак С. Манукян, ЕГУ, д.и.н, профессор - Этапы проявления инокомыслия в Советской Армении и трудности изучения проблемы - Трудности изучения инокомыслия в СССР, в частности Армянской ССР заключается в том, что диссиденты действовали в подполье, в связи с чем не сохранились документальные материалы об их деятельности, за исключением документов сохранившихся в следственных делах осужденных. Понятно, что необходимо критически относиться к этим материалам, а также к мемуарам участников данного движения. Несмотря на эти трудности нами определены основные этапы проявления инокомыслия в Советской Армении: 1. 1953-1962 – предистория или этап подготовки, 2. 1962-1966 - организационное формирование или этап рождения, 3. 1966-1980 - этап активной деятельности, 4. 1980-1985 - этап спада.

Armenak S. Manukyan, *USU, Doctor of Historical Sciences, Professor* - The Stages of Dissidence Manifestation in Soviet Armenia and the Difficulties of Their Study - The difficulties of the study of dissidence in the Soviet Union, particularly in the Armenian SSR, lies in the fact that the dissidents acted underground, therefore no documentary materials on their activities, except for the documents in the investigation files of the convicted dissidents were preserved. It is clear that one should critically approach these materials, as well as to the memoirs of the members of the given movement. Despite these difficulties, we have defined the stages of dissidence manifestation in Soviet Armenia:

1. 1953-1962-prehistory or the preparation stage, 2. 1962-1966-organizational formation or the stage of birth, 3. 1966-1980-the stage of intensive activities, 4. 1980-1985-the stage of decline.

ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ԳԱԱ պապանության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

ՀՀ ԵՎ ՌԴ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԿՋԲՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1991-2008 ԹԹ.

Բանալի բառեր՝ ՀՀ, ՌԴ, առևտրատնտեսական հարաբերություններ, համագործակցություն, տնտեսություն, ռուսական կապիտալ, ձեռնարկություն:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական կապերի զարգացումը հայ-ռուսական համագործակցության կարևորագույն քաղաքրիչներից է: Այն բխում է երկու երկրների ռազմավարական շահերից, քանի որ մի կողմից նպաստում է ՀՀ տնտեսական դիրքերի ամրապնդմանը, ինչը տարածաշրջանային ուժերի հավասարակշռությունը պահպանելու լուրջ գործոն է, իսկ մյուս կողմից՝ Անդրկովկասում ՌԴ-ի ազդեցության պահպանմանն ու նրա առաջխաղացմանը դեպի Մերձավոր և Միջին Արևելքի շուկաներ:

1991-2008 թթ. ՀՀ և ՌԴ միջև աստիճանաբար ձևավորվեցին տնտեսական կապերի առավել արդյունավետ ձևեր: Վերջինների հաստատման հիմքը դրվեց 1991 թ. դեկտեմբերի 2-ին Մոսկվայում ստորագրված՝ ՀՀ և ՌԴ միջև 1992 թ. առևտրատնտեսական համագործակցության սկզբունքների մասին համաձայնագրով¹: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշ-

¹ Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն. արտաքին քաղաքականություն. երկկողմ հարաբերություններ, Ռուսաստան, ստորագրված փաստաթղթեր, //www.mfa.am/hy/country-by-country/ru.

նության միջև բարենկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին 1991 թ. դեկտեմբերի 29-ի պայմանագրի 10-րդ կետով՝ կողմերը պարտավորվեցին տնտեսական և առևտրային հարաբերությունները կառուցել «առավելագույն բարենպաստ ռեժիմ ապահովելու հիման վրա»²:

Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստակառողիված իրավական հենքի ձևավորման բուռն գործընթացը սկիզբ առավ 1992 թ.: Այս առումով կարևոր նշանակություն ունեցավ ՌԴ վարչապետ Ե. Գայդարի նույն թվականի սեպտեմբերի 30-ին Երևան կատարած այցը, որի ընթացքում ստորագրվեցին միջկառավարական մի շարք համաձայնագրեր՝ միջպետական տնտեսական կառուցվածքների ստեղծման, առևտրատնտեսական համագործակցության և համաձայնեցված դրամավարկային ու արժույթային քաղաքականության, առևտրական ներկայացուցչությունների փոխադարձ հիմնման (1995 թ. ՌԴ-ում սկսեց գործել ՀՀ առևտրական ներկայացուցչությունը, իսկ 2006 թ.՝ ՀՀ-ում ՌԴ առևտրական ներկայացուցչությունը) վերաբերյալ³: Հատկապես կարևոր էր Հայաստանի և Ռուսաստանի կառավարությունների միջև Ազատ առևտրի մասին համաձայնագրի ստորագրումը, որը միտված էր երկու երկրների միջև առավել բարենպաստ առևտրային ռեժիմի հաստատմանը⁴, ինչպես նաև Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի Հայաստան կատարած պաշտոնական այցի ընթացքում 2001 թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված՝ ՀՀ և ՌԴ մինչև 2010 թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության մասին պայմա-

² Դիվանագիտական բանբեր, Վենետիկ, 1993, էջ 12:

³ Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն. արտաքին քաղաքականություն, երկկողմ հարաբերություններ, Ռուսաստան, ստորագրված փաստաթղթեր, //www.mfa.am/hy/country-by-country/ru.

⁴ Տե՛ս նույն տեղում:

նագիրն ու ՀՀ և ՌԴ միջև սինչև 2010 թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագիրը⁵:

Առևտրատնտեսական համագործակցության բնագավառում իրավապայմանագրային լայն դաշտի ստեղծումը ամուր հենք հանդիսացավ տվյալ ոլորտում երկու երկրների միջև բազմաշերտ հարաբերությունների զարգացման համար: Հայաստանի և Ռուսաստանի միջև տնտեսական կապերի խթանման էր նպատակուղղված նաև ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ստեղծումը, որի անդրանիկ նիստը կայացավ 1997 թ. հուլիսի 1-ին Երևանում:

2000-ական թթ. հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների առանձնահատկություններից էր Հայաստանի տնտեսության հատկապես ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներ ռուսական կապիտալի ներթափանցման գործընթացի ծավալումը: Արդեն 2007 թ.⁶ նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ տնտեսության մեջ ռուսական ներդրումների ծավալն աճեց ավելի քան 5 անգամ, ինչը կազմում էր հանրապետության տնտեսության իրական հատվածում արված օտարերկրյա ներդրումների շուրջ 38 %-ը և ուղղակի ներդրումների 32,6 %-ը⁶: 1991-2008 թթ. ՌԴ-ն ՀՀ-ում շուրջ 3 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումներ էր կատարել, ինչը տվյալ ժամանակահատվածում Հայաստանի տնտեսության մեջ կատարված օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալի կեսից ավելին էր կազմում⁷: Այդ

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. հրապարակումներ ըստ տարեթվերի. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 125 // www.armstat.am.

⁷ Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն. արտաքին քաղաքականություն, երկկողմ հարաբերություններ, Ռուսաստան, առևտրատնտեսական կապեր, // www.mfa.am/hy/country-by-country/ru.

ներդրումները հինականում ուղղվում էին էներգետիկ, բանկային, մետալուրգիական, կապի, տրանսպորտի և այլ ոլորտներ: Արդեն 2007 թ. Հայաստանում գործում էր ռուսական կապիտալով շուրջ 1000 ձեռնարկություն, ինչը կազմում էր օտարերկրյա կապիտալով հանրապետությունում գործող ձեռնարկությունների ավելի քան 25 %-ը⁶:

Հայաստանի տնտեսության ենթակառուցվածքների մեջ ռուսական կապիտալի ներթափանցման ուժեղացումը քաղաքական և հասարակական շրջանակներում տարաբնույթ մեկնարկություններ էին առաջացնում: Ի հայտ եկան տեսակետներ, թե դրանով մեծանում էր ՀՀ կախվածությունը Ռուսաստանից⁷: Նման մտահոգությունները ընական էին, քանի որ, նախընտրելի կլիներ, եթե Հայաստանում խոշոր ներդրումներ կատարեին նաև այլ երկրների ընկերություններ: Այս առումով նշենք, որ, թեև հանրապետությունում ներդրումներ էին իրականացնում նաև ֆրանսիական, արգենտինյան, ամերիկյան, իտալական, իրանական և այլ օտարերկրյա ընկերություններ, սակայն, վերջինները Հայաստանը դիտարկելով որպես փոքր շուկա, ի տարբերություն ռուսական ընկերությունների, այնքան էլ հակված չէին այստեղ տարբեր ոլորտներում խոշորածավալ ներդրումներ կատարել:

2000-ական թվականների կեսերից ՀՀ և ՌԴ միջև տարեց-տարի աճում էին առևտրաշրջանառության ծավալները: Այսպես,

⁶ St'u Министерство экономического развития Российской Федерации: внешнеэкономическая деятельность; двустороннее сотрудничество; экономическое сотрудничество со странами СНГ; справка по Республике Армения, 13.06.2012, // www.economy.ru.

⁷ St'u Մարտիրոսյան Արա, Ինչու Ռուսաստանը և ռուսական կապիտալը ինչպես են զարգանում հայ-ռուսական տնտեսական հարաբերությունները, Ազգ, 28.02. 2012:

եթե 2004 թ. այն կազմում էր 208 մլն ԱՄՆ դոլար, 2005 թ.¹⁰ 426 մլն, իսկ 2006 թ.¹¹ 704 մլն ԱՄՆ դոլար¹²: Ռուսաստանը Հայաստանի համար ավանդաբար հանդիսանալով մեծ շուկա, դարձավ նրա առևտրային խոշորագույն գործընկերը, որին 2007 թվականին բաժին էր ընկնում մեր երկրի արտաքին առևտրի 16 %-ը¹³: ՀՀ-ից ՌԴ արտահանվող հիմնական ապրանքատեսակներն էին՝ սննդամթերք, ըմպելիքներ և գյուղատնտեսական ապրանքներ (արտահանման ծավալների ավելի քան 60 %-ը¹²), մշակված աղամանղներ, թանկարժեք քարերից և մետաղներից պատրաստված իրեր, սինթետիկ կաուչուկ, մեքենասարքավորումներ, թեթև արդյունաբերական արտադրանք և այլն:

ՌԴ-ից ՀՀ ներմուծվող ապրանքատեսակնու շուրջ 40 %-ը¹³ կազմում էր հանքահումքային արտադրանքը՝ առավելապես վանդիքաձևերգետիկ ռեսուրսներ (գազ, նավթամթերք, միջուկային վառելիք): Հայաստան էին ներմուծվում նաև գյուղատնտեսական ապրանքներ, պարենամթերք, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ, տրանսպորտի ու կապի միջոցներ, քիմիական արդյունաբերության արտադրանք, թանկարժեք քարեր (հիմնականում չմշակված աղամանղներ), մետաղներ, փայտանյութ և այլն: Երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի ամրապնդմանը մեծապես նպաստում էր համագործակցությունը վառելիքաձևերգետիկ համալիրում: Համաձայն Հայկական

¹⁰ Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. հրապարակումներ ըստ տարեթվերի. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2004, 2005, 2006, 2007 թթ. հունվար-դեկտեմբերին, էջ 135-137, 126-128, 123, // www.armstat.am.

¹¹ Տե՛ս նույն տեղում ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 123:

¹² Տե՛ս նույն տեղում:

¹³ Տե՛ս նույն տեղում:

ատոմային էլեկտրակայանի ապակոնսերվացման և արդյունաբերական վերագործակման մասին ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև 1994 թ. մարտի 17-ին ստորագրված համաձայնագրի՝ ռուսական կողմն աջակցություն ցուցաբերեց Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող այդ ռազմավարական օբյեկտի վերագործարկման աշխատանքներում: ՀՀ կառավարության և ռուսաստանյան «Գազպրոմ» ԲԸ-ի միջև 1997 թ. հունվարի 18-ին Մոսկվայում կնքված՝ Հայաստանի տարածքում գազամուղների կառուցման և շահագործման, հանրապետության տարածքով ռուսական գազի տարանցման, էլեկտրաէներգիայի արտադրության և երրորդ երկրներ դրա տարանցման մասին համաձայնագրի հիման վրա, նույն թվականի օգոստոսի 30-ին ՀՀ էներգետիկայի նախարարության, «Գազպրոմ»-ի և «Իտերրա» միջազգային էներգետիկական կորպորացիայի կողմից ստորագրվեց պայմանագիր՝ 50 տարի ժամկետով հայ-ռուսական «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ստեղծելու մասին, որի բաժնեմասերի 45-ական %-ները պատկանում էին ՀՀ կառավարությանն ու «Գազպրոմին», իսկ 10 %-ը՝ «Իտերրային»¹⁴: Այս պայմանագիրը համարվեց անկախ Հայաստանի ամենախոշոր և հաջողված գործարքներից մեկը, որն ապահովելով Վրաստանի տարածքով ռուսական գազի կանոնավոր մատակարարումը (միայն 2005 թ. ՌԴ-ից ՀՀ առաքված գազի ծավալները կազմեցին 1,7 մլրդ խմ¹⁵), մեծ դեր խաղաց հանրապետության սոցիալ-տնտեսական կարևոր խնդիրների լուծման գործում:

«Գազպրոմ» ԲԸ-ն դարձավ հանրապետության վառելիքաէներգետիկ ոլորտում, մասնավորապես, գազաէներգետիկ օբ-

¹⁴ Տե՛ս ՀայՌուսգազարդ ՓԲԸ, // www.armrusgazprom.am.

¹⁵ Представительство «Россотрудничества» в Республике Армения: об Армении; армяно-российские отношения, // www.arm.rs.gov.ru.

յեկտների կառուցման բնագավառում խոշորագույն ներդրողներից մեկը: 2006 թ. մարտի 31-ին 25 տարով կնքվեց Հայաստանի տարածքում գազակներգեղիկ նախագծերում համագործակցության ռազմավարական սկզբունքները սահմանող պայմանագիր, որի համաձայն «Գազպրոմը» հետագա երեք տարիներին, վերոնշյալ նախագծերի իրագործման համար շուրջ 550 մլն ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրումներ կատարեց, ներառյալ Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգարոկի և Իրան-Հայաստան գազատարի շինարարական աշխատանքներում¹⁶: Վերջինի վերաբերյալ նշենք, որ Հայաստանի Հանրապետությունն առաջնորդվելով էներգակիրների ներմուծման բազմազանեցման քաղաքականության սկզբունքով՝ 2004 թ. սեպտեմբերի 8-ին Թեհրանի հետ ստորագրեց պայմանագիր Իրան-Հայաստան գազամուղի կառուցման մասին, համաձայն որի իրանական կողմը պետք է Հայաստանին 20 տարվա ընթացքում մատակարարեր շուրջ 36 մլրդ. խմ գազ: Դրանով պայմանավորված՝ առաջ քաշվեցին տարբեր նախագծեր նշյալ գազամուղի կառուցումը Վրաստանով մինչև Ուկրաինա, այնուհետև դեպի ԵՄ երկրներ շարունակելու վերաբերյալ, որոնց կյանքի կոչելը շահեկան էր ՀՀ համար, թե՛ տնտեսական (Հայաստանը զգալի շահույթ կարող էր ստանալ), և թե՛ քաղաքական (որպես տարանցիկ երկիր կտրուկ կրարձրանար նրա կշիռը տարածաշրջանում) առումներով: Սակայն դա հարուցեց Մոսկվայի անհանգստությունը, քանի որ հայ-իրանական խողովակաշարը ոչ միայն կարող էր ռուս-թուրքական «Կապույտ հոսք» գազամուղի մրցակիցը դառնալ, այլև Ռուսաստանին շրջանցելով իրանական գազի առաքումը դեպի

¹⁶ Տե՛ս Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. Հիմնախնդիրներն ու հեռանկարները. Վերլուծական զեկույց, Մոսկվա-Երևան, 2010, էջ 33:

Եվրոպա կասասներ նաև «Գազպրոմի» դիրքերը միջազգային շուկայում: Ուստի, վերոնշյալ նախագծերը ռուսական կողմի լուրջ հակազդեցության հետևանքով իրականություն չդարձան: Միաժամանակ, Ռուսաստանից մատակարարվող գազի գինը մինչև 2009 թ. հունվարի 1-ը 1000 խմ համար 110 ԱՄՆ դոլար սահմանելու դիմաց, որը զգալորեն էժան էր միջազգային շուկայում գործող գներից («Գազպրոմ»-ը Բելառուսին 1000 խմ գազը վաճառում էր 244 ԱՄՆ դոլարով, իսկ Եվրոպային՝ 350-500 դոլարով), հայկական կողմը Հրազդանի ԶԷԿ-ի 5-րդ էներգարկի հետ մեկտեղ, «ՀայՌուսգազարդ»-ին փոխանցեց Իրան-Հայաստան գազամուղի 40 կմ-անոց հայկական առաջին հատվածը: ՀՀ կառավարությունը պարտավորվեց նաև «ՀայՌուսգազարդ»-ին տրամադրել Իրան-Հայաստան գազամուղի երկրորդ՝ 197 կմ-անոց հատվածի շինարարության պատվիրատուի գործառույթները¹⁷: 2007 թ. սկզբին «Գազպրոմ»-ի մասնաբաժինը «ՀայՌուսգազարդ»-ի հիմնադիր կապիտալում գրեթե կրկնապատկվեց՝ կազմելով որակական մեծամասնություն:

2002 թ. «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ» ռուսաստանյան ընկերությունը «Գույք պարտքի դիմաց» ծրագրի շրջանակներում ձեռք բերեց Հրազդանի ԶԷԿ-ը¹⁸: Միաժամանակ, նշյալ ընկերությունը 5 տա-

¹⁷ «ԱրմՌուսգազպրոմը» կղառնա Հրազդանի ԶԷԿ-ի 5-րդ էներգարկի և Իրան-Հայաստան գազամուղի սեփականատեր, //www.panarmenian.net, 06.04.2006:

¹⁸ 2002 թ. հուլիսի 17-ին Երևանում ՀՀ և ՌԴ միջև ստորագրվեց համաձայնագիր «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված պետական վարկերի գծով պարտքի մարման համար Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող գույքը Ռուսաստանի Դաշնությանը փոխանցելու վերաբերյալ», համաձայն որի Ռուսաստանին ունեցած շուրջ 100 մլն ԱՄՆ դոլար պետական պարտքի դիմաց (առաջին հերթին՝ րնական գազի և միջուկային վառելիքի առաքման համար) նրան փոխանցվեց հայաստանյան 5 ձեռնարկություն՝ Հրազդանի ԶԷԿ-ը, «Մարս», «Երևանի մաթեմատիկական մե-

րի ժամկետով ստանձնեց Հայկական ատոմակայանի (որի մասնաբաժինը հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալում կազմում էր 40 %) հավատարմագրային կառավարումը, իսկ 2006 թ. դարձավ Հայաստանի միասնական բաշխիչ էլեկտրացանցի սեփականատերը: «ԻՆՏԵՐՌԱՕ ԵՒՍ»-ը ՀՀ էներգետիկայի ոլորտի արդիականացման և սպառողների սպասարկման որակի բարձրացման նպատակով իրականացրեց շուրջ 180 մլն. ԱՄՆ դոլարի ներդրում¹⁹:

Երկու երկրները սերտորեն փոխգործակցում էին նաև միջուկային էներգետիկայի քննազննում, Այդ համագործակցության հիմնական ուղղություններն էին՝ Հայկական ատոմակայանի անվտանգ շահագործման ապահովումը, թարմ միջուկային վառելիքի մատակարարումը:

Հայ-ռուսական էներգետիկ համագործակցության կարևոր ուղղություններից էր նաև Հայաստանում նոր ԱԷԿ-ի կառուցման հարցը, որի վերաբերյալ 2007 թ. «Ռոսատոմ» պետական կորպորացիայի ղեկավար Ս. Կիրիենկոն Երևանում հայտարարեց, թե ռուսական կողմը պատրաստ է աջակցել Հայաստանին 1000 մվտ հզորությամբ նոր ատոմային էլեկտրակայանի շինարարական աշխատանքները ստանձնելու (այդ նպատակով հետազայում ստեղծվեց «Մեծամոր էներգատոմ» ձեռնարկությունը) և նախագծի արժեքի 20 %-ի՝ շուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ իրականացնելու հարցերում:

քննաների գիտահետազոտական ինստիտուտ», «Երևանի կառավարման ավտոմատացված համակարգերի ԳՀԻ», «Երևանի նյութագիտության ԳՀԻ» ՓԲԸ-ները:

¹⁹ St'u Министерство экономического развития Российской Федерации: внешнеэкономическая деятельность; двустороннее сотрудничество; экономическое сотрудничество со странами СНГ; справка по Республике Армения, // www.economy.ru, 15.09. 2008.

Այսպիսով, 2000-ական թվականների կեսերին Հայաստանի էներգետիկ համակարգի շուրջ 90 %-ը կառավարվում էր Ռուսաստանի կողմից, ինչը հանրապետության քաղաքական և տնտեսական շրջանակներում միանշանակորեն չէր ընդունվում: Մի կողմից՝ այն Հայաստանի համար, անշուշտ, շահեկան էր երաշխիքային էներգամատակարարման, համակարգի տեխնիկական վերագինման, հնարավորությունների հզորացման, արտադրված էներգիայի արտահանման, նոր աշխատատեղերի ստեղծման առումներով, մյուս կողմից՝ մտահոգիչ էր հանրապետության էներգետիկ անվտանգության տեսանկյունից, և ոչ այն պատճառով, որ հենց Ռուսաստանն էր հանրապետության էներգետիկ պաշարների գնորդը, այլ, որ գրեթե ողջ էներգահամակարգը՝ ներառյալ էներգիայի ստեղծման, բաշխման ու մատակարարման համակարգերը պատկանում էին միայն մեկ երկրի: Այսինքն՝ Հայաստանը փաստորեն էներգետիկ կախվածության մեջ էր գտնվում մեկ կենտրոնից, ինչի հետևանքով բարդանում էր էներգակիրների ներմուծման բազմազանեցման քաղաքականության իրականացումը: Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, նշված ժամանակաշրջանում հայ-ռուսական «էներգաերկվտությունը» գտնվում էր բավականին բարձր մակարդակի վրա, ինչը ՀՀ-ին հնարավորություն էր ընձեռում ՌԴ-ը ակտիվ կերպով ընդգրկել իր էներգետիկ ծրագրերում՝ դրանով իսկ, էլ ավելի ամրապնդելով վերջինի հետ ռազմավարական-գործընկերային հարաբերությունները, որոնք հանրապետության տարածաշրջանային անվտանգության ապահովման կարևոր քաղաքիչներից էին:

Հայաստանի տնտեսության մեջ ռուսական կապիտալի ներթափանցման միտումների ուժեղացումը ցայտուն դրսևորվում էր նաև հանրապետության ֆինանսաբանկային համակարգում:

2004 թ. ռուսաստանյան «Վնեշտորգբանկ»-ը (սերկայումս՝ «ՎՏԲ» բանկը) ձեռք բերեց «Հայխնայբանկ»-ի (2006 թ.՝ «Բանկ ՎՏԲ» (Հայաստան)) բաժնետոմսերի 70 %-ը, իսկ 2007 թ. հուլիսին՝ մնացած 30 %-ը²⁰: Նույն թվականի սեպտեմբերի 21-ին ռուսաստանյան «Տրոյկա-Դիալոգ» ներդրումային ընկերության «TDA Holding Limited» դուստր ձեռնարկությունը 13 մլն. ԱՄՆ դոլարով գնեց «Հայնեբարտբանկ»-ի արժեթղթերի 96,15 %-ը: Հաջորդ տարի «Տրոյկա-Դիալոգ»-ը և «Ամերիա գրուպ» ընկերությունը Հայաստանում հիմնեցին 50 մլն. ԱՄՆ դոլար կապիտալով «Ամերիա» ներդրումային բանկը: 2007 թ. դեկտեմբերի 1-ին «Գազպրոմբանկ»-ը հայտարարեց «Առեքսիմբանկ» ՓԲԸ բաժնետոմսերի 80,09 %-ը գնելու մասին²¹:

Ռուսական բանկերի մուտքը Հայաստանի ֆինանսական շուկա որոշակիորեն նպաստեց հանրապետության ֆինանսաբանկային համակարգի կատարելագործմանն ու գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

Հայ-ռուսական տնտեսական համագործակցությունը զարգանում էր նաև մետալուրգիայի բնագավառում, ինչի վառ վկայություններից էր Քանաքեռի այլումինի գործարանի հենքի վրա 2000 թ. մայիսից գործող «Արմենալ» այլումինի գլանման ձեռնարկությունը, որը Ռուսաստանի ամենախոշոր «Ռուսալ» այլումինաձուլական ձեռնարկության հետ ձևավորեց ռուս-հայկական համատեղ «Ռուսալ Արմենալ» արտադրական միավորումը: 2004 թ. ռուսաստանյան կողմը ավելի քան 70 մլն ԱՄՆ դոլար ներդնելով՝ 2 տարվա ընթացքում վերակառուցեց ու արդիակա-

²⁰ Տե՛ս Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. Հիմնախնդիրներն ու հեռանկարները, վերլուծական զեկույց, էջ 34:

²¹ Տե՛ս Մինասյան Ս., Ռուս-հայկական հարաբերություններ. նոր միտումներ Մոսկվայում և նոր ընկալումներ Երևանում, 03.03. 2008, //www.noravank.am:

նացրեց ձեռնարկությունը: 2006 թ վերագործարկվելուց հետո, Հայաստանի այս խոշորագույն արդյունաբերական միավորումը դարձավ տարածաշրջանում ամենաբարձր որակի նուրբ փայլաթիթեղ արտադրող միակ ձեռնարկությունը: 2007-2008 թթ. շուրջ 6 մլն ԱՄՆ դոլար ներդրվեց «Արմենալի» արտադրական հզորությունների մեծացման համար, ինչը ոչ միայն նպաստեց ՌԴ և ՀՀ միջև ապրանքաշրջանառության ծավալների մեծացմանը, այլև հանրապետությանն ապահովվեց ավելի քան 700 աշխատատեղով²²:

Հայ-ռուսական տնտեսական համագործակցության մեջ նշանակալից առաջընթաց գրանցվեց նաև կապի և հեռահաղորդակցության բնագավառում: 2006 թ. նոյեմբերին ռուսաստանյան «Վիմպելկոմ» ընկերությունը, որը հանդես է գալիս «Բիլայն» ապրանքանիշի ներքո, հունական «ՕՏԵ» ընկերությունից և ՀՀ կառավարությունից 342 մլն եվրոյով գնեց հանրապետության հեռահաղորդակցային ոլորտի մենաշնորհատեր «Արմենտել» ՓԲԸ-ի բաժնետոմսերի ամբողջական փաթեթը (բաժնետոմսերի 90 %-ը պատկանում էր «ՕՏԵ»-ին, իսկ 10 %-ը՝ ՀՀ կառավարությանը): «Վիմպելկոմ» ընկերության դուստր ձեռնարկություն դարձած «Արմենտելը» մատուցում էր ֆիքսված ու բջջային հեռախոսակապի և ինտերնետ ծառայություններ: Այն, մինչև 2008 թ. 40 մլն. ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ իրականացրեց, ինչի շնորհիվ շահագործման հանձնվեց Հայաստանում առաջին՝ «3G» երրորդ սերնդի բջջային ցանցը, որը հնարավորություն էր տալիս մատուցել նաև արագ շարժական ինտերնետ

²² Министерство экономического развития Российской Федерации: внешнеэкономическая деятельность; двустороннее сотрудничество; экономическое сотрудничество со странами СНГ; справка по Республике Армения. //www.economy.ru, 15.09.2008.

2004 թ. ռուսաստանյան «Վնեշտորգբանկ»-ը (ներկայումս՝ «ՎՏԲ» բանկը) ձեռք բերեց «Հայխնայբանկ»-ի (2006 թ.՝ «Բանկ ՎՏԲ» (Հայաստան)) բաժնետոմսերի 70 %-ը, իսկ 2007 թ. հուլիսին՝ մնացած 30 %-ը²⁰: Նույն թվականի սեպտեմբերի 21-ին ռուսաստանյան «Տրոյկա-Դիպոզ» ներդրումային ընկերության «TDA Holding Limited» դուստր ձեռնարկությունը 13 մլն. ԱՄՆ դոլարով գնեց «Հայներարտբանկ»-ի արժեթղթերի 96,15 %-ը: Հաջորդ տարի «Տրոյկա-Դիպոզ»-ը և «Ամերիա գրուպ» ընկերությունը Հայաստանում հիմնեցին 50 մլն. ԱՄՆ դոլար կապիտալով «Ամերիա» ներդրումային բանկը: 2007 թ. դեկտեմբերի 1-ին «Գազպրոմբանկ»-ը հայտարարեց «Առեքսիմբանկ» ՓԲԸ բաժնետոմսերի 80,09 %-ը գնելու մասին²¹:

Ռուսական բանկերի մուտքը Հայաստանի ֆինանսական շուկա որոշակիորեն նպաստեց հանրապետության ֆինանսաբանկային համակարգի կատարելագործմանն ու գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

Հայ-ռուսական տնտեսական համագործակցությունը զարգանում էր նաև մետալուրգիայի բնագավառում, ինչի վառ վկայություններից էր Քանաքեռի այլումինի գործարանի հենքի վրա 2000 թ. մայիսից գործող «Արմենալ» այլումինի գլանման ձեռնարկությունը, որը Ռուսաստանի ամենախոշոր «Ռուսալ» այլումինաձուլական ձեռնարկության հետ ձևավորեց ռուս-հայկական համատեղ «Ռուսալ Արմենալ» արտադրական միավորումը: 2004 թ. ռուսաստանյան կողմը ավելի քան 70 մլն ԱՄՆ դոլար ներդնելով՝ 2 տարվա ընթացքում վերակառուցեց ու արդիակա-

²⁰ Տե՛ս Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. Հիմնախնդիրներն ու հեռանկարները, վերլուծական զեկույց, էջ 34:

²¹ Տե՛ս Մինսայան Ս., Ռուս-հայկական հարաբերություններ. նոր միտումներ Մոսկվայում և նոր ընկալումներ Երևանում, 03.03. 2008, //www.noravank.am:

նացրեց ձեռնարկությունը: 2006 թ. վերագործարկվելուց հետո, Հայաստանի այս խոշորագույն արդյունաբերական միավորումը դարձավ տարածաշրջանում ամենաբարձր որակի նուրբ փայլաթիթեղ արտադրող միակ ձեռնարկությունը: 2007-2008 թթ. շուրջ 6 մլն ԱՄՆ դոլար ներդրվեց «Արմենալի» արտադրական հզորությունների մեծացման համար, ինչը ոչ միայն նպաստեց ՌԴ և ՀՀ միջև ապրանքաշրջանառության ծավալների մեծացմանը, այլև հանրապետությանն ապահովվեց ավելի քան 700 աշխատատեղով²²:

Հայ-ռուսական տնտեսական համագործակցության մեջ նշանակալից առաջընթաց գրանցվեց նաև կապի և հեռահաղորդակցության բնագավառում: 2006 թ. նոյեմբերին ռուսաստանյան «Վիմպելկոմ» ընկերությունը, որը հանդես է գալիս «Բիլայն» ապրանքանիշի ներքո, հունական «ՕՏԵ» ընկերությունից և ՀՀ կառավարությունից 342 մլն եվրոյով գնեց հանրապետության հեռահաղորդակցային ոլորտի մենաշնորհատեր «Արմենտել» ՓԲԸ-ի բաժնետոմսերի ամբողջական փաթեթը (բաժնետոմսերի 90 %-ը պատկանում էր «ՕՏԵ»-ին, իսկ 10 %-ը՝ ՀՀ կառավարությանը): «Վիմպելկոմ» ընկերության դուստր ձեռնարկություն դարձած «Արմենտելը» մատուցում էր ֆիբրաված ու բջջային հեռախոսակապի և ինտերնետ ծառայություններ: Այն, մինչև 2008 թ. 40 մլն. ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ իրականացրեց, ինչի շնորհիվ շահագործման հանձնվեց Հայաստանում առաջին՝ «ՅՅ» երրորդ սերնդի բջջային ցանցը, որը հնարավորություն էր տալիս մատուցել նաև արագ շարժական ինտերնետ

²² Министерство экономического развития Российской Федерации: внешнеэкономическая деятельность; двустороннее сотрудничество; экономическое сотрудничество со странами СНГ; справка по Республике Армения, //www.economy.ru, 15.09.2008.

կապ, ինչպես նաև թվայնացվեց հանրապետության ֆիքսված հեռախոսակապը: Սակայն տվյալ գործարքի, թերևս առավել կարևորությունը կայանում էր նրանում, որ այս ձեռնարկությունն իրավաբանորեն հրաժարվեց իր մենաշնորհներից (միջազգային ելք, ինտերնետի մատակարարում, միջազգային ձայնային հեռախոսակապ): Դա հանգեցրեց հեռահաղորդակցության ոլորտի ազատականացմանը, հետևաբար, նաև այս ընագավառում մրցակցության սկզբնավորմանը: Արդյունքում, արդեն իսկ 2007 թ. սեպտեմբերին ռուսաստանյան մեկ այլ ընկերություն՝ «Մոբիլ հեռահամակարգեր» («ՄՏՍ») ընկերությունը ձեռք բերեց հայկական «Ղ-Տելեկոմ» (հայտնի է «Վիվասել» ապրանքանիշով) բջջային կապի ընկերության բաժնետոմսերի 80 %-ը, ինչպես նաև նախնական իրավունքային համաձայնագիր ստորագրեց մնացած 20 %-ը գնելու վերաբերյալ: Գործարքի արժեքը կազմեց 310 մլն եվրո (ընկերությունը երկու տարվա ընթացքում կատարեց 70 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ, որոնք հիմնականում ուղղված էին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, կայանների արդիականացմանը, ցանցի հասանելիության ընդլայնմանը): Արդյունքում, հանրապետությունում ոչ միայն ավելացավ բջջային կապի բաժանորդների թիվը (2007 թ. այն հասավ 1 մլն 185 հազարի²³), այլև բացվեցին նոր աշխատատեղեր: Ռուսաստանյան ընկերությունների մուտքը հանրապետության հեռահաղորդակցային ծառայությունների մատուցման շուկա նպաստեց նաև ոլորտի մրցակցային դաշտի հետագա ընդլայնմանը, որը դրսևորվեց 2008 թ. բջջային կապի երրորդ օպերատորի՝ «Ֆրանս-տելեկոմ» ֆրանսիական ընկերության «Օրանժ Արմենիա» դուստր ձեռնարկության նորամուտով հայ-

²³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության արդյունքները 2007-2011 թթ., կապի ոլորտ, //report.gov.am, 13.05.2011:

կական շուկա: Աճող մրցակցային պայմաններում Հայաստանի կապի և հեռահաղորդակցության ոլորտը կտրուկ զարգացում ապրեց, ինչին զուգընթաց նվազում էին տվյալ քնազավառում մատուցված ծառայությունների սակագները: Այս ամենի շնորհիվ հանրապետության հեռահաղորդակցության շուկան ԱՊՀ շրջանակներում առաջատար դիրքեր գրավեց²⁴: Վերջինից ելնելով՝ ՀՀ կառավարությունն ընդունեց հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման երկարաժամկետ ռազմավարություն, որը նպատակաուղղված էր Հայաստանն այդ քնազավառի տարածաշրջանային կենտրոն դարձնելուն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական առումներով խիստ կարևոր նշանակություն ունեւր ՀՀ և ՌԴ միջև համագործակցության ծավալումը տրանսպորտի ոլորտում: Անկախության առաջին իսկ տարիներից Ադրբեջանի և Թուրքիայի կողմից հաղորդակցության ուղիների լիակատար շրջափակման մեջ գտնվող Հայաստանի առջև ծառայած կենսական խնդիրներից էր արտաքին աշխարհի, այդ թվում և իր ռազմավարական գործընկեր Ռուսաստանի հետ անխափան գործող հաղորդակցային ուղիներ ունենալը: Հայաստանը ցամաքային ուղիով արտաքին աշխարհի հետ հարավից կապվում էր Իրանի (ավտոճանապարհով), իսկ հյուսիսից՝ Վրաստանի (երկաթուղով և ավտոճանապարհով) միջոցով: Իրանի հետ Հայաստանի ցամաքային կապի կայունությունը գրեթե մշտապես հարցականի տակ էր դրված այդ երկրի դեմ շարունակաբար կիրառվող միջազգային պատժամիջոցների հետևանքով: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա 1990-ական-

²⁴ Տե՛ս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն. Մեր մասին. Պատմական ակնարկ. Կապի ոլորտի խթանումը, //www.mtc.ma.

ներից այստեղ տիրող անկայուն քաղաքական իրավիճակը լուրջ դժվարություններ էր հարուցում այդ հանրապետության տարածքով Հայաստանից Ռուսաստան և հակառակը, անխափան բեռնափոխադրումների իրականացմանը, ինչը խիստ բացասաբար էր անդրադառնում ՀՀ և ՌԴ միջև տնտեսական կապերի բնականոն զարգացման վրա: Վիճակն էլ ավելի բարդացավ վրացարխագական պատերազմի հետևանքով Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող Երևան-Թբիլիսի-Մոսկվա երկաթգծի արխագական հատվածի փակվելուց հետո: Փաստորեն, Վրաստանի տարածքով Հայաստանին Ռուսաստանի հետ կապող միակ ցամաքային ճանապարհը դարձավ վրաց-ռուսական սահմանագծին գտնվող «Կազբեկ-Վերին Լարս» ավտոմոբիլային անցակետը, ինչը չէր կարող ապահովել երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալման հնարավորությունները (այդտեղով անցնում է Հայաստան-Ռուսաստան բեռների 20 %-ը²⁵): Սակայն, 2000-ական թվականներից վրաց-ռուսական հարաբերություններում աստիճանաբար աճող լարվածության հետևանքով «Կազբեկ-Վերին Լարս» անցակետը ևս մերթ մեկ, մերթ մյուս կողմի նախաձեռնությամբ, տարբեր պատճառաբանություններով (եղանակային պայմանների վատթարացում, անցագրային կետի վերակառուցման անհրաժեշտություն և այլն) պարբերաբար փակվում էր, ինչը բարդ իրավիճակ էր առաջացնում Հայաստանի տնտեսության համար: Դա հատկապես ցայտուն դրսևորվեց 2008 թ. ռուս-վրացական օգոստոսյան «հնգօրյա պատերազմի» ժամանակ, երբ Հայաստանի Հանրապետությունը հյուսիսից ևս որոշ ժամանակով հայտնվեց տնտեսական շրջափակման մեջ, ինչը չէր բխում նաև տարա-

²⁵ Հայաստանը Ռուսաստանին կապում են չորս ճանապարհներ, «Ազգ», 16.10.2004:

ծաշրջանում Ռուսաստանի ունեցած աշխարհաքաղաքական և տնտեսական շահերից: Ուստի, Հայաստանի և Ռուսաստանի միջև հաղորդակցային ոլորտում առկա հիմնախնդիրները հակառակ էին երկուստեք շահերին և կողմերին հարկադրում համատեղ ջանքեր գործադրել միմյանց միջև նոր տրանսպորտային երթուղիների բացման ուղղությամբ:

1990-2000-ական թթ., բացի վերոնշյալ «Կազբեկ-Վերին Լարս» ցամաքային ճանապարհից, Հայաստանը Ռուսաստանի հետ կապվում էր նաև 3 ծովային ուղիներով: Առաջինը՝ Նովոռոսիյսկ-Փոթի երկաթուղայաստանավային անցուղին էր, որով իրականացվում էին նաև քեռնարկղերով փոխադրումներ: 2007 թ. սկսեցին գործարկվել նաև Նովոռոսիսկ-Փոթի ավտոմոբիլալաստանավային և Փոթի-Կավկազ երկաթուղայաստանավային անցուղիները: Արդյունքում՝ 2007 թ. հայ-ռուսական լաստանավային փոխադրումների ծավալը գերազանցեց 30 հազ. տոննան²⁶: Երկրորդը՝ Իլիչևսկ (Ուկրաինա)-Փոթի լաստանավային անցուղին էր, որը 30 %-ով թանկ էր արխազական երկաթուղով անցնող ճանապարհից: Եվ վերջապես երրորդը՝ «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջազգային միջանցքն էր՝ ռուսական Աստրախան նավահանգստից մինչև իրանական Էնզելի նավահանգիստը լաստանավով, այնտեղից էլ ավտոմեքենաներով դեպի Հայաստան²⁷: Սակայն այդ միջանցքով Հայաստանի և Ռու-

²⁶ Տե՛ս ԱՄԻ «Նովոստի Արմենիա». Վերլուծություններ և մեկնաբանություններ. Ռուսական կապիտալը՝ Հայաստանի լուկոմոտիվն է, 22.01.2008, // www.newsarmenia.ru.

²⁷ 2000 թ. սեպտեմբերի 12-ին Սանկտ-Պետերբուրգում Ռուսաստանի, Իրանի և Հնդկաստանի միջև ստորագրվեց «Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի մասին» համաձայնագիրը, որը կոչված էր Իրանի և Ռուսաստանի տարածքներով ապահովել տրանսպորտային կապը (ներառյալ ջրային, երկաթուղային և ավտոմոբիլային) Հնդկաստանի և Բալթյան երկրների միջև: Հետագայում համաձայնագրին միացան Հայաստանը (2005 թ.),

սաստանի միջև բեռնափոխադրումները կապված էին լուրջ խոչընդոտումների հետ, քանի որ Իրանի տարածքով արգելվում էր ակտիվային խմիչքների և մսամթերքի փոխադրումը, որոնք երկու երկրների միջև ապրանքաշրջանառության մեջ զգալի տեղ էին գրավում: Բացի այդ, Քաջարանի լեռնանցքով ավտոմոբիլային երթևեկությունը հատկապես ճմռան ամիսներին խիստ դժվարանում էր: Հետևաբար, նշյալ երթուղով բեռնափոխադրումներն ավելի երկար ժամանակ էին պահանջում և քավականին թանկ նստում: Այս ամենը հանգեցնում էր Իրանի և Հայաստանի միջև երկաթգծի կառուցման անհրաժեշտությանը, որով բեռնափոխադրումներն անհամեմատ էժան կնստեին, մանավանդ որ դրանում մեծ շահագրգռվածություն էր հանդես բերում նաև Ռուսաստանը: Այդ մասին 2007 թ. վերջին Երևանում ընդգծեց ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ռուսաստանյան մասի նախագահ, ՌԴ տրանսպորտի նախարար Ի. Լևիտինը. «Իրանական ուղղությունը Ռուսաստանի համար շատ կարևոր և հետաքրքիր է, քանի որ Կասպից ծովի վրա ունեցած մեր փոխադրող հզորությունները արդեն չեն քավարարում, որպեսզի կարողանանք ապահովել փոխադրումները ոչ միայն դեպի Իրան, այլև Պարսից ծոցի շրջան, և կարծում եմ հակառակ ուղղությամբ նույնպես»²⁶: Միաժամանակ, նա շեշտեց Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման հարցը արխազական երկաթուղու վերագործարկման համա-

Աղբբեջանը, Բելառուսը, Ղազախստանը, Օմանը, Սիրիան, Տաջիկստանը, Թուրքիան: Աղբբեջանն ու Թուրքիան քաղաքական դրդապատճառներով ամեն կերպ խոչընդոտում էին Հայաստանի լիարժեք ներգրավվմանը այդ միջանցքով նախատեսված բեռնափոխադրային երթուղիներին:

²⁶ Տե՛ս ԱՄԻ «Նովոստի Արմենիա». Վերլուծություններ և մեկնաբանություններ. Ռուսական կապիտալը՝ Հայաստանի լոկոմոտիվն է, //www.newsarmenia.ru, 22.01.2008:

տեքստում քննարկելու անհրաժեշտությունը: Թեև 2007 թ. Հայաստանի և Իրանի միջև ստորագրվել է հուշագիր՝ երկաթուղու շինարարության (որը գնահատվում էր 2 մլրդ. ԱՄՆ դոլար) տևիսնիկական հնարավորությունները ուսումնասիրելու մասին, սակայն, ինչպես ֆինանսավորման աղբյուրների բացակայության, այնպես էլ տարածաշրջանում ատկա լարվածության հետևանքով երկաթգծի կառուցման հարցում դեռևս շոշափելի տեղաշարժ չի նշմարվում:

ՀՀ և ՌԴ միջև տրանսպորտային հաղորդակցությունն ամրապնդելու և հատկապես Հայաստանի երկաթուղային համակարգը բարելավելու ու զարգացնելու առումներով կարևոր իրադարձություն էր «Հայկական երկաթուղային ուղիներ» ՓԲԸ 30 տարով կոնցեսիոն կառավարման իրավունքի համար 2007 թ. հայտարարված միջազգային մրցույթում «Ռուսաստանյան երկաթուղային ուղիներ» ԲԲԸ-ի հաղթանակը: Դրանից անմիջապես հետո «ՌԵՌԻ»-ն հայտարարեց, որ «Հայկական երկաթուղիներին» կառավարելու է «Հարավկովկասյան երկաթուղիներ»՝ իր դուստր ձեռնարկությունը, որը հատուկ ստեղծվել է այդ նպատակով: 2007 թ. դեկտեմբերի 21-ին «ՌԵՌԻ»-ի կողմից հրապարակված ֆինանսական առաջարկության և կողմերի միջև ստորագրված պայմանագրի համաձայն՝ կոնցեսիոնները պարտավորվում էր Հայաստանի երկաթուղային ենթակառուցվածքներում ներդնել 570 մլն ԱՄՆ դոլար, որից 230 մլն-ը՝ մոտակա հինգ տարիների ընթացքում²⁹: Պակաս կարևոր չէր նաև «ՌԵՌԻ»-ի ղեկավար Վ. Յակունինի հայտարարությունը, որ ռուսական կողմը հնարավոր ամեն ինչ կձեռնարկի, որպեսզի Հայաստանի տրանսպորտային շրջափակումը հանվի: Այս համա-

²⁹ Տե՛ս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն. Մեր մասին. Պատմական ակնարկ. Տրանսպորտի զարգացումը, //www. mtc.ma

տեքստում «ՌԵՆՌ»-ն նախատեսում էր՝ Թուրքիայի հետ երկաթգծային հաղորդակցության բացման դեպքում ներդրումներն ավելացնել մինչև 610 մլն ԱՄՆ դոլարի, Ադրբեջանի հետ բացման դեպքում մինչև 1,8 մլրդ դոլարի, իսկ երկաթգծի արխագական հատվածի բացման դեպքում՝ մինչև 2,2 մլրդ դոլարի³⁰։ Սակայն, թե՛ հայ-թուրքական և թե՛ հայ-ադրբեջանական հարաբերություններում որևէ էական փոփոխությունների չարձանագրման, ինչպես նաև ռուս-վրացական հարաբերությունների էլ ավելի սրման հետևանքով նշյալ նախագծերն այդպես էլ չիրականացան։

Բացի տնտեսության ռազմավարական ճյուղերում ծավալված արդյունավետ համագործակցությունից, հայ-ռուսական փոխգործակցությունը հաջողությամբ զարգանում էր նաև այլ բնագավառներում։ Մասնավորապես, 1990-ական թվականներից սկսած երկու երկրները հաջողությամբ համագործակցում էին բնական ալմաստների մատակարարման և վերամշակման ոլորտում, ինչը պայմանավորված էր Ռուսաստանում գոյություն ունեցող ալմաստների հարուստ պաշարներով և Հայաստանում առկա բարձրորակ ալմաստագործներով։ Համագործակցությունն այս բնագավառում երկուստեք շահավետ էր, քանի որ ռուսական կողմը միջազգային շուկայականից ավելի ցածր գնով Հայաստանում իր չմշակված ալմաստի հոսքը ենթարկում էր բարձրորակ երեսակման, իսկ ՀՀ-ում վերագործարկվում էին համապատասխան ձեռնարկությունները և բացվում նոր աշխատատեղեր։ 2002 թ. ապրիլի 5-ին ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև կնքվեց համաձայնագիր՝ 2002-2006 թթ. չմշակված բնա-

³⁰ Տե՛ս ԱՄԴ «Նովոստի Արմենիա»։ Վերլուծություններ և մեկնաբանություններ. Ռուսական կապիտալը՝ Հայաստանի լուկոմոտիվն է, //www.newsarmenia.ru, 22.01.2008:

կան ավանաստներ մատակարարելու մասին: Վերջինի օրգանական շարունակությունը հանդիսացավ 2007 թ. օգոստոսին Հայաստանի կառավարության և ռուսական «Ալրոսա» քաժնետիրական ընկերության միջև ստորագրված երեսակման, ոսկեգործության ոլորտներում և ներդրումային ծրագրերի իրականացման քննազավառներում համագործակցության մասին համաձայնագիրը³¹:

Բացի միջպետական մակարդակով իրականացվող ծրագրերից, ուսումնասիրվող ժամանակաշրջանում տնտեսական համագործակցության բազմաթիվ ծրագրեր էին իրականացվում նաև Հայաստանի և Ռուսաստանի մարզերի և քաղաքների միջև: Երկու երկրների տնտեսվարող միավորումների միջև ուղիղ կապերի հաստատման և առևտրատնտեսական ոլորտում փոխգործակցության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 2001 թ. սեպտեմբերի 15-ին Երևանում ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև ստորագրված Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) միջև համագործակցության մասին համաձայնագիրը³²: Արդեն 2000-ականների կեսերին Հայաստանի շատ մարզեր ու քաղաքներ առևտրատնտեսական, գիտակրթական և մշակութային քննազավառներում համագործակցում էին Ռուսաստանի շուրջ 70 սուբյեկտների հետ: Ավանդույթ էին դարձել պատվիրակությունների փոխադարձ այցելությունները, միմյանց միջև տարբեր ոլորտներում համագործակցությանն առնչվող համաձայնագրերի կնքումը:

³¹ Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն, արտաքին քաղաքականություն, երկկողմ հարաբերություններ, Ռուսաստան, ստորագրված փաստաթղթեր, //www.mfa.am/hy/country-by-country/ru.

³² Տե՛ս նույն տեղում:

Այսպիսով, քննության առարկա ժամանակաշրջանում հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունները նրկու երկրների միջև տնտեսականից բացի նաև քաղաքական համագործակցության կարևորագույն բաղկացուցիչ էին: Մոսկվան գիտակցում էր, որ Անդրկովկասում հուսալի գործընկեր ունենալու համար բարձր մակարդակի ռազմաքաղաքական հարաբերություններից զատ, այստեղ անհրաժեշտ է ունենալ նաև լուրջ տնտեսական ներուժ: Իր հերթին Հայաստանում Ռուսաստանի ծանրակշիռ տնտեսական ներկայությունը հանրապետության համար տարածաշրջանային անվտանգության կարևոր գործոն է հանդիսանում:

Рубен Л. Азизбекян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, Становление и развитие торгово-экономических отношений между РА и РФ в 1991-2008 гг. - В 1991-2008 гг. важнейшим компонентом армяно-российского сотрудничества являлось развитие экономических связей между двумя странами. Именно в этот период сформировались наиболее эффективные формы торгово-экономического сотрудничества, прочной основой коих служило создание в 1990 -ые годы широкого договорного-правового поля.

С 1998 года руководство Армении, исходя из политических побуждений, задачу обеспечения стабильного экономического роста республики связывало преимущественно с российским направлением, что выразилось во всестороннем присутствии России в экономике Армении. Хотя данный процесс в основном имел политическую мотивацию, однако свою роль сыграла также экономическая привлекательность.

В 2000-ые годы одним из особенностей армяно-российских торгово-экономических отношений являлся процесс разрастания проникновения российского капитала в инфраструктуры стратегического назначения экономики Армении. Российские инвестиции в большинстве направлялись в отрасли энергетики, металлургии, связи, транспорта, в финансово-банковскую сферу и т.д. В результате, благодаря созданной в Армении благоприятной среде для российских инвестиций, РФ прочно занимала позицию главного инвестора экономики Армении.

Таким образом, в исследуемый период Москва сознавала, что для того, чтобы иметь в Южном Кавказе надежного партнера, кроме высокого уровня военно-политических отношений, необходим также серьезный экономический потенциал. В свою очередь, веское экономическое присутствие России в Армении, являлось для республики важным фактором региональной безопасности.

Ruben L. Azizbekyan, *NAS RA Institute of History, PhD in History, Assistant Professor, The Formation and Development of the Trade-Economic Relations between the Republic of Armenia and Russian Federation in 1991-2008* - The development of the Armenian-Russian economic ties was among the most significant components of the cooperation between the two countries in 1991-2008. The most efficient patterns of the trade-economic cooperation were formed during this period and the vast legal field, created in 1990's, became a steadfast foundation for them.

Led by the political incentives, the Armenian leadership linked the objective of providing the Republic's sustainable economic

growth predominantly with the Russian direction, which is reflected in Russia's comprehensive presence in the Armenian economy. Notwithstanding this process was mainly politically motivated, the economic attractiveness also played a certain role.

The growth of presence of the Russian capital in the Armenian economy's strategically important infrastructure became one of the peculiarities of the Armenian-Russian trade-economic ties in 2000's. The Russian investments largely targeted the spheres of energy, metallurgy, communication, transport, finance and banking etc. The Russian Federation was generally considered the main investor in Armenian economy due to favourable atmosphere for Russian investments.

Hence, during the given period Moscow was confident that a serious economic potential is also necessary to have a trustworthy partner in the South Caucasus along with the high level military-political relations. In turn, Russia's strong economic presence in Armenia, became a significant factor in the regional security for the Republic.

ԼԻԼԻԹ Ս. ԶԱԲԱՐՅԱՆ

ԳԱՄ պապմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԴՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, տեղական ինքնակառավարում, ընտրություններ, համայնքներ, օրենք, ընտրական հանձնաժողով, ավագանի:

1990-ականների կեսին արմատական քարեփոխումներ պլանավորվեցին տեղական կառավարման ոլորտում: Մշակվեց մի համակարգ, որի դեպքում տեղերում ստեղծվեց երկաստիճան կառավարում՝ մեկ մակարդակը տարածքային կառավարման մարմինները՝ մարզպետարանները և մյուսը՝ տեղական ինքնակառավարումը:

Տեղական իշխանության սխեման ներկայացվեց ՀՀ Սահմանադրության 7-րդ գլխում, որը վերնագրված էր՝ «Տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը»:

«Անցումային դրույթներ տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մասին և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունների մասին» օրենքով վերացվեցին շրջանային խորհուրդները: Գյուղական և քաղաքային խորհուրդները հռչակվեցին տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ) և պիտի գործեին մինչև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ընդունումը: Մինչև օրենքի ընդունումը գործելու էին «Գյուղական, քաղաքային խորհուրդների մասին» օրենքները: Փաստորեն, խորհուրդները պիտի ժամանակավորապես կատարեին ավագանու դերը, իսկ գործկոմի

նախագահը դառնալու էր համայնքի ղեկավար: Երևանի խորհուրդները լուծարվելու էին, որի կարգը պետք է որոշեր կառավարությունը: Երևանի շրջգործկոմները դառնալու էին Երևանի քաղաքապետարանի ենթարածիներ:

Լսորհրդային մարմինների լուծարման գործընթացը կազմակերպվեց մեծ արագությամբ: 1996 թ. փետրվարի 23-ին ՀՀ կառավարության «Պատգամավորների շրջանային, Երևանի քաղաքային և քաղաքի շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների լուծարման գործընթացն ապահովող միջոցառումների մասին» N 78 որոշմամբ¹ պատգամավորների շրջանային, Երևանի քաղաքային և Երևան քաղաքի շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների լուծարման գործընթացի կազմակերպման ու վերահսկողության իրականացման նպատակով ստեղծեց կառավարական լուծարքային հանձնաժողով և հաստատվեց դրա կազմը: Լուծարքային հանձնաժողովներ ստեղծվեցին տեղերում, որոնցում ընդգրկվեցին պատգամավորների համապատասխան խորհուրդների գործադիր կոմիտեների նախագահները, նրանց տեղակալները, քարտուղարներն ու ֆինանսական վարչությունների (բաժինների) պետերը: Անցկացվեց գույքագրում, գույքը հանձնվեց մարզպետարաններին: Տեղական խորհուրդների գործկոմների ենթակայության տակ գտնվող կազմակերպություններն ու ձեռնարկությունները՝ մինչև ՀՀ կառավարության կողմից մարզային ենթակայության կազմակերպությունների ու ձեռնարկությունների ցանկի հաստատումը, անցան համապատասխան մարզպետի ենթակայությանը: Այդ ամբողջ գործընթացի համադասումը դրվեց մարզպետների վրա:

«Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հարաբերությունների կարգավորման ան-

¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 177, գ. 74:

ցումային դրույթներով» նախատեսվում էր, որ համայնքների ղեկավարները ընդգրկվելու էին մարզային խորհրդի կազմում (150-200 մարդ), որը պետք է գործեր մարզպետին կից: Դա դիտարկվում էր մի մեխանիզմ, որը պետք է մարզպետին ստիպեր հաշվի նստել ՏԻՄ-երի ղեկավարների հետ: Ոչ բոլոր խորհրդարանական խմբակցություններն էին համաձայն տարածքային կառավարման ներկայացվող տարրերակին: Օրինակ, ԱԻՄ-ը առաջարկում էր ընտրովի մարզպետների և մարզային ավագանու համակարգ (կազմված 25-40 հոգուց)²: Առաջարկում էր ժամանակավոր դրույթները հանել քննարկումից և մինչև դեկտեմբերի վերջն ընդունել տեղական ինքնակառավարման մասին օրենքը:

Ըստ էության պայքար էր գնում անզուսաքսոնական մոդելի կողմնակիցների և եվրոպական մայրցամաքային տեղական կառավարման մոդելի կողմնակիցների միջև: Առաջինը նախատեսում էր ամբողջական տեղական ինքնակառավարման ընտրովի համակարգ, երկրորդը՝ տեղերում ինքնակառավարման և պետական կառավարման համակարգերի զուգորդում, պետական նշանակովի մարմինների գերակշռություն ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ:

Տեղական ինքնակառավարման մոդելի շուրջ բանավեճը նոր չէր: Այն առավել սրվել էր Սահմանադրության նախագծի քննարկման շրջանում: Դեռևս 1994 թ. ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն առաջարկվող մոդելը համարում էր «ամենալուրջ նվաճումներից մեկը»: Նա նշում էր, որ «Վարչատարածքային միավորների ձևավորումը, որպես կանոն, արդյունք է ավատական մասնատվածության հետևանքով առաջացած պատմական գործընթացների կամ բազմազգ պետությունների քնակչության տեղաբաշխումից բխող բաժանումների: Չի կարելի բացառել,

² ՀՀ ԱԺ արխիվ, 1995 թ. դեկտեմբերի 13-ի նիստի արձանագրություն, էջ 93:

իհարկն, որ վարչատարածքային միավորների ձևավորման գործում որոշ դեր են խաղացել նաև աշխարհագրական և տնտեսական գործոնները: ... Տարածքային ինքնակառավարումը, այսպիսով, թեկուզ ամենաժողովրդավարական երկրներում, ոչ թե ըլխում է համապետական շահերից կամ կառավարման նպատակահարմարությունից, այլ պարզապես պահպանվում է որպես պատմական բեռ, որը երբեմն հանգեցնում է պետական և տեղական շահերի յուրջ քայտումների: Տարածքային ինքնակառավարումը՝ օժտված յուրահատուկ տեղական շահերով, սեփական բյուջեով և այլ առանձնաշնորհումներով, անխուսափելիորեն իր խորքում պարունակում է ֆեդերացիայի տարր, որն անհարիր է ունիտար պետությունների ձևավորման հարաճուն ճգնումներին»³:

Այժմ, տեղերում կառավարման նոր համակարգի ստեղծման շրջանում, այդ բանավեճը վերսկսվել էր: Իշխանությունների հասցեին մեղադրանքներ էին հնչում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումն ու ներդնումը ձգձգելու հարցում: Ընդդիմությունն այն կարծիքին էր, որ իշխանությունները դա անում են, քանի որ համոզված չեն, որ տեղական ընտրություններում կհաղթեն: Ինչպես վերը նշվեց, ԱԻՄ-ը նույնիսկ առաջարկում էր քննարկումից հանել «Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հարաբերությունների կարգավորման անցումային դրույթներ» օրենքի նախագիծը և արագացնել տեղական ինքնակառավարման համակարգի ներդրմանն ուղղված օրենքների ընդունումը:

«Բարեփոխումներ» պատգամավորական խումբը կողմ էր օրենքի նախագծին: Սակայն որոշ դրույթների դեմ հանդես եկավ՝ պաշտպանելով «Շամիրամ» խմբակցության առաջարկը:

³ Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, Երևան, 2006, էջ 426:

խոսքը վերաբերվում էր մարզպետների լիազորություններին, որը սահմանվում էր օրենքի 7-րդ կետում: Ըստ այդ կետի՝ մարզպետների լիազորությունները սահմանվում էին այդ օրենքով, նախագահի հրամանագրով, կառավարության, վարչապետի որոշումներով: Պատգամավորները դրանում սուբյեկտիվ մոտեցումների վտանգ էին տեսնում և առաջարկում օրենքում ամրագրել մարզպետի լիազորությունները:

Ի վերջո, թեժ քննարկումներից և որոշ շտկումներից հետո, դեկտեմբերի 14-ին «Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հարաբերությունների կարգավորման անցումային դրոյթների մասին» օրենքն ընդունվեց (113 կողմ, 20 դեմ, 8 ձեռնպահ)⁴:

ՀՀ Ազգային ժողովում հատկապես բուռն քննարկման արժանացավ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նախագիծը⁵: Թեպետ ինքնակառավարման համակարգը նորություն էր, սակայն պատգամավորները որոշ հարցերի վերաբերյալ համակարծիք էին: Այսպես, օրինակ, օրենքով նախատեսվում էր ՏԻՄ-երի ինքնուրույնություն: Մարզպետը կարող էր կարգադրություններ անել համայնքի ղեկավարին միայն պետական կարևորության հարցերում, օրինակ, քաղաքաշտպանության, հակահամաճարակային իրավիճակներում և այլն: Դրա հետ մեկտեղ՝ օրենքի նախագծում կար նաև հակասական մոտեցում մարզպետը կարող էր անվստահություն հայտնել համայնքի ղեկավարին: Փաստորեն, նշանակովի մարմնի լիազորությունները

⁴ ՀՀ ԱԺ արխիվ, 1995 թ. դեկտեմբերի 14-ի նիստի արձանագրություն, էջ 125:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 873, թ. 211 (ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիտողությունները «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի վերաբերյալ, 7.12.1995), թ. 223 (ՀՀ արդարադատության նախարարություն, 8.12.2015):

ավելի լայն էին, քան ընտրովի մարմիններինը, ինչը ինքնին չէր համապատասխանում ժողովրդավարական խաղի կանոններին:

Մի քանի ամիս անց օրենսդրական բացթողումներն ավելի նկատելի դարձան: Ամենից առաջ խոսքը վերաբերում էր մարզպետարան – ՏԻՄ հարաբերությանը: Բացի այդ՝ նրանց լիազորությունների ոչ ճիշտ բաշխման հետևանքով հաճախ հիմնախնդիրներ էին ծագում այդ երկու մարմինների միջև, հատկապես, նթև, օրինակ, մարզպետը մի կուսակցությունից էր, գյուղապետը կամ քաղաքապետը՝ մեկ այլ:

Երկրորդ բացը վերաբերում էր ՏԻՄ կառավարման ոլորտին: Կային համայնքապետ – ավագանի հակասություններ: Ավագանին դեռևս օժտված չէր լայն լիազորություններով, համայնքի ղեկավարն ընկալվում էր որպես որոշում կայացնող միակ մարմին: Լինում էին դեպքեր, երբ հակասությունը բերում էր համայնքային կյանքի կարգավորման ձախողմանը: Թեպետ ընտրությունները փակ գաղտնի էին, սակայն փոքր համայնքներում հստակ երևում էր, թե ով ում է կողմ քվեարկել: Եվ երբեմն ընտրվելուց հետո իշխանության նկատ քաղաքապետը կամ գյուղապետը «պատժում էր» համայնքի՝ իրեն ձայն չտված անդամներին:

Քննարկման առարկա դարձավ նաև համայնքի բնակիչների նվազագույն թվաքանակի հարցը: Որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինները կատարեին իրենց վրա դրված պարտականությունները, նրանք պետք է բյուջե ունենային, իսկ բյուջեն ձևավորվում էր տեղական տուրքերից: Միջազգային փորձագետների խորհրդով գոյքահարկն ու հողի հարկը թողնվեց համայնքներին:

Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման համար շատ կարևոր էր որոշել ՏԻՄ ընտրությունների կարգը:

Այդ պատճառով ՀՀ Ազգային ժողովում «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» օրենքի նախագծի քննարկման ընթացքում թեժ վեճեր ծավալվեցին: Այդ քննարկումը սկսվեց 1996 թ. մարտի սկզբին: Նախագծում դրված էին մի քանի սկզբունքներ, որոնցից հիմնականը համայնքի ղեկավարի և ավագանու անդամների մեծամասնական ընտրակարգով ընտրությունն էր: Ավագանու անդամների թիվը կախված էր համայնքի բնակչության թվից:

Առաջարկվում էր մի նորմ, որը նորություն էր ընտրական համակարգում՝ տեղական ընտրություններում որպես ընտրող կարող էին մասնակցել այն քաղաքացիները, որոնք բնակվում էին տվյալ համայնքում կամ վերջին երեք տարում անընդմեջ ընդգրկված էին տվյալ համայնքի հարկատուների ցուցակում: Համայնքի ղեկավար կարող էր ընտրվել 25 տարեկանից բարձր այն քաղաքացին, ով մշտապես բնակվել էր տվյալ համայնքում և վերջին երեք տարում եղել էր բարեխիղճ հարկատու: Ավագանու համար առաջարկվում էր նույն նորմը, սակայն այլ տարիքային ցենզով՝ 21 տարեկանից: Ընդ որում, ըստ օրինագծի, տարբեր համայնքներում սեփականություն ունեցող քաղաքացին իրավունք էր ստանում քվեարկել տարբեր համայնքներում:

Ամրագրվում էր ինքնաառաջադրման սկզբունքը, որը նույնպես նորություն էր (նախկինում նախատեսված էր նախաձեռնողների խմբի կողմից առաջադրման մոդելը): Նախատեսվում էր նաև, որ թեկնածուն պետք է նախընտրական գրավ մուծեր, որի չափը տարբերակված էր ու կախված համայնքի մեծությունից: Նախատեսվում էր, որ հանրապետության խոշոր քաղաքներում գրավի չափը պիտի լիներ 300000 դրամ՝ մոտ 750 դոլար, փոքր գյուղերում՝ մինչև 4000 դրամ՝ 10 դոլար⁶:

⁶ ՀՀ ԱԺ արխիվ, 1996 թ. մարտի 3-ի նիստի արձանագրություն, էջ 174:

Հիմնական բանավեճը ծավալվեց ընտրական հանձնաժողովի կազմավորման շուրջ: Տեղական ինքնակառավարման ընտրությունների համար նախատեսվում էր հանձնաժողովների հետևյալ կառուցվածքը՝ կենտրոնական, մարզային, համայնքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Ընտրական հանձնաժողովները կարող էին լինել բազմակուսակցական: Կենտրոնական և մարզային ընտրական հանձնաժողովները ձևավորվելու էին նույն սկզբունքով՝ բազմակուսակցական, իսկ տեղականները առաջադրումների հիման վրա կազմված հանձնաժողովներ:

Նախագծի քննարկումը շատ լարված էր անցնում: Կային որոշ հանգամանքներ, որ անհանգստացնում էին պատգամավորներին: Դա նախ և առաջ ընտրական հանձնաժողովների կազմն էր, երկրորդը՝ գրավը, երրորդը՝ հարկային համակարգի անկատարության պայմաններում վտանգ էին տեսնում քարե-խիղճ հարկատու հասկացության մեջ:

Հանձնաժողովներում մեծամասնությունը կազմում էին իշխող կուսակցության ներկայացուցիչները, քանի որ նախատեսվում էր, որ նրանցում պետք է պահպանվեր քաղաքական ուժերի այն հարաբերակցությունը, որ կար ԱԺ-ում, ինչը, բնականաբար, չէր կարող չանհանգստացնել ընդդիմադիրներին:

1996 թ. ՀՀ ԱԺ-ում քննարկվեց «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» օրենքի նախագծի վերջին տարբերակը, որում հաշվի էին առնվել նախորդ լսումների ընթացքում արված առաջարկները:

Նախագծի մի քանի հարցեր լուրջ քննարկման նյութ դարձան: Մասնավորապես շատերին հուզում էր թեկնածուի գրավը հետ վերադարձնելու հարցը: Վերջիվերջո, որոշվեց, որ համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ բոլոր թեկնածուներին

կողմ ձայների 15 տոկոսից ավել հավաքած քաղաքացիների գրավը հետ է վերադարձվում, իսկ թեկնածուի ֆոնդում մնացած միջոցները նրանք կարող են ծախսել միայն բարեգործական նպատակներով: 15 տոկոսից պակաս ձայներ հավաքած քաղաքացիների գրավի և ֆոնդում մնացած միջոցները մուտքագրվելու էին պետական բյուջե⁷: Ավագանու ընտրությունների դեպքում դրվեց 5 տոկոսանոց շեմ:

Ընդդիմադիր խմբակցություններին հատկապես հուզում էր ընտրական հանձնաժողովների ձևավորման մոդելը: Բազմաթիվ քննարկումներից հետո ՀՀ ԱԺ պետական-իրավական հանձնաժողովը կանգ առավ ընտրական հանձնաժողովների ձևավորման հետևյալ տարրերակի վրա՝ կենտրոնական և մարզային ընտրական հանձնաժողովները ձևավորվելու էին ՀՀ ԱԺ կուսակցական խմբակցությունների առաջարկությունների հիման վրա: Յուրաքանչյուր խմբակցություն առաջարկելու էր իր մեջ ընդգրկված կուսակցությունների կրկնապատիկ քանակով թեկնածուներ: Համայնքային և տեղամասային ընտրական հանձնաժողովները ձևավորվելու էին բազմակուսակցական մարզային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ: Համայնքային հանձնաժողովի անդամների թիվը չէր կարող պակաս լինել 9-ից: Մարզային ընտրական հանձնաժողովի յուրաքանչյուր երկու անդամ առաջարկելու էր 1 թեկնածու համայնքային հանձնաժողովի համար, տեղամասային ընտրական հանձնաժողովի համար առաջարկելու էր մարզային ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր մեկ թեկնածու:

Սկզբում ընտրական հանձնաժողովին իրավունք էր վերապահվում քննարկումներից հետո մերժել թեկնածուի գրանցումը:

⁷ Հետագայում այս մոտեցումը փոխվեց, քանի որ մտահոգություն հայտնվեց, որ դա վերահսկելի չէ:

Սակայն պատգամավորներն այդ դրույթի մեջ կամայականութեան վտանգ տեսան: Որոշվեց, որ անհրաժեշտ է օրենքում ամրագրել այն դեպքերը, երբ հանձնաժողովը կարող է մերժել թեկնածուի գրանցումը:

Օրենքի նախագծում կար մի դրույթ, որի համաձայն քվեարկելու իրավունք էին ստանում այն բոլոր անձիք, ովքեր համայնքում սեփականություն ունեին: Նախագծի հեղինակների կարծիքով, քանի որ քաղաքացին գույքահարկ պիտի վճարեր այդ համայնքում, հետևապես նա պետք է իրավունք ունենար նաև վերահսկելու հարկի օգտագործումը, իսկ դրա համար նա պետք է մասնակցեր ընտրություններին: Սակայն այս կետը բանավեճ առաջացրեց: Մասնավորապես, ԱԻՄ-ն առաջարկում էր, որ ընտրելու իրավունք ունենային ոչ թե այն մարդիկ, ովքեր սեփականություն ունեին տվյալ համայնքում, այլ միայն համայնքում մշտապես բնակվողները: ԱԻՄ-ը հիմնավորում էր, որ հակառակ դեպքում միևնույն քաղաքացին կարող էր քվեարկել մի քանի համայնքներում: Առաջարկը դրվեց քվեարկության, սակայն չընդունվեց:

Միանշանակ չընդունվեց նաև նախագծի հեղինակների մտտեցումը, որի համաձայն ընտրելու իրավունք պետք է ունենային միայն բարեխիղճ հարկատուները: Իհարկե, շատ սուր էր դրված բյուջեն համալրելու խնդիրը, հարկերը չէին հավաքվում: Սակայն մյուս կողմից աղքատության ճիրաններում հայտնված երկրի համար, որը նոր էր դուրս եկել պատերազմից և դեռևս ուներ աղետի գոտի իր քաղում հիմնախնդիրներով, այդ նորմը բավականին վտանգավոր էր: Ստացվում էր, որ ընտրելու իրավունք էր ստանում միայն հասարակության ապահով հատվածը, իսկ դա արդեն խտրականություն էր ունեցվածքի սկզբունքով: Այդ նորմի հետ կապված շատ հարցեր առաջացան, օրինակ՝ ում համա-

րել բարեխիղճ հարկատու, ինչպես որոշել մարդը հարկը չի վճարում, որովհետև անբարեխիղճ է, թե աղքատ է և վճարունակ չէ: Կար առաջարկ, որ քվեարկության իրավունք ունենային ոչ թե այն անձիք, որ բարեխղճորեն վճարել էին հարկերը, այլ գրկվեին այն անձիք, որ չարակամորեն խուսափել էին հարկերի վճարումից: Բայց քաղաքացին չարակամորեն էր խուսափել թե ոչ՝ պետք է որոշեր դատարանը: Հարկ չվճարողների թիվն այնքան մեծ էր, որ դատարանների առջև կարող էր հերթ գոյանալ: Այդ առաջարկը նույնպես մերժվեց: Նույն հողավածի վերաբերյալ ԱԻՄ-ը առաջարկել էր ընտրելու իրավունքը չկապել հարկերը տալու հետ, սակայն հաջորդ նիստի քվեարկության արդյունքում այն մերժվեց 22 կողմ, 47 դեմ, 65 ձեռնպահ ձայներով⁸: Առաջարկվեց նաև, որ թեկնածու առաջարկեին նաև կուսակցությունները, սակայն դա ևս մերժվեց, քանի որ նախատեսվում էր, որ ՏԻՄ-երը չպետք է լինեին քաղաքականացված մարմիններ:

Ի վերջո, «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց 1996 թ. մայիսի 14-ին:

Տեղական ինքնակառավարման զարգացման համար էական նշանակություն ունեցավ *Տեղական ինքնակառավարման մասին և վրոպական խարտիան*, որը մշակվել էր Եվրոպայում իշխանության տեղական և տարածաշրջանային մարմինների մշտական կոնֆերանսի (ներկայիս Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի) նախաձեռնությամբ 1985 թվականին: Ըստ Եվրոպական խարտիայի՝ տեղական ինքնակառավարման սկզբունքներն են.

⁸ ՀՀ ԱԺ արխիվ, 1996 թ. ապրիլի 14-ի նիստի արձանագրություն, էջ 114:

- քնակչության կողմից տեղական նշանակության հարցերի լուծման ինքնուրույնությունը,

- տեղական ինքնակառավարման, դրա մարմինների կազմակերպման առանձնացումը պետական կառավարման համակարգում և պետական իշխանության մարմինների հետ փոխգործակցությունն ընդհանուր խնդիրների և գործառույթների իրականացման հարցում,

- տեղական ինքնակառավարման նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանությունը նրա լիազորություններին,

- տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց պատասխանատվությունը քնակչության առջև,

- մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը,

- տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործունեության օրինականությունը,

- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը,

- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կոլեգիալությունը և միանձնյա ղեկավարումը,

- տեղական ինքնակառավարման պետական երաշխիքները: Խարտիայի հիմնադրույթների մի մասն իր արտացոլումը գտավ ՀՀ օրենսդրության մեջ, մյուս մասը վավերացվեց ավելի ուշ:

Հայաստանի Հանրապետությունում կար 48 քաղաք և 952 գյուղ, որոնցից 8-ը ներառվեցին քաղաքային համայնքների կազմի մեջ, իսկ մնացածը՝ 871 գյուղական համայնքներում: Նախկին քաղաքատիպ ավաններից 10-ը ստացան գյուղական քնակավայրերի, 17-ը՝ քաղաքների կարգավիճակ, իսկ Նուբա-

րաշնն քաղաքատիպ ավանը, թաղամաս կարգավիճակով, ներառվեց Երևան քաղաքի կազմում:

Միաժամանակ նախապատրաստական աշխատանքներ էին տարվում ՏԻՄ առաջին ընտրություններն անցկացնելու համար: 1996 թ. հուլիսին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո՝ արդեն նոյեմբերի 10-ին, 926 համայնքներում կայացան ՏԻՄ առաջին ընտրությունները: Այդ օրը համարվեց տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման օր: Առաջին ընտրությունների ժամանակ սուր պայքար ծավալվեց: Համայնքներում մեծ ազդեցություն ուներ տեղական խորհրդային էլիտան: Հանուն արդարության նշենք, որ այն աչքի էր ընկնում ավելի բարձր կրթական մակարդակով, ֆունկցիոնալ գրագիտությամբ, փորձով, տարածաշրջանի խնդիրների իմացությամբ: Մինդեռ նոր ընտրված գյուղապետերը և ավագանին հաճախ պատկերացում չունեին, թե ինչից պետք է սկսեն աշխատանքը:

Երեք տարի ժամկետով համայնքի սեփականությունը տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու համար ընտրվելու էին տեղական ինքնակառավարման մարմիններ. համայնքի ավագանի՝ 5-15 անդամով, համայնքի ղեկավար՝ քաղաքապետ, գյուղապետ: Ընտրված համայնքի ղեկավարը պետք է ձևավորեր իր աշխատակազմը: Սահմանդրության 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվելու էին ժողովրդավարական ընտրական սկզբունքներին բնորոշ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Համայնքի ավագանու լիազորությունների մեջ էին մտնում համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի բյուջեի հաստատումը, բյուջեի կառար-

ման վերահսկումը, տեղական տուրքերի և վճարների սահմանումը և այլն⁹:

Հաջորդ ընտրություններն անցկացվեցին 1999 թ.: Հետագա տարիներին պարբերաբար (մինչև 2005 թ.³ տարին մեկ անգամ, 2005 թ. հետո՝ 4 տարին մեկ անգամ) անցկացնում են ՏԻՄ ընտրություններ: Որոշ համայնքներում եղել են նաև ՏԻՄ ձևավորման արտահերթ ընտրություններ: Երեք տարի անց՝ 1999 թ. մարտին գումարվեց Աժ արտահերթ նիստ: Մի խումբ պատգամավորներ¹⁰ շրջել էին մարզերով, հանդիպել համայնքների ղեկավար մարմինների, մարզպետների հետ, ուսումնասիրել էին իրավիճակը և Աժ առաջարկ ներկայացրել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Հիմնական գեկուցողն էր Ա. Բաղդասարյանը:

Բանավեճ ծավալվեց ընտրովի տեղական ինքնակառավարման մարմինների և նշանակովի կառավարման մարմինների փոխհարաբերությունների մասին: Բացի այդ, օգտվելով օրենքի տարընթերցումներից, 1998 թ. մեծ թվով գյուղական համայնքների ղեկավարներ մարզպետների՝ ներկայացմամբ պաշտոնանկ էին արվել: Խնդիր դրվեց մինչև պաշտոնանկ անելը համայնքների ղեկավարներին՝ վարչական տույժի ենթարկել, պաշտոնանկ անել միայն ծայրահեղ դեպքում: Եվ կար հակառակ պնդումը, որ նշանակովի մարմինը չի կարող պաշտոնանկ անի ընտրովի մարմին: Պատգամավորների մի մասը գտնում էր, որ ընտրովի մարմինը չպետք է խիստ վերահսկողության են-

⁹ ՀՀ Սահմանադրություն, 1995 թ., հոդված 106:

¹⁰ Պատգամավորներ Խորեն Մարգարյանը, Հայկարամ Մխիթարյանը, Էտնեստ Սողոմոնյանը, Քոչար Դավթյանը, Ներսես Զեյնալվանդյանը, Վիկտոր Դալյաքյանը, Ստեփան Բարսեղյանը, Արթուր Բաղդասարյանը և այլք:

թարկվի մարգպետների կողմից: Նպատակահարմար էին գտնում ուժեղացնել ավագանուն, բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը: Մյուս մասը՝ ընդհակառակը, հենվելով տեղական մակարդակում չարաշահումների վրա, գտնում էր, որ պետք է վերահսկողությունն ուժեղացվի:

Ավագանու ինստիտուտը դանդաղ էր կայանում: Ավագանու աշխատանքը կանոնակարգված չէր: Շատ համայնքներում ավագանին նիստեր էլ չէր անում, տիրում էր ընդհանուր պասիվություն:

Նույնիսկ նվազագույն ծախսերի թույլտվություն ստանալու համար համայնքապետերը ստիպված էին հասնել մարգպետարան: Դա խնդիր էր մարզկենտրոնից հեռու գտնվող գյուղերի ղեկավարների համար: ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից առաջարկ եղավ՝ համայնքներին հանձնել քաղաքացիական կացության հարցերը (մահ, ծնունդ, ամուսնություն և այլն)՝ ազատելով նրանց մարզկենտրոն գնալու անհրաժեշտությունից կամ բոլոր համայնքներում պետծառայողներ նշանակել: Բայց կար «Տեղական բյուջեների բյուջետային համակարգի մասին» օրենք, որով դա չէր նախատեսվում: Բացի այդ՝ ընդունվել էին բազմաթիվ նթաօրենսդրական ակտեր, ՀՀ կառավարության որոշումներ, որոնց մեջ հակասություններ կային:

Կառավարությունն իր հերթին նախագիծ էր մշակել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում (1996 թ.) փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Այդ օրենքն ընդունվել էր մինչև «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (1997 թ.) ընդունումը: Վերջինում կային հոդվածներ, որոնք վերաբերվում էին տեղական բյուջեներին: Այդ 2 օրենքների միջև կային որոշ հակասություններ, որոնք բխում էին կառավարության բոլոր գործընթացները վերահսկողության տակ առ-

նելու ցանկությունից և տեղական ինքնակառավարման նկատմամբ անվստահությունից: «Բյուջետային համակարգի մասին» օրենքի որոշ դրույթներ սահմանափակում էին ՏԻՄ ինքնուրույնությունը: Հստակ չէր սահմանված նաև կառավարության կողմից ՏԻՄ-երին տրված լիազորությունների ընդամենը՝ պարտադիր, պատվիրակված և կամավոր: ԱԺ-ի քննարկման ժամանակ այդ հարցը բարձրացվեց պատգամավոր Մկրտիչ Գիմիշյանի կողմից: Վերջինս նշեց կառավարության կողմից տեղական ինքնակառավարման սկզբունքի խախտման մասին¹¹: Օրինակ, հողի հարկը և գույքահարկը հավաքվում էր համայնքներում, սակայն դրանք չէին մնում համայնքային բյուջեներում, դրանց հավաքման համար աշխատավարձ էր ստանում հարկային տեսչությունը: Օրենքի տեսքով այդ լիազորությունը վերապահված չէր: Մ. Գիմիշյանը նշեց, որ նման ձևով համայնքներին ճնշելը զենք է դարձել կառավարության ձեռքին ընտրություններից առաջ: ՏԻՄ օրենքում նշվում էր, որ տեղական բյուջեները հսկվում են ավագանու կողմից: Ըստ էության կարող էր վերահսկել նաև Վերստուգիչ պալատը, սակայն դրա մասին օրենքում ոչինչ չկար:

1997 թ. հունիսի 26-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով¹² սահմանվեց, որ համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով՝ համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ: Ընդ որում՝ համայնքներին չէին կարող պարտադրվել այդ միջոցներն

¹¹ Նույն տեղում, էջ 69:

¹² www.arlis.am

ուղղել կոնկրետ ծախսերի կատարմանը: Պետական բյուջեից համայնքային բյուջեներին կատարվող հատկացումները կարգավորվեցին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով (1998 թ. դեկտեմբերի 23): ՀՀ նախագահին առընթեր ստեղծվեց տեղական ինքնակառավարման մարմիններով զբաղվող հատուկ հանձնաժողով:

Այսպիսով, Հայաստանում 1990-ականների երկրորդ կեսին, իր թերութուններով հանդերձ, սկսեց ձևավորվել տեղական ինքնակառավարման համակարգը:

Лилит С. Закарян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, Разработка и внедрение системы местного самоуправления в Армении - После провозглашения независимости Армении в 1991 г. началось формирование системы управления, однако на местном уровне до 1995 года оставалась советская модель. Конституция Республики Армения 1995 года положила начало институционального дизайна местной власти. Законом «О переходном положении для местных и региональных органов власти» были ликвидированы Советы народных депутатов. Законы «О выборах в органы местного самоуправления» и «О местном самоуправлении» подготовили почву для формирования системы самоуправления. 10 ноября 1996 года в 926-ти общинах были проведены первые выборы органов местного самоуправления. Этот день считается днем формирования системы местного самоуправления Армении.

Полномочия назначаемого органа власти – губернатора, были значительно больше, чем полномочия выборных органов; что не соответствовало демократическим принципам. В последую-

щие годы, особенно после присоединения Армении к Европейской хартии местного самоуправления, полномочия органов местного самоуправления постепенно расширились, но о серьезных сдвигах на уровне местной демократии пока нет. Очень медленно идет процесс становления института авагани, который пока не пользуется предоставленными законодательством широкими полномочиями. Поэтому можно констатировать, что процесс реформирования системы местного самоуправления пока продолжается.

Lilit S. Zakaryan, *NAS RA Institute of History, PhD in History, Assistant Professor*, The Elaboration and Implementation of Local Self-Government System in Armenia - The formation of the government system was launched after the Independence of Armenia in 1991, though at local level the Soviet model of government acted till 1995. By the adoption of the Constitution of the Republic of Armenia (1995) the institutional design of the local authority began. The councils of the national delegates were liquidated by the law on "Transitional period provisions for local and regional bodies of authority". The basis for formation of the self-government system was created by the law on "Elections in local self-government bodies (1996) and by the law on "Local Self-government" (1996). In November 10, 1996, the first elections of the self-government bodies were held in 925 communities. That day is deemed as the formation of the local self-government system in Armenia. The authorizations of the marz governors are larger than electoral bodies' authorizations, which did not appropriate to the principles of democracy. In the succeeding years, especially when Armenia joined the European Charter of the local self-government, the authorizations of the local

self-government gradually became larger, but there have not still been any serious shifts at the level of local democracy. Formation of the institute of avagany (city/district councils) moves very slowly, the latter has not yet enjoyed the broad authorizations given by the legislation. That is why we can establish that the formation of the process of the local self-government process is still in process.

ՔՆԱՐԻԿ Ռ. ԱՎԱԳՅԱՆ

ԳԱԱ պապանության ինստիտուտ, պ. գ. թ.

ՍԵՐՆԴԱՓՈՒՏՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՇԱՀԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ Հայաստան, սփյուռք, Հայոց ցեղասպանություն, համայնքներ, արտագաղթ, հայապահպանություն, հայրենադարձություն:

Մարդկության պատմության մեջ սերնդափոխությունն անովազն 20 տարին մեկ տեղի ունեցող գործընթաց է: Այնպես որ, դասական հայ սփյուռքը, որպես Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենագրկված և աշխարհով մեկ սփռված հավաքականություն, արդեն 4-րդ և 5-րդ սերունդն է թևակոխել, որը, մասնավորապես՝ **Արևմուտքի երկրներում**, վերասերվում է առավելապես օտար ամուսնությունների հետևանքով ծնված խառնածին, հետևաբար և պարրերաբար փոխակերպվող (տրանսֆորմացիա) ու տարաշերտվող ինքնությամբ, օտարախոս, օտարացած հավաքականության՝ իր ազգային պատկանելության սիմվոլիկ (խորհրդանշական), հաճախ՝ անորոշ կամ սոսկ հանրահաշվական ընկալմամբ (2/4-ով, 3/4-ով, 3/5-ով, 4/5-ով հայ և այլն):

Օտարության մեջ **խառնամուսնությունները**, ցավոք, անխուսափելի են և այն կասեցնել ի վիճակի չեն ո՛չ ամենազորավոր եկեղեցին, ո՛չ ամենաազգային կուսակցությունները, ո՛չ ազգային դպրոցը, ո՛չ մամուլը, ո՛չ ընտանիքը: Ինչպես Լևոն Շանթն է բնութագրել. «Խառնագզի ընտանիքը Բաբելոն մըն է»¹: Եվ, այ-

¹ Լևոն Շանթի երկերը, հ. 5, Պեյրոթ, 1948, էջ 52:

սօր մեր հայ սփյուռքի գերակշիռ մասը փաստացի ապրում և գործում է այդ Բարեգործի մեջ՝ հիմնականում չցանկանալով գիտակցել, որ հետզհետե ընդմիջտ կտրվում և կտրվելու է իր ազգային արմատներից, Հայրենիքից:

Ներկայիս գլոբալ (համաշխարհային) միջավայրում գործող սփյուռքահայ զանգվածային լրատվության մեջ այդ փաստը թերևս չի շոշափվում, չի ահագանգվում, ցանկալի չէ, ընդհակառակը՝ ներհամայնքային օրախնդիր հարցերն այլևս ինքնահոսի են թողնված, փոխաբենը նախընտրելի են դարձել ներհայաստանյան զարգացումների վրա գերազանցապես արևմտյան տերությունների դիտակետից, հետևաբար և՛ կողմնակալ անդրադարձներ կատարելը: Այդ ամենն առանձին դեպքերում նպատակ է հետապնդում արտերկրի հայության շրջանում սառեցնել, բթացնել Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախ) նկատմամբ հայրենասիրական զգացումները, արտասահմանի հայությանը գաղափարապես անջրպետել հայրենի երկրից, հետևաբար և կանխել, բացառել սփյուռքը վերահաս ձուլումից փրկող թերևս միակ միջոցը՝ հնարավոր հայրենադարձությունը: Եվ կամ՝ նույնիսկ Սիրիայի երկարատև ու կործանարար պատերազմի պայմաններում անգամ ավերակված ազգային կառույցները վերականգնելու, վերաշինելու կոչեր են (էին) հնչում՝ որդեգրած երկիրը («սիրիական հայրենիք») արժեքային առումով հաճախ Հայրենիքից գերազնահատելու միտումով:

Նույնիսկ այն պարագայում, երբ Բուվեյթը Իսլամական գթասիրական կոմիտեի (Committee for Islamic Charity) միջոցով նյութական զգալի՝ 100 հազար դոլար, աջակցություն է ցուցաբեր-

րել Հայաստանում հանգրվանած սիրիահայերին², քաղաքական-կուսակցական հատվածական գաղափարախոսությունը, ցավոք, այսօր ևս սկիյուռքի առանձին շրջաններին հեռու է պահում ամբողջովին միանալու և զորացնելու Սիրիայից հայրենադարձ մեր հայրենակիցներին աջակցելու Հայաստանի ջանքերին՝ դրանով իսկ խոչընդոտելով Սկիյուռքը դեպի Հայրենիք կողմնորոշելու հնարավորությունից, նախապատվությունը տալով փախստական հայերի արտերկրում հաստատվելուն սատարելուն³, հայության իրարհաջորդ սերունդներ մատնելով օտարության մեջ նորանոր «հայրենիքներ» (վերա)կառուցելու անհեռանկար և իմաստագուրկ գործընթացով զբաղեցնելուն, մինչդեռ Հայրենիքը՝ ՀՀ-ն ու ԼՂՀ-ն, իր զավակների անսակարկ աջակցության կարիքն ունի:

² <http://news.am/eng/news/130510.html> (Kuwait to Allocate \$100,000 to Syrian Armenians in Armenia, 2012, November 29).

³ Այսպես՝ 2012 թ. նոյեմբերի 11-ին ԱՄՆ-ի կառավարությունը, արձագանքելով չորս երևելի ամերիկահայ իրավաբանների դիմումին, վերանայել է նախկինում «Հայրենիքի անվտանգության» (Homeland Security) բաժանմունքի Միացյալ Նահանգների Բաղաքացիության և ներգաղթի ծառայության (ՄԻԲՆԾ) (U.S. Citizenship and Immigration Services - USCIS) որոշումը սիրիահայերին սուկ «Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակ» (Temporary Protected Status - TPS) տրամադրելու մասին և արտոնել է սիրիահայերին «Իրավազրկության վիզա» (Visa Waivers) շնորհել [<http://www.centerarmnews.com/> (Center for Armenian Remembrance. Press Release, November 12, 2012. U.S. Government responds to Prominent Armenian-American Lawyers call upon U.S. Government to issue visa waivers for Syrian-Armenians)]: Ըստ չանցած նրանց անհաշիվ բարեկամներն ու հարազատները ԱՄՆ-ից և այլ վայրերից իրենց աջակցությունն են հայտնել Միացյալ Նահանգների կառավարությանը սիրիահայերին ԱՄՆ մուտք գործելու դյուրություն ապահովելու համար: Մինչդեռ հարկ էր, որ սկիյուռքահայությունը միասնականություն դրսևորեր, որպեսզի տեական պատերազմի հետևանքով ավերվող Սիրիայից մեր հայրենակիցների տեղափոխումն ու քակցումն իրականանա ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղական իշխանությունների գործունեությանը զուգընթաց, այլ ոչ թե՛ ԱՄՆ-ում, ինչպես նաև նյութական զգալի աջակցություն ցուցաբերվեր արտերկրի մեր հայրենակիցներին Հայրենիք տեղափոխվելու, տեղավորելու և նրանց զբաղվածությունն ապահովելու համար:

Յավոք, վիճակը նույնն է նաև այլ համայնքներում ևս, որտեղ, ժամանակի ընթացքում նմանատիպ կամ այլ սցենարի չբացատվող իրադարձությունների զարգացման ու ծավալման պայմաններում անգամ Հայրենիք վերադարձը մնում է սակարկելի (այսքի առաջ է Իրաքից, Եգիպտոսից, Սիրիայից հեռացած և հեռացող հայության պարագան)՝ նախընտրելով օտար եզերքներում հանգրվանելը, և կամ ազատ, անկախ Արցախի ազատագրումով նաև միացյալ դառնալու ճանապարհին գտնվող Հայրենիքը որպես ցատկահարթակ (տրամպլին), տարանցման (տրանզիտ) վայր դիտարկելը: Այսինքն, սուրյեկտիվ դրդապատճառներից ելնելով՝ աստիճանաբար փորձ է արվում անտեսել, մոռացության մատնել նույնիսկ այն իրողությունը, թե պատմաքաղաքական ինչ հանգամանքների (ցեղասպանություն, հայրենագրկում) հետևանքով են Սփյուռքի մեր հայրենակիցների նախնիները հայտնվել այդ օտար վայրերում: Ի վերջո՝ «Մենք սփիւռք մը ունենալու համար չէ, որ աշխարհի ամէն կողմը ցրուած ենք, այլ՝ բոնութիւնից ու հալածանքից ստիպուած»⁴:

Արդյունքում՝ **Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում** առկա քացառապես մահմեդական միջավայրի «շնորհիվ» տակավին հայապահպանված հայությունը, Արևմուտքի առավելապես «քրիստոնեական» և գերազանցապես «ազատական» իրականության մեջ հայտնվելով, բազմաթիվ ու բազմապիսի ընտրություններ ունենալով և ազգային կառույցների հետ քիչ թե շատ առնչվելով (եթե, իհարկե, սերունդները տակավին առնչվում են. կախում ունի կրոնադավանական բազմազանությունից, սոցիալ-մշակութային միջավայրից, արագընթաց համահարթեցնող համաշխարհայնացումից, անհատական գործոնից և այլն),

⁴ Սվազյան Գ., «Ներգաղթի իմաստն ու արժեքը», Հայրենիքիս համար, Երևան, 1965, էջ 76:

րել Հայաստանում հանգրվանած սիրիահայերին², քաղաքական-կուսակցական հատվածական գաղափարախոսությունը, ցավոք, այսօր ևս սփյուռքի առանձին շրջաններին հեռու է պահում ամբողջովին միանալու և գորացնելու Սիրիայից հայրենադարձ մեր հայրենակիցներին աջակցելու Հայաստանի ջանքերին՝ դրանով իսկ խոչընդոտելով Սփյուռքը դեպի Հայրենիք կողմնորոշելու հնարավորությունից, նախապատվությունը տալով փախստական հայերի արտերկրում հաստատվելուն սատարելուն³, հայության իրարհաջորդ սերունդներ մատնելով օտարության մեջ նորանոր «հայրենիքներ» (վերա)կառուցելու անհեռանկար և իմաստագուրկ գործընթացով զբաղեցնելուն, մինչդեռ Հայրենիքը՝ ՀՀ-ն ու ԼՂՀ-ն, իր գավակների անսակարկ աջակցության կարիքն ունի:

² <http://news.am/eng/news/130510.html> (Kuwait to Allocate \$100,000 to Syrian Armenians in Armenia, 2012, November 29).

³ Այսպես՝ 2012 թ. նոյեմբերի 11-ին ԱՄՆ-ի կառավարությունը, արձագանքելով չորս երևելի ամերիկահայ իրավաբանների դիմումին, վերանայել է նախկինում «Հայրենիքի անվտանգության» (Homeland Security) բաժանմունքի Միացյալ Նահանգների Քաղաքացիության և ներգաղթի ծառայության (ՄՆԻՆԾ) (U.S. Citizenship and Immigration Services - USCIS) որոշումը սիրիահայերին սուկ «Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակ» (Temporary Protected Status - TPS) տրամադրելու մասին և արտոնել է սիրիահայերին «Իրավագրկության վիզա» (Visa Waivers) շնորհել [<http://www.centerarnews.com/> (Center for Armenian Remembrance. Press Release, November 12, 2012. U.S. Government responds to Prominent Armenian-American Lawyers call upon U.S. Government to issue visa waivers for Syrian-Armenians)]: Ըստ չանցած նրանց անհաշիվ բարեկամներն ու հարազատները ԱՄՆ-ից և այլ վայրերից իրենց աջակցությունն են հայտնել Միացյալ Նահանգների կառավարությանը սիրիահայերին ԱՄՆ մուտք գերծելու դյուրություն ապահովելու համար: Մինչդեռ հարկ էր, որ սփյուռքահայությունը միասնականություն դրսևորեր, որպեսզի տևական պատերազմի հետևանքով ավերվող Սիրիայից մեր հայրենակիցների տեղափոխումն ու քնակեցումն իրականանա ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղական իշխանությունների գործունեությանը զուգընթաց, այլ ոչ թե՛ ԱՄՆ-ում, ինչպես նաև նյութական զգալի աջակցություն ցուցաբերվեր արտերկրի մեր հայրենակիցներին Հայրենիք տեղափոխելու, տեղավորելու և նրանց զբաղվածությունն ապահովելու համար:

Ցավոք, վիճակը նույնն է նաև այլ համայնքներում ևս, որտեղ, ժամանակի ընթացքում նմանատիպ կամ այլ սցենարի չրացատվող իրադարձությունների զարգացման ու ծավալման պայմաններում անգամ Հայրենիք վերադարձը մնում է սակարկելի (այքի առաջ է Իրաքից, Եգիպտոսից, Սիրիայից հեռացած և հեռացող հայության պարագան)՝ նախընտրելով օտար եզերքներում հանգրվանելը, և կամ ազատ, անկախ Արցախի ազատագրումով նաև միացյալ դառնալու ճանապարհին գտնվող Հայրենիքը որպես ցատկահարթակ (տրամպլին), տարանցման (տրանզիտ) վայր դիտարկելը: Այսինքն, սուբյեկտիվ դրդապատճառներից ելնելով՝ աստիճանաբար փորձ է արվում անտեսել, մոռացության մատնել նույնիսկ այն իրողությունը, թե պատմաքաղաքական ինչ հանգամանքների (ցեղասպանություն, հայրենազրկում) հետևանքով են Սփյուռքի մեր հայրենակիցների նախնիները հայտնվել այդ օտար վայրերում: Ի վերջո՝ «Մենք սփիւռք մը ունենալու համար չէ, որ աշխարհի ամէն կողմը ցրուած ենք, այլ՝ բոնութիւնից ու հալածանքից ստիպուած»⁴:

Արդյունքում՝ **Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում** առկա քացատապես մահմեդական միջավայրի «շտրիիվ» տակավին հայապահպանված հայությունը, Արևմուտքի առավելապես «քրիստոնեական» և գերազանցապես «ազատական» իրականության մեջ հայտնվելով, քազմաթիվ ու քազմապիսի ընտրություններ ունենալով և ազգային կառույցների հետ քիչ թե շատ առնչվելով (եթե, իհարկե, սերունդները տակավին առնչվում են. կախում ունի կրոնադավանական քազմազանությունից, սոցիալ-մշակութային միջավայրից, արագընթաց համահարթեցնող համաշխարհայնացումից, անհատական գործոնից և այլն),

⁴ Սվազյան Գ., «Ներգաղթի իմաստն ու արժեքը», Հայրենիքիս համար, Երևան, 1965, էջ 76:

մի որոշ ժամանակ դեռ կարող է պահպանել իր ազգային ինքնության ու ազգային ինքնագիտակցության տարրերը, սակայն իրարհաջորդ սերնդափոխությունն ու այլէթնիկ խառնամուսնությունները, մայրենի լեզվի խորհրդանշական իմացությունը կամ ընդհանրապես կորուստը, Արևմուտքի հայությանը գիտակցական հայից հետզհետե վերածել, վերածում և շարունակելու են վերածել «սիմվոլիկ»՝ *զգացական հայության*⁵, ապա նաև՝ «ձուլված, համահարթեցված» հավաքականության:

Ի դեպ, ժամանակի ընթացքում միևնույն «համահարթեցման», «սիմվոլիկացման» անխուսափելի ընթացքն է սպասվում նաև նորանկախ Հայաստանից արտագաղթած հայերին, որոնք դեռևս ապրում են օտարության մեջ համայնքային կյանքում ներգրավվելու կամ իրենցը ստեղծելու նախասկզբնական՝ «ոռմանտիզմի» ժամանակաշրջանում, այսինքն, երբ հույս ունեն, որ ինչ-որ չափով առնչվելով արդեն իսկ գոյություն ունեցող ազգային կառույցների հետ, կամ՝ հիմնելով նորերը, մասնավորապես՝ արևելահայկական, և կամ՝ բացառապես հայեցի ընտանեկան միջավայրի առկայության պայմաններում կարող են սերունդներին պահպանել տալ հայկական ինքնությունը:

Ցավոք, «սիմվոլիկ» հայի վերածվելը, ապա և ազգային ինքնության հետզհետե կորուստը, հայ սփյուռքի ձուլման, անհետացման գործընթացի անբաժանելի, անխուսափելի և պարտազանցական բոլոր ժամանակներով փորձված անկասելի ու պարտադիր գործընթաց է, որը կախում ունի միայն ժամանակից՝ սերնդային աստիճանից և խառնամուսնությունների մակարդակից: Իսկ որ արդյունքը՝ ձուլումը, անշրջելի է հավասարապես բոլորի համար, դա սպացուցման կարիք չունեցող արքիում է [Տե՛ս Աղյուսակ 1, 2]:

⁵ Bakalian A., *Armenian-Americans: From Being to Feeling Armenian*. New Brunswick, London, 1993, pp. 393-396.

Ընդհանուր հաշվարկներով, եթե Հայոց ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ սփռված հայության շրջանում, առավելապես՝ Արևմուտքի երկրներում, «սինվոլիկ» հայության վերածման գործընթացը զգալի էր առավելապես 3-րդ սերնդից, ապա նորանկախ Հայաստանից արտագաղթած հայության շրջանում այդ շերտը նվազելու միտում ունի:

Այսպես, Արևմուտքի երկրներում, դասական հայ սփյուռքի սերունդների «սինվոլիկացման» գործընթացի *փոքր-ինչ ձգձգումը* պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Նախ՝ ի հեճուկս Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանության, բնօրրանի բռնագավթման և աշխարհով մեկ արևմտահայության սփռման, նրանց գիտակցության մեջ զավթված Հայրենիքի՝ բնօրրանի, անաղարտ ընկալմամբ և հիշատակների պահպանման ու փոխանցման ձգտմամբ: Ուծացման որոշակի հասպաղումը կապված էր նաև գոյատևած ու նոր միջավայրին և բարքերին դիմակայել փորձած ու տակավին դիմակայել փորձող (սակայն ժամանակի ընթացքում անխուսափելիորեն ընկրկած և հետգիտուն ընկրկող) հայության 1-ին և 2-րդ սերունդների կողմից ազգային ինքնության պահպանման համար գործադրված գիտակցված անդուլ ջանքերով: Եվ վերջապես՝ համազգային շրջադարձային առիթներով (1965 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի հիշատակում, 1988 թ. Ղարաբաղյան շարժում, 1988 թ. Սպիտակի երկրաշարժ և այլն) Հայրենիքի շուրջ, ընդհանուր առմամբ, համալսմրվածության դրսևորմամբ: Հիշյալ գործոնները ժամանակ առ ժամանակ ինչ-որ չափով սթափեցնող, լրացուցիչ լիցք են հաղորդել Սփյուռքի ազգային ինքնության պահպանման ջանքերին՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով ինքնության վերարժևորման, ազգային ար-

ժեքների պահպանությունը համեմատաբար երկարաձգելու առումով:

Միաժամանակ, քանակական և որակական առումներով հայ Սփյուռքն արտաբուստ «թարմացնելու» տեսակետից նշանակալի դեր են կատարել և շարունակում են կատարել Մերձավոր և Միջին Արևելքից, ինչպես նաև Հայկական ԽՍՀ-ից, ապա՝ ՀՀ-ից դեպի սփյուռքի երկրներ ժամանակ առ ժամանակ շարունակվող պարբերական արտագաղթերը՝ իրականում հայության նորանոր շերտեր զոհաբերելով «հավցնող կաթսայի» ճուլարանին:

Արտերկրում հայտնված հայաստանցիների պարագայում սերունդների «սիմվոլիկացման» գործընթացի *համեմատաբար արագ ընթացքն* իր հերթին բացատրվում է հետևյալ հանգամանքներով: Նախ՝ 1980-ական թվականների կեսերից ողջ ԽՍՀՄ տարածքում և մասնավորապես՝ ՀԽՍՀ-ում միաժամանակ սկսված պատմաքաղաքական լուրջ իրադարձություններով, սոցիալ-տնտեսական վիճակի անկումով, ինչպես նաև հասարակության բարոյաեռզեգիտակցական կյանքի արմատական ու շրջադարձային ձևափոխմամբ: Արդյունքում՝ կենտրոնացված պետական համակարգի (սիստեմ) փոփոխության հետևանքով վրա հասած անիշխանությամբ պայմանավորված հասարակական գործընթացների անորոշությունն ու ամենաթողության մթնոլորտը, ագրեսիվ Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմի հարուցած անխուսափելի, հաճախ՝ արհեստածին դժվարությունները վերջ ի վերջո արտագաղթելու գիտակցություն են սկզբնավորել նաև արևելահայ որոշակի հավաքականության շրջանում: Բնականաբար, ապրուստի տարրական միջոցներից զրկված և հուսահատությունից կամ առավել բարեկեցության հասնելու և այլ նպատակներով արտագաղթած, ինչպես

նաև խարդախությունների հետևանքով արտերկիր փախուստի դիմած հայության տարբեր խավերի շրջանում ձևավորվել է նորանկախ Հայաստանի աղճատված ընկալում, ինչը և հանգեցրել է օտարության մեջ ինքնության պահպանման նվազ նախանձախնդրության և նոր միջավայրին արագ ինտեգրվելու (համարկվել) ձգտման: Վերջապես՝ որոշիչ դեր է խաղում նաև արտերկրի բարքերին ընդհանրապես և դասական հայ սփյուռքին մասնավորապես անծանոթ լինելու հանգամանքը, լեզվամտածողական, սոցիալ-մշակութային, ավանդույթաստվորությանին և մի շարք այլ հանգամանքներ:

Հետևաբար, ժամանակի ընթացքում մշակութային ցնցում (culture shock), հուսահատություն ապրող, ուծացման փաստի հետ ամեն օր առերեսվող, Հայրենիքից հեռանալու համար հոգու խորքում գոչում ապրող և ժամանակի ընթացքում ինքնագիտակցության եկող, ինչպես նաև ազգային, ընտանեկան, մշակութային և այլ արժեքների առումով դեռևս ոչ լրիվ աղճատված երբեմնի հայաստանցու, ինչպես նաև մահմեդական միջավայրի «շնորհիվ» տակավին հայապահպանված Մերձավոր և Միջին Արևելքի հայության համար հնարավորինս վաղ Հայրենիք վերադարձը (ինչին ավելի հաճախակի ենք ականատես լինում վերջին տարիներին երկրում քաղաքական ու տնտեսական կյանքի աստիճանաբար կայունացմանը զուգընթաց, ինչպես նաև վերոհիշյալ տարածաշրջանում տիրող կործանաբար պատերազմների արդյունքում) շատ ավելի իրատեսական և հեռանկարային կարող է լինել ընտանիքի, սերնդի պահպանման, ինչպես նաև՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական և ռազմավարական շահերի տեսակետից: Անցյալի փորձը ցույց է տալիս, որ ժամանակին նույնպիսի իրավիճակում են հայտնվել նաև իրենց կամքից անկախ՝ պատմական ճակատագրի բերումով 20-րդ դա-

րասկզբին աշխարհով մեկ սփռված մեր հայրենակիցների ու նրանց սերունդների մեծ մասը, որոնք, դեգերելով օտարության մեջ, թեպետ ընդհանուր առմամբ մշտապես փայփայել են երբևէ Հայրենիք վերադառնալու, հայրենիքին օգտակար լինելու հույսը, սակայն պատմաքաղաքական և այլ հանգամանքների բերումով պահը բաց թողնելով, այլևս նրանց սերունդները դատապարտվել են ուծացման:

Եվ քանի որ «*հայապահպանությունը*» սփյուռքում, ընդհանուր առմամբ, աննպատակ է, այսինքն՝ նպատակային, իրատեսական, գործնական հայրենասիրության հենք չունի, տվյալ դեպքում *Հասարանակենտրոն* չէ, ընդհակառակը՝ «*անհայրենիք*» է, հետևաբար, շատ ու շատ հայապահպանված, այսինքն՝ հիմնականում ծնող(ներ)ի դրդմամբ մեկօրյա կամ ամենօրյա հայկական դպրոց հաճախած և իր «պարտքը» ազգի նկատմամբ «մեծ գոհությունների գնով» (ֆինանսական, հանգստի, ազատ ժամանակի հաշվին) իրականացրած երիտասարդ սերունդն ընդհանուր առմամբ իրեն ազատագրված է զգում ազգային (էթնիկ) ծագման նկատմամբ պարտավորություններից և կարող է իրեն թույլ տալ կյանքի մնացած հատվածը ազատ՝ իր ապրած միջավայրին համապատասխան տնօրինել (օտար բարձրագույն կրթություն, օտար աշխատատեղ, օտար ամուսնություն և այլն): Մինչև որ, օտար միջավայրում իր տեղը գտած, ինչպես նաև խառնամուսնության կամ լավագույն դեպքում ներազգային ամուսնության հետևանքով համապատասխանաբար խառնածին կամ անգամ ազգային գավակների ծնունդները կգան համոզելու, որ ազգի, իսկ, իրականում, ամենակարևորը՝ Հայաստանի ու նրա ռազմավարական շահերի համար, նրանք «անելիք չունեն»: Հայկական դպրոց, եկեղեցի, ակումբներ են հաճախել, համայնքային գործունեության մեջ ներգրավվել, որպես ինք-

նամխիթարություն և օտարության մեջ սուկ *ինսպրիտուցիոնալ հայասպահպանությանը* ազգի նկատմամբ իրենց պարտքը որպես պարտականություն իրականացրած լինելու համար: Հետևաբար՝ ժամանակի ընթացքում (մանավանդ Հայաստանի անկախացումից հետո) հայրենադարձվելու, Հայրենիքում ապրելու և աշխատելու, հայրենի հողը պաշտպանելու համար վարժված չեն, պատրաստված չեն, հետևաբար և՛ պարտավորված չեն: Ուստի, գլոբալ քաղաքացի լինելն ամենահարմար գաղափարախոսական ծածկն է դառնում երբեմնի «հայասպահպանված» հայերի այդ խմբի համար, ինչը և նրանք ոչուրությամբ ընտրում են որպես ինքնություն:

Այնպես որ, ժամանակի ու տարածության մեջ դիտելով, ինչպես նաև հաշվի առնելով առանձին բացառությունները, հատկապես Արևմուտքի երկրների հետզհետե «սիմվոլիկացող» հայերը Հայաստանի, նրա ռազմավարական և խնդրահարույց տարածաշրջանից բխող իրական շահերի համար դառնում են գործնականում «ամորֆ», եթե չասենք՝ «վիճարկելի» հավաքակա-
նություն, մշտապես ենթակա, պատրաստ, պարտավոր ծառայելու իրենց ապրած երկրների քաղաքական շահերին ու դոկտրինաներին՝ երբեմն նույնիսկ որոշակի վտանգ ներկայացնելով Հայաստանի ազգային անվտանգության շահերին: Հանգամանք, որին անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները բազմաթիվ անգամներ ականատես են եղել և լինում հասարակական-քաղաքական և այլ ասպարեզներում ներգրավված արտերկրի որոշ հայրենակիցների կողմից: Բացառությունները հաշվի առնելով՝ այս երևույթը նույնն է նաև առայժմ դեռ օտար ամուսնություն չկնքած, թե՛ արևմուտքի և թե՛ արևելքի երկրներում բնակվող, առավելապես ազգային կառույցների հետ առնչվող, այսպես կոչված՝ «հայասպահպանված» (սփյուռ-

քահայ, թե՛ նախկին հայաստանցի) հայության գերակշիռ մասի համար ևս, քանի որ ամենից առաջ և ամենից առավել նրանք իրենց երկրների քաղաքացիներն են՝ ուսում, կրթություն, աշխատանք, վարձատրություն են ստանում այնտեղ՝ դրանից բխող իրավունքներով ու պարտականություններով:

Պարզ մի փաստ ինքնին խոսում է Հայոց ցեղասպանությունից հետո Սփյուռքի վերածված մեր հայրենակիցների «անհայրենիք հայապահպանվածության», հետևաբար՝ համազգային առաջնահերթությունների հանդեպ քաղաքական-համայնքային կառույցների վարած աշխատանքի անարդյունավետության մասին: Անցած հարյուրամյակի ընթացքում՝ դարասկզբին կովկասյան (1914-1916 թթ.) և կիլիկյան (1916-1918 թթ.) կամավորական շարժումների համեմատ նույն դարավերջին Արցախյան շարժման տարիներին (1988-1994 թթ.) սփյուռքի մեր հայրենակիցների ֆիզիկական ներգրավվածությունը հայրենի տարածքների ազատագրման ջանքերին հազարապատիկ անգամ նվազել է⁶:

Այսպես, եթե XX դարասկզբին Կիլիկիայի ազատագրման նպատակով կամավորական շարժմանը մասնակցելու համար միայն ԱՄՆ-ից անդամագրվել էր 5.000 հայ⁷, ապա դարավերջին Արցախյան շարժման տարիներին կամավորագրվել և ռազմական գործողություններին ոչ տևական մասնակցություն է ունեցել 11⁸, իսկ տևական՝ 3⁹ ամերիկահայ:

⁶ Ավազյան Բ., Հողապահպանության և «անհայրենիք» հայապահպանության գաղափարների դրսևորումը ԱՄՆ-ի հայ համայնքում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 2014, N 2, էջ 41-57:

⁷ Ավազյան Բ., Կիլիկիահայությունը ԱՄՆ-ում եւ նրանց նպաստը Բնօրրանին. Ամերիկահայերը եւ «Արեւելեան-Հայկական լեզէոնը», «Հասկ». Հայագիտական տարեգիրք, Նոր Շրջան, ԺԱ Տարի, 2007-2008, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 68:

⁸ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994. Հանրագիտարան, Երևան, 2004, էջ 536:

Անհամեմատելի է նաև Առաջին աշխարհամարտի տարիներին կռվկասյան կամավորական շարժմանն արտերկրի հայերի ընդհանուր ներգրավվածությունը Արցախյան շարժման տարիներին հայրենի բնօրրանի ազատագրմանը կամավորագրված սփյուռքահայերի ընդհանուր մասնակցությանը: Այսպես, եթե Առաջին աշխարհամարտին ԱՄՆ-ից, Եվրոպայից և աշխարհի տարրեր կողմերից (Ռուսաստան, Բուլղարիա, Ռումինիա, Եգիպտոս, Պարսկաստան և այլն) կռվկաս էր ժամանել շուրջ 3.000 հայ⁹, ապա Արցախյան պատերազմի ժամանակ ռազմական գործողություններին տևական մասնակցություն ունեցած սփյուռքահայ կամավորների ընդհանուր թիվը չի գերազանցել երկու տասնյակը, իսկ ոչ տևական մասնակցություն ունեցածներինը՝ 120-ը: Ըստ պաշտոնական տվյալների՝ «Շուշիի առանձնակի գումարտակում», որն ստեղծվել էր 1992 թ. սեպտեմբերի 1-ին մինչ այդ կազմավորված՝ ՀԅԴ կուսակցության կամավորական ջոկատների հիմքի վրա, պարբերաբար համալրվել էր 118 սփյուռքահայ կամավորով, ընդ որում, բուն արտերկրից՝ թվով 64 (Լիբանան՝ 23, ԱՄՆ՝ 11, Իրան՝ 9, Կանադա՝ 7, Ֆրանսիա՝ 7, Սիրիա՝ 6, Իտալիա՝ 1), իսկ նախկին ԽՍՀՄ տարածքից՝ 54 (Զավայթ՝ 45, Վրաստան՝ 6, Ռուսաստան՝ 3)¹⁰:

Թեև այսօր աշխարհում առկա է ավելի քան 10 միլիոնանոց հայ սփյուռք, և հակառակ այն բանին, որ 1985 թ. հետո Խորհրդային Միությունում տեղի ունեցող ազատականացման գործընթացները, ապա 1991 թ. ազատ և անկախ Հայաստանի Հանրապետության հռչակումը, ինչպես նաև Լեռնային Ղարա-

⁹ Նույն տեղում, էջ 265-266, 481, 659:

¹⁰ Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը. 1914-1916 թթ., Երևան, 1965, էջ 187:

¹¹ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994. Հանրագիտարան, էջ 536:

րադի Հանրապետության ազատագրումը պետք է, որ ռզկորնիս նաև տասնամյակներ շարունակ «Կարմիր Հայրենիքից» պաղած սփյուռքյան ազգային կառույցներին, այդուհանդերձ, *կանխակա* հանգամանքներից ելնելով, համահամայնքային հնամակարգված հողապահպան՝ հայրենադարձության ծրագիր այդպես էլ չի գործում:

Սփյուռքի մեր հայրենակիցների շրջանում հողապահպանության ձգտումների նվազումը պայմանավորված է ինչպես օրյեկտիվ, նույնպես և սուրյեկտիվ հանգամանքներով: Նախ՝ օտար միջավայրում սերնդավոխոխությանը զուգընթաց քնօրրանի գիտակցությունը *օրյեկտիվորեն* միտված է թուլացման, մանավանդ, եթե համայնքային կառույցների ազգային դաստիարակության գաղափարախոսական հենքը իրատեսական չէ: Տվյալ դեպքում Հայոց ցեղասպանությունից հետո հայ սփյուռքի մի զգալի հատվածի հայապահպան ջանքերը հանգրվանած երկրներում կրել են զգացական, խորհրդանշական, «անհայրենիք» քնույթ, քանի որ պատմաքաղաքական հանգամանքների բերումով հայրենագրված հավաքականությունը տասնամյակներ շարունակ չի ունեցել որոշակի իրատեսական՝ հողապահպանության գաղափարախոսական հենք, հակառակ Խորհրդային Հայաստանի՝ որպես Մայր Հայրենիքի, փաստացի գոյության: Ընդհակառակը, առանձին դեպքերում փորձեր են արվել իրատեսական՝ հայաստանակենտրոն գաղափարախոսությանը հակադրել պասիվ ազգապահպանությունը, որի ջատագովները դեռևս 1920-ական թթ. սկզբին արդեն շրջանառության մեջ էին դրել, այսպես կոչված, «բարոյական պետություն», «անհայրենիք պետություն», «հոգևոր հայրենիք» հասկացությունները՝ փորձելով հիմնավորել, թե՛ «հայրենիքը չէ բացառաբար, որ հիմ պիտի դառնա որևէ հավաքականության ամբողջացման, պահպանման

և իրավական գոյության», հայրենիքի դերը կարող է կատարել «ազգությունը, որ իր շուրջն է համախմբում բոլոր նրանց, որոնք միևնույն ազգի պատկանելության զգացումը ունեն»։ Ըստ նրանց, յուրաքանչյուր գաղութահայ հյուրընկալ երկրի նկատմամբ իր պարտականությունները պիտի կատարեր «առանց երբևէ իր որևէ քայլին ազգային (հայկական) կերպարանք տալու և իր պայքարը կապելու մայր հայրենիքի (Հայաստանի) ճակատագրին»¹²։ Այսպիսով, արևմտյան հակախորհրդային քարոզչությանը տուրք տալը, բնական է, որ նպաստավոր պայմաններ է ստեղծել Սփյուռքի մեր հայրենակիցների գերակշիռ մասի մոտ հատվածային, տեղային և կամ՝ ընտրովի ինքնության ձևավորման ու արմատավորման համար։

Նման պայմաններում երբեմնի, թեպետև հայապահպանված, սակայն աստիճանաբար սերնդափոխվող և գլոբալացվող հայ սփյուռքի զգալի հատվածը (կուսակցական, կրթական, լրագրող, համակիր և այլն) իր բոլոր շերտերով (Հայոց ցեղասպանությունից առաջ և հետո արտագաղթածներ, նախկին հայրենադարձ արտագաղթյալներ, անկախ Հայաստանից արտագաղթածներ) և սերունդներով (հայ, ծագումով հայ) հանդերձ, անհաղորդ է մնում Հայաստանի հողապահպան ջանքերին։

Այդ ամենը հնարավոր դարձավ ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին խորհրդային երկրներ, այդ թվում նաև՝ Հայաստան, «Դեմոկրատիայի», «բացախտության», «մարդու իրավունքների» անվան տակ կյանքի գրեթե բոլոր ոլորտներ (քաղաքական, տնտեսական, հոգևոր, գիտական, կրթական, մշակութային և այլն) արտերկրից համաժամանակյա և հետևողական, քողարկված ու բացահայտ այլընտրանքային, երբեմն կեղծ «արևմտյան

¹² Թովուզյան Հովհ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, 1978, էջ 250։

արժեքների» հետևողական ու նպատակադրված ներթափանցման, ներխուժման պայմաններում: Այդ ամենը հնարավոր դարձավ նաև որպես հետևանք արտերկրում տասնամյակներ շարունակ Սփյուռքի առանձին կառույցների ծավալած հսկայախորհրդային քարոզչության և սփյուռքը Հայաստանից անջրպետելու ուղղությամբ տասնամյակներ շարունակ օտար կառույցների հովանավորչությամբ և սերտ գործակցությամբ իրականացրած հետևողական պառակտիչ գործունեության¹³, ինչը, այնուամենայնիվ, շարունակվում է նաև ցայսօր:

Անշուշտ Արևմուտքի (իմա՝ ԱՄՆ, մասամբ՝ Եվրոպա) ծավալապաշտական-գլոբալիստական շահերը մշտապես եղել և շարունակում են մնալ այս տարածաշրջանի (Մերձավոր, Միջին Արևելք, Ռուսաստան և այլն, քացառությամբ՝ հիմնականում Թուրքիա, Իսրայել), նաև՝ Հայաստանի ռազմաքաղաքական շահերին հակադիր: Հետևաբար Սփյուռքի և Հայաստանի հետ հարաբերությունները մշտապես եղել և մնում են հենց այդ քաղաքական առաջնահերթությունների վրա խարսխված՝ դրանցից բխող բոլոր հետևանքներով: Ահա թե ինչու, Հայաստանում քաղաքական կարգերի փոփոխությունը՝ խորհրդայինից դեպի ան-

¹³ Եկատի ունենք՝ 1930-ական թթ. «անհայրենիք» պետության ստեղծման գաղափարախոսության սկզբնավորում, 1946 թ. մեկնարկված Սառը պատերազմ, 1948 թ. ԱՄՆ-ում Հայրենագուրկ Հայերի Օգնության Ամերիկյան Ազգային Կոմիտեի - ԱՆՉԱ [American National Committee to Aid Homeless Armenians - ANCHA] ստեղծումով ավելի քան 4.500 տարագիր հայերի փոխադրում ու րնակեցում ամերիկյան հողում [Barsumian N., Stowaway to Heaven. Ohio, 1961, p. 151], 1933 թ. Դևոնդ արք. Դուրյան (Tourian) սրբազանի սպանությամբ և հետագայում՝ 1956 թ. Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությամբ Հայ առաքելական եկեղեցու պառակտում, 1960-70-ական թթ. ԱՆՉԱ-ի գործունեության վերականգնումով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից, ինչպես նաև Խորհրդային Հայաստանից 18.500 հայերի տեղափոխումը ԱՄՆ [Փիլոմյան Ռ., Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգներ, «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003, էջ 37] և այլն):

կախ հասարակարգ, էական և շրջադարձային փոփոխություն չմտցրեց Հայրենիքի նկատմամբ Սփյուռքի մեր հայրենակիցների հավաքական վերաբերմունքի մեջ, այլ՝ մնաց քաղաքականացված: Ընդհակառակը, եթե խորհրդային հասարակարգի օրոք պարզ էր, թե սփյուռքի որ հատվածն է կողմնորոշված դեպի Հայաստան (ՌԱԿ, ՄԴՀԿ, չեզոքներ և այլն), իսկ որը՝ ոչ (ՀՅԴ), ապա անկախ Հայաստանի պայմաններում սփյուռքահայ քաղաքական ուժերը և նրանց հովանավորության ներքո գործող համայնքային կառույցները (ատանձին բացառիկ բացառություններով) գրեթե միատարր, միախոհ, միաբերան, եթե չասենք՝ հավաքական «դիրքորոշված» են Հայաստանի խնդիրների նկատմամբ, որոնք, ընդամին, միշտ չէ, որ համընկնում են Հայաստանի և տարածաշրջանի նրա ռազմավարական գործընկեր երկրների տնտեսական, քաղաքական, ռազմաստրատեգիական շահերի առաջնահերթություններին հետ:

Նման պայմաններում անիմաստ, եթե չասենք ի չիք է դառնում նաև Հայ դատի պայքարն արթուն պահելու առաջնահերթությունից ելնելով, «Սփյուռքը պահելու» արտերկրում պարբերաբար հնչեցվող տեսակետը և հանուն այդ նպատակի Սփյուռքում նպատակային ու գործնական «*հայասպահպանություն*» իրականացնելու արդյունավետությունը: Արդեն մեկ դար շարունակվող Հայ դատի պայքարն ընդհանուր առմամբ վերածվել է անվերջանալի, ժամանակատար և խիստ ծախսատար, արդյունքում՝ ինքնանպատակ լոբբիստական գործունեության (լավագույն դեպքում՝ պայքարելով, ճանաչել տալով այս կամ այն պետությանը Հայոց ցեղասպանության իրականացման, իսկ հիմա նաև՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության անկախության փաստերը), որը մեծ հաշվով, հարկ եղած դեպքում, քաղաքական, նույնիսկ իրավական առումներով, միևնույն է, ազգային

պահանջատիրության խնդիրների համար ցանկալի արդյունք չի տալիս և, մեր կարծիքով, չի կարող տալ, քանի որ կախված է միջազգային կառույցների «քաղաքական նպատակահարմարությունից» բխող սուրյեկտիվ դիրքորոշումից, հետևաբար և հակասում է նրանց համընդհանուր աշխարհաքաղաքական ծրագրերին¹⁴:

Կարծում ենք՝ իրական *հայասպահայանության* միակ սենտոն նպատակը բոլոր ժամանակներում պետք է լինի սփյուռքահայ սերունդներին գաղափարապես, ֆիզիկապես և նյութապես *նախապարտապել, ուղղորդել* քացառապես Հայաստանի Հանրապետություն, այժմ նաև՝ ազատագրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (Արցախ), *անսակարկ զանգվածային հայրենադարձի, վերադարձի*: Միաժամանակ, հարկ է ջանքեր գործադրել՝ հասկանալու չավարտված պատերազմի մեջ գտնվող, ամենօրյա արտաքին ու ներքին անասելի դժվարություններ դիմակայող Հայրենի պետականությանն ու ժողովրդին, ընտելանալ, հարմարվել, մերվել հայրենի միջավայրին (ինչպես որ արտերկրի հայությունը, ընդհանուր առմամբ, ինտեգրվում է օտար, այլալեզու, այլադավան, նույնիսկ՝ այլէթնիկ տարատե-

¹⁴ Փոխարենը, 2008 թ. փետրվարի 17-ին Կոստվոյի այբանական իշխանությունների կողմից երկրամասի Սերբիայից անկախացման փաստը՝ առանց տնական լորրիստական գործունեության, անմիջապես ճանաչվել է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ինչպես նաև ՄԱԿ-ի անդամ 64 պետությունների կողմից: Մինչդեռ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ Ռուսաստանը և Չինաստանը, ընդհակառակը, իրենց համերաշխությունն են արտահայտել Սերբիային [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5041 (Սարյան Ս., Կոստվոյի խնդրի վերաբերյալ, 24.09.2010)]: Այդ գործարքը հնարավոր դարձավ, քանի որ զերազանցապես քրիստոնյա բնակչություն ունեցող Սերբիայի կազմում այբանացի մահմեդականների կողմից անկախ վարչական միավորի ստեղծումն ու պաշտպանությունը ռազմավարական կարևորություն ներկայացնող տարածքները քրիստոնեաթափելու միջազգային կառույցների «աշխարհաքաղաքական նպատակահարմարության» առանցքային մասն է կազմում:

սակ հանրություններին, ամենաանսովոր բարբեր ունեցող երկրներում, և ինչպես որ, հայրենաբնակ հայությունն է, ընդհանուր առմամբ, հարազատորեն ընդունում, մերվում նրանց՝ շատ դեպքերում արտոնյալ պայմաններ ստեղծելով հայրենադարձների համար):

Եվ քանի որ *իրական հայապահպանության հիմքը պետք է հայրենասիրությունը լինի*, հետևաբար հարկ է գործնականում վստահորեն և առավելագույնս անսակարկ ու անմնացորդ աջակցել *միակ* Հայրենիքին՝ *զանգվածային հայրենասրտությունը* և գաղափարական խորը համոզմունքով նպատակային լայնածավալ *ռազմավարական ներդրումներ իրականացնելով* (տնտեսության, բնակարանաշինության և այլ ոլորտներում)՝ ի շահ երկրի զարգացման ու առաջընթացի:

Հակառակ դեպքում՝ Միյոտքը, որպես ազգային կարևորություն ներկայացնող հավաքականություն, աննպատակ և ապարդյուն «հայապահպանությամբ», հարափոփոխ, արագ գլոբալացվող և անընդհատ նորանոր մարտահրավերների հետ առերեսվող աշխարհաքաղաքական պայմաններում դատապարտված է ձուլման ու անհետացման:

Մինչդեռ, իրական և գործնական *հայապահպանությունը՝ հողապահպանությունն է*, քանի որ *հողապահպանությունն է ազգապահպանության հենքն ու մշտնջենականության պայմանը*, իսկ *հայապահպանությունն առանց հողապահպանության՝ անիմաստ է*:

Աղյուսակ 1

Սերունդները <i>Արևմտյան երկրների</i> հայ համայնքներում	Ներազգային ամուսնություններ	Խառնամուսնություններ
I. Սերունդ	100%	0%
II. Սերունդ	80%	20%
III. Սերունդ (օտարախոս, սիմվոլիկացող)	50%	50%
IV. Սերունդ (օտարախոս, սիմվոլիկացող)	30%	70%
V. Սերունդ (օտարացած, սիմվոլիկացած)	15%	85%

Աղյուսակ 2

Սերունդները <i>Արևելյան երկրների</i> հայ համայնքներում	Ներազգային ամուսնություններ	Խառնամուսնություններ
I. Սերունդ	100%	0%
II. Սերունդ	100%	0%
III. Սերունդ (արթնացող՝ 1960/1970-ական թթ., ԱՄՆԱ)	95%	5%
IV. Սերունդ	90%	10%
V. Սերունդ	85%	15%

Княрик Р. Авакян, *Институт истории НАН РА, к.и.н.*, Перспективы смены поколений в диаспоре в контексте стратегических интересов Армении - Идеи сохранения родины и национальной идентичности армян неоднозначно воспринимается представителями армянской Диаспоры, что обусловлено изменчивостью позиций армянских политических партий в отношении Отчизны, а также сменой поколений. В результате сказанного, в наши дни идея Родины и национальности претерпела трансформацию, что нашло отражение в деформации национального самосознания.

На протяжении последнего столетия (с начала XX в. до начала XXI в.) прежнее восприятие политико-стратегических интересов Армении в диаспоре постепенно сменилось идеей первенства глобализации, а в отдельных случаях даже превосходства стратегических интересов стран, в которых обосновались армяне. В основном эти интересы противоречат интересам Армении и ее стран-партнеров.

Настало время, чтобы наши соотечественники Диаспоры перешли к реальным и практическим действиям по сохранению целостности нации путем ее консолидации на родной земле, поскольку интересы Отчизны превыше всего.

Knarik R. Avakian, *NAS RA Institute of History, PhD in History, The Perspectives of Generation Changes in the Diaspora in the Context of Strategic Interests of Armenia* - The ideas of preserving Homeland and Armenianness have different perception and demonstration in the Armenian Diaspora. The explanation to these is the changeable attitude of the Armenian political parties towards Motherland, as well as the changes of generations that are taking place in the Diaspora through decades. As a result, the ideas of Fatherland and nationality have undergone transformation.

Within a century (from the beginning of the 20th century to the beginning of the 21st century) the previous perception of political-strategic interests of Armenia in the Diaspora has been gradually replaced with the priority of globalization and even with the superiority of strategic interests of the countries, where the Diaspora Armenians dwell. Generally these interests contradict to the interests of Armenia and partner countries.

It is high time for the Diaspora Armenians to undertake realistic and practical activities directed to the preserving of the national entity and consolidation in Homeland, because the interests of Fatherland come first.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԼԵՏ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՇԱՆԱՎՈՐ ՊԱՏՄԱՔԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆԻ
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 3

ՎԱՀԱՆ Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԷՐԶՐՈՒՄԻ (ԿԱՐԻՆԻ) 1918 Թ. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 12

ԿԱՐԵՆ Պ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 28

ԳԱՅԱՆԵ Գ. ՄԱՆՄՈՒՐՅԱՆ

ՊԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ Վ.
ՀԱՍԿԵԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1919 Թ. 49

ՀԱՄՈ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ
ՄԵՆԱՇՆՈՐԸ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920-1921 ԹԹ.) 76

ԳՈՒՐԳԵՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՆՐԱԿԻՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ) 88

ՍՈՒՐԵՆ Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 109

ԳԱԳԻԿ Ա. ԺԱՄՀԱՐՅԱՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920-ԱԿԱՆ ԹԹ.
ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) 120

ԿԱՐՈ Ա. ԺԱՄԽԱՐՅԱՆ

«ՀՈԳԵՎՈՐ ԵՂԱՅՐՈՒԹՅՈՒՆ» ՇԱՐԺՈՒՄԸ ՄԻՐԻԱՅԻ
ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 128

ՎՈԼՈԴՅԱ Ա. ԳԱՄՊԱՐՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՅ
ՊԱՐՏԻՋԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՐԱՆՈՒՄԸ
ՊՐՈՖԵՍՈՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱՆԵՑՅԱՆԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 146

ԱՐՏՅՈՄ Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԻՍՀ ՆԳՆ-Ի ՊԱՅՔԱՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ
ԱՆԱՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՆ
ԴԵՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 159

ԱՐՄԵՆԱԿ Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 171

ՈՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶՔԵԿՅԱՆ

ՀՀ ԵՎ ՌԴ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ
ՋԱՐԳԱՑՈՒՄԸ 1991-2008 ԹԹ. 184

ԼԻԼԻԹ Ս. ԶԱԲԱՐՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԴՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 207

ՔՆԱՐԻԿ Ա. ԱՎԱԳՅԱՆ

ՍԵՐՆԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 226

CONTENTS

HAMLET M. HARUTYUNYAN

SCIENTIFIC AND ORGANIZATIONAL ACTIVITY OF
PROMINENT HISTORIAN VLADIMIR GHAZAKHETZIAN 3

VAHAN H. MELIKYAN

THE DEFENSE AND CAUSES OF THE FALL OF ERZRUM
(KARIN) IN 1918 12

KAREN P. HAYRAPETYAN

THE ISSUE OF THE NUMBER OF REFUGEES IN
HISTORIOGRAPHY OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA ... 28

GAYANE G. MAKHMOURIAN

ADMINISTRATIVE, HUMANITARIAN AND POLITICAL
ACTIVITIES OF THE ALLIED HIGH COMMISSIONER W.
HASKELL IN ARMENIA IN 1919 49

HAMO K. SUKIASYAN

THE ESTABLISHMENT OF MONOPOLY IN THE SPHERE OF
PUBLISHING IN SOVIET ARMENIA (1920-1921) 76

GURGEN V. VARDANYAN

THE FORMATION OF EDUCATIONAL SYSTEM
IN ARMENIAN SSR (1920'S) 88

SUREN R. AVETISYAN

THE ACTIVITY OF ARMENIAN RED CROSS SOCIETY IN
SOCIAL SPHERE IN 1920'S 109

GAGIK A. ZHAMHARYAN

THE MAIN ISSUE OF ARMENIAN REFUGEES IN SOVIET
ARMENIA (FIRST HALF OF 1920'S) 120

<i>KARO A. JAMKHARYAN</i>	
THE "SPIRITUAL BROTHERHOOD" MOVEMENT IN THE ARMENIAN COMMUNITIES OF SYRIA AND LEBANON IN 1920-1930'S	128
<i>VOLODYA A. GASPARYAN</i>	
THE REFLECTION OF ARMENIAN PARTISANS' ACTIVITIES DURING THE GREAT PATRIOTIC WAR IN THE WORKS OF VLADIMIR GHAZAKHETZIAN	146
<i>ARTYOM M. VARDANYAN</i>	
HOMELESSNESS AND VAGRANCY OF THE ARMSRR MINISTRY OF INTERNAL AFFAIRS DURING THE FIRST POST-WAR YEARS	159
<i>ARMENAK S. MANUKYAN</i>	
THE STAGES OF DISSIDENCE MANIFESTATION IN SOVIET ARMENIA AND THE DIFFICULTIES OF THEIR STUDY	171
<i>RUBEN L. AZIZBEKYAN</i>	
THE FORMATION AND DEVELOPMENT OF THE TRADE- ECONOMIC RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND RUSSIAN FEDERATION IN 1991-2008	184
<i>LILIT S. ZAKARYAN</i>	
THE ELABORATION AND IMPLEMENTATION OF LOCAL SELF- GOVERNMENT SYSTEM IN ARMENIA	207
<i>KNARIK R. AVAKIAN</i>	
THE PERSPECTIVES OF GENERATION CHANGES IN THE DIASPORA IN THE CONTEXT OF STRATEGIC INTERESTS OF ARMENIA	226

СОДЕРЖАНИЕ

ГАМЛЕТ М. АРУТЮНЯН

НАУЧНО-ОРГАНИЗАЦИОННАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ИЗВЕСТНОГО
ИСТОРИКА ВЛАДИМИРА КАЗАХЕЦЯНА 3

ВАГАН Г. МЕЛИКЯН

ОБОРОНА И ПРИЧИНЫ ПАДЕНИЯ ЭРЗРУМА
(КАРИН) В 1918 ГОДУ 12

КАРЕН П. АЙРАПЕТЯН

ВОПРОС ЧИСЛЕННОСТИ БЕЖЕНЦЕВ В ПЕРВОЙ РЕСПУБЛИКЕ
АРМЕНИЯ В ИСТОРИОГРАФИИ 28

ГЛАНЭ Г. МАХМУРЯН

ОРГАНИЗАЦИОННАЯ, ГУМАНИТАРНАЯ И ПОЛИТИЧЕСКАЯ
ДЕЯТЕЛЬНОСТЬ ВЕРХОВНОГО КОМИССАРА СОЮЗНИКОВ В.
ГАСКЕЛЯ В АРМЕНИИ В 1919 Г. 49

АМО К. СУКИАСЯН

УСТАНОВЛЕНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ МОНОПОЛИИ В
ИЗДАТЕЛЬСКОЙ СФЕРЕ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ
(1920-1921 ГГ.) 76

ГУРГЕН В. ВАРДАНЯН

ФОРМИРОВАНИЕ ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ СИСТЕМЫ В
СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1920-ЫЕ ГОДЫ) 88

СУРЕН Р. АВЕТИСЯН

ДЕЯТЕЛЬНОСТЬ ОРГАНИЗАЦИИ АРМЯНСКОГО КРАСНОГО
КРЕСТА В СОЦИАЛЬНОЙ СФЕРЕ В 1920-ЫЕ ГОДЫ 109

ГАГИК А. ЖАМГАРЯН

ПРОБЛЕМА АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ В СОВЕТСКОЙ
АРМЕНИИ (ПЕРВАЯ ПОЛОВИНА 1920-ЫХ ГОДОВ) 120

КАРО А. ЖАМХАРЯН

ДВИЖЕНИЕ "ДУХОВНОЕ БРАТСТВО" В АРМЯНСКИХ
ОБЩИНАХ СИРИИ И ЛИВАНА В 1920-1930 ГГ. 128

ВОЛОДЯ А. ГАСПАРЯН

ОТОБРАЖЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ ПАРТИЗАН-АРМЯН В
ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ В РАБОТАХ
ПРОФЕССОРА ВЛАДИМИРА КАЗАХЕЦЯНА 146

АРТЕМ М. ВАРДАНЯН

БОРЬБА МВД АРМЯНСКОЙ ССР ПРОТИВ ДЕТСКОГО
БЕЗДОМНИЧЕСТВА И БРОДЯЖНИЧЕСТВА В ПЕРВЫЕ
ПОСЛЕВОЕННЫЕ ГОДЫ

АРМЕНАК С. МАПУКЯН

ЭТАПИ ПРОЯВЛЕНИЯ ИНОКОМЫСЛИ В СОВЕТСКОЙ
АРМЕНИИ И ТРУДНОСТИ ИЗУЧЕНИЯ ПРОБЛЕМЫ 171

РУБЕН Л. АЗИЗБЕКЯН

СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИХ
ОТНОШЕНИЙ МЕЖДУ РА И РФ В 1991-2008 ГГ. 184

ЛИЛИТ С. ЗАКАРЯН

РАЗРАБОТКА И ВНЕДРЕНИЕ СИСТЕМЫ МЕСТНОГО
САМОУПРАВЛЕНИЯ В АРМЕНИИ 207

КНАРИК Р. АВАКЯН

ПЕРСПЕКТИВЫ СМЕНЫ ПОКОЛЕНИЙ В ДИАСПОРЕ В
КОНТЕКСТЕ СТРАТЕГИЧЕСКИХ ИНТЕРЕСОВ АРМЕНИИ 226

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքին հոդվածներ ներկայացնելու չափորոշիչները.

- Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:

- Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերով (10-15 տող): Տառատեսակը հայերենի դեպքում՝ Sylfaen, այլ լեզուների՝ Times New Roman, տեքստի տառաչափը՝ 12, տողատակում՝ 9, միջտողային հեռավորությունը՝ 1.5, լուսանցքները՝ վերևից՝ 2, ներքևից՝ 2.5, ձախից՝ 3, աջից՝ 1:

- Գիտական աստիճան չունեցող հեղինակները պարտադիր պետք է ներկայացնեն հոդվածի մասին երաշխավորական գրություն գիտական ղեկավարից կամ գիտական (գիտակրթական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:

- Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորայր չպարունակող կամ նախկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

«Հայոց պատմության հարցեր» տարեգրքի բոլոր համարները էլեկտրոնային տարբերակով տե՛ս

<http://serials.flib.sci.am/openreader/test/index.html>

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

18

Անփոփոմաների խմբագրումը՝ Հ. Խոտանյանի
Համակարգչային ձևավորումը՝ Ա. Մարանգոզյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության՝ 10.10.2017 թ.
Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>



